

# Մ Ա Ս III - Բ

## Ծ Ա Խ Ս Ե Ր Ի Կ Ա Ն Խ Ա Տ Ե Ս ՈՒ Մ

ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով ծախսերի ծավալը ծրագրավորվել է 1,151.4 մլրդ դրամի չափով: Ծախսերի ամբողջ ծավալի 83.1 %-ը կամ 956.3 մլրդ դրամը բաժին է ընկնում ընթացիկ ծախսերին, 16.9 %-ը կամ 195.1 մլրդ դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով զուտ ծախսերին:

ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծի ծախսային մասը ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի հաստատված մակարդակի համեմատ ավելացել է շուրջ 107.2 մլրդ դրամով:

Նախագծով առաջարկվող բյուջետային ծախսերի ծավալները, կազմն ու կառուցվածքը ձևավորվել են ելնելով 2013 թվականի մակրոտնտեսական կանխատեսումներից, գների և սակագների կանխատեսվող ցուցանիշներից, հանրապետությունում տնտեսական հարաբերությունների բնականոն ընթացքը խաթարող նոր բյուջետային պարտքերի չառաջացման անհրաժեշտությունից ու առանձին ծախսատեսակների գծով մշակված բյուջետային նորմատիվներից:

Սոցիալական բնագավառի ծախսերի (կրթություն, առողջապահություն, սոցիալական պաշտպանություն) տեսակարար կշիռը բյուջետային ծախսերի ամբողջ ծավալում կազմում է 41.8%, պաշտպանության, հասարակական կարգի պահպանության և ազգային անվտանգության ապահովման ոլորտներինը՝ 21.1%, տնտեսության ճյուղերինը՝ 14.1 %, պետական պարտքի սպասարկմանը՝ 4.6 %, համայնքների բյուջեներին ՀՀ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման դոտացիաների տրամադրմանը՝ 3.1 %, ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի ձևավորմանը՝ 2.1%:

Հարկ է նշել, որ, ինչպես և ՀՀ 2012 թվականի պետական բյուջեում, ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծում ծախսային ծրագրերը հիմնականում դասավորված են ծրագրային բյուջետավորման սկզբունքներին համապատասխան: Միաժամանակ, մոտակա տարիներին պետական բյուջեն ամբողջությամբ ծրագրային դասակարգմամբ Ազգային ժողով ներկայացնելու և անցումային շրջանում դրա կատարման հետ կապված ռիսկերի կառավարումն ապահովելու նպատակով ներկայումս մշակվում է մի մոտեցում, որը մի կողմից պետք է ապահովի պետական բյուջեի կատարման գործող համակարգի կայունությունը, իսկ մյուս կողմից՝ աջակցի կառավարման, մոնիտորինգի, հաշվետվողականության և վերահսկողության համակարգերի զարգացմանը:

ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով ծախսային ծրագրերի ոչ ֆինանսական ցուցանիշները և ծրագրային դասակարգումը ներկայացված են համապատասխանաբար սույն բացատրագրի NN 12 և 13 հավելվածներում:

Ստորև ներկայացվում են ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծվող ծախսերի ծրագրավորման հիմքում դրվող հիմնական սկզբունքները և առանձնահատկությունները:

**Պետական կառավարման մարմինների պահպանման ծախսերը** ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծում ծրագրավորվել են հիմնականում հաշվի առնելով ՀՀ 2013-2015թթ ՄԺԾԾ-ի ցուցանիշները, գործող օրենսդրության պահանջները և այդ մարմինների գործունեության առանձնահատկությունները:

1. ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծում պետական կառավարման մարմինների պահպանման ծախսերի ծրագրավորումը բնորոշվում է հետևյալ առանձնահատկություններով:

1.1. 2012 թվականի ընթացքում շարունակվեցին պետական կառավարման համակարգի բնագավառում վերջին տարիներին իրականացվող բարեփոխումները, հստակեցվեցին նախարարությունների կողմից իրականացվող քաղաքականության ձևավորման, մոնիտորինգի և համակարգման գործառույթները, ինչպես նաև պետական կառավարման առանձին մարմինների կանոնադրություններն ու կառուցվածքները: Այսպես

«Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների համաձայն պետական կառավարման մարմիններում՝ նախարարության կառավարչական գործընթացների, գործառնությունների և տեղեկատվական համակարգերի ռիսկերի գծով հսկողության արդյունավետությունն ու համարժեքությունը, այդ թվում՝ ֆինանսական և գործառնական տեղեկատվության հուսալիությունն ու ամբողջականությունը, ծրագրերի և գործառնությունների արդյունավետությունն ու օգտավետությունը, ակտիվների ապահով պահպանումը, օրենքներին, կանոնակարգերին, ընթացակարգերին և պայմանագրերի դրույթներին համապատասխանությունը գնահատման նպատակով ներդրվեց ներքին աուդիտի համակարգը՝ ստեղծվեցին ներքին աուդիտի կոռուցվածքային ստորաբաժանումները:

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության և տարածքային կառավարման մարմինների կողմից մշակված արտակարգ իրավիճակների ոլորտի ծրագրերի ու աշխատանքների իրականացումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության կազմում ստեղծվեց «Արտակարգ իրավիճակների բնագավառում ծրագրերի իրականացման գրասենյակը» (ԾԻԳ)՝ պետական հիմնարկի կարգավիճակով ( ՀՀ կառավարության 29.12.2011թ. N 1910 -Ն որոշմամբ):

1.2. ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծում պահպանվել է ՀՀ նախարարությունների աշխատակազմերի և այդ մարմինների ղեկավարների աշխատակազմերի պահպանման ծախսերը պետական բյուջեում իրարից տարանջատված ձևով (առանձին ծրագրերով) նախատեսելու սկզբունքը:

1.3. «ՀՀ դատական օրենսգրքի», «Սահմանադրական դատարանի մասին». «Դատախազության մասին» և «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքների պահանջներին համապատասխան ՀՀ դատարանների, ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ դատախազության և ՀՀ վերահսկիչ պալատի բնականոն գործունեության ապահովման համար չկանխատեսված ծախսերի ֆինանսավորման նպատակով նախատեսվում է ՀՀ դատարանների, ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ դատախազության և ՀՀ վերահսկիչ պալատի պահուստային ֆոնդեր: Յուրաքանչյուր վերը նշված մարմնի պահուստային ֆոնդը ներկայացվում է պետական բյուջեի առանձին տողով, ընդ որում ֆոնդի մեծությունը հավասար է տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով տվյալ մարմնի գծով նախատեսված ծախսերի երկու տոկոսին:

1.4. «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի (09.06.2010թ. ՀՕ-63-Ն) պահանջներից ելնելով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության (ԱՊՊԱ) ոլորտում կիրառվելիք ապահովագրության վճարների նվազագույն և առավելագույն չափերը՝ ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են հատկացումներ ծառայողական ավտոմեքենաների ապահովագրության համապատասխան վճարներ կատարելու համար:

1.5. ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծում օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների պահպանման ծախսերը հաշվարկվել են հիմք ընդունելով 17105 հաստիքային միավորների քանակը, որը 2012 թվականի համեմատ ավելացել է 222 միավորով: Թվաքանակի ավելացումը հիմնականում պայմանավորված է վերոնշյալ գործոններով, ինչպես նաև պետական կառավարման առանձին մարմիններում կառուցվածքային փոփոխությունների հետևանքով աշխատողների թվաքանակի փոփոխություններով:

ՀՀ պետական կառավարման մարմինների աշխատողների թվաքանակի փոփոխությունը արտացոլված է սույն բացատրագրի N 2ա աղյուսակում:

1.6. 2013 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ է մտնելու «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքը, որի 28-րդ հոդվածի համաձայն նույն պահից ուժը կորցրած են ճանաչվելու «Եկամտահարկի մասին» և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքները:

«Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, եթե նշված օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վարձու աշխատողից եկամտային հարկի պահումից հետո վճարվող աշխատավարձի գումարը զիջում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը վարձու աշխատողի հարկումից (եկամտահարկով և 3% պարտադիր սոցիալական ապահովության վճարով) հետո վճարվող աշխատավարձի գումարին, ապա գործատուն իր միջոցների հաշվին կրում է լրացուցիչ պարտավորություն վարձու աշխատողին այդ տարբերությունը վճարելու համար: Նշված դրույթի պահանջներն ապահովելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել մինչև ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի ընդունումը աշխատողների պաշտոնային դրույքաչափերը սահմանող գործող օրենքներում կատարել համապատասխան փոփոխություններ:

Քաղաքացիական (պետական, դատական) ծառայողների, բացառությամբ ՀՀ վերահսկիչ պալատի և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի քաղաքացիական ծառայողների, աշխատավարձի ֆոնդը հաշվարկվել է հիմք ընդունելով 40.0 հազ. դրամ բազային պաշտոնային դրույքաչափը, հարկային և մաքսային ծառայողներինը՝ 55.5 հազ. դրամ, հարկադիր կատարողներինը՝ 42.0 հազ. դրամ, պահպանելով 2012 թվականի մակարդակը: ՀՀ վերահսկիչ պալատի և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի քաղաքացիական ծառայողների աշխատավարձի ֆոնդը հաշվարկվել է ելնելով համապատասխան օրենքների պահանջներից: Աշխատավարձի ֆոնդը ծրագրավորվել է հաշվի առնելով վերոնշյալ ծառայողների պաշտոնային դրույքաչափերի նկատմամբ համապատասխան օրենքներով նախատեսված բնականոն աճերը:

Աշխատավարձի ֆոնդում ներառվել են նաև քաղաքացիական ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունենալու դեպքում քաղաքացիական ծառայողի հիմնական աշխատավարձի նկատմամբ 5%-ի չափով սահմանվող հավելավճարները:

ՀՀ վճարեկ, վերաքննիչ և մասնագիտացված դատարանների դատավորների աշխատավարձի ֆոնդը հաշվարկվել է ՀՀ դատական օրենսգրքի (հոդված 75) պահանջներին համապատասխան: ՀՀ դատական դեպարտամենտի կազմում առանձնացված ստորաբաժանման կարգավիճակով գործող ՀՀ դատական կարգադրիչների ծառայության աշխատակիցների աշխատավարձի ֆոնդը հաշվարկվել է ելնելով ՀՀ դատական օրենսգրքի պահանջներից՝ «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված չափերին և հաշվարկման կարգին համապատասխան՝ հիմք ընդունելով 14.4 հազ. դրամ բազային պաշտոնային դրույքաչափը:

Դատախազների աշխատավարձի ֆոնդը հաշվարկվել «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածով ամրագրված դրույթներին համապատասխան: Կենտրոնական ընտ-

րական հանձնաժողովի անդամների, այդ հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայության պետի, Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի անդամների, Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի և Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմերի աշխատավարձերի ֆոնդերը հաշվարկվել են համապատասխանաբար Ընտրական օրենսգրքի, «Հանրային ծառայության մասին», «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» և «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքների պահանջներին համապատասխան:

Միաժամանակ, ՀՀ կառավարության 24.04.2010թ. N 16 արձանագրային որոշման պահանջներն ապահովելու նպատակով պետական կառավարման մարմինների աշխատողների թվաքանակի կրճատումների հետևանքով տնտեսված միջոցները թողնվել է պետական մարմինների աշխատավարձերի ֆոնդերում, որը պետք է ուղղվի լավագույն աշխատողների աշխատավարձերի բարձրացմանը կամ պարզևատրմանը:

1.7. Գործուղումների և ծառայողական ուղևորությունների ծախսերը ծրագրավորվել են ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման համար կատարվող վճարումների նվազագույն և առավելագույն չափերն ու վճարման կարգը սահմանելու մասին» N 2335-Ն որոշմամբ սահմանված նորմաներով:

1.8. Ծառայողական ավտոմեքենաների պահպանման ծախսերը ծրագրավորվել են ՀՀ կառավարության 2005 թվականի փետրվարի 17-ի N 194-Ն որոշմամբ հաստատված ծառայողական ավտոմեքենաների (բացառությամբ հարկային, մաքսային և դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մարմինների սպասարկման համար նախատեսված ծառայողական ավտոմեքենաների) սահմանաքանակին համապատասխան 991 ավտոմեքենայի համար, ընդ որում 1 մեքենայի պահպանման տարեկան ծախսը՝ հաշվարկվել է 1200.0 հազ. դրամի չափով (պահպանվել է 2012 թվականի մակարդակը):

ՀՀ պետական կառավարման մարմինների ծառայողական ավտոմեքենաների սահմանաքանակի փոփոխությունը արտացոլված է սույն բացատրագրի N 2բ աղյուսակում:

1.9. Կապի ծառայությունների վճարները ծրագրավորվել են ՀՀ կառավարության 2004 թվականի սեպտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կապի և կոմունալ ծախսերի նորմաներ սահմանելու մասին» N 1536-Ն և ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության պետական մարմիններում կապի ծառայությունների նորմաները և հեռախոսակապից օգտվելու օրինակելի ներքին կանոնները հաստատելու մասին» N 1956-Ն որոշումների պահանջներին համապատասխան, սակայն հեռախոսային խոսակցությունների տարեկան սահմանաչափը ծրագրավորվել է հաշվարկվածի

30 %-ի չափով, իսկ ՀՀ դատարանների կապի ծառայությունների ծախսերը հաշվարկվել են ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 12-ի «Հայաստանի Հանրապետության դատարանների կապի միջոցների տեսակների, քանակի և կապի ծառայությունների, ինչպես նաև կոմունալ ծախսերի նորմաների մասին» N 732-Ա որոշման պահանջներին համապատասխան: Կապի ծախսերը հաշվարկվել են հաշվի առնելով նաև ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի օգոստոսի 24-ի «Արմենտել» փակ բաժնետիրական ընկերության կողմից մատուցվող ծառայությունների սակագների սահմանման մասին» N 340-Ն որոշումը:

1.10. Էլեկտրաէներգիայի, վառելիքի և ջեռուցման ծախսերը ծրագրավորվել են ՀՀ կառավարության 2005 թվականի ապրիլի 28-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծում Հայաստանի Հանրապետության պետական մարմինների գծով բյուջետային ծախսերի առանձին տեսակների ջեռուցման, վառելիքի և էլեկտրաէներգիայի ձեռքբերման ծավալների հաշվարկման հիմքում դրվող նորմաները հաստատելու մասին» N 629-Ն որոշման պահանջներին համապատասխան՝ հաշվի առնելով գործող սակագները (բնական գազի 1 մ<sup>3</sup> սակագինը՝ 132 դրամ, իսկ ամսական 10.0 հազար մ<sup>3</sup>-ից ավելի օգտագործելու դեպքում՝ 243.1 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, էլեկտրաէներգիայինը՝ 1 կվտ/ժ-ը 30 դրամ), սակայն էլեկտրաէներգիայի ծախսերը ծրագրավորվել են հաշվարկվածի 65%-ի չափով:

1.11. Ջրմուղ - կոյուղուց օգտվելու վարձի վճարման ծախսերը ծրագրավորվել են հաստատված սակագներին համապատասխան՝ Երևանում մեկ խորանարդ մետրը՝ 174.1 դրամ, մարզերում՝ 179.78 դրամ: ՀՀ պետական մարմինների կողմից խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայություններից օգտվելու վարձի վճարման ծախսերը հաշվարկվել են հիմք ընդունելով յուրաքանչյուր հաստիքային միավորի համար սահմանված նորմատիվը՝ օրական 30 լիտր, բացի այդ ՀՀ դատարանների համար ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 12-ի N 732-Ն որոշման պահանջներին համապատասխան նախատեսվել է նաև լրացուցիչ ծախս՝ ելնելով դատական նիստերի դահլիճների ընդհանուր մակերեսի մեծությունից:

1.12. Հաշվի առնելով ՀՀ վարչապետի որոշումներով արտասահմանյան պաշտոնական գործուղումների համար հատկացվող միջոցների առավել արդյունավետ օգտագործման հանգամանքը, ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծում պահպանվել է արտասահմանյան երկրներ մեկնելու համար նախատեսված գործուղման ծախսերի գծով հատկացումները արտասահմանյան պաշտոնական գործուղումների կենտրոնացված ֆոնդում ներառելու սկզբունքը:

1.13. ՀՀ դեսպանությունների և ներկայացուցչությունների պահպանման ծախսերը 2013 թվականի համար ծրագրավորվել է 7611.0 մլն դրամի չափով, որը 2012 թվականի մակարդակը

գերազանցում է 919.3 մլն դրամով: Ծախսերի աճը պայմանավորված է Մեքսիկայում (140.7 մլն դրամ), Ինդոնեզիայում (150.0 մլն դրամ) և Վիետնամում (146.1 մլն դրամ) նոր բացվող դեսպանությունների, Եվրոպայի Խորհրդում Հայաստանի նախագահության պատշաճ կազմակերպման, գործողությունների ծրագրի և միջոցառումների իրականացման ու համակարգման նպատակով անհրաժեշտ միջոցների (26.0 մլն դրամ), առանձին դեսպանություններում և ներկայացուցչություններում ներկայացուցչական ծախսերի (18.9 մլն դրամ) և 3 ծառայողական ավտոմեքենաների ձեռքբերման (47.0 մլն դրամ), նախկինում Հայ ավետարանչական եկեղեցու կողմից կատարվող ՄԱԿ-ի և Վաշինգտոնի ներկայացուցչություններում աշխատող դիվանագետների ապահովագրության վճարների կատարման (24.6 մլն դրամ), Լիբանանում ու Արգենտինայում ՀՀ դեսպանների համար բնակարանների վարձակալության (25.0 մլն դրամ) նպատակով միջոցների նախատեսմամբ՝ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան աշխատավարձի ֆոնդի վերահաշվարկմամբ (53.7 մլն դրամ), ինչպես նաև 2012 թվականի հաշվարկներում կիրառվածի համեմատությամբ 2013 թվականի հաշվարկներում կիրառված տարադրամի փոխարժեքի փոփոխման հետ կապված լրացուցիչ միջոցների նախատեսմամբ (287.3 մլն դրամ):

1.14. ՀԱՊԿ-ում նոր ստեղծվող ՀՀ զինված ուժերի ներկայացուցչի պահպանման համար նախատեսվել է 80.2 մլն դրամ:

1.15. ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել են նաև ծախսեր պետական կառավարման մարմինների և դրանց ծառայությունների շենքային պայմանների բարելավման նպատակով: Մասնավորապես.

ա) Վարչական օբյեկտների հիմնանորոգման և շինարարության գծով նախատեսվել է 716.2 մլն դրամի ծախս՝ ՀՀ Նախագահի աշխատակազմի, ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի, ՀՀ կառավարության աշխատակազմի, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության և ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության ենթակայության տակ գտնվող շենքերի շինվերանորոգման աշխատանքների իրականացման նպատակով,

բ) ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի մաքսային ծառայության կինոլոգիական կենտրոնի կառուցման նպատակով նախատեսվել է 216.0 մլն դրամ, իսկ Սյունիքի տարածաշրջանային մաքսատան համար նոր վարչական շենքի ձեռքբերման նպատակով՝ 263.5 մլն դրամ:

2. ՀՀ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների պահպանման ծախսերի ընդհանուր գումարը ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծում ծրագրավորված է 62470.2 մլն դրամի չափով, որը 2011 թվականի բյուջետային տարվա փաստացի և 2012 թվականի բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների նկատ-

մամբ կազմում է համապատասխանաբար 116.1 և 107.7 տոկոս: Նշված ցուցանիշների համեմատությունը արտացոլված է սույն բացատրագրի N 2 աղյուսակում: Ստորև ներկայացվում է վերը նշված ծախսերի վերծանումն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման ծախսերի հիմնական հոդվածների:

2.1. Աշխատավարձի ֆոնդ - օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների աշխատողների աշխատավարձի ֆոնդը 2013 թվականի համար ծրագրավորվել է 39.261.8 մլն դրամի չափով, որը 2012 թվականի ծրագրավորվածից ավելի է 5.937.6 մլն դրամով: Աշխատավարձի ֆոնդը հաշվարկվել է հաշվի առնելով 2013 թվականի հունվարի 1-ից գործող «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները, ինչպես նաև «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան քաղաքացիական (պետական, դատական) ծառայողների աշխատավարձի բնականոն աճը, «Հարկային ծառայության մասին», «Մաքսային ծառայության մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» և «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքների պահանջներին համապատասխան հարկային ծառայողների, մաքսային ծառայողների, հարկադիր կատարողների և դատական կարգադրիչների աշխատավարձերի բնականոն աճերը, «ՀՀ դատական օրենսգրքի», «Դատախազության մասին» և «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքների պահանջներին համապատասխան դատավորների, դատախազների և հատուկ քննչական ծառայության ծառայողների պաշտոնային դրույքաչափերի նկատմամբ հաշվարկվող հավելավճարների աճը, «Արտակարգ իրավիճակների բնագավառում ծրագրերի իրականացման գրասենյակ»-ի աշխատավարձի ֆոնդի ներառումը, ինչպես նաև առանձին մարմիններում գործառույթների և կառուցվածքային փոփոխություններով պայմանավորված աշխատողների թվաքանակի փոփոխությունները:

2.2. Էներգետիկ ծառայությունների (ներառում է էլեկտրաէներգիայի և ջեռուցման) ծախսերը ծրագրավորվել են 1.464.3 մլն դրամի չափով, որը 2012 թվականի ծրագրավորվածից ավելի է 22.9 մլն դրամով: Ավելացումը հիմնականում կապված է պետական կառավարման առանձին մարմիններում համակարգչային տեխնիկայի քանակի ավելացման հետ:

2.3. Կոմունալ ծառայությունների վճարները ներառում է ջրամատակարարման և ջրահեռացման, ինչպես նաև միջատազերծման հետ կապված ծախսերը ծրագրավորվել են 107.7 մլն դրամի չափով, որը 2012 թվականի ծրագրավորվածից պակաս է 29.0 մլն դրամով («Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի պահանջներից ելնելով վարչական շենքերի աղբահանման ծախսերը ներառվել են պարտադիր վճարներ հոդվածում):



2.4. Կապի ծառայություններ - ծրագրավորվել է 1771.7 մլն դրամի չափով, որը 2012թ. ծրագրավորվածից ավելի է 28.7 մլն դրամով: Աճը հիմնականում պայմանավորված է պետական կառավարման առանձին մարմիններում կապի ծախսերի կանոնակարգմամբ:

2.5. Ապահովագրական ծախսերը ծրագրավորվել են 42.8 մլն դրամի չափով՝ ծառայողական ավտոմեքենաների սահմանաքանակին համապատասխան:

2.6. Գույքի և սարքավորումների վարձակալություն - ծրագրավորվել է ներկայացված պայմանագրերին համապատասխան:

2.7. Գործուղումների և ծառայողական ուղևորությունների ծախսերը ծրագրավորվել են 2062.6 մլն դրամի չափով:

2.8. Պայմանագրային ծառայությունների ձեռք բերում - ծրագրավորվել է 2206.8 մլն դրամի չափով, որը 2012 թվականի մակարդակը գերազանցում է 653.5 մլն դրամով: Պայմանագրային ծառայությունները ներառում են բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման վարչական ծառայությունները, համակարգչային ծառայությունները, աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայությունները, տեղեկատվական ծառայությունները, կառավարչական ծառայությունները, կենցաղային և հանրային սննդի ծառայությունները, ներկայացուցչական ծախսերը և ընդհանուր բնույթի այլ ծառայությունները: Աճը հիմնականում պայմանավորված է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի համակարգչային ծառայությունների (452.0 մլն դրամ՝ որից 217.0 մլն դրամը՝ օպտիկամանրաթելային կապուղիների սպասարկման ծառայությունների համար, 216.0 մլն դրամը՝ ներդրված համակարգչային ծրագրերի սպասարկման ծառայություններ, (19.0 մլն դրամ) եկամտային հարկի և կուտակային վճարի անձնավորված հաշվառման տեղեկատվական համակարգի սպասարկման ծառայության ծախսը, արբանյակային ցանցի սպասարկման ծառայությունների մատուցման նպատակով (34.5 մլն դրամ) համապատասխան միջոցների, ինչպես նաև 2013թ. մայիսից 6 ամիս ժամկետով ԵԽ նախագահությունը Հայաստանի կողմից ստանձնելու հետ կապված Երևանում կազմակերպվող միջոցառումների (4 միջազգային կոնֆերանս) անցկացման ծախսերի (165.3 մլն դրամ) և քարոզչության համար լրացուցիչ միջոցների ( 25.0 մլն դրամ) նախատեսմամբ:

2.9. Նյութեր - ծրագրավորվել են 975.3 մլն դրամի չափով, որը 2012 թվականի ծրագրավորվածից ավելի է 54.8 մլն դրամով: Նյութերը ներառում են գրասենյակային պիտույքների, գյուղատնտեսական ապրանքների, առողջապահական և լաբորատոր նյութերի, կենցաղային և հանրային սննդի նյութերի և հատուկ նպատակային այլ նյութերի ձեռք բերման, ինչպես նաև ՀՀ օրենսդրությանը համապատասխան՝ ՀՀ դատախազության զինդատախազների, ՀՀ դատարանների դատավորների, դատական կարգադրիչների, հարկային և մաքսային ծառայողների մասնագիտական համազգեստների ձեռքբերման ծախսերը:

2.10. Տրանսպորտային ծառայությունների ծախսերը տարանջատված են բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման երեք հոդվածներում՝ տրանսպորտային նյութեր (բենզին, յուղեր, այլ նյութեր տրանսպորտային միջոցների համար), մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում, պարտադիր վճարներ (տեխնիկական զննման վճարներ՝ 1 մեքենայի համար 6.0-10.0 հազ. դրամ և բնապահպանական վճարներ՝ 1 մեքենայի համար 2.5-3.0 հազ. դրամ): Ծառայողական ավտոմեքենաների պահպանման ծախսերը ծրագրավորվել են 1422.3 մլն դրամի չափով:

2.11. Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին - ծրագրավորվել են 719.2 մլն դրամի չափով՝ «Սպասարկում», «Գնումների աջակցման կենտրոն» և «Կոնդի առանձնատների տնտեսություն» պետական ոչ առևտրային կազմակերպություններին պետական աջակցության համար:

2.12. Ընթացիկ սուբվենցիաներ համայնքներին – ծրագրավորվել է 598.6 մլն դրամի չափով՝ ՀՀ օրենսդրությամբ Երևանի քաղաքապետարանի կենտրոնական ապարատի պահպանման համար նախատեսված պետական աջակցություն:

2.13. Այլ նպաստներ բյուջեից - ծրագրավորված է 1083.5 մլն դրամի չափով՝ ներառում է ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների պատգամավորական գործունեության հետ կապված ծախսերը, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան հանրային պաշտպանի գրասենյակի պահպանման ծախսերը, «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան ՀՀ դատարանների դատական կարգադրիչների պարենային բավարարման համար անհրաժեշտ գումարը, յուրաքանչյուր մարզապետարանին այս հոդվածով նախատեսվող գումարները, ինչպես նաև ծառայողական պարտականությունները կատարելիս հարկադիր կատարողի կողմից հասարակական տրանսպորտից օգտվելու և անձնական օգտագործման ավտոմեքենան ծառայողական նպատակներով օգտագործելու հետ կապված ծախսերի հատուցման գումարը: Բացի այդ, նախատեսված են համապատասխան միջոցներ Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության, համայնքային ենթակայության սոցիալական օգնության ծառայությունների գործունեության կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորումն ապահովելու նպատակով:

2.14. Այլ ծախսեր - ծրագրավորվել են 8.749.5 մլն դրամի չափով: Ներառում է՝ ՀՀ դեսպանությունների և ներկայացուցչությունների, ՀՀ ռազմական կցորդների, արտասահմանում ՀՀ առևտրային ներկայացուցչությունների պահպանման ծախսերը, ՀՀ Նախագահի, ՀՀ Ազգային ժողովի նախագահի և ՀՀ վարչապետի ֆոնդերը, ՀՀ Նախագահի կողմից առանձին անձանց

պարզևատրելու համար անհրաժեշտ մեդալների և շքանշանների պատրաստման ծախսերը, ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ դատարանների, ՀՀ դատախազության և ՀՀ վերահսկիչ պալատի պահուստային ֆոնդերը:

2.17. Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը նախատեսվել են 925.0 մլն դրամի չափով՝ պետական կառավարման առանձին մարմիններում կարողությունների զարգացման համար:

3. Բացի հատկացումների վերը նշված ծավալների, նախագծով հատկացումներ են նախատեսվում հետևյալ նպատակային վարկային և դրամաշնորհային ծրագրերը շարունակելու և իրականացնելու համար.

**3.1) Համաշխարհային Բանկի աջակցությամբ իրականացվող Դատաիրավական բարեփոխումների երկրորդ ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման ծրագիր (ծրագրի տևողությունը՝ 2013-2015թթ.)**

Ծրագիրը գտնվում է մտադրությունների փոխանակման և նախնական քննարկումների փուլում, որով նախատեսվում է հիմնականում կապիտալ վերանորոգման ենթարկել նախորդ ծրագրից մնացած դատական ոլորտի մի քանի շենքեր և շինություններ:

Ծրագրով նախատեսվող միջոցառումների իրականացման նպատակով 2013թ. համար ծրագրված է 1,103.1 մլն դրամ:

Միաժամանակ, ոլորտում նախատեսվում է շարունակել և իրականացնել Համաշխարհային Բանկի աջակցությամբ իրականացվող Դատաիրավական բարեփոխումների երկրորդ ծրագրում Ճապոնական դրամաշնորհային ծրագիրը, որի գծով 2013թ. համար ծրագրված է 204.3 մլն դրամ:

**3.2) Եվրոպական միության և այլ դոնորների աջակցությամբ իրականացվող «ՀՀ պետական սահմանի «Բագրատաշեն», «Բավրա» և «Գոգավան» անցման կետերի արդիականացում» ծրագիր (ծրագրի տևողությունը՝ 2012-2014թթ.)**

Հայաստանը ունի 7 միջազգային պետական սահմանի անցման կետ (ՊՍԱԿ), որոնցից 4-ը՝ Բագրատաշեն, Բավրա, Գոգավան և Այրում (երկաթուղային) գործում են Վրաստանի սահմանի վրա և համապատասխանաբար գտնվում են Աշոցք-Նինոցմինդա, Տաշիր-Բոլնիս, Տաշիր-Սադախլո մայրուղիների ու Երևան-Թբիլիսի տանող երկաթուղու վրա: Պետական սահմանի նշված անցման կետերն ունեն միջազգային նշանակություն և չափազանց կարևոր են երկու երկրների առևտրատնտեսական կապերն ապահովելու համար, քանի որ սահմանի անցման կետերն ընդգրկվել են ԵՄ կողմից առաջարկվող Միջազգային մայրցամաքային առևտրի և փոխադրումների ցանցում՝ ՏՐԱՍԵԿԱՅՈՒՄ:

ՀՀ սահմանային անվտանգության և պետական սահմանի համալիր կառավարմանն ուղղված 2011-2015 թթ. միջոցառումների ծրագրով նախատեսվում են մի շարք միջոցառումներ, որոնց իրականացումը պետք է ապահովվի պետական սահմանի կառավարման ոլորտի բոլոր մարմինների մասնակցությամբ, և այդ ամենի նախապայմանն է ՀՀ պետական սահմանի անցման կետերի ենթակառուցվածքների արդիականացումը եվրոպական չափանիշներին համապատասխան և կիրառելով ՍՀԿ եվրոպական այն սկզբունքը, համաձայն որի նախ և առաջ պետք է ապահովվի պետական սահմանի անվտանգությունը և միևնույն ժամանակ հեշտացվի սահմանով անցնող մարդկանց և ապրանքների օրինական շարժը:

Ծրագրի բաղադրիչներն են՝

ա/ Բագրատաշեն, Բավրա և Գոգավան ՊՍԱԿ-ներում շինարարական աշխատանքների իրականացումը, այդ թվում ներկառուցվող սարքավորումների տրամադրումը.

բ/ տեխնիկական վերահսկողության և խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագրի ստորագրում,

գ/ շինարարական հրապարակներից դուրս գտնվող հնժեներական ցանցերի, այդ թվում՝ գազի, էլեկտրականության և օպտիկական մանրաթելերի ցանցերի տեղադրում,

դ/ շարժական սարքավորումների, կահույքի և ՏՏ համակարգերի ձեռքբերում և տեղադրում,

ե/ Գոգավան ՊՍԱԿ տանող ճանապարհի և երկու կամուրջների շինարարական վերանորոգման աշխատանքներ.

զ/ կարողությունների զարգացման և որակավորման դասընթացների կազմակերպման օժանդակություն, ծրագրի կառավարում:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2013թ. համար ծրագրված է 15,371.3 մլն դրամ:

### **Ծրագիրն ունի նաև հետևյալ դրամաշնորհային մասերը**

ա/ Եվրոպական միության Հարևանության ներդրումային գործիքի (ՀՆԳ) աջակցությամբ իրականացվող «ՀՀ պետական սահմանի «Բագրատաշեն», «Բավրա» և «Գոգավան» անցման կետերի արդիականացման դրամաշնորհային ծրագիր, որի գծով 2013թ. համար ծրագրված է 4,557,5 մլն դրամ:

բ/ Եվրոպական միության ՍՀԿ առաջատար նախաձեռնության ծրագրով «ՀՀ պետական սահմանի «Բագրատաշեն», «Բավրա» և «Գոգավան. անցման կետերի արդիականացման դրամաշնորհային ծրագիր, որի գծով 2013թ. համար ծրագրված է 1,310,1 մլն դրամ:

**3.3) Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ ծրագրի երրորդ լրացուցիչ ֆինանսավորման ծրագիր (ծրագրի տևողությունը՝ 2012-2014թթ.)**

Ծրագիրը կապահպանի ՀՄՀ III ծրագրի զարգացման նպատակները՝ աջակցելով աղքատ և խոցելի խմբերի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված կառավարության քաղաքականություններին՝ աղքատ համայնքներում և առավել խոցելի խմբերի համար համայնքային ենթակառուցվածքների և ծառայությունների որակի և հասանելիության բարելավման և ծածկույթի մեծացման, համայնքային և ՏԻՄ մակարդակում հավելյալ ինստիտուցիոնալ կարողությունների ստեղծման, խթանման, տեղական մակարդակում համայնքային ներդրումների և ծառայությունների մատուցման որակի և կայունության բարելավման, հաշվետվողականության բարձրացման, շահառուների առավել հզորացման և համայնքային ենթակառուցվածքների ու ծառայությունների մատուցման հետ կապված աշխատատեղերի ստեղծման միջոցով:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել եւս 40-50 միկրո-ծրագիր:

Համայնքների քարտեզագրման աշխատանքը թարմացվել է երրորդ լրացուցիչ ֆինանսավորման համար, իսկ համայնքները ուրաքանչյուր մարզում բաժանվել են երեք խմբերի՝ թարմ տվյալների հիման վրա: Երրորդ լրացուցիչ ֆինանսավորումը պահպանում է պահանջն, ըստ որի միկրոծրագրերի համար նախատեսված վարկային միջոցների առնվազն 40 տոկոսը պետք է օգտագործվի առավել աղքատ խմբի համայնքներում, իսկ միկրոծրագրերի համար նախատեսված վարկային միջոցների առավելագույն 20 տոկոսը պետք է օգտագործվի առավել հարուստ խմբի համայնքներում: Երրորդ լրացուցիչ ֆինանսավորումը թույլ է տալիս ֆինանսավորել միկրոծրագրեր, որոնք իրականացվում են մարզկենտրոններում, բացառությամբ Երևանի:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2013թ.համար ծրագրված է 3,403.6 մլն դրամ:

**3.4) Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Սոցիալական պաշտպանության ոլորտի կառավարման վարկային ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման ծրագիր (ծրագրի տևողությունը՝ 2012-2013թթ.)**

Ծրագրի նպատակն է մարդկային զարգացման խթանման և սոցիալական ապահովության համակարգերի և հանրային հատվածի հիմնական գործառույթների բարելավումը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

ա) ընդհանուր աջակցություն սոցիալական պաշտպանության ոլորտին, աշխատանքին և զբաղվածությանը,

բ) կենսաթոշակների վարչարարություն, սոցիալական աջակցության վարչարարության բարելավում և ծրագրի կառավարում:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2013թ. համար ծրագրված է 836,3 մլն դրամ:

**3.5) Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրոնային հասարակության և մրցունակության համար նորարարության ծրագիր (ծրագրի տևողությունը՝ 2011-2015 թթ.)**

Ծրագրի նպատակն է օժանդակել էլեկտրոնային հասարակության և ինովացիոն ծրագրի նախապատրաստմանը, որն ուղղված է տնային տնտեսությունների, բիզնեսի և պետական կազմակերպությունների համար հիմնացանցի, համակարգիչների և էլեկտրոնային ծառայությունների մատչելիությանը և հասանելիությանը, ինչպես նաև գիտելիքահենք և տեխնոլոգիահենք հատվածի ծավալների ավելացմանը:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- ա/ էլեկտրոնային հասարակության ենթակառուցվածքների զարգացում,
- բ/ ձեռնարկությունների ինովացիոն ենթակառուցվածքների խթանում,
- գ/ ծրագրի կառավարում և իրականացում:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2013թ. համար ծրագրված է 4,367.6 մլն դրամ:

**3.6) Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Պետական հատվածի բարեփոխումների երկրորդ ծրագիր (ծրագրի տևողությունը՝ 2010-2015թթ.)**

Ծրագիր նպատակն է կատարելագործել հանրային հատվածի կառավարման իրականացումը և ծառայությունների մատուցումը՝ քաղաքականության մշակման ոլորտում գերատեսչական հզորությունների ուժեղացման, մարդկային կապիտալի արդյունավետության առավելագույնի հասցման և ներքին աշխատանքային հոսքերի և արտաքին հաղորդակցության համար տեղեկատվական համակարգերի ստեղծման միջոցով:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- ա/ քաղաքականության ձևավորման և ծառայությունների մատուցման ձևաչափում գերատեսչական կարողությունների զարգացում,
- բ/ հանրային հատվածում մարդկային ռեսուրսների գործունեության արդյունավետության բարձրացում,
- գ/ կատարողականի և թափանցիկության բարելավման նպատակով համակարգերի մշակում,
- դ/ ժամանակին պահանջվող տեխնիկական աջակցություն,

ե/ ծրագրի կառավարում և իրականացում:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2013թ համար ծրագրված է 1,897.2 մլն դրամ:

**3.7) Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հարկային վարչարարության արդիականացման ծրագիր (ծրագրի տևողությունը՝ 2013-2016թթ.)**

Ծրագրի նպատակն է օժանդակել հարկային եկամուտների վարչարարության համապարփակ արդիականացմանը: Ծրագիրը կֆինանսավորի ՊԵԿ-ի հիմնական ՏՀՏ ենթակառուցվածքում կարևոր ներդրումները, որպեսզի ՊԵԿ-ին հնարավորություն ընձեռնվի արդիականացնել իր բիզնես գործընթացները, ընդլայնել էլ. կառավարման կիրարկումը, այդ թվում՝ նաև հարկային հայտարարագրերի էլեկտրոնային եղանակով ներկայացումը, ինչպես նաև ներդնել առավել թիրախավորված, ռիսկի վրա հիմնված պարտավորությունների իրականացման ռազմավարություն՝ հիմնվելով պարտավորությունների կամավոր իրականացման վրա:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

ա/ ինստիտուցիոնալ զարգացում և փոփոխության կառավարում,

բ/ գործընթացի արդիականացում և պարտավորությունների կատարման կառավարում,

գ/ ՏՏ ենթակառուցվածքի և համակարգերի արդիականացում,

դ/ ծրագրի կառավարում և իրականացում:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2013թ համար ծրագրված է 3,003.5 մլն դրամ:

**3.8) նախատեսված են նաև հետևյալ դրամաշնորհային ծրագրերը**

ա) Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Երևան քաղաքի պինդ աղբի կառավարման նպատակով պետական մասնավոր համագործակցության կառույցի համար գործարքի խորհրդատվական աջակցության դրամաշնորհային ծրագիր- 2013թ. համար՝ 2,5 մլն դրամ,

բ) Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Ազգային ժողովի քաղաքականության ձևավորման և հանրության հետ երկխոսության կարողությունների հզորացման դրամաշնորհային ծրագիր- 2013 թ. համար՝ 88.8 մլն դրամ,

գ) Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտների 2-րդ ռազմավարության իրականացման դրամաշնորհային ծրագիր - 2013 թ. համար՝ 77.9 մլն դրամ,

դ) Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի կառավարության ֆինկալ կառավարման կարողությունների բարելավման համար դրամաշնորհային ծրագիր - 2013 թ. համար՝ 63,7 մլն դրամ,

ե) ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող Հազարամյակի մարտահրավեր դրամաշնորհային ծրագիր - 2013թ. համար՝ 97.4 մլն դրամ,

զ) Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հանրային հատվածի վերահսկողության (Վերահսկիչ պալատի) կարողությունների զարգացման դրամաշնորհային ծրագիր - 2013 թ. համար՝ 93.1 մլն դրամ,

է) Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ ֆինանսների նախարարության կարողությունների զարգացման դրամաշնորհային ծրագիր - 2013 թվականի համար՝ 61731.3 հազ. դրամ,

ը) Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի կառավարության կարգավորող բարեփոխումների գրասենյակի կարողությունների զարգացման դրամաշնորհային ծրագիր - 2013 թ. համար՝ 94.3 մլն դրամ,

թ) Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի հանրային ֆինանսական կառավարման հզորացման դրամաշնորհային ծրագիր - 2013թ. համար՝ 249.1 մլն դրամ,

ժ) ՄԱԿ-ի զարգացման ծրագրի աջակցությամբ իրականացվող ՀՀ տարածքային զարգացման հայեցակարգից բխող ծրագրերի մշակման ու իրականացման աջակցության ծրագիր- 2013թ. համար՝ 22.8 մլն դրամ:

**Առողջապահության** ոլորտը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության գերակա ուղղություններից մեկը, որի հիմնական նպատակներն են՝ հիվանդությունների վաղ հայտնաբերումը, կանխարգելումը, ախտորոշումը և բուժումը, բուժօգնության մատչելիության բարձրացումը և որակի ապահովումը:

Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված առողջապահության բնագավառի ծախսերը կազմում են 70,276.4 մլն դրամ: Ծախսերի աճը Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ կազմում է 5,105.2 մլն դրամ կամ 7.8 տոկոս:

Առկա խնդիր է դիտարկվում առողջապահության ոլորտին ուղղվող պետական ծախսերի առավել նպատակային և արդյունավետ ծախսային ուղղվածության ապահովումը: Բնակչության առողջության պահպանման և բարելավման նպատակով առողջապահության ոլորտում նախատեսվում են՝ բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովման,



բնակչության առողջության առաջնային պահպանման, մոր և մանկան առողջության պահպանման, բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության ապահովման, ինչպես նաև սոցիալական կախվածություն և հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների բժշկական օգնության (այդ թվում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման), դեղորայքային ապահովման և այլ նպատակային առողջապահական ծրագրեր:

Ինչպես Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեով, այնպես էլ Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի նախագծով առողջապահության ծախսերի ձևավորումն ունի երկու հիմնական մոտեցում.

- առողջապահական գերակայությունների պահպանում,
- սոցիալական ուղղվածության ապահովում:

### **Դեղագործական ապրանքներ**

«Դեղագործական ապրանքներ» դասը ընդգրկում է «Դեղորայքի տրամադրում ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց» և «Դեղորայքի տրամադրում պետական պահպանության ծառայությանը» ծրագրերը, որոնց գծով համապատասխանաբար նախատեսվում են 3,686.4 մլն դրամ և 1.1 մլն դրամ՝ 2012 թվականի չափով: Ծրագրերով նախատեսվում են կենտրոնացված միջոցներով դեղորայքի ձեռքբերման ծախսեր: Ծրագրի շրջանակներում ձեռք կբերվի հոգեմետ, չարորակ նորագոյացություններով հիվանդների, շաքարային և ոչ շաքարային դիաբետով հիվանդների, էպիլեպսիայով, պարբերական հիվանդությամբ հիվանդների, երիկամների փոխպատվաստում տարած հիվանդների համար դեղորայք:

### **Արտահիվանդանոցային ծառայություններ**

Առողջապահության ոլորտի հիմնական գերակայություն է շարունակում համարվել առողջության առաջնային պահպանման ոլորտի զարգացումը, ամբուլատոր-պոլիկլինիկական օղակի դերի բարձրացմանն ուղղված միջոցառումների ապահովումը, կանխարգելիչ ուղղվածության ուժեղացումը, որակյալ բժշկական օգնություն ստանալու մատչելիության ընդլայնումը (ամբուլատոր-պոլիկլինիկական անվճար բուժօգնության իրականացման սկզբունքի պահպանմամբ):

Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի նախագծով «Արտահիվանդանոցային ծառայություններ» խմբի գծով նախատեսվում է 23,910.7 մլն դրամ: Հայաստանի Հանրապետության 2012 թվականի համապատասխան ցուցանիշի նկատմամբ ծախսերն աճել են 107.5 մլն դրամով: Այդ ավելացման 92.3 տոկոսը կամ շուրջ 99.2 մլն դրամ պայմանա-

վորված է «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկմամբ: Աշխատողների ամսական աշխատավարձի նվազագույն չափը 2013 թվականին 35.0 հազ. դրամ նախատեսելու հետ կապված ծախսերն աճել են 13.7 մլն դրամով, իսկ առանձին ծրագրերի գծով բնակչության թվաքանակի փոփոխության և ծախսերի ճշգրտման հետ կապված նվազել են 5.4 մլն դրամով:

Ինչպես 2012 թվականին, այնպես էլ 2013 թվականին արտահիվանդանոցային բուժօգնության շրջանակներում նախատեսվում է տասներեք ծրագրերի իրականացում: Այսպես.

1. «Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ» ծրագիրը ներառում է ընտանեկան բժշկի և տեղամասային թերապևտի (մանկաբույժի) կողմից բնակչության առողջության պահպանման, հիվանդությունների կանխարգելման, հիվանդների բժշկական օգնության և նրանց նկատմամբ շարունակական հսկողության ապահովման, անհրաժեշտության դեպքում, հիվանդանոցային բուժման կարիք ունեցողների հոսպիտալացման կազմակերպման միջոցառումների իրականացումը, գյուղական բնակավայրերում բուժակ-մանկաբարձական կետերի միջոցով բնակչության մինչբժշկական օգնության և սպասարկման իրականացումը, բուժքույրերի կողմից դպրոցներում երեխաների բժշկական օգնության և սպասարկման ապահովումը, արտոնյալ պայմաններով դեղամիջոցներ ստանալու իրավունք ունեցող անձանց տեղամասային թերապևտի (մանկաբույժի) և ընտանեկան բժշկի միջոցով, իսկ առանձին հիվանդությունների գծով՝ համապատասխան մասնագետի միջոցով անհրաժեշտ դեղորայքով ապահովումը:

«Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվում է 8,664.2 մլն դրամ 2012 թվականի 8,621.3 մլն դրամի դիմաց կամ 42.9 մլն դրամով ավելի: «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկման հետ կապված ծախսերը աճել են 50.6 մլն դրամով: Միաժամանակ, դպրոցներում բուժքույրերի կողմից սպասարկվող աշակերտների թվաքանակի նվազելու արդյունքում, ծախսերը նախատեսվում են 7.7 մլն դրամով պակաս:

Ծրագրի շրջանակներում ընտանեկան բժիշկների, տեղամասային թերապևտների (մանկաբույժների), բուժքույրերի, կրտսեր բուժանձնակազմի և վարչատնտեսական անձնակազմի պահպանման, ինչպես նաև տեղամասերի աշխատանքների ապահովման տնտեսական և դեղորայքային (առաջին օգնության համար անհրաժեշտ դեղորայքի և վիրակապական նյութերի) ծախսերի գծով նախատեսվում է 6,868.8 մլն դրամ: «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկման արդյունքում բժշկական անձնակազմի աշխատողների հաշվարկային միջին ամսական աշխատավարձը նախատեսվում է 102,107 դրամ՝ 2012 թվականի 84,700 դրամի դիմաց, իսկ միջին բուժանձնակազմի աշխատողների հաշվարկային միջին

ամսական աշխատավարձը՝ 66,945 դրամ, 2012 թվականի 54,250 դրամի դիմաց: Լեռնային և բարձր լեռնային բնակավայրերում տեղամասային սկզբունքով աշխատող բուժանձնակազմին նախատեսվում է սահմանված աշխատավարձի նկատմամբ 10% և 20% հավելումներ:

Ծրագրի շրջանակներում անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր ձեռք բերելու իրավունք ունեցող բնակչության սոցիալական խմբերի համար նախատեսվում է 1,345.2 մլն դրամ: Բացի այդ բուժքույրերի կողմից դպրոցներում երեխաների բժշկական օգնության և սպասարկման ապահովման գծով նախատեսվում է 450.1 մլն դրամ:

Ելնելով նրանից, որ ամբուլատոր-պոլիկլինիկական բուժօգնության ֆինանսավորումը իրականացվում է բնակչության մեկ շնչի հաշվով ֆինանսավորման սկզբունքով՝ հաշվարկի համար բնակչության հաշվարկային մեծությունը ընդունված է 3,274.3 հազար, որից մեծահասակներ՝ 2,544.9 հազար, երեխաներ՝ 656.4 հազար, նախազորակոչային և զորակոչային տարիքի պատանիներ՝ 73.0 հազար:

Տարվա կտրվածքով տեղամասային թերապևտի (ընտանեկան բժշկի) կողմից 18 տարին լրացած և ավելի բարձր տարիքի անձանց բժշկական օգնության և սպասարկման համար մեկ բնակչի հաշվով հատկացվող միջինացված գումարը նախատեսվում է 1,615 դրամ՝ 2012 թվականի 1,605 դրամի դիմաց, իսկ մանկաբույժի (ընտանեկան բժշկի) կողմից մինչև 18 տարեկան երեխաների բժշկական օգնության և սպասարկման համար մեկ երեխայի (այդ թվում պատանիի) հաշվով հատկացվող միջինացված գումարը նախատեսվում է 3,249 դրամ՝ 2012 թվականի 3,225 դրամի դիմաց: Բացի դրանից, բուժքույրերի կողմից բուժակ-մանկաբարձական կետերում սպասարկվող 18 տարին լրացած և ավելի բարձր տարիքի բնակչության համար մեկ բնակչի հաշվով հատկացվող միջինացված գումարը նախատեսվում է 580 դրամ, իսկ երեխաների համար՝ 1,228 դրամ: Դպրոցներում իրականացվող երեխաների բժշկական օգնության և սպասարկման ծախսերը ըստ մեկ աշակերտի ֆինանսավորման նախատեսվում են տարեկան 1,223 դրամ՝ 2012 թվականի 1,214 դրամի դիմաց:

2. «Նեղ մասնագիտացված բժշկական օգնության ծառայություններ» ծրագիրը ներառում է ամբուլատոր-պոլիկլինիկական օղակի և դիսպանսերների նեղ մասնագետների կողմից բնակչության բուժական-խորհրդատվական մասնագիտացված օգնության ապահովումը (ուռուցքաբանական, ներզատաբանական, հոգեբուժական, մաշկավեներաբանական, հակատուբերկուլյոզային, նարկոլոգիական, ինֆեկցիոն, սրտաբանական, քիթ-կոկորդ-ականջաբանական, վիրաբուժական/վնասվածքաբանական, նյարդաբանական, ակնաբուժական և այլ կաթինետների միջոցով) ամբողջ բնակչության համար, առանց հաճախումների սահմանափակման:

«Նեղ մասնագիտացված բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվում է 2,805.1 մլն դրամ 2012 թվականի 2,749.8 մլն դրամի դիմաց կամ 55.3 մլն դրամով

ավելի: «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկման հետ կապված ծախսերը աճել են 36.5 մլն դրամով, աշխատողների ամսական աշխատավարձի նվազագույն չափը 2013 թվականին 35.0 հազ. դրամ նախատեսելու հետ կապված՝ 13.7 մլն դրամով, իսկ բնակչության թվաքանակի փոփոխության հետ կապված՝ 5.1 մլն դրամով:

«Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկման արդյունքում բժշկական անձնակազմի աշխատողների հաշվարկային միջին ամսական աշխատավարձը նախատեսվում է 88,135 դրամ՝ 2012 թվականի 72,600 դրամի դիմաց, իսկ միջին բուժանձնակազմի աշխատողների հաշվարկային միջին ամսական աշխատավարձը՝ 54,647 դրամ, 2012 թվականի 43,600 դրամի դիմաց: Հակատուբերկուլյոզային, հոգեբուժական և մաշկավեներաբանական կաբինետներում աշխատող բուժանձնակազմին՝ աշխատանքային վնասակարության համար՝ նախատեսվում է սահմանված աշխատավարձի նկատմամբ 50 տոկոս հավելումներ:

Նեղ մասնագիտական բժշկական օգնության գծով ըստ նեղ մասնագետի բուժօգնության իրականացման մեկ շնչի ֆինանսավորման միջինացված գումարը նախատեսվում է 18 և բարձր տարիքի անձանց համար 406 դրամ՝ 2012 թվականի 401 դրամի դիմաց, իսկ մինչև 18 տարեկան երեխաների (այդ թվում պատանիների) համար 675 դրամ՝ 2012 թվականի 666 դրամի դիմաց:

3. «Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության ծառայություններ» ծրագիրը ներառում է հղիների և գինեկոլոգիական հիվանդություններով տառապող կանանց մանկաբարձագինեկոլոգիական օգնության ապահովումը՝ կանանց կոնսուլտացիաների (կաբինետների) միջոցով, ինչպես նաև 15 տարեկան աղջիկների առողջական վիճակի գնահատումը և խորհրդատվությունը:

Ծրագրի գծով նախատեսվում է 1,332.4 մլն դրամ 2012 թվականի 1,312.6 մլն դրամի դիմաց կամ 19.8 մլն դրամով ավելի: «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկման հետ կապված ծախսերը աճել են 9.0 մլն դրամով, իսկ բնակչության թվաքանակի փոփոխության հետ կապված՝ 10.8 մլն դրամով:

«Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկման արդյունքում մանկաբարձ-գինեկոլոգի հաշվարկային միջին ամսական աշխատավարձը նախատեսվում է 120,148 դրամ՝ 2012 թվականի 100,320 դրամի դիմաց, իսկ մանկաբարձուհու հաշվարկային միջին ամսական աշխատավարձը՝ 73,781 դրամ, 2012 թվականի 60,170 դրամի դիմաց:

Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության գծով որպես հաշվարկային մեծություն ընդունված իգական սեռի անձանց թիվը կազմում է 1,341.6 հազար և տարվա կտրվածքով

նշված մեկ անձի հաշվով հատկացվող միջինացված գումարը նախատեսվում է 993 դրամ՝ 2012 թվականի 986 դրամի դիմաց:

4. «Շարունակական հսկողություն պահանջող և առանձին հիվանդությունների բուժման ծառայություններ» ծրագիրը ներառում է շարունակական հսկողություն պահանջող և առանձին հիվանդությունների ամբուլատոր բուժման կազմակերպումը պոլիկլինիկաներում, ամբուլատորիաներում, հիվանդանոցներում, մասնագիտացված կենտրոններում, միավորումներում, ընտանեկան բժշկի գրասենյակներում:

Ծրագրի գծով նախատեսվում է 142.0 մլն դրամ՝ 2012 թվականի չափով:

5. «Օրթոդոնտոլոգիական բժշկական օգնության ծառայություններ» ծրագիրը ներառում է երեխաների համար մասնագիտացված օրթոդոնտոլոգիական միջոցառումների իրականացում (հետազոտում և բուժում) մասնագիտացված ստոմատոլոգիական պոլիկլինիկաների միջոցով:

Ծրագրի գծով նախատեսվում է 8.6 մլն դրամ՝ 2012 թվականի չափով:

6. «Բարձր ռիսկի խմբերում ընդգրկված բնակչության մոտ հիվանդությունների հայտնաբերման, առողջության գնահատման և բուժման ծառայություններ» ծրագիրը ներառում է մտավոր, հոգեկան, լսողական, ֆիզիկական և շարժողական խանգարումներով երեխաների առողջական վիճակի գնահատումը և վերականգնողական բուժման ամբուլատոր կազմակերպումը:

Ծրագրի գծով նախատեսվում է 173.0 մլն դրամ՝ 2012 թվականի չափով:

7. «Սպորտային բժշկության և հակադոպինգային հսկողության ծառայություններ» ծրագիրը ներառում է տարբեր մարզաձևերի գծով ՀՀ հավաքական թիմերում ընդգրկված մարզիկների բժշկական հսկողության, հիվանդությունների և վնասվածքների ախտորոշման և բուժման իրականացումը: ՀՀ հավաքական թիմերի անդամներին բարձրորակ դեղորայքով, վիտամիններով և վերականգնողական միջոցներով ապահովումը և հակադոպինգային հսկողության իրականացումը:

Ծրագրի գծով նախատեսվում է 72.7 մլն դրամ 2012 թվականի 71.4 մլն դրամի դիմաց կամ 1.3 մլն դրամով ավելի, որը հիմնականում պայմանավորված է «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկմամբ:

8. «Հեմոդիալիզի անցկացման ծառայություններ» ծրագիրը ներառում է հեմոդիալիզի կարիք ունեցող հիվանդների բժշկական օգնության համալիր միջոցառումների իրականացումը հիվանդանոցների միջոցով:

Ծրագրի գծով նախատեսվում է 1,406.8 մլն դրամ՝ 2012 թվականի չափով:

9. «Ստոմատոլոգիական բժշկական օգնության ծառայություններ» ծրագիրը ներառում է ամբուլատոր-պոլիկլինիկական մասնագիտացված ստոմատոլոգիական օգնության իրականա-

ցումը մինչև 8 տարեկան, ինչպես նաև 12 տարեկան երեխաներին, 65 տարեկան և ավելի բարձր տարիքի անձանց և սոցիալապես անապահով խմբերում ընդգրկվածներին:

Ծրագրի գծով նախատեսվում է 746.7 մլն դրամ՝ 2012 թվականի չափով:

10. «Երեխաների ստոմատոլոգիական առաջնային կանխարգելման ծառայություններ» ծրագիրը ներառում է 6 և 12 տարեկան երեխաների բերանի խոռոչի հիգիենայի պահպանման համալիր միջոցառումների իրականացումը:

Ծրագրի գծով նախատեսվում է 91.0 մլն դրամ 2012 թվականի 93.6 մլն դրամի դիմաց կամ 2.6 մլն դրամով պակաս, որը պայմանավորված է երեխաների թվաքանակի նվազմամբ:

11. «Լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ» ծրագիրը ներառում է ամբուլատոր-պոլիկլինիկական օղակում ըստ բժշկական ցուցումների լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների իրականացման ապահովումը ամբողջ բնակչության համար՝ անկախ տարիքից և սոցիալական կարգավիճակից, ինչպես նաև տուբերկուլյոզով, դիաբետով, չարորակ նորագոյացություններով և սիրտ-անոթային համակարգի հիվանդների (բարձր ռիսկի խմբում ընդգրկված բնորոշիչ ախտանիշներ ունեցող անձանց) լաբորատոր-գործիքային հետազոտությունների իրականացման ապահովումը:

Ծրագրի գծով նախատեսվում է 2,869.8 մլն դրամ՝ 2012 թվականի չափով:

Բնակչության լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտության ծախսերը (առանց զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց) ըստ մեկ շնչի ֆինանսավորման նախատեսվում են 615 դրամ, իսկ զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց համար՝ 3,924 դրամ:

12. «Շտապ բժշկական օգնության ծառայություններ» ծրագիրը ներառում է հանրապետության տարածքում ամբողջ բնակչության համար անհետաձգելի բժշկական օգնության ապահովումը շտապ բժշկական օգնության կանչերի միջոցով:

Ծրագրի գծով նախատեսվում է 2,986.9 մլն դրամ՝ 2012 թվականի չափով:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ավելի քան 395 հազար կանչերի իրականացում:

13. «Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության ծառայություններ» ծրագիրը ներառում է նախազորակոչային և զորակոչային տարիքի անձանց առողջական վիճակի հետազոտումը, գնահատումը, բժշկական օգնության ու սպասարկման կազմակերպումը և առաջին անհրաժեշտության բժշկական պարագաներով և դեղորայքով ապահովումը:

Ծրագրի գծով նախատեսվում է 2,611.4 մլն դրամ 2012 թվականի 2,620.5 մլն դրամի դիմաց կամ 9.1 մլն դրամով պակաս: Ելնելով նրանից, որ զորակոչային և նախազորակոչային տա-

րիքի անձանց շուրջօրյա հիվանդանոցային խնամք չպահանջող բուժօգնության փոխարեն բուժումը իրականացվում է ամբուլատոր պայմաններում ու մեկ դեպքի փոխհատուցման գումարը նախատեսված 20.0 հազ. դրամի փոխարեն փաստացի կազմում է 10.0 հազ. դրամ և հաշվի առնելով զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց ընդհանուր թվաքանակի մեջ փաստացի բուժում ստացողների տոկոսը՝ ծախսերը նախատեսվում են 9.5 մլն դրամով պակաս: Ծրագրի գծով զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց թվաքանակի նվազելու հետ կապված փորձաքննությանն ուղեգրման ճանապարհածախսը նախատեսվում է 1.5 մլն դրամով պակաս: Միաժամանակ, «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկման հետ կապված ծախսերը նախատեսվում են 1.9 մլն դրամով ավելի:

Ծրագրի շրջանակներում գինկոմիսարիատներին կից բժշկական հանձնաժողովներում ընդգրկված մասնագետների կողմից զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննությունն անցկացնելու համար նախատեսվում է 221.8 մլն դրամ: «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկման արդյունքում բժշկական հետազոտում իրականացնող բժշկի համար փոխհատուցման ծախսերը (ամսվա կտրվածքով) նախատեսվում են 72,100 դրամ՝ 2012 թվականի 71,500 դրամի դիմաց, իսկ բուժքույրի համար՝ 53,300 դրամ՝ 2012 թվականի 52,800 դրամի դիմաց: Փորձաքննությանն ուղեգրման ճանապարհածախսի գծով նախատեսվում է 34.5 մլն դրամ, իսկ շուրջօրյա հիվանդանոցային խնամք չպահանջող դեպքերի բուժման համար՝ 5.1 մլն դրամ:

Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց առաջին անհրաժեշտության բժշկական պարագաներով և դեղորայքային ապահովման համար նախատեսվում է 2,350.0 մլն դրամ՝ 2012 թվականի չափով:

### **Հիվանդանոցային ծառայություններ**

Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի նախագծով «Հիվանդանոցային ծառայություններ» խմբի գծով նախատեսվում է 27,256.1 մլն դրամ: Հայաստանի Հանրապետության 2012 թվականի համապատասխան ցուցանիշի նկատմամբ ծախսերն աճել են 175.3 մլն դրամով: Այդ ավելացման 72.0 տոկոսը կամ շուրջ 126.3 մլն դրամ պայմանավորված է «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկմամբ: Աշխատողների ամսական աշխատավարձի նվազագույն չափը 2013 թվականին 35.0 հազ. դրամ նախատեսելու հետ կապված ծախսերն աճել են 49.0 մլն դրամով:

Հիվանդանոցային բուժօգնության շրջանակներում իրականացվող մեկ հիվանդի մեկ օրվա բուժման միջինացված արժեքը նախատեսվում է 13,740 դրամ 2012 թվականի 13,650 դրամի դիմաց: «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկ-

ման արդյունքում բժշկի հաշվարկային միջին ամսական աշխատավարձը նախատեսվում է 86,633 դրամ՝ 2012 թվականի 71,300 դրամի դիմաց, իսկ բուժքույրինը՝ 69,428 դրամ, 2012 թվականի 56,400 դրամի դիմաց (առանց համավճարի հաշվին ավելացման):

Ըստ վիճակագրական դիտարկումների տվյալների բնակչության 8-10%-ը կարիք ունեն ստանալու հիվանդանոցային բուժօգնություն (կամ մոտ 295,000 դեպք), որից պետական պատվերի շրջանակներում 2013 թվականին նախատեսվում է 246,189 դեպք կամ կարիք ունեցողների 83.5 տոկոսը: 2013 թվականին ծնունդների կանխատեսվող թվաքանակից ելնելով նախատեսվում է 1,282 դեպքի պակասեցում: Հաշվի առնելով 2012 թվականի ծննդօգնության գներում կատարված փոփոխությունները՝ կապված տարածաշրջանային համաչափ զարգացման նպատակով ծառայությունների մատուցման իրականացումը ըստ բարդության աստիճանների նախատեսելու հետ (այլ ոչ թե իրականացնողի մակարդակից ելնելով, որի պայմաններում միևնույն տեսակի ծննդաբերությունները փոխհատուցվում են տարբեր գներով) ծննդօգնության դեպքերի պակաս նախատեսելու պայմաններում ծախսերը չեն նվազել:

Հիվանդանոցային բուժօգնության ծառայության գծով հիվանդանոցային դեպքի դիմաց վճարումը կատարվում է ելնելով անվճար բուժօգնության համար հաստատված գներից: Գները հաշվարկվում են մեկ հիվանդի մեկ օրվա բուժման միջինացված արժեքի, բուժման միջին տևողության և ծառայության բարդության հաշվարկային գործակցի արտադրյալով: 2013 թվականին ևս ֆինանսավորումը կիրականացվի սահմանափակված բյուջեի սկզբունքով:

Ինչպես 2012 թվականին, այնպես էլ 2013 թվականին հիվանդանոցային բուժօգնության շրջանակներում նախատեսվում է տասներեք ծրագրերի իրականացում: Այսպես.

1. «Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի շրջանակներում նախատեսվում է 38,951 հիվանդանոցային դեպքի բուժում 4,141.1 մլն դրամ գումարով՝ 2012 թվականի նույն դեպքի և 4,113.7 մլն դրամի դիմաց:

Այս ծրագիրը նպատակաուղղված է բժշկական օգնություն և ծառայություններ մատուցել բնակչության սոցիալապես անապահով խմբերին բժշկական օգնության և ծառայությունների բոլոր տեսակների համար, բացառությամբ՝ կոսմետոլոգիական, օրգանների ու հյուսվածքների փոխպատվաստման և ստոմատոլոգիական թանկարժեք ծառայությունների:

2. «Անհետաձգելի բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի շրջանակներում նախատեսվում է 2,207.2 մլն դրամ գումարով 20,970 հիվանդանոցային դեպքի բուժում՝ 2012 թվականի 2,191.6 մլն դրամի և նույն դեպքի դիմաց:

Ծրագիրն իրականացվում է համաձայն ՀՀ առողջապահության նախարարության կողմից սահմանված անհետաձգելի վիճակների և հիվանդությունների ցանկի:



3. «Տուբերկուլյոզի բժշկական օգնության ծառայություններ» ծրագրով նախատեսվում է 1,313.3 մլն դրամով տուբերկուլյոզի 5,098 հիվանդանոցային դեպքի բուժում՝ 2012 թվականի 1,305.0 մլն դրամի և նույն դեպքի դիմաց:

Ծրագիրը ներառում է նոր հայտնաբերված տուբերկուլյոզով հիվանդների և կրկնակի հիվանդացածների բուժման կազմակերպումը հակատուբերկուլյոզային դիսպանսերներում, տուբերկուլյոզով քրոնիկ հիվանդների երկարատև բժշկական օգնության, սպասարկման և խնամքի ապահովումը հակատուբերկուլյոզային դիսպանսերներում, վերականգնողական բուժման կազմակերպումը հակատուբերկուլյոզային առողջարաններում:

4. «Աղիքային և այլ ինֆեկցիոն հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի շրջանակներում նախատեսվում է 1,125.2 մլն դրամ գումարով 9,542 հիվանդանոցային դեպքի բուժում՝ 2012 թվականի 1,117.9 մլն դրամի և նույն դեպքի դիմաց:

Ինֆեկցիոն հիվանդությունների բուժումը ներառում է աղիքային, վիրուսային և միջատներով տարածվող ինֆեկցիաներով ախտահարվածների բուժում, որն ունի սոցիալական նշանակություն: Ինֆեկցիոն հիվանդություններով տառապող անձանց բուժօգնության կազմակերպումը իրականացվում է ընդհանուր և մասնագիտացված ինֆեկցիոն հիվանդանոցներում, բաժանմունքներում:

5. «Սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի շրջանակներում նախատեսվում է 171.2 մլն դրամ գումարով 1,035 հիվանդանոցային դեպքի բուժում՝ 2012 թվականի 170.1 մլն դրամի և նույն դեպքի դիմաց:

Ծրագրով նախատեսվում է սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններով տառապող անձանց, ինչպես նաև կոնտակտավորների մասնագիտացված բուժկանխարգելիչ օգնության իրականացումը և համապատասխան հսկողության կազմակերպումը մաշկավեներաբանական դիսպանսերներում: Ծրագրի շրջանակներում ներառվել են նաև ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով հիվանդների բժշկական օգնության ծախսերը:

6. «Հոգեկան և նարկոլոգիական հիվանդների բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի շրջանակներում նախատեսվում է 6,128 հիվանդանոցային դեպքի բուժում 1,898.7 մլն դրամ գումարով՝ 2012 թվականի նույն հիվանդանոցային դեպքերի և 1,886.2 մլն դրամի դիմաց:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել քրոնիկ հոգեկան հիվանդների խնամք, հիվանդների փորձաքննություն, հարկադիր և սուր վիճակների բուժում և նարկոլոգիական դիսպանսերներում թմրամոլությամբ, թունամոլությամբ, ալկոհոլամոլությամբ տառապող անձանց հիվանդանոցային բուժման ապահովում:

7. «Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի շրջանակներում նախատեսվում է հիվանդանոցային 10,912 դեպքի բուժում 1,041.5 մլն դրամ գումարով՝ 2012 թվականի նույն դեպքերի և 1,035.3 մլն դրամի դիմաց:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել չարորակ նորագոյացությունների համալիր, վիրահատական և ճառագայթային բուժում, չարորակ հիվանդների ճառագայթային բուժում ցերեկային ստացիոնարի պայմաններում, ինչպես նաև քիմիաթերապևտիկ և սիմպտոմատիկ բուժում:

8. «Վերականգնողական բժշկական օգնության ծառայություններ» ծրագրով նախատեսվում է 565.3 մլն դրամ գումարով 3,794 հիվանդանոցային դեպքի բուժում՝ 2012 թվականի 561.5 մլն դրամի և նույն դեպքի դիմաց:

9. «Ձորակոչային և նախագորակոչային տարիքի անձանց հիվանդանոցային բժշկական օգնություն և փորձաքննություններ» ծրագրի շրջանակներում նախատեսվում է 47,821 հիվանդանոցային դեպքի բուժում 1,174.7 մլն դրամ գումարով՝ 2012 թվականի նույն դեպքի և 1,167.6 մլն դրամի դիմաց:

10. «Թրաֆիքինգի զոհերին բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի շրջանակներում նախատեսվում է 2.2 մլն դրամ:

11. «Մանկաբարձական բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի շրջանակներում նախատեսվում է 56,000 դեպքի բուժում 6,479.3 մլն դրամ գումարով՝ 2012 թվականի 57,282 դեպքի և 6,438.8 մլն դրամի դիմաց: Դեպքերի նվազեցումը 1,282-ով պայմանավորված է ծնունդների թվաքանակի կանխատեսվող նվազեցման հետ:

Ծրագիրն ընդգրկում է ծննդաբերության հետ կապված՝ ծննդաբերության, նախածննդյան և հետծննդյան բարդությունների բուժօգնությունը:

12. «Գինեկոլոգիական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ» ծրագրով նախատեսվում է 398.7 մլն դրամ գումարով 4,890 հիվանդանոցային դեպքի բուժում՝ 2012 թվականի 396.1 մլն դրամի և նույն դեպքի դիմաց:

13. «Երեխաներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի շրջանակներում նախատեսվում է 41,048 հիվանդանոցային դեպքի բուժում 6,737.7 մլն դրամ գումարով՝ 2012 թվականի նույն դեպքի և 6,695.0 մլն դրամի դիմաց:

Ծրագրի գծով նախատեսվում է մինչև 7 տարեկան երեխաների հիվանդանոցային բժշկական օգնության իրականացում՝ անկախ երեխայի հիվանդության ախտորոշումից և սոցիալական կարգավիճակից, ինչպես նաև, մինչև 18 տարեկան երեխաների, հիվանդանոցային բժշկական օգնություն պահանջող անհետաձգելի վիճակների և սուր հիվանդությունների դեպքերում, բուժօգնության իրականացում:

### **Հանրային առողջապահական ծառայություններ**

Հանրային առողջապահական ծառայությունների իրականացմանն ուղղվող ֆինանսական միջոցները կապահովեն Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգությունը, մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակարու վտանգավոր գործոնների ազդեցության բացառումը, մարդու և նրա ապագա սերունդների կենսունակության համար բարենպաստ պայմանների ապահովումը:

Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի նախագծով «Հանրային առողջապահական ծառայություններ» խմբի գծով նախատեսվում է 3,159.5 մլն դրամ: Հայաստանի Հանրապետության 2012 թվականի համապատասխան ցուցանիշի նկատմամբ ծախսերն աճել են 90.0 մլն դրամով: Այդ ավելացման 68.1 տոկոսը կամ շուրջ 61.3 մլն դրամ պայմանավորված է Իմունականխարգելման ազգային ծրագրի գծով գնվող հնգավալենտ, ռոտավիրուսային պատվաստանյութերի քանակի ավելացմամբ և նոր ներդրված պնևմոկոկային պատվաստանյութերի ձեռքբերմամբ: «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկման հետ կապված ծախսերն աճել են 23.8 մլն դրամով, իսկ աշխատողների ամսական աշխատավարձի նվազագույն չափը 2013 թվականին 35.0 հազ. դրամ նախատեսելու հետ կապված՝ 4.9 մլն դրամով:

Հանրային առողջապահական ծառայությունների շրջանակներում նախատեսվում է ութ ծրագրերի իրականացում: Այսպես.

1. «Հիգիենիկ և հակահամաճարակային փորձագիտական ծառայություններ» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 1,836.5 մլն դրամ 2012 թվականի 1,814.6 մլն դրամի դիմաց կամ 21.9 մլն դրամով ավելի: «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկման հետ կապված ծախսերն աճել են 17.0 մլն դրամով, իսկ աշխատողների ամսական աշխատավարձի նվազագույն չափը 2013 թվականին 35.0 հազ. դրամ նախատեսելու հետ կապված՝ 4.9 մլն դրամով:

Ծրագրով նախատեսվում է իրականացնել սանիտարա-քիմիական լաբորատոր հետազոտություններ, մանրէաբանական հետազոտություններ, ֆիզիկական գործոնների հետազոտություններ, խոլերայի նկատմամբ բաց ջրամբարների հետազոտություններ, վարակիչ օջախների ախտահանում և այլն:

2. «Հիգիենիկ և հակահամաճարակային ծառայություններ» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 203.8 մլն դրամ 2012 թվականի 202.7 մլն դրամի դիմաց կամ 1.1 մլն դրամով ավելի, որը պայմանավորված է «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկմամբ:

Ծրագրով նախատեսվում է իրականացնել համաճարակաբանական հետազոտություններ վարակային հիվանդությունների օջախներում, մանրէաբանական հետազոտությունների իրականացում, վարակիչ և ոչ վարակիչ զանգվածային հիվանդությունների, թունավորումների հաշվառում, համաճարակների, բռնկումների, արտակարգ իրավիճակների ժամանակ հատուկ հակահամաճարակային միջոցառումների իրականացում, մալարիայի դեմ պայքարի և կանխարգելման միջոցառումների իրականացում և այլն:

3. Իմունականխարգելման ազգային ծրագիրը, որի գծով նախատեսվում է 399.6 մլն դրամ 2012 թվականի 338.3 մլն դրամի դիմաց կամ աճը կազմում է 61.3 մլն դրամ: Ծախսերի ավելացումը պայմանավորված է գնվող հնգավալենտ և ռոտավիրուսային պատվաստանյութերի քանակի ավելացմամբ և նոր ներդրված պնևմոկոկային պատվաստանյութերի ձեռքբերմամբ (հիմք ընդունելով ԳԱՎԻ (Պատվաստանյութերի և իմունիզացիայի գլոբալ դաշինք) միջազգային դոնոր կազմակերպության առջև Հայաստանի Հանրապետության պարտավորությունը՝ նոր ներդրված պատվաստանյութերի ձեռքբերման գործընթացում պետական մասնակցությունը):

Ծրագրի շրջանակներում ձեռք կբերվի ԲՅԺ-ի (տուբերկուլյոզ) պատվաստանյութ՝ 9.0 մլն դրամ, հեպատիտ Բ՝ 9.6 մլն դրամ, ԱԿԴՓ (դիֆթերիա, փայտացում, կապույտ հագ)՝ 7.8 մլն դրամ, հնգավալենտ պատվաստանյութ՝ 85.4 մլն դրամ, ռոտավիրուսային պատվաստանյութ՝ 45.3 մլն դրամ, պնևմոկոկային՝ 50.0 մլն դրամ, ԱԴՓ-Մ (դիֆթերիա, փայտացում)՝ 5.4 մլն դրամ, պոլիոմելիտ՝ 23.4 մլն դրամ, ԿԿԽ (կարմրուկ, կարմրախտ, խոզուկ)՝ 120.4 մլն դրամ, սեզոնային գրիպի պատվաստանյութ՝ 19.5 մլն դրամ և այլն:

4. «Հատուկ վտանգավոր վարակների կանխարգելման ծառայություններ» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 230.4 մլն դրամ 2012 թվականի 228.8 մլն դրամի դիմաց կամ 1.6 մլն դրամով ավելի, որը պայմանավորված է «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկմամբ:

Հատուկ վտանգավոր վարակների կենտրոնը իրականացնում է էպիզոոտոլոգիական հետազոտություն հանրապետության տարածքում ժանտախտի, տուլարեմիայի և այլ բնական օջախային վարակների էպիզոոտիաները հայտնաբերելու և մարդկանց մեջ հիվանդացությունը ժամանակին կանխելու նպատակով: Նախատեսվում է 1,600 էպիզոոտոլոգիական, 12,050 ժանտախտի և էրիզիպելոյիդի, 2,050 տուլարեմիայի, 2,715 լեպտոսպիրոզի, 2,050 խոլերայի և այլ հետազոտություններ:

5. «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման և բուժօգնության ծառայություններ» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 115.8 մլն դրամ 2012 թվականի 112.9 մլն դրամի դիմաց կամ 2.9 մլն դրամով ավելի, որը պայմանավորված է «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկմամբ:

Ծրագրի շրջանակներում իրականացվում է ՄԻԱՎ վարակի տարածվածության մասին տեղեկատվության ստացում, ընտրված խմբերում վարակի միտումների ընթացիկ հսկողություն: Նախատեսվում է ՄԻԱՎ հակամարմնի հայտնաբերման գծով համաճարակաբանական հետազոտություն՝ իմունոֆերմենտային անալիզի մեթոդով, արագ թեստավորման, ռեֆերենսային մեթոդով և այլն, ինչպես նաև մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելում:

6. «Վարակիչ հիվանդությունների օջախների ախտահանման ծառայություններ» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 61.1 մլն դրամ 2012 թվականի 60.7 մլն դրամի դիմաց կամ 0.4 մլն դրամով ավելի, որը պայմանավորված է «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկմամբ:

Ծրագրի շրջանակներում հաշվարկվել է 3,392 վարակիչ հիվանդների օջախների ախտահանում յուրաքանչյուրը 18,000-ական դրամով:

7. «Արյան հավաքագրման ծառայություններ» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 212.2 մլն դրամ 2012 թվականի 211.3 մլն դրամի դիմաց կամ 0.9 մլն դրամով ավելի, որը պայմանավորված է «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկմամբ:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է հազվագույտ արյան հավաքագրման և պաշարման հետազոտություններ, արյան հիվանդություններով տառապող հիվանդների դիսպանսեր հսկողության իրականացում, հանրապետության արյան ծառայություններին կազմակերպչամեթոդական օգնության ցուցաբերում և այլ հետազոտություններ:

8. Ծխելու դեմ պայքարի և շրջակա միջավայրի պահպանության պետական ծրագիրը, որի գծով նախատեսվում է 100.0 մլն դրամ՝ 2012 թվականի չափով:

Ծրագրի շրջանակներում կիրականացվի ծխախոտի օգտագործման համաճարակաբանական հսկողության համակարգի մշակում և ներդնում, ինչպես նաև հասարակության լայն խավերի համար ծխախոտի օգտագործման և առողջության վրա վերջինիս ազդեցության մասին տեղեկատվության պատրաստում, ներկայացում, ինչպես նաև հակածխախոտային ազգային ռազմավարության, ծխելու տարածվածության և դրանից բխող հետևանքների գնահատման մասին զեկույցի հրապարակում: ՀՀ պետական բյուջեից հատկացվում է ֆինանսական միջոցներ հասարակական կազմակերպություններին՝ որպես դրամաշնորհ տրամադրելու նպատակով, հակածխախոտային քարոզարշավների կազմակերպման համար:

### **Առողջապահական հարակից ծառայություններ և ծրագրեր**

Առողջապահական հարակից ծառայությունների և ծրագրերի շրջանակներում նախատեսվում է 14 ծրագրերի իրականացում: Այսպես.

1. «Դատաբժշկական և գենետիկ ծառայություններ» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 339.4 մլն դրամ 2012 թվականի 330.9 մլն դրամի դիմաց կամ 8.5 մլն դրամով ավելի, որը պայմանավորված է «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկմամբ:

«Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունն իր 11 մարզային բաժիններով սպասարկում է ՀՀ դատախազությանը, ՀՀ արդարադատության և ՀՀ պաշտպանության նախարարություններին, ինչպես նաև ՀՀ կառավարությանն առնթեր ազգային անվտանգության ծառայությանը և ՀՀ ոստիկանությանը, իրականացնում է դիակների, կենդանի անձանց, իրեղեն ապացույցների, դատաքիմիական, դատաբժշկաքրեագիտական, դատագենետիկ, հյուսվածքաբանական և դատակենսաբանական փորձաքննություններ, ինչպես նաև դիակների արտաշիրիմումներ:

2. «Պաթանատոմիական ծառայություններ» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 39.3 մլն դրամ 2012 թվականի 38.3 մլն դրամի դիմաց կամ 1.0 մլն դրամով ավելի, որը պայմանավորված է «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկմամբ:

Ծրագրի միջոցով կիրականացվի հիվանդությունների ճշտված ախտորոշում՝ սեկցիոն, վիրահատական և բիոպսիոն նյութերի հետազոտության միջոցով, մանկական դիակների դիահերձում, մահվան պատճառների ճշտում:

3. «Հանրապետությունից դուրս բուժման ուղեգրված հիվանդների ճանապարհաձախսի փոխհատուցում» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 40.4 մլն դրամ՝ 2012 թվականի չափով:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է 111 ուղեգրվող հիվանդի ճանապարհաձախսի փոխհատուցման գումար (նախատեսվում է նաև ուղեկցողի ճանապարհաձախսը):

4. «Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններ» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 395.5 մլն դրամ՝ 2012 թվականի չափով:

Ծրագրի գծով նախատեսվում է յուրահատուկ ու բացառիկ բուժսարքավորումներով և տեխնոլոգիաներով անվճար ախտորոշիչ հետազոտությունների իրականացում:

5. «Դեղաքաղաքականությունից բխող փորձագիտական և մեթոդաբանական ծառայություններ» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 20.7 մլն դրամ 2012 թվականի 20.0 մլն դրամի դիմաց կամ 0.7 մլն դրամով ավելի, որը պայմանավորված է «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկմամբ:

Ծրագրի շրջանակներում կիրականացվի դեղագործական քաղաքականությանը վերաբերող աշխատանքներ, հիմնական և հսկվող դեղերի ցուցակների հրապարակում և այլն:

6. «Հաշմանդամ և կարիքավոր երեխաներին օրթեզներով և կորսետներով ապահովման ծառայություններ» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 81.8 մլն դրամ՝ 2012 թվականի չափով:

7. «Հանրային իրազեկման ծառայություններ» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 80.0 մլն դրամ՝ 2012 թվականի չափով:

Ծրագիրը ընդգրկում է ամենամյա պետական նպատակային ծրագրերի շրջանակներում «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ կառավարության որոշման ու դրանից բխող ՀՀ առողջապահության նախարարության կողմից մշակված և ընդունված նորմատիվային ակտերի լուսաբանման աշխատանքներ, բնակչության առողջության պահպանման, բուժկանխարգելման, առողջապահության ոլորտի կառավարման հարցերի վերաբերյալ մեթոդական ձեռնարկների մշակում և տպագրում:

8. «Մասնագիտական, խորհրդատվական և կազմակերպամեթոդական աջակցության ծառայություններ» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 221.5 մլն դրամ 2012 թվականի 35.0 մլն դրամի դիմաց կամ 186.5 մլն դրամով ավելի: Ծախսերի աճը պայմանավորված է «Ակադեմիկոս Ս. Խ. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից բուժօգնության որակի բարելավմանն ուղղված կլինիկական ու բժշկատնտեսագիտական ստանդարտների մշակման, առողջապահության ոլորտի նորմատիվային բազայի բարելավմանն ուղղված աշխատանքների իրականացման համար միջոցների նախատեսմամբ:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է նաև շաքարային դիաբետով հիվանդների դիսպանսեր հսկողության, կոնսուլտացիոն և լաբորատոր ախտորոշիչ հետազոտությունների և հիվանդներին դեղերով ապահովման աշխատանքների իրականացում, հանրապետության ուռուցքաբանական ծառայություններին կազմակերպչամեթոդական օգնության ցուցաբերում, ակտիվ, ոչ ակտիվ և ախտորոշումը չճշտված տուբերկուլյոզով հիվանդների կոնսուլտացիոն բուժօգնության և ախտորոշիչ հետազոտությունների, ինչպես նաև դիսպանսեր հսկողության իրականացում, նարկոլոգիական, հոգեկան և սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններով հիվանդների դիսպանսեր հսկողության իրականացում, նախազորակոչային և զորակոչային տարիքի անձանց նյարդահոգեբանական փորձաքննության իրականացում, ինչպես նաև հաշվառման մեջ գտնվող հոգեկան հիվանդների դիսպանսեր հսկողության իրականացում, պրոֆեսիոնալ հիվանդություններով տառապող հիվանդների կազմակերպչամեթոդական օգնության իրականացում, սպինալ հիվանդների դիսպանսեր հսկողության իրականացում:

9. «Այլ բուժօգնության և սպասարկման գծով ծառայություններ» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 15.0 մլն դրամ՝ 2012 թվականի չափով:

10. «Մարդասիրական օգնության կարգով ստացվող դեղերի և դեղագործական արտադրանքի ստացման, մաքսագերծման և բաշխման աշխատանքներ» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 40.7 մլն դրամ 2012 թվականի 40.0 մլն դրամի դիմաց կամ 0.7 մլն դրամով ավելի,

որը պայմանավորված է «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկմամբ:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է մարդասիրական օգնության կարգով ստացվող, հսկվող դեղերի և դեղագործական արտադրանքի փաստաթղթային և լաբորատորային դեղագրքային փորձաքննության ու եզրակացության իրականացում:

11. Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագիրը, որի գծով նախատեսվում է 93.6 մլն դրամ 2012 թվականի 92.0 մլն դրամի դիմաց կամ 1.6 մլն դրամով ավելի, որը պայմանավորված է «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկմամբ:

Ծրագրի նպատակն է բնակչությանը պահպանել տուբերկուլոզի տարածման վտանգից՝ ապահովել հիվանդության վաղ հայտնաբերումը: Ծրագրի շրջանակներում «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ-ը իրականացնում է ծրագրի աշխատանքների կազմակերպման, այդ թվում՝ մոնիտորինգի, եռամսյակային վիճակագրական տվյալների հավաքագրում, հակատուբերկուլոզային բուժաստատություններում տուբերկուլոզի ծառայության կազմակերպման և ԱՀԿ-ի կողմից մշակված ստանդարտ ընթացակարգերի կիրառման ֆունկցիաներ, ստուգայցերի հաճախակի կազմակերպում, հիվանդներին սոցիալ-հոգեբանական աջակցության ցուցաբերում և այլն:

12. «Բժիշկ-մասնագետների ժամանակավոր ուղեգրման միջոցով ՀՀ մարզային առողջապահական կազմակերպություններում բժշկական ծառայությունների մատուցում» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 50.2 մլն դրամ՝ 2012 թվականի չափով:

**Առողջապահության ոլորտում 2013 թվականին նախատեսվում է իրականացնել նաև հետևյալ նպատակային վարկային ծրագրերը.**

**1. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Առողջապահական համակարգի արդիականացման երկրորդ ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման ծրագիր (ծրագրի տևողությունը՝ 2011-2014թթ.)**

Ծրագրի շրջանակներում նախատեսվում են իրականացնել հետևյալ աշխատանքները.

ա/ երկու ամբուլատորիաներում և Երևանի Էրեբունի բժշկական քոլեջի ընտանեկան բուժքույրության ամբիոնում իրականացվելու են վերանորոգման աշխատանքներ.

բ/ Գյումրիի առողջապահական համակարգի արդիականացման նպատակով Գյումրու նոր բժշկական կենտրոնը համալրվելու է բժշկական պարագաներով, ինչպես նաև բժշկական թափոնների կառավարումն ժամանակակից միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով նախատեսվում է ձեռք բերել բժշկական պարագաներ և համապատասխանաբար բժշկական թափոնների այրման վառարան.



զ/ Գավառի բժշկական կենտրոնի դիահերձարանը կհագեցվի նոր բժշկական սարքավորումներով և կհամալրվի նոր բժշկական պարագաներով: Բժշկական թափոնների կառավարումն ժամանակակից միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով նախատեսվում է ձեռք բերել բժշկական թափոնների այրման վառարան: Գեղարքունիքի մարզում ստեղծվել է առաջին հեմոդիալիզի բաժանմունքը, որի համար ձեռք կբերվեն համապատասխան սարքավորումներ:

դ/ ՀՀ Սյունիքի մարզի Մեղրիի տարածաշրջանում 2012 թվականին սկսված նոր բժշկական կենտրոնի կառուցման շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել 2013 թվականին, որի համար նախատեսվում է նաև ձեռք բերել բժշկական սարքավորումներ, կահույք և պարագաներ,

ե/ ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի տարածաշրջանում 2013 թվականին կիրականացվեն Գորիսի բժշկական կենտրոնի դիահերձարանի նախագծման և կառուցման աշխատանքները, իսկ Գորիսի, Արարատի և Ապարանի բժշկական կենտրոնները կհամալրվեն նաև հավելյալ բժշկական կահույքով և բժշկական թափոնների այրման վառարաններով,

զ/ Արմավիրի ԲԿ համար նախատեսվում է ձեռք բերել բժշկական թափոնների այրման վառարան,

է/ 2012 թվականին ՀՀ Սյունիքի մարզի Կապանի բժշկական կենտրոնի արդիականացման շրջանակներում նախատեսվում է իրականացնել մասնաշենքերի վերանորոգման շինարարական աշխատանքներ, որոնք նախատեսվում է ավարտել 2013 թվականին: Հիմնանորոգված բժշկական կենտրոնի համար նախատեսվում է ձեռք բերել բժշկական սարքավորումներ, կահույք և պարագաներ:

ը/ 2012 թվականին կսկսվեն և 2013 թվականին կշարունակվեն ՀՀ Կոտայքի մարզի Աբովյանի բժշկական կենտրոն բժշկական կենտրոնի հիմնանորոգման շինարարական աշխատանքները, իսկ 2013 թվականին կշարունակվեն նաև Բերդի բժշկական կենտրոնի արդիականացմանն ուղղված աշխատանքները:

թ/ ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքում ժամանակակից չափանիշներին համապատասխանող բժշկական կենտրոն ունենալու նպատակով կիրականացվի Վանաձորի հիվանդանոցային համալիրի արդիականացման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և շինարարական աշխատանքներ:

Շրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2013թ. համար ծրագրված է 2,950,1 մլն դրամ:

**2. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Առողջապահության ոլորտում հեմատոլոգիայի և օնկոլոգիայի ծրագիր» (ծրագրի տևողությունը՝ 2012-2015թթ.)**

Ծրագիրն ընդգրկում է Հայաստանում արյունաբանության և ուռուցքաբանության բարձրագույն մակարդակի բարելավումը, հիմնվելով երկարաժամկետ կարիքների գնահատման և զարգացման ռազմավարության վրա:

Ծրագրի զարգացման նպատակն է բարելավել առողջապահական համակարգերի հնարավորությունները ընտրված ոչ-տարափոխիկ հիվանդությունների կանխարգելման, վաղ հայտնաբերման և կառավարման համար:

Ծրագիրն իրականացվելու է հետևյալ բաղադրիչներով.

ա/ հիվանդության կանխարգելումն ու կառավարումը,

բ/ կարողությունների կառուցում մասնագիտացված հիվանդանոցներում, որի շրջանակներում կարող է ֆինանսավորել արյունաբանության հիվանդանոցի հիմնանորոգումը և բարձրագույն մակարդակի ճառագայթային թերապիայի կենտրոնի ստեղծումը, սարքավորումներով ապահովումը, շարժական առողջապահական կլինիկաները, աշխատակազմի վերապատրաստումը, կլինիկական ուղեցույցների վերանայումներն ու մշակումը և բուժման ստանդարտները:

գ/ առողջապահության խթանում և հսկողություն, որը ուղղված է կրճատել հիվանդությունների ռիսկային գործոնները՝ հիմնական վտանգների մասին հասարակության իրազեկվածությունը բարձրացնելու միջոցով:

Ծրագիրը գտնվում է բանակցային/նախապատրաստական փուլում և դրանով նախատեսվող աշխատանքների իրականացման նպատակով 2013թ. համար ծրագրված է 6,809,2 մլն դրամ:

**Առողջապահություն (այլ դասերին չպատկանող)**

Դասը ընդգրկում է «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում (նախարարությունների աշխատակազմերի մասով) Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն» ծրագիրը, որի գծով 2013 թվականին նախատեսվում է 1,044.3 մլն դրամ 2012 թվականի 1,058.6 մլն դրամի դիմաց (նշված ծրագրի բացատրագիրը տես պետական կառավարման մարմինների պահպանման ծախսերին վերաբերող հատվածում):

**Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ**

**Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում** Դասը ընդգրկում է «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում (նախարարների աշխատակազմերի մասով) Հայաստանի Հան-

րապետության առողջապահության նախարարություն» ծրագիրը, որի գծով 2013 թվականին նախատեսվում է 41.0 մլն դրամ 2012 թվականի 44.8 մլն դրամի դիմաց (նշված ծրագրի բացատրագիրը տես պետական կառավարման մարմինների պահպանման ծախսերին վերաբերող հատվածում):

Առողջապահության բնագավառի ծախսերի համեմատությունը՝ 2011 թվականի փաստացի, 2012 թվականի բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 10 աղյուսակում:

2013 թվականի Առողջապահության պետական նպատակային ծրագիրը արտացոլված է սույն բացատրագրի N 2 հավելվածում:

**Հ ա ն գ ս տ ի, մ շ ա կ ու յ թ ի և կ ր ո ն ի ք ն ա գ ա վ ա ռ ու մ** ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված հատկացումները կազմում են **18,045.2** մլն դրամ՝ ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով նախատեսված **22,729.2** մլն դրամի դիմաց, կամ ծախսերը ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի (այսուհետ՝ ՀՀ 2012 թվականի) նկատմամբ նվազել են 4,684.0 մլն դրամով (20.6 տոկոսով): Ծախսերի նվազումը պայմանավորված է ծրագրերի ավարտմամբ և տարադրամի փոփոխությամբ:

Պետական կառավարման մարմինների պահպանման ծախսերը աճել են 31.9 մլն դրամով (բացատրությունը ներկայացված է պետական կառավարման մարմինների պահպանման ծախսերի վերաբերյալ բացատրագրի մասում):

Բնագավառի միջին ամսական հաշվարկային աշխատավարձը հաշվարկվել է՝ հիմք ընդունելով 2013 թվականին նվազագույն ամսական աշխատավարձի՝ 35000 դրամ նախատեսումը և «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի կիրարկումը:

ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված հատկացումները ներկայացված են ներքոհիշյալ խմբերում ընդգրկված ծառայությունների, մշակութային, երիտասարդական, սպորտային ծրագրերի, գրականության հրատարակման ծախսերի տեսքով:

**Հանգստի և սպորտի** համար նախատեսված հատկացումները նպատակ ունեն ապահովել ազգաբնակչության առողջության ամրապնդումը, անհատի ներդաշնակ զարգացումը, աշխատունակության բարձրացումն ու երկարակեցության ապահովումը, բարձրակարգ մարզիկների պատրաստումը, միջազգային մրցասպարեզներում Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի և մարզիկների մասնակցության ապահովումը:

Հանգստի և սպորտի ծառայությունների համար 2013 թվականին նախատեսված են 1,625.1 մլն դրամ հատկացումներ՝ (ՀՀ 2012 թվականի՝ 1,443.1 մլն դրամի դիմաց), որոնք ուղղվելու են միջազգային տարբեր մակարդակի միջոցառումներին, ուսումնամարզական հավաքներին, հանրապետական առաջնություններին Հայաստանի հավաքական թիմերի մասնակ-

ցության ապահովման նպատակով ՀՀ մարզական ֆեդերացիաներին աջակցմանը, Եվրոպայի երիտասարդության օլիմպիական փառատոններին, Ֆրանկաֆոնիայի 8-րդ միջազգային խաղերին, Կազանի 27-րդ համաշխարհային ունիվերսիադային, Բուլղարիայում կայանալիք խուլերի ամառային օլիմպիադային մասնակցության ապահովմանը, մարզական խաղերի և փառատոնների անցկացմանը, Աշխարհի, Եվրոպայի առաջնություններում հաղթողների և մրցանակակիրների պարգևատրման ծախսերի իրականացմանը, հաշմանդամային սպորտին, շախմատիստների պատրաստմանը և նավամոդելային սպորտին աջակցմանը:

Հանգստի և սպորտի ծառայությունների գծով ծախսերի աճը՝ 182.0 մլն դրամով, կամ 12.6 տոկոսով պայմանավորված է.

- «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի կիրարկմամբ՝ 0.5 մլն դրամ («Հավաքական թիմերի ավագ մարզիչների վարձատրություն և աշխարհի չեմպիոններին թոշակի հատկացում» ծրագրի գծով՝ 0.1 մլն դրամ, «Շախմատիստների պատրաստման ծառայություններ» ծրագրի գծով՝ 0.4 մլն դրամ),

- «ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստում և առաջնությունների անցկացում» ծրագրի ծախսերի աճով՝ 45.0 մլն դրամով, կապված մարզական ֆեդերացիաների օրացուցային պլանով նախատեսված միջոցառումների իրականացմամբ:

- «Հավաքույն մարզական ընտանիք» մրցույթի անցկացում» ծրագրի ծախսերի աճով՝ 86.8 մլն դրամով (նախատեսվել է 4 տարիքային խմբի շուրջ 2176 ընտանիքների մասնակցություն՝ 2012 թվականի 3 տարիքային խմբի փաստացի մասնակցած 1475 ընտանիքների դիմաց, մրցույթում հաղթողների լրացուցիչ պարգևատրման գումարի ավելացում, ՀՀ մարզպետարանների, Երևան քաղաքի և ԼՂՀ -ի մրցույթի եզրափակիչ փուլում մասնակցության համար գործուղման ծախսեր),

- «ՀՀ հավաքական թիմերին մարզահագուստով և մարզահանդերձանքով ապահովում» ծրագրի ծախսերի աճով՝ 15.0 մլն դրամով, կապված հավաքական թիմերի բոլոր անդամներին մարզահագուստով և մարզահանդերձանքով ապահովման հետ,

- «Եվրոպայի երիտասարդության օլիմպիական փառատոններին մասնակցության ապահովում» ծրագրի և Կազանի 27-րդ համաշխարհային ունիվերսիադայի մասնակցության ծախսերի նախատեսմամբ, համապատասխանաբար՝ 64.8 և 23.0 մլն դրամ (միջոցառումները անց են կացվում երկու տարին մեկ անգամ),

- տարադրամի փոփոխության հետ կապված ծախսերի ճշտմամբ (աճով)՝ 0.1 մլն դրամով (Եվրախորհրդի սպորտի մասին համաձայնագրին անդամակցման ծախսերի նվազում՝

0.1 մլն դրամով, Հակադոպինգային համաշխարհային գործակալությանը անդամակցման ծախսերի աճ՝ 0.2 մլն դրամով),

- նոր նախաձեռնությունների նախատեսմամբ՝ 73.7 մլն դրամ (Ֆրանկաֆոնիայի 8-րդ միջազգային խաղերին մասնակցության ապահովում՝ 44.4 մլն դրամ, Երևանում կայանալիք միջազգային մարաթոնյան վազքի անցկացման ապահովում՝ 21.3 մլն դրամ, Բուլղարիայում կայանալիք խուլերի ամառային օլիմպիադային մասնակցության ապահովում՝ 7.9 մլն դրամ):

Միաժամանակ ծախսերը նվազել են 126.9 մլն դրամով, պայմանավորված ծրագրերի ավարտմամբ (2012 թվականի Լոնդոնի 30-րդ Օլիմպիական խաղերին Հայաստանի մարզական պատվիրակության մասնակցության ապահովում՝ 90.0 մլն դրամ, 2012 թվականի Ինսբրուկի առաջին ձմեռային պատանեկան օլիմպիական խաղերին Հայաստանի մարզական պատվիրակության մասնակցության ապահովում՝ 32.5 մլն դրամ, ԲՈՒՀ-ի 14-րդ հանրապետական ուսումնական մարզական խաղերի ծախսեր՝ 4.4 մլն դրամ):

**Մշակութային ծառայությունների** համար 2013 թվականին նախատեսված՝ 9,856.3 մլն դրամ հատկացումները (<< 2012 թվականի՝ 14,894.2 մլն դրամի դիմաց) կուղղվեն գրադարանների, թանգարանների և ցուցասրահների, մշակույթի տների, ակումբների, կենտրոնների, այլ մշակութային կազմակերպությունների, թատերահամերգային կազմակերպությունների և կինեմատոգրաֆիայի գծով ծառայությունների, մշակութային, «Հայկական տպագրության 500-ամյակ» և «Երևանը՝ 2012 թվականին գրքի համաշխարհային մայրաքաղաք» միջոցառումների, Հայաստան-սփյուռք գործակցության ծրագրերի իրականացմանը, հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնմանը և պահպանմանը, ներդրումների, ինչպես նաև «Ավստրիական «Վազներ Բիրո Ստեյջ Սիստեմս» ընկերության կողմից Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոնի և Ա. Խաչատրյանի անվան համերգասրահի դահլիճների տեխնիկական վերազինում» նպատակային վարկային ծրագրի իրականացմանը:

Մշակութային ծառայությունների գծով ծախսերը նվազել են 5,037.9 մլն դրամ, կամ 33.8 տոկոսով (նվազումը հիմնականում պայմանավորված է 2013 թվականին «Ավստրիական «Վազներ Բիրո Ստեյջ Սիստեմս» ընկերության կողմից Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոնի և «Արամ Խաչատրյան» համերգասրահի դահլիճների տեխնիկական վերազինման վարկային և «Հայկական տպագրության 500-ամյակ» և «Երևանը՝ 2012 թվականին գրքի համաշխարհային մայրաքաղաք» միջոցառումների իրականացում» ծրագրերի ավարտմամբ և մշակութային օբյեկտների հիմնանորոգման և շինարարության ծախսերի չնախատեսմամբ):

**Գրադարանների** գծով 2013 թվականի համար նախատեսված միջոցները՝ 1,221.2 մլն դրամ (<< 2012 թվականի՝ 1,167.8 մլն դրամի դիմաց) ուղղվելու են գրադարանային ծառայությունների (16 գրադարաններ, որից 10-ը մարզկենտրոններում), հրատարակությունների գրանցման, հաշվառման և մատենագիտական ծառայությունների իրականացմանը (Հայաստանի ազգային գրապալատ) և << հանրային գրադարանների նյութատեխնիկական բազայի զարգացմանը և գրադարանավարների վերապատրաստմանը, համապատասխանաբար՝ 1,141.8 մլն, 58.8 մլն և 25.6 մլն դրամ :

Գրադարանային ծառայությունների իրականացմանն ուղղված հատկացումները նպատակ ունեն ապահովել գրադարանային հավաքածուների պահպանությունը, համալրումը, մշակութային ժառանգության թվանշանացումը, տեղեկատվական շտեմարանների և միացյալ ավտոմատացված համակարգերի զարգացումը, տպագիր նյութերի, ազգային անձեռնմխելի ֆոնդերի վերաբերյալ մատենագիտության, կենսամատենագիտության, տեղեկատվական ցանկերի կազմումն ու հրապարակումը:

Գրադարանների գծով ծախսերի աճը 53.4 մլն դրամով, կամ 4.6 տոկոսով պայմանավորված է.

- «Եկամտային հարկի մասին» << օրենքի կիրարկմամբ՝ 8.7 մլն դրամ,
- նվազագույն ամսական աշխատավարձը 35000 դրամ նախատեսմամբ՝ 0.1 մլն դրամ,
- Ազգային գրադարանի ծախսերի աճով՝ 19.0 մլն դրամով (թամանյանական մասնաշենքի վերանորոգումից հետո բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով ջեռուցման և էլեկտրաէներգիայի ծախսերի աճ՝ 15.6 մլն դրամով, համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» << օրենքի՝ աուդիտի ծախսերի նախատեսում՝ 1.2 մլն դրամ, Միացյալ ավտոմատացված ցանցի շարունակական զարգացման նպատակով (ALEPH) կազմակերպությանը արտոնագրի ձեռքբերման համար ծախսերի ավելացում՝ 2.2 մլն դրամ, պայմանավորված տարադրամի փոփոխությամբ),

- << հանրային գրադարանների նյութատեխնիկական բազայի զարգացման նպատակով ծախսերի նախատեսմամբ՝ 20.6 մլն դրամ, որի նպատակն է՝ նպաստել գրադարանային հավաքածուների արդիականացմանը, խթանել հանրային գրադարանների հենքի վրա ժամանակակից տեղեկատվական կենտրոնների ստեղծմանը (համաձայն «Գրադարանների և գրադարանային գործի մասին» << օրենքի): Արդյունքում << 41 տարածաշրջաններից 10-ում (յուրաքանչյուր մարզի մեկ գրադարանում) կձևավորվեն տիպային գրադարաններ:

- << հանրային գրադարանների գրադարանավարների վերապատրաստման ծախսերի նախատեսմամբ՝ 5.0 մլն դրամ (2012 թվականին գրադարանավարների վերապատրաստումը

իրականացվել է «Հայկական տպագրության 500-ամյակ» և «Երևանը՝ 2012 թվականին գրքի համաշխարհային մայրաքաղաք» միջոցառումների իրականացում» ծրագրի շրջանակներում):

Գրադարանների 1154 աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձը 2013 թվականին կկազմի 71313 դրամ, 2012 թվականի՝ 58093 դրամի դիմաց:

**Թանգարանների և ցուցասրահների** գծով 2013 թվականի համար նախատեսված միջոցները՝ 1,698.3 մլն դրամ (<< 2012 թվականի՝ 1,676.7 մլն դրամի դիմաց) ուղղվելու են թանգարանային ծառայությունների իրականացմանը (36 թանգարաններ, որից 8-ը մարզպետարանների ենթակայության) և համայնքային բյուջեներին սուբվենցիաների տրամադրմանը (Երևանի 4 թանգարաններ), համապատասխանաբար՝ 1,503.3 մլն և 195.0 մլն դրամ:

Թանգարանային ծառայությունների իրականացմանն ուղղված հատկացումները նպատակ ունեն ապահովել մշակութային արժեքների և հավաքածուների հաշվառումը, գիտական ուսումնասիրությունը, համալրումը, պահպանությունը և պաշտպանությունը:

Թանգարանների և ցուցասրահների գծով ծախսերի աճը 21.6 մլն դրամով, կամ 1.3 տոկոսով, պայմանավորված է.

- «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի կիրարկմամբ՝ 10.8 մլն դրամ,
- նվազագույն ամսական աշխատավարձը 35000 դրամ նախատեսմամբ՝ 0.8 մլն դրամ,
- ջեռուցման ծախսերի աճով՝ 4.7 մլն դրամով, կապված կազմակերպությունների գազաֆիկացման հետ (Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի մասնաճյուղերի՝ Դսեղի Հ. Թումանյանի և Գորիսի Ա. Բակունցի տուն-թանգարաններ, յուրաքանչյուրի գծով՝ 1.5 մլն դրամ, «Լոռի-Փամբակի», Կապանի և Եղեգնաձորի երկրագիտական թանգարանների գծով, համապատասխանաբար՝ 0.8 մլն, 0.8 մլն և 0.1 մլն դրամ) ,

- Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի էլեկտրաէներգիայի ծախսերի աճով՝ 5.3 մլն դրամով, կապված նոր սարքավորումների տեղադրման հետ:

Թանգարանների և ցուցասրահների 1493 աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձը 2013 թվականին կկազմի 71967 դրամ, 2012 թվականի՝ 58748 դրամի դիմաց:

**Մշակույթի տների, ակումբների, կենտրոնների** գծով 2013 թվականի համար նախատեսված միջոցները՝ 34.8 մլն դրամ (<< 2012 թվականի՝ 665.5 մլն դրամի դիմաց) ուղղվելու են մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպմանը՝ 34.5 մլն դրամ (4 կազմակերպություն, որից 3-ը մարզպետարանների ենթակայության):

Մշակույթի տների, ակումբների, կենտրոնների գծով ծախսերի նվազումը՝ 630.7 մլն դրամով, կամ 94.8 տոկոսով պայմանավորված է մշակութային օբյեկտների հիմնանորոգման և շինարարության ծախսերի չնախատեսմամբ՝ 631.0 մլն դրամ:

Միաժամանակ ծախսերը աճել են 0.3 մլն դրամով, պայմանավորված «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի կիրարկմամբ:

Մշակույթի տների, ակումբների, կենտրոնների 34 աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձը 2013 թվականին կկազմի 67942 դրամ, 2012 թվականի՝ 55141 դրամի դիմաց:

**Այլ մշակութային կազմակերպությունների** գծով 2013 թվականի համար նախատեսված միջոցները՝ 640.9 մլն դրամ (ՀՀ 2012 թվականի՝ 637.3 մլն դրամի դիմաց) ուղղվելու են արխիվային, մշակութային արժեքների փորձաքննության ծառայությունների, Հայրենիք-սփյուռք գործակցության ծրագրերի իրականացմանը՝ 445.7 մլն դրամ, համայնքային բյուջեներին սուբվենցիաների տրամադրմանը՝ 195.2 մլն դրամ (Երևանի կենդանաբանական այգու համար):

Այլ մշակութային կազմակերպությունների գծով ծախսերի աճը՝ 3.6 մլն դրամով, կամ 0.6 տոկոսով, պայմանավորված է.

- «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի կիրարկմամբ՝ 3.6 մլն դրամ,

- նվազագույն ամսական աշխատավարձը 35000 դրամ նախատեսմամբ՝ 0.03 մլն դրամ:

Այլ մշակութային կազմակերպությունների 475 աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձը 2013 թվականին կկազմի 74826 դրամ, 2012 թվականի՝ 61052 դրամի դիմաց:

**Արվեստի** գծով 2013 թվականի համար նախատեսված միջոցները՝ 5,270.2 մլն դրամ (ՀՀ 2012 թվականի՝ 9,761.1 մլն դրամի դիմաց) կուղղվեն թատերական ներկայացումների, երաժշտարվեստի և պարարվեստի համերգների իրականացմանը (32 կազմակերպություն, որից 4-ը մարզպետարանների ենթակայության)՝ 3,019.1 մլն դրամ, «Հայկական տպագրության 500-ամյակ» և «Երևանը՝ 2012 թվականին գրքի համաշխարհային մայրաքաղաք» և մշակութային միջոցառումների իրականացմանը՝ 1,499.3 մլն դրամ, օտարերկրյա պետություններում հայ մշակույթի զարգացմանն աջակցմանը՝ 45.7 մլն դրամ, տարածքային համագործակցության և համահայկական մշակութային ծրագրերի իրականացմանը՝ 38.6 մլն դրամ, «ժողովրդական» պատվավոր կոչումների արժանացած անձանց պատվովճարի վճարմանը՝ 47.5 մլն դրամ, համայնքային բյուջեներին սուբվենցիաների տրամադրմանը (Երևանի երեք թատրոններ)՝ 238.3 մլն դրամ, ներդրումների իրականացմանը՝ 33.7 մլն դրամ, ինչպես նաև «Ավստրիական «Վազներ Բիրո Ստեյջ Սիստեմ» ընկերության կողմից Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և



բալետի ակադեմիական թատրոնի և Ա. Խաչատրյանի անվան համերգասրահի դահլիճների տեխնիկական վերազինում» նպատակային վարկային ծրագրի իրականացմանը՝ 348.0 մլն դրամ:

**2013 թվականին շարունակվելու է իրականացվել Ավստրիական «Վագներ Բիրո Ստեյջ Սիստեմս» ընկերության կողմից Ալ. Սպենդիարյանի անվ. օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի և «Արամ Խաչատրյան» համերգասրահի դահլիճների տեխնիկական վերազինման վարկային ծրագիրը (ծրագրի տևողությունը՝ 2012-2013թթ.):**

Ծրագրի նպատակն է՝ վերազինել նշված դահլիճների լուսաձայնային սարքավորումները և բեմական մեխանիզմները, քանի որ այդ դահլիճների ներկա տեխնիկական միջոցները ֆիզիկապես, բարոյապես մաշված են, չեն համապատասխանում ժամանակակից պահանջներին:

Միջազգային չափանիշներին չի համապատասխանում նաև դահլիճների ակուստիկան, որի պատճառով տուժում են ներկայացումների և համերգների որակական հատկանիշները: «Արամ Խաչատրյան» համերգասրահի ակուստիկայի վրա բացասաբար է անդրադառնում երգեհոնի բաց վիճակը, դահլիճի կառուցվածքը և հարդարանքը, որոնք հնարավոր է շտկել ժամանակակից տեխնիկական միջոցներով:

Ծրագրով նախատեսված հիմնական աշխատանքները նախատեսվում է իրականացնել 2012 թվականին, իսկ 2013թ. համար ծրագրված է 348.0 մլն դրամ:

Արվեստի գծով ծախսերի նվազումը՝ 4490.9 մլն դրամով, կամ 46.0 տոկոսով, պայմանավորված է.

- «Ավստրիական «Վագներ Բիրո Ստեյջ Սիստեմս» ընկերության կողմից Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոնի և Ա. Խաչատրյանի անվան համերգասրահի դահլիճների տեխնիկական վերազինում» ծրագրի ծախսերի նվազմամբ՝ 3431.4 մլն դրամով,

- «Հայկական տպագրության 500-ամյակ» և «Երևանը՝ 2012 թվականին գրքի համաշխարհային մայրաքաղաք» միջոցառումների իրականացում» ծրագրի ծախսերի նվազմամբ՝ 1407.3 մլն դրամով, որից ներդրումների ծախսեր՝ 460.4 մլն դրամ, կապված 2013 թվականին ծրագրի ավարտման հետ,

- «Աջակցություն հայ մշակույթի միջազգային կենտրոններին» ծրագրի գծով ծախսերի նվազմամբ՝ 0.3 մլն դրամով, կապված տարադրամի փոփոխության հետ:

Միաժամանակ ծախսերը աճել են 103.6 մլն դրամով, որը պայմանավորված է.

- «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի կիրարկմամբ՝ 24.9 մլն դրամ,

- նվազագույն ամսական աշխատավարձը 35000 դրամ նախատեսմամբ՝ 1.9 մլն դրամ,

- ջեռուցման, էլեկտրաէներգիայի ծախսերի աճով՝ 12.6 մլն դրամով (Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի էլեկտրաէներգիայի և ջեռուցման ծախսեր՝ 11.5 մլն դրամ, կապված թատրոնի բեմի տեխնիկական վերազինումից հետո նոր համակարգերի աշխատանքների ապահովման և ջեռուցման փաստացի ծավալների նախատեսման հետ և Ա. Շիրվանզադեի անվան պետական դրամատիկական թատրոնի ջեռուցման ծախսեր՝ 1.1 մլն դրամ, կապված թատրոնի շենքի գազաֆիկացման հետ),

- Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի նոր բեմադրությունների ծախսերի աճով՝ 3.8 մլն դրամով (2012 թվականին Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի 90-ամյակին նվիրված հոբելյանական ծրագրի իրականացման նպատակով թատրոնի ծախսերից մշակութային միջոցառումներ վերաբաշխված ծախսերի վերականգնում),

- տարածքային համագործակցության և համահայկական մշակութային ծրագրերի իրականացման ծախսերի աճով՝ 20.0 մլն դրամով (ծրագրերում ընդգրկված մասնակիցների թվի աճ),

- մշակութային միջոցառումների իրականացման ծախսերի աճով՝ 224.5 մլն դրամով («Երևանյան հեռանկարներ» միջազգային դասական երաժշտական փառատոնի ծախսերի նախատեսում՝ 80.0 մլն դրամ, Ա. Խաչատրյանի 110-ամյակին նվիրված միջազգային երաժշտական փառատոնի ծախսերի նախատեսում՝ 120.0 մլն դրամ, «Սայաթ Նովա» մյուզիքլի բեմադրության ծախսերի նախատեսում՝ 43.0 մլն դրամ, Անկախության օրվան նվիրված տոնական համերգային ծրագրի ծախսերի նախատեսում՝ 25.0 մլն դրամ, Սարդարապատի հերոսամարտին նվիրված տոնական համերգային ծրագրի ծախսերի նախատեսում՝ 18.0 մլն դրամ, Հայրենիք-սփյուռք գործակցության մշակութային միջոցառումների ծախսերի աճ՝ 30.5 մլն դրամով և, միաժամանակ, նվազել են «Իմ Հայաստան» համահայկական փառատոնի ծախսերը՝ 84.0 մլն դրամով, պայմանավորված փառատոնը 2 տարին մեկ անգամ անցկացմամբ և թատերական ծրագրերին աջակցման ծախսերը՝ 8.0 մլն դրամով, պայմանավորված 2012 թվականին հատկացումների վերաբաշխմամբ),

- «Ժողովրդական» պատվավոր կոչման արժանացած անձանց ամենամսյա պատվովճարի վճարման ծախսերի աճով՝ 1.9 մլն դրամով (պատվովճար ստացողների թիվը աճել է 4-ով և կազմում է 98 մարդ),

- նոր նախաձեռնությունների նախատեսմամբ՝ 58.5 մլն դրամ (Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի հակահրդեհային անվտանգության ապահովում՝ 23.0 մլն դրամ, որից ներդրումներ՝ 20.1 մլն դրամ, ՀՀ մշակույթի նախարարության ենթակայության թատրոնների ահազանգային և հակահրդեհային անվտանգության

ապահովում՝ 33.8 մլն դրամ, որից ներդրումներ՝ 11.9 մլն դրամ և Խորեոգրաֆիայի պետական թատրոնի ջեռուցման համակարգի տեղադրում՝ 1.7 մլն դրամ):

Արվեստի բնագավառի 3565 աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձը 2013 թվականին կկազմի 65424 դրամ, 2012 թվականի՝ 53670 դրամի դիմաց:

**Կինեմատոգրաֆիային** ուղղված հատկացումները նպատակ ունեն ապահովել միջազգային չափորոշիչներին համապատասխան՝ հայրենական կինոարտադրության, մանուկների և պատանիների համար հայկական կինոնկարների արտադրության և հասարակական-քաղաքական իրադարձությունների, կինոտարեգրության վավերագրման խթանումը:

Կինեմատոգրաֆիայի գծով 2013 թվականի համար նախատեսված հատկացումները՝ 635.2 մլն դրամ (<< 2012 թվականի՝ 630.4 մլն դրամի դիմաց), կուղղվեն կինոարտադրության կազմակերպմանը՝ 451.9 մլն դրամ, կինո-ֆոտո-ֆոնո հավաքածուի պահպանմանն ու թվայնացմանը՝ 7.2 մլն դրամ, ազգային և փաստավավերագրական կինոծրագրերի իրականացմանը՝ 176.1 մլն դրամ:

Կինեմատոգրաֆիայի գծով ծախսերի աճը՝ 4.7 մլն դրամով, կամ 0.8 տոկոսով, պայմանավորված է.

- «Եկամտային հարկի մասին» << օրենքի կիրարկմամբ՝ 2.2 մլն դրամ,

- <. Մայրանի անվան կինոդերասանի թատրոն-ստուդիայի ջեռուցման ծախսերի աճով՝ 2.5 մլն դրամով, կապված փաստացի ծավալների հետ:

Կինեմատոգրաֆիայի բնագավառի 108 աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձը 2013 թվականին կկազմի 112698 դրամ, 2012 թվականի՝ 93992 դրամի դիմաց:

**Հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնման և պահպանման** գծով 2013 թվականի համար նախատեսված հատկացումները՝ 355.7 մլն դրամ (<< 2012 թվականի՝ 355.3 մլն դրամի դիմաց), կուղղվեն << տարածքում պատմության և մշակույթի հուշարձանների պետական հաշվառմանը, պահպանական գոտիների նախագծերի, հուշարձանների պեղումների իրականացմանը և պետական կադաստրի կազմմանը, հուշարձանների տեխնիկական վիճակի մոնիտորինգի իրականացմանը՝ 76.7 մլն դրամ, հուշարձանների ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքների իրականացմանը՝ 215.0 մլն դրամ, Թբիլիսիում գտնվող հայ գրողների պանթեոնի պահպանմանը՝ 4.0 մլն դրամ և արտերկրում գտնվող հայկական պատմամշակութային հուշարձանների վավերագրմանը՝ 60.0 մլն դրամ:

Հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնման և պահպանման գծով ծախսերի աճը՝ 0.4 մլն դրամով, կամ 0.1 տոկոսով, պայմանավորված է «Եկամտային հարկի մասին» << օրենքի կիրարկմամբ:

Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի 57 աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձը 2013 թվականին կկազմի 73075 դրամ, 2012 թվականի՝ 59719 դրամի դիմաց:

**Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման և հրատարակչական ծառայությունների** իրականացմանը 2013 թվականին ուղղված հատկացումները՝ 5,145.9 մլն դրամի չափով (<< 2012 թվականի՝ 5,058.6 մլն դրամի դիմաց), նպատակ ունեն ապահովել քաղաքական, տնտեսական, կրթական, մշակութային, մանկապատանեկան, գիտալուսավորչական, հայոց լեզվի և պատմության, մարզական, զվարճալի և հանրության համար կարևոր ու նշանակալից այլ տեղեկատվություն ստանալու << քաղաքացիների իրավունքը, գրահրատարակչական արտադրանքի տեսքով ազգային և համաշխարհային գրական, գիտական, մշակութային արժեքների մատչելիությունը:

Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման և հրատարակչական ծառայությունների ոլորտի գծով ծախսերը աճել են 87.3 մլն դրամով, կամ 1.7 տոկոսով:

Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման և հրատարակչական ծառայությունների հատկացումները կուղղվեն հեռուստառադիոհաղորդումների պատրաստմանն ու հեռարձակմանը, հրատարակչությունների և խմբագրությունների և տեղեկատվության ձեռքբերման, հավաքագրման և տարածման աշխատանքների իրականացմանը:

**Հեռուստառադիոհաղորդումների** գծով 2013 թվականին նախատեսված են 3,742.8 մլն դրամ հատկացումներ՝ (<< 2012 թվականի՝ 3,749.6 մլն դրամի դիմաց), որոնք ուղղվելու են հանրային հեռուստառադիոհաղորդումների պատրաստմանն ու հեռարձակմանը, հասարակական կարծիքի ուսումնասիրմանը, ԱՊՀ երկրներում հեռուստառադիոծրագրերի հեռարձակմանը, տնտեսական վերլուծությունների իրականացմանը և գնումների գործընթացի հրապարակայնության ապահովմանը:

Հեռուստառադիոհաղորդումների գծով ծախսերի նվազումը 6.8 մլն դրամով կամ 0.2 տոկոսով պայմանավորված է.

- հեռուստահաղորդումների արբանյակային հեռարձակման ծախսերի նվազմամբ՝ 4.3 մլն դրամով, կապված տարադրամի փոփոխության հետ,

- «Հեռուստատեսային ծառայություններ», «Ռադիո ծառայություններ» և «Հոգևոր-մշակութային հեռուստատեսային ծառայություններ» ծրագրերի գծով ծախսերի նվազմամբ՝ 8.0 մլն դրամով, կապված 3 վերստուգողների հաստիքների կրճատման հետ (համաձայն «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի),

- «Գնումների գործընթացի հրապարակայնության ապահովում» ծրագրի ծախսերի նվազմամբ՝ 54.4 մլն դրամով (գովազդման ծավալների նվազում):

Միաժամանակ ծախսերը աճել են 59.9 մլն դրամով, որը պայմանավորված է.

- «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի կիրարկմամբ՝ 17.0 մլն դրամ,
- ռադիո ծառայությունների գծով «Հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ի աշխատողների նվազագույն ամսական աշխատավարձը 35000.0 դրամ նախատեսմամբ՝ 2.8 մլն դրամ,
- «ԱՊՀ երկրներում հեռուստառադիոծրագրերի հեռարձակում» ծրագրի ծախսերի աճով՝ 9.9 մլն դրամով (համաձայն ՀՀ Նախագահի 06.07.07թ. N ՀՂ-11212 հանձնարարականի՝ յուրաքանչյուր տարի ավելացնել մասնաբաժնի չափը 10 տոկոսով),
- «Հայաստան-սփյուռք գործակցության թեմայով հեռուստահաղորդումների և տեսահոլովակների պատրաստում և հեռարձակում, ձեռքբերում և բազմացում» ծրագրի ծախսերի աճով՝ 18.0 մլն դրամով, պայմանավորված ծավալների ավելացմամբ,
- «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում» ծրագրի ծախսերի աճով՝ 12.2 մլն դրամով:

**Հրատարակչությունների, խմբագրությունների** գծով 2013 թվականին նախատեսված են 1,034.4 մլն դրամ հատկացումներ (ՀՀ 2012 թվականի՝ 944.4 մլն դրամի դիմաց), որոնք ուղղվելու են գրականության, թերթերի, ամսագրերի, մենագրությունների, պետական և ոչ պետական մամուլի հրատարակման և թարգմանչական աշխատանքների իրականացմանը, ՀՀ մուտքի վիզաների և ՀՀ վերադարձի վկայականների տպագրմանը, ինչպես նաև սփյուռքի համայնքների հանրակրթական հաստատություններին ուսումնական և հանրամատչելի գրականության առաքման աշխատանքների կազմակերպմանը:

Հրատարակչությունների, խմբագրությունների գծով ծախսերի աճը՝ 90.0 մլն դրամով դրամով, կամ 9.5 տոկոսով պայմանավորված է.

- «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի կիրարկմամբ՝ 3.6 մլն դրամ,
- ՀՀ մուտքի վիզաների, ՀՀ վերադարձի վկայականների տպագրության ծախսերի նախատեսմամբ՝ 72.0 մլն դրամ (280.000 հատ վիզա, մեկ հատի գինը՝ 250 դրամ և 40.000 հատ վկայական, մեկ հատի գինը՝ 50 դրամ),
- ՀՀ արդարադատության նախարարության պոլիգրաֆիական արտադրանքի ձեռքբերման ծախսերի աճով՝ 7.7 մլն դրամով (հրատարակվող վկայականների ծավալների ավելացում),
- թարգմանչական ծառայությունների ծախսերի աճով՝ 1.2 մլն դրամով (ԵՄ օրենսդրության թարգմանության էջերի քանակը նախատեսվում է 10100 էջ 2012 թվականի՝ 10000 էջի փոխարեն, մեկ էջի թարգմանության գինը՝ 12.0 հազ. դրամ),

- «Ուսումնական և հանրամատչելի գրականության առաքում սփյուռքի համայնքներին» ծրագրի ծախսերի աճով՝ 2.0 մլն դրամով, պայմանավորված առաքվող գրականության ծավալների ավելացմամբ,

- «Հայկական սփյուռք» տարեգրքի հրատարակման ծախսերի աճով՝ 0.8 մլն դրամով, պայմանավորված տպագրության ծախսերով,

- Տեղեկատվական և ուսուցողական կայքերի մշակման և սպասարկման ծառայությունների ծախսերի աճով՝ 2.7 մլն դրամով, պայմանավորված արևմտահայերենից արևելահայերեն և հակառակը փոխարկիչի շտեմարանի կազմման աշխատանքների ծավալներով:

**Տեղեկատվության ձեռքբերման** գծով 2013 թվականին նախատեսված են 368.7 մլն դրամ հատկացումներ (<< 2012 թվականի՝ 364.6 մլն դրամի դիմաց), որոնք կուղղվեն տեղեկատվության պահպանմանը, արխիվացմանը, պետական կառավարման մարմիններին, զանգվածային լրատվական միջոցներին և օտարերկրյա դեսպանատներին պաշտոնական ինֆորմացիայի հաղորդման նպատակով տեղեկատվության ձեռքբերմանը և հանրային իրազեկման ապահովմանը, համապատասխանաբար՝ 74.5 մլն և 294.2 մլն դրամ:

Տեղեկատվության ձեռքբերման գծով ծախսերի աճը՝ 4.1 մլն դրամով, կամ 1.1 տոկոսով պայմանավորված է եկամտահարկի վերահաշվարկմամբ:

**Կրոնական և հասարակական այլ ծառայությունների** գծով 2013 թվականին ուղղված հատկացումները՝ 807.2 մլն դրամի չափով (<< 2012 թվականի՝ 742.4 մլն դրամի դիմաց), նպատակ ունեն ապահովել երիտասարդական ծրագրերի իրականացումը և քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին, արհմիություններին և ազգային փոքրամասնություններին աջակցության տրամադրումը:

Կրոնական և հասարակական այլ ծառայությունների գծով ծախսերը աճել են 64.8 մլն դրամով, կամ 8.7 տոկոսով:

**Երիտասարդական ծրագրերի** իրականացման համար 2013 թվականին նախատեսված են 611.5 մլն դրամ հատկացումներ (<< 2012 թվականի՝ 562.8 մլն դրամի դիմաց), որոնք կուղղվեն երիտասարդ ընտանիքին մատչելի բնակարան՝ պետական նպատակային ծրագրի համաֆինանսավորմանը, հասարակական կյանքին երիտասարդների ակտիվ մասնակցության խթանմանը, երիտասարդների զբաղվածության հնարավորությունների մեծացմանը, երիտասարդության շրջանում առողջ ապրելակերպի խթանմանը, պետական երիտասարդական քաղաքականության իրականացման համագործակցության մակարդակի բարձրացմանը, հայրենասիրական դաստիարակությանը, Հայաստանի երիտասարդական հիմնադրամի և մարզային երիտասարդական կենտրոնների գործունեության ապահովմանը, Հայաստանում ինտե-

լեկտուալ խաղերի զարգացմանն աջակցմանը և Հայաստանի և սփյուռքի երիտասարդության միջև կապերի ամրապնդմանը :

Երիտասարդական ծրագրերի գծով ծախսերի աճը՝ 48.7 մլն դրամով, կամ 8.6 տոկոսով պայմանավորված է

- եկամտահարկի վերահաշվարկմամբ՝ 0.5 մլն դրամ («Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի գծով՝ 0.2 մլն դրամ, մարզային երիտասարդական կենտրոնների և Հայաստանի երիտասարդական հիմնադրամի գծով՝ 0.3 մլն դրամ),

- «Արի տուն» ծրագրի ծախսերի աճով՝ 10.0 մլն դրամով (մասնակիցների թիվը կկազմի 1000, 2012 թվականի՝ 800 -ի դիմաց),

- «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի համաֆինանսավորում» ծրագրի ծախսերի աճով՝ 38.2 մլն դրամով:

**Քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին, արհմիություններին, ազգային փոքրամասնություններին** 2013 թվականին աջակցություն տրամադրելու նպատակով նախատեսված հատկացումները՝ 195.7 մլն դրամի չափով (ՀՀ 2012 թվականի՝ 179.6 մլն դրամի դիմաց), կուղղվեն ազգային փոքրամասնություններին, հասարակական կազմակերպություններին պետական աջակցության և «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի պահանջի համաձայն, ՀՀ Ազգային Ժողովի ընտրություններում 3 և ավելի տոկոս ձայն հավաքած կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին նյութական աջակցության տրամադրմանը, համապատասխանաբար՝ 20.0 մլն, 100.0 մլն և 75.7 մլն դրամ:

Ծախսերի աճը՝ 16.1 մլն դրամով, կամ 9.0 տոկոսով պայմանավորված է.

- ազգային փոքրամասնություններին աջակցման գումարի աճով՝ 10.0 մլն դրամով,

- քաղաքական կուսակցություններին աջակցման գումարի աճով՝ 6.1 մլն դրամով:

Հանգիստ, մշակույթ և կրոն բնագավառի ծախսերի համեմատությունը՝ 2011 թվականի փաստացի և 2012 թվականի բյուջետային տարվա հաստատված համապատասխան ցուցանիշների հետ, արտացոլված է սույն բացատրագրի N 11 աղյուսակում:

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի 2013 թվականի տարեկան ծրագիրը արտացոլված է սույն բացատրագրի N 3 հավելվածում:

**ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված կրթության բնագավառի** ծախսերը (առանց գիտության գծով ծախսերի) կազմում են 108103.8 մլն դրամ: Ծախսերի աճը ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ (այսուհետ՝ 2012 թվականի) կազմում է 2672.7 մլն դրամ կամ 2.5 տոկոս:

Պետական կառավարման մարմինների պահպանման ծախսերն աճել են 13.9 մլն դրամով (բացատրությունը ներկայացված է պետական կառավարման մարմինների պահպանման ծախսերի վերաբերյալ բացատրագրի մասում):

Կրթության ոլորտի ծախսերի հիմնական մասը կուղղվի հանրակրթության ոլորտին, որի գծով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 67022.2 մլն դրամ: Ծախսերի աճը 2012 թվականի համապատասխան ցուցանիշի նկատմամբ կազմել է 784.1 մլն դրամ կամ 1.2 տոկոս:

Նախագծով 2013 թվականի համար ծրագրվող բյուջետային ծախսերի աճը 2012 թվականի նկատմամբ պայմանավորված է հետևյալով.

ա) «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկմամբ պայմանավորված՝ լրացուցիչ ծախս է նախատեսվել 976.2 մլն դրամի չափով:

բ) վառարանների և սեփական կաթսայատների միջոցով ջեռուցման կազմակերպման գծով ծախսերն աճել են 373.0 մլն դրամով, որից 201.9 մլն դրամը՝ հեղուկ վառելիքի գնի բարձրացմամբ պայմանավորված (հաշվարկներում հեղուկ վառելիքի գինը հաշվարկվել է 450 դրամով՝ 2012 թվականի 320-ի դիմաց), իսկ 66.3 մլն դրամը՝ կաթսայատների հաշվարկում դոլարի փոխարժեքի փոփոխության հետ կապված (2013 թվականի համար 1 դոլարի փոխարժեքը նախատեսվել է 408.55 դրամ՝ 2012 թվականի 378.96 դրամի դիմաց):

Միաժամանակ, աշխատավարձերի գծով ծախսերը նվազել են 542.6 մլն դրամով, ընդ որում, նշված ծախսերում հաշվի են առնվել 2013 թվականին հանրապետությունում նվազագույն ամսական աշխատավարձի 35.0 հազար դրամի չափով նախատեսման հետ կապված ծախսերի աճը՝ 362.0 մլն դրամի չափով, ինչպես նաև սովորողների թվաքանակների փոփոխությունները: Նախագծով ծախսերը հաշվարկվել են հանրակրթական դպրոցներում 365.6 հազար աշակերտի ուսուցման գծով՝ 2012 թվականի 372.4 հազարի դիմաց կամ՝ աշակերտների թվի նվազումը կազմում է 6.8 հազար: Հաշվարկներում ավագ դպրոցների երեխաների թվաքանակը նախատեսվել է 30.9 հազար աշակերտ՝ 2012 թվականի 28.9 հազարի դիմաց, նախադպրոցական կրթության մեջ ընդգրկվածների թվաքանակը՝ 2.8 հազար՝ 2012 թվականի 1.6 հազարի դիմաց, միաժամանակ, «Հանրակրթական ուսուցում» ծրագրով միջոցներ են նախատեսվել Տավուշի մարզի 14 հանրակրթական դպրոցներում ներառական կրթության մեջ ընդգրկված 347 երեխաների ուսուցման գծով՝ փորձնական կարգի իրականացման հետ կապված: Նախագծով հանրակրթական դպրոցներում շախմատ առարկայի դասավանդման հետ կապված ծախսերի աճը կազմել է 126.7 մլն դրամ (2013 թվականին նշված առարկայի գծով մանկավարժական դրույքները հաշվարկվել են 178.6՝ 2012 թվականի 101.5 դրույքի դիմաց, կամ՝ 2013 թվականի համար աշխատավարձերի գծով ծախս է հաշվարկվել 294.0 մլն դրամի չափով՝



2012 թվականի 167.3 մլն դրամի դիմաց: Ավագ դպրոցների մանկավարժների աշխատավարձի 20% հավելման և աշակերտների թվաքանակի 2.0 հազարով ավել նախատեսման հետ կապված՝ 2013 թվականի համար ծախս է հաշվարկվել 662.5 մլն դրամի չափով՝ 2012 թվականի 619.0 մլն դրամի դիմաց:

Ոչ աշխատավարձային ծախսերը, երեխաների թվաքանակի նվազմամբ պայմանավորված, պակասել են 22.5 մլն դրամով:

Հանրակրթության գծով ծախսերի հաշվարկներում աշակերտ/ ուսուցչական դրույք և աշակերտ/ ոչ ուսուցչական դրույք հարաբերակցությունները նախատեսվել են, համապատասխանաբար՝ 14.3 և 23.9: Աշխատավարձի գծով ծախսերի հաշվարկներում հիմք են ընդունվել ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձերը, բացառությամբ ուսումնաստանողական անձնակազմի, որի աշխատավարձերը հաշվարկվել են, հիմք ընդունելով 2013 թվականին հանրապետությունում նվազագույն ամսական աշխատավարձի՝ 35.0 հազար դրամի չափով նախատեսումը:

«Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկման արդյունքում մանկավարժական անձնակազմի (25500.9 դրույք՝ ներառյալ զինղեկների, ֆիզիկական և մանկապատանեկան կոլեկտիվի կազմակերպիչների դրույքները) միջին ամսական հաշվարկային աշխատավարձը մեկ դրույքի հաշվով, ներառյալ լրացուցիչ վարձատրությունները, կկազմի 140.5 հազ. դրամ, 3809.8 վարչական դրույքների միջին ամսական հաշվարկային աշխատավարձը՝ 201.7 հազ. դրամ (2012 թվականին նշված կատեգորիաների աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձերը կազմել են, համապատասխանաբար՝ 117.6 և 176.2 հազար դրամ):

Հանրապետության բոլոր պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ֆինանսավորումը կիրականացվի ըստ աշակերտների թվի՝ հետևյալ բանաձևով.

$$Ըգ = Սթ \times Ագ + Պգ,$$

որտեղ՝

Ըգ-ն՝ մեկ տարվա համար հաստատությանը հատկացվող ընդամենը գումարն է,

Սթ-ն՝ հաստատության սովորողների թիվը,

Ագ-ն՝ մեկ սովորողին ընկնող տարեկան գումարը, որը 2013 թվականին կազմում է 110381 դրամ՝ 2012 թվականի 106290 դրամի դիմաց,

Պգ-ն՝ հաստատության պահպանման ծախսերի նվազագույն գումարը, որը 2013 թվականին կազմում է 16708.0 հազ. դրամ:

Հաշվարկը կատարելիս՝ կիրառվում են գործակիցներ հանրակրթական դպրոցի տարրական, միջին և ավագ մակարդակների համար, մեկ սովորողին ընկնող տարեկան գումարը

բազմապատկելով՝ տարրական մակարդակի համար՝ 0.799 գործակցով, միջին մակարդակի համար՝ 1.111 գործակցով, ավագ մակարդակի համար՝ 1.151 գործակցով: Միաժամանակ, կիրառվում են լրացուցիչ գործակիցներ բարձր լեռնային, լեռնային բնակավայրերի և միևնույն բնակավայրում միակ, մինչև 400 աշակերտ ունեցող, ինչպես նաև ավագ դպրոցների համար, մեկ սովորողին ընկնող տարեկան գումարը բազմապատկելով բարձր լեռնային բնակավայրերի դպրոցների համար՝ 1.21 գործակցով, լեռնային բնակավայրերի դպրոցների համար՝ 1.03 գործակցով, միևնույն բնակավայրում միակ, մինչև 400 աշակերտ ունեցող դպրոցների համար՝ 1.2 գործակցով, ավագ դպրոցների համար՝ 1.12 գործակցով :

Ընդ որում, բանաձևի կիրառման արդյունքում, հանրակրթական հաստատություններին հատկացվող բյուջետային ծախսերի համաչափությունն ապահովելու նպատակով, թույլատրվում է պետական կառավարման մարմիններին, ՀՀ կառավարության սահմանած կարգով, սահմանափակ գումարի չափով իրենց ենթակայության հաստատությունների ծախսերում կատարել վերաբաշխումներ:

Նախագծով միջոցներ են նախատեսվել հանրապետության 9 մարզերում ավագ նախադպրոցական տարիքի 2835 երեխաների կրթության գծով (2012 թվականին նախադպրոցական կրթության գծով միջոցները նախատեսվել էին 8 մարզերի 1576 երեխաների հաշվով): Նախադպրոցական կրթության գծով ծախսերը հաշվարկվել են, ելնելով ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևով մեկ սովորողին ընկնող տարեկան գումարի չափից՝ վերջինիս նկատմամբ կիրառելով տարրական մակարդակի համար հաշվարկված գործակիցը, ինչպես նաև բարձր լեռնային, լեռնային բնակավայրերի և միևնույն բնակավայրում միակ, մինչև 400 աշակերտ ունեցող դպրոցների համար նախատեսված լրացուցիչ գործակիցները:

Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման համաձայն՝ նախադպրոցական կրթության գծով ծախսերը նախատեսվել են «01. Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն» խմբի «01. Նախադպրոցական կրթություն» դասում 297.7 մլն դրամի չափով, իսկ հանրակրթության գծով ծախսերը նախատեսվել են «01. Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն» խմբի «02. Տարրական ընդհանուր կրթություն» դասում 22229.9 մլն դրամի չափով, ինչպես նաև «02. Միջնակարգ ընդհանուր կրթություն» խմբի «01. Հիմնական ընդհանուր կրթություն» և «02. Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն» դասերում, համապատասխանաբար՝ 27835.2 և 16659.4 մլն դրամի չափով:

Հարուկ կրթության բնագավառում կարևորվում է ներառական դպրոցների ցանցի զարգացումը, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների՝ հանրակրթական դպրոցում կրթության կազմակերպումը:

ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով «Ներառական կրթություն» ծրագրի

գծով նախատեսվել է 1255.2 մլն դրամ՝ հանրապետության 79 հանրակրթական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 2421 երեխաների ուսուցման կազմակերպման գծով (2012 թվականին ներառական կրթություն իրականացվել է 63 հանրակրթական դպրոցներում, որտեղ ընդգրկված են եղել 1701 երեխաներ): Ծախսերի աճը 2012 թվականի համապատասխան ցուցանիշի նկատմամբ կազմել է 377.3 մլն դրամ կամ 43.0 տոկոս՝ պայմանավորված երեխաների թվաքանակի ավելացմամբ:

Աշխատավարձերի գծով ծախսերն աճել են 221.1 մլն դրամով, ընդ որում, նշված աճի մեջ 4.9 մլն դրամը պայմանավորված է 2013 թվականին հանրապետությունում նվազագույն ամսական աշխատավարձի 35.0 հազար դրամի չափով նախատեսմամբ: «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկմամբ պայմանավորված՝ լրացուցիչ ծախս է նախատեսվել 8.5 մլն դրամի չափով: Սննդամթերքի ձեռքբերման գծով ծախսերն աճել են 109.4 մլն դրամով, տրանսպորտային ծախսերը՝ 26.2 մլն դրամով, կոմունալ ծախսերը՝ 12.1 մլն դրամով:

Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման համաձայն՝ ներառական կրթության գծով ծախսերը նախատեսվել են «01. Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն» խմբի «02. Տարրական ընդհանուր կրթություն» դասում՝ 602.3 մլն դրամի չափով, ինչպես նաև «02. Միջնակարգ ընդհանուր կրթություն» խմբի «01. Հիմնական ընդհանուր կրթություն» և «02. Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն» դասերում, համապատասխանաբար՝ 593.7 և 59.2 մլն դրամի չափով:

ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով հատուկ կրթության և մասնագիտացված հանրակրթական ուսուցման գծով նախատեսվել է 4774.5 մլն դրամ: ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ ծախսերն աճել են 35.3 մլն դրամով կամ 0.7 տոկոսով:

Նախագծով միջոցները նախատեսվել են 30 հատուկ և մասնագիտացված հանրակրթական դպրոցներում 5060 սաների ուսուցման կազմակերպման գծով (2012 թվականին հաստատությունների թիվը կազմել է 31, իսկ դրանցում ընդգրկված երեխաների թվաքանակը՝ 5203 սան): ՀՀ կառավարության 2012 թվականի մարտի 1-ի N231-Ն որոշմամբ ՀՀ Արագածոտնի մարզպետարանի ենթակայության «Ապարանի ֆիզիկամաթեմատիկական հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ը միացել է ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայության «Ապարանի ավագ դպրոց» ՊՈԱԿ-ին:

Նախագծով 2013 թվականի համար ծրագրվող բյուջետային ծախսերի աճը 2012 թվականի համապատասխան ցուցանիշի նկատմամբ պայմանավորված է հետևյալով.

աշխատավարձերի գծով ծախսերն աճել են 10.7 մլն դրամով, ընդ որում, նշված ծախսերում հաշվի են առնվել 2013 թվականին հանրապետությունում նվազագույն ամսական աշխատավարձի 35.0 հազար դրամի չափով նախատեսման հետ կապված ծախսերի աճը՝ 46.1 մլն դրամի չափով, ինչպես նաև սաների թվաքանակների փոփոխությունները: «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկմամբ պայմանավորված՝ լրացուցիչ ծախս է նախատեսվել 53.2 մլն դրամի չափով: Հեղուկ վառելիքի գնի բարձրացմամբ պայմանավորված՝ ծախսերի աճը կազմել է 5.4 մլն դրամ: Միաժամանակ, մնացած ծախսերը, երեխաների թվաքանակի նվազմամբ պայմանավորված, պակասել են 34.0 մլն դրամով:

«Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկման արդյունքում 1396.9 մանկավարժական դրույքների (ներառյալ զինղեկների, ֆիզղեկների և մանկապատանեկան կոլեկտիվի կազմակերպիչների դրույքները) միջին ամսական հաշվարկային աշխատավարձը մեկ դրույքի հաշվով, ներառյալ լրացուցիչ վարձատրությունները, կկազմի 136.9 հազ. դրամ, 114.5 վարչական դրույքներինը՝ 195.1 հազ. դրամ (2012 թվականին նշված կատեգորիաների աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձերը կազմել են, համապատասխանաբար՝ 114.7 և 170.3 հազար դրամ):

Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման համաձայն՝ հատուկ կրթության և մասնագիտացված հանրակրթական ուսուցման գծով ծախսերը նախատեսվել են «01. Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն» խմբի «02. Տարրական ընդհանուր կրթություն» դասում՝ 1046.5 մլն դրամի չափով, ինչպես նաև «02. Միջնակարգ ընդհանուր կրթություն» խմբի «01. Հիմնական ընդհանուր կրթություն» և «02. Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն» դասերում, համապատասխանաբար՝ 2150.1 և 1577.9 մլն դրամի չափով:

ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով «Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն» դասի գծով նախատեսվել է 2558.8 մլն դրամ, որը ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ աճել է 356.1 մլն դրամով կամ 16.2 տոկոսով՝ պայմանավորված սովորողների թվաքանակի 1144-ով ավելացմամբ:

Նախագծով ծախսերը նախատեսվել են հանրապետության 25 արհեստագործական ուսումնարաններում արհեստագործական կրթության մեջ ընդգրկված 7621 սովորողների ուսուցման գծով՝ 2012 թվականի 6477-ի դիմաց: Սովորողների թվաքանակի ավելացումը պայմանավորված է ՄԿՈՒ ոլորտում իրականացվող բարեփոխումների ծրագրով, համաձայն որի 2012 թվականին՝ 2011 թվականի համեմատ, ընդունելության անվճար ուսուցման տեղերը նախատեսվել են 50% աճով (3877 տեղ՝ 2011 թվականի 2585-ի դիմաց): Ընդունելության գծով նշված 3877 տեղերը նախատեսվել են նախագծի հաշվարկներում:

Նախագծի հաշվարկներում աշխատավարձերն աճել են 230.7 մլն դրամով, ընդ որում, նշված աճի մեջ 21.6 մլն դրամը պայմանավորված է 2013 թվականին հանրապետությունում նվազագույն ամսական աշխատավարձի 35.0 հազար դրամի չափով նախատեսմամբ: «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկմամբ պայմանավորված՝ լրացուցիչ ծախս է նախատեսվել 43.4 մլն դրամի չափով: Կրթաթոշակի ֆոնդի գծով ծախսերի աճը կազմել է 63.8 մլն դրամ, հեղուկ վառելիքով ջեռուցման կազմակերպման գծով ծախսերի աճը՝ 9.1 մլն դրամ՝ հեղուկ վառելիքի գնի բարձրացմամբ պայմանավորված:

«Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկման արդյունքում նախնական մասնագիտական (արհեստագործական) հաստատությունների (առանց ուժայինների) 933.4 մանկավարժական դրույքների (ներառյալ զինղեկների, ֆիզղեկների և մանկապատանեկան կոլեկտիվի կազմակերպիչների դրույքները) միջին ամսական հաշվարկային աշխատավարձը մեկ դրույքի հաշվով, ներառյալ լրացուցիչ վարձատրությունները, կկազմի 125.5 հազ. դրամ, 66.5 վարչական դրույքներինը՝ 182.4 հազ. դրամ (2012 թվականին նշված կատեգորիաների աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձերը կազմել են, համապատասխանաբար՝ 104.8 և 157.6 հազար դրամ):

«Միջին մասնագիտական կրթություն» դասի գծով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 3812.4 մլն դրամ: Աճը ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ կազմում է 449.1 մլն դրամ կամ 13.4 տոկոս՝ պայմանավորված սովորողների թվաքանակի 1464-ով ավելացմամբ:

Նախագծով ծախսերը նախատեսվել են միջին մասնագիտական կրթության մեջ ընդգրկված 9632 սովորողների ուսուցման գծով՝ 2012 թվականի 8168-ի դիմաց: Սովորողների թվաքանակի ավելացումը պայմանավորված է ՄԿՈՒ ոլորտում իրականացվող բարեփոխումների ծրագրով, համաձայն որի 2012 թվականին՝ 2011 թվականի համեմատ, ընդունելության անվճար ուսուցման տեղերը նախատեսվել են 50% աճով (3777 տեղ՝ 2011 թվականի 2518-ի դիմաց): Ընդունելության գծով նշված 3777 տեղերը նախատեսվել են նախագծի հաշվարկներում: Միաժամանակ, ՀՀ կառավարության 2012 թվականի հունիսի 7-ի N735-Ն որոշման համաձայն՝ ՀՀ գյուղատնտեսության, էներգետիկայի և բնական պաշարների, մշակույթի նախարարությունների ենթակայության քոլեջներ անցել են ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայությանը և վերակազմակերպված քոլեջների գծով ծախսերը նախատեսվել են ՀՀ կրթության և գիտության նախարարությանը:

Նախագծի հաշվարկներում աշխատավարձերն աճել են 293.3 մլն դրամով, ընդ որում, նշված աճի մեջ 52.6 մլն դրամը պայմանավորված է 2013 թվականին հանրապետությունում նվազագույն ամսական աշխատավարձի 35.0 հազար դրամի չափով նախատեսմամբ, իսկ 13.2

մլն դրամը՝ Ոստիկանության կրթահամալիր ուսման գործուղվածների դրամական բավարարման գծով է: «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկմամբ պայմանավորված՝ լրացուցիչ ծախս է նախատեսվել 50.8 մլն դրամի չափով: Կրթաթոշակի ֆոնդի և սննդամթերքի ձեռքբերման գծով ծախսերն աճել են, համապատասխանաբար՝ 59.1 և 7.2 մլն դրամով: Հեղուկ վառելիքով ջեռուցման կազմակերպման գծով ծախսերի աճը, հեղուկ վառելիքի գնի բարձրացմամբ պայմանավորված, կազմել է 7.2 մլն դրամ: Միաժամանակ, 11.8 մլն դրամ է նախատեսվել Ոստիկանության կրթահամալիրին՝ հանդերձանքի ձեռքբերման գծով, իսկ 9.0 մլն դրամ էլ նախատեսվել է ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության ենթակայության «Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» ՊՈԱԿ-ի գծով, որից՝ 1.0 մլն դրամը՝ ճաշարանային սպասքի, 2.5 մլն դրամը՝ մարզահագուստի ձեռքբերման, 5.5 մլն դրամը՝ ընթացիկ նորոգման նպատակով:

«Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկման արդյունքում միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների (առանց ուժայինների) մանկավարժական անձնակազմի միջին ամսական հաշվարկային աշխատավարձը կկազմի 75.1 հազ. դրամ, վարչական անձնակազմինը՝ 72.2 հազ. դրամ (2012 թվականին նշված կատեգորիաների աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձերը կազմել են, համապատասխանաբար՝ 63.1 և 58.8 հազար դրամ):

Բարձրագույն կրթության գծով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 7817.5 մլն դրամ, որը ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ աճել է 91.8 մլն դրամով կամ 1.2 տոկոսով, չնայած ուսանողների թվաքանակի 2.2 հազարով նվազմանը (Նախագծի հաշվարկներում ծախսերը հաշվարկվել են 13.4 հազար ուսանողի հաշվով՝ 2012 թվականի 15.6 հազարի դիմաց): Նախագծով բուհական կրթության գծով հաշվարկներում մեկ ուսանողի գծով ծախսը կազմել է 423.9 հազ.դրամ՝ 2012 թվականի 351.3 հազ.դրամի դիմաց:

Նախագծի հաշվարկներում աշխատավարձերի գծով ծախսերը, ընդհանուր առմամբ, աճել են 58.0 մլն դրամով, ընդ որում, 2013 թվականին հանրապետությունում նվազագույն ամսական աշխատավարձի 35.0 հազար դրամի չափով նախատեսմամբ պայմանավորված՝ ծախսերի աճը կազմել է 261 մլն դրամ, 27.0 մլն դրամով աճել են Ոստիկանության կրթահամալիր ուսման գործուղվածների դրամական բավարարման գծով ծախսերը: Միաժամանակ, ՀՀ պաշտպանության նախարարությանը բուհական կրթության գծով նախատեսված ծախսերում աշխատավարձերից պակասեցվել է 51.4 մլն դրամ (վերջինս ավելացվել է գործուղումներին և վարձակալության ծախսերին, համապատասխանաբար՝ 39.7 և 11.7 մլն դրամի

չափով), իսկ ուսանողների թվաքանակի նվազմամբ պայմանավորված՝ աշխատավարձերի գծով ծախսերի պակասեցումը կազմել է 178.6 մլն դրամ:

«Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկմամբ պայմանավորված՝ լրացուցիչ ծախս է նախատեսվել 130.7 մլն դրամի չափով:

Կրթաթոշակի ֆոնդի գծով նվազումը կազմում է 169.1 մլն դրամ, ընդ որում՝ նշված ծախսերում հաշվի է առնվել միջպետական համաձայնագրերի շրջանակներում լրացուցիչ 13 բակալավրի, 23 մագիստրոսի և 24 ասպիրանտի գծով 4 ամսվա համար լրացուցիչ ծախսը՝ 3.2 մլն դրամի չափով: Նախագծով 38.2 մլն դրամ է նախատեսվել Ոստիկանության կրթահամալիրին՝ հանդերձանքի ձեռքբերման գծով, միաժամանակ, ուսանողների թվաքանակի նվազմամբ պայմանավորված՝ մնացած ծախսերը պակասել են 17.4 մլն դրամով:

«Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկման արդյունքում բարձրագույն կրթական հաստատությունների (առանց ուժայինների) դասախոսական անձնակազմի միջին ամսական հաշվարկային աշխատավարձը կկազմի 53.2 հազ. դրամ, վարչական անձնակազմինը՝ 52.1 հազ. դրամ (2012 թվականին նշված կատեգորիաների աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձերը կազմել են 39.1 հազար դրամ):

ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով «Արտադպրոցական դաստիարակություն» դասի գծով նախատեսվել է 2726.2 մլն դրամ, որը ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ աճել է 208.6 մլն դրամով կամ 8.3 տոկոսով: Նախագծով ծախսերի աճը պայմանավորված է հետևյալով.

- 80 մլն դրամ է նախատեսվել ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության ենթակայության մարզադպրոցների մարզիչ-մանկավարժների աշխատավարձերի բարձրացման գծով,

- «Հայաստանի Հանրապետության մանկապատանեկան մարզադպրոցներին, մարզաձևերի ազգային ֆեդերացիաներին և այլ մարզական հասարակական կազմակերպություններին գույքով ապահովում» ծրագրի գծով նախատեսվել է 100.0 մլն դրամ՝ 2012 թվականի 50.0 մլն դրամի դիմաց,

- «Դպրոցահասակ երեխաների մասնակցություն դպրոցական խաղերին» ծրագրի գծով նախատեսվել է 49.5 մլն դրամ (2012 թվականին նշված ծրագիրը նախատեսված չի եղել),

- «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկմամբ պայմանավորված՝ լրացուցիչ ծախս է նախատեսվել 19.5 մլն դրամի չափով,

- Հեղուկ վառելիքի գնի բարձրացմամբ պայմանավորված՝ ծախսերի աճը կազմել է 1.3 մլն դրամ,

- «Աևան» գյուղական մարզական ընկերության գծով լրացուցիչ ծախս է նախատեսվել 5.0 մլն դրամի չափով:

Միաժամանակ, երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների ուսուցման գծով հաշվարկված ընթացիկ ծախսերից պակասեցվել է 20.0 մլն դրամը, այն նախատեսելով երաժշտական և արվեստի դպրոցների համար երաժշտական գործիքների ձեռքբերման նպատակով:

«Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկման արդյունքում արտադարձական դաստիարակության հաստատությունների մանկավարժական անձնակազմի միջին ամսական հաշվարկային աշխատավարձը կկազմի 68.4 հազ. դրամ, վարչական անձնակազմինը՝ 77.0 հազ. դրամ (2012 թվականին նշված կատեգորիաների աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձերը կազմել են, համապատասխանաբար՝ 51.9 և 62.9 հազար դրամ):

ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով «Լրացուցիչ կրթություն» դասի գծով նախատեսվել է 1126.3 մլն դրամ, որը ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ աճել է 82.6 մլն դրամով կամ 7.9 տոկոսով: Աճը հիմնականում պայմանավորված է վերապատրաստվողների թվաքանակների փոփոխություններով, միաժամանակ, միջոցներ են նախատեսվել «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկման և 2013 թվականին հանրապետությունում նվազագույն ամսական աշխատավարձի 35.0 հազար դրամի չափով նախատեսման հետ կապված:

Մասնավորապես. ՀՀ արդարադատության և ՀՀ տարածքային կառավարման նախարարություններին վերապատրաստումների գծով նախատեսված ծախսերը, վերապատրաստվողների թվաքանակների ավելացմամբ պայմանավորված, աճել են, համապատասխանաբար՝ 63.3 և 9.8 մլն դրամով:

«Դատական դպրոց» ՊՈԱԿ գծով ծախսերն աճել են 30.3 մլն դրամով, որից 5.9 մլն դրամը՝ դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկվող 10 ունկնդիրների կրթաթոշակի ֆոնդի գծով է:

Վերապատրաստումների գծով 3.0 մլն դրամ է նախատեսվել ՀՀ հատուկ քննչական ծառայությանը (վերջինս 2012 թվականին նախատեսված չի եղել):

Հարկային և մաքսային ծառայողների վերապատրաստման ծառայությունների համար «ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ի գծով ծախսերն աճել են 10.6 մլն դրամով, որից 3.3 մլն դրամը Դիլիջանի ուսումնական կենտրոնի շենքի վարձակալության գծով: Միաժամանակ, Նախագծով չի նախատեսվել կապիտալ ծախսերի գծով 2012 թվականին նախատեսված 29.8 մլն դրամը:



«Դատախազության դպրոց» ՊՈԱԿ-ի գծով ծախսերը նվազել են 6.8 մլն դրամով, որը հիմնականում էլեկտրոնային ուսուցման գծով է:

Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման համաձայն՝ հանրակրթական ծրագրերի իրականացմանն օժանդակության շրջանակներում իրականացվող մի շարք ծրագրեր, ինչպես նաև մասնագիտական կրթության գծով որոշ ծրագրեր նախատեսվել են «Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ» դասում:

ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով զգալի միջոցներ են նախատեսվել ներքոհիշյալ ծրագրերի գծով, այսպես.

- տարրական դասարանների աշակերտներին անվճար դասագրքերով և ուսումնական գրականությամբ ապահովում՝ 754.1 մլն դրամ, միաժամանակ, «Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցում» ծրագրով նախատեսվել է 120.0 մլն դրամ:

- համակարգչային և ինտերնետային կապի ծառայություններ՝ 861.2 մլն դրամ (հաշվարկներում միջոցներ են նախատեսվել հանրապետության դպրոցների ինտերնետային ցանցի սպասարկման և համակարգչային սարքավորումների պահպանման, շարժական ինտերնետային կայանի շահագործման, Մայքրոսոֆթի համակարգչային ծրագրերի արտոնագրման նպատակով): Նախագծով ծախսերի աճը 2012 թվականի նկատմամբ կազմել է 162.6 մլն դրամ, որից 161,3 մլն դրամը պայմանավորված է հանրապետության դպրոցների ինտերնետային ցանցում ընդգրկված 1396 դպրոցների գծով 12 ամսվա կտրվածքով ծախսի նախատեսմամբ :

- ավարտական փաստաթղթերի, գովասանագրերի, դասամատյանների, մեդալների, ծրարների, ուսումնական ծրագրերի, մանկավարժական պարբերականների և ուսումնադիտողական պարագաների ձեռքբերում՝ 327,1 մլն դրամ,

- դպրոցականների սպարտակիադայի և օլիմպիադաների անցկացում, համապատասխանաբար՝ 35.0 և 49.6 մլն դրամ,

- փոխհատուցում ՀՀ հեռավոր, սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի պետական հանրակրթական դպրոցների մանկավարժներին՝ 63.2 մլն դրամ,

- կրթության բովանդակային և մեթոդական սպասարկում ու հանրապետության հանրակրթական դպրոցների ուսուցիչների վերապատրաստում՝ 494.8 մլն դրամ,

- գնահատման և թեստավորման ծառայություններ՝ 424.0 մլն դրամ (հաշվարկներում միջոցներ են նախատեսվել 2013 թվականին 28.4 հազար շրջանավարտի հաշվով ավարտական քննությունների անցկացման գծով՝ 2012 թվականի 36.7 հազար շրջանավարտի դիմաց): Միաժամանակ, լրացուցիչ միջոցներ են նախատեսվել TIMSS միջազգային ստուգատեսին ՀՀ

մասնակցության վճարի գծով (37,5 հազար դոլար և 37,5 հազար եվրո՝ 2012 թվականի 32,5 հազար դոլարի և 32,5 հազար եվրոյի դիմաց):

- սփյուռքի հայկական կրթական հաստատություններին ուսումնական գրականության և օժանդակ նյութերի մշակում և տրամադրում, ինչպես նաև Ջավախքի դպրոցներին գույքի տրամադրում, համապատասխանաբար, 80.0 մլն և 30.0 մլն դրամ,

- հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծառայությունների մատուցում՝ 55.2 մլն դրամ,

- «Հայ ասպետ» հեռուստամրցաշարի անցկացում՝ 67.5 մլն դրամ, ուսուցիչների ատեստավորման գծով ծախսեր՝ 13.3 մլն դրամ, ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչներին հավելավճարների տրամադրում՝ 710,1 մլն դրամ:

- «Դպրոցահասակ երեխաներին սննդով ապահովում»՝ 155.5 մլն դրամ: Նախագծի աճը 2012 թվականի նկատմամբ 83.4 մլն դրամով պայմանավորված է հետևյալով. նշված ծրագիրն իրականացվում է ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի շրջանակներում, որով նախատեսվում է սննդամթերքի ցամաքային փոխադրման, պահեստավորման, պահպանման և բեռնման-բեռնաթափման ծախսերի իրականացում ՀՀ պետական բյուջեից. 2013 թվականին՝ 380.6 հազար դոլարի չափով՝ 2012 թվականի 190.3 հազար դոլարի դիմաց:

Միաժամանակ, Նախագծով 55.4 մլն դրամ է նախատեսվել «Աուտիզմ և զարգացման այլ խանգարումներ ունեցող երեխաների բուժման, վերականգնման, կրթության և զբաղվածության ապահովում» նոր ծրագրի գծով:

Վերոնշյալներից բացի, ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով զգալի միջոցներ են նախատեսվել կրթական օբյեկտների հիմնանորոգման և շինարարության գծով (բացատրությունը ներկայացված է քաղաքաշինության ծախսերի վերաբերյալ բացատրագրի մասում):

Բացի այդ, կրթության ոլորտում 2013 թվականին շարունակվելու է իրականացվել Կրթության որակի և համապատասխանության երկրորդ (Համաշխարհային բանկ) վարկային ծրագիրը:

Ծրագրի հիմնական նպատակն է Հայաստանի Հանրապետության կրթական համակարգի զարգացումն ուղղորդել դեպի գիտելիքահենք տնտեսության պահանջները՝ ապահովելով հասարակության սոցիալ-տնտեսական պահանջներին համապատասխան հանրակրթության և բարձրագույն մասնագիտական կրթության որակի աճ:

Ծրագրով իրականացվող բարեփոխումները նպատակաուղղված են մի կողմից կրթության որակի շարունակական բարձրացման միջոցով հանրակրթության բնագավառում առկա ձեռքբերումների պահպանմանն ու զարգացմանը՝ ներառելով նաև նախադպրոցական կրթու-

թյան հիմնախնդիրները, մյուս կողմից՝ աջակցելու բարձրագույն կրթության մատչելիության, հավասարության, որակի և համապատասխանության ապահովման խնդիրների լուծմանը:

Ծրագիրը բաղկացած է երկու ենթաձրագրերից՝ Հանրակրթության որակի բարելավում և Բոլոնիայի գործընթացի համատեքստում աջակցություն բարձրագույն կրթության բարեփոխումներին:

Առաջին ենթաձրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել դպրոցական երեխաների պատրաստվածության մակարդակի բարձրացման և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովման միջոցառումներ՝ կրթության որակի հետագա բարելավման, ուսուցիչների վերապատրաստման և մասնագիտական զարգացման, ուսումնական գործընթացում S<S ներդրման և ավագ դպրոցների բարեփոխումներին աջակցության ուղղությամբ, իսկ երկրորդ ենթաձրագրով որակի ապահովման ազգային համակարգի ստեղծման և ամրապնդման միջոցառումներ՝ մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգի ծրագրի մշակման, բարձրագույն կրթության կայուն ֆինանսական համակարգի ներդրմանն աջակցության և ուսուցիչների մասնագիտական կրթության բարեփոխման ուղղությամբ:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2013 թվականի համար ծրագրված է 4,006,8 մլն դրամ:

ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով միջոցներ են նախատեսվել նաև մասնագիտական կրթության ոլորտում իրականացվող մի շարք ծրագրերի գծով, մասնավորապես.

- բարձրագույն մասնագիտական կրթության գնահատման համակարգի բարեփոխումներ՝ 140.0 մլն դրամ: Նախագծով ծախսերի աճը 2012 թվականի նկատմամբ 50.0 մլն դրամի չափով պայմանավորված է 2012 թվականի հուլիսի 1-ից 2015 թվականի հուլիսի 1-ը Հայաստանի կողմից Բոլոնիայի քարտուղարության ստանձնմամբ:

- մասնագիտական կրթության որակի ապահովման ծառայություններ՝ 66.5 մլն դրամ,

- նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈԻ) բարեփոխումներ՝ 165.7 մլն դրամ,

- Հալեպի և Բուխարեստի համալսարաններում հայոց լեզվի դասավանդման կազմակերպում, համապատասխանաբար՝ 4.9 և 7,4 մլն դրամ,

- Աջակցություն արտասահմանում սովորող ուսանողներին՝ 100.0 մլն դրամ:

Միաժամանակ, Նախագծով միջոցներ են նախատեսվել հետևյալ նոր ծրագրերի գծով.

- Հանրակրթական և բարձրագույն ուսումնական հաստատությունների վարկանիշավորում՝ 60.0 մլն դրամ,

- Ներդրումներ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ 4.5 մլն դրամ: Նշված գումարը նախատեսվել է ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության ենթակայության «Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» ՊՈԱԿ-ի համար գույքի ձեռքբերման նպատակով:

- Սփյուռքագիտության ոլորտում գիտական կադրերի պատրաստման գծով նպաստների տրամադրում (Զալցբուրգ)՝ 3.6 մլն դրամ: Նշված ծրագրի գծով միջոցների նախատեսումը պայմանավորված է Ավստրիայի Զալցբուրգի համալսարանում հայագիտության ուղղությամբ հետազոտական ծրագրերի ֆինանսավորմամբ և հայագիտության ամբիոնին աջակցմամբ:

Կրթության բնագավառի ծախսերի համեմատությունը՝ նախորդ տարվա (2011 թվական) փաստացի և ընթացիկ (2012 թվական) բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 12 աղյուսակում:

**Գիտությունը**, որպես տնտեսության զարգացման, երկրի անվտանգության ապահովման, կրթության, մշակույթի և հասարակական առաջընթացի բացառիկ կարևոր գործոն, գտնվում է պետության հովանավորության ներքո: Հիմք ընդունելով 2007 թվականի հուլիսի 11-ի ՀՀ վարչապետի կողմից վավերացված «Գիտության ոլորտի բարեփոխումների հայեցակարգային դրույթները», 2013 թվականին ՀՀ պետական բյուջեով նախատեսված գիտության ծախսերը կուղղվեն ոլորտում առկա հետևյալ առաջնահերթ խնդիրներին.

- գիտության ոլորտի պետական կառավարման արդյունավետ համակարգի ձևավորմանը,
- գիտության ոլորտում համապատասխան ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացմանը,
- գիտական կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացմանը,
- գիտության ոլորտի ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացմանը,
- գիտական ոլորտի գիտական փորձաքննության անկախ համակարգի ստեղծմանը,
- գիտության և տեխնոլոգիաների զարգացման գերակա ուղղությունների հստակեցմանը,
- գիտության և կրթության ինտեգրման ապահովմանը,
- գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման վերաճումը իրական դրամաշնորհային համակարգի
  - գիտական ներուժի վերարտադրությանը և երիտասարդացմանը,
  - գիտական արդյունքի ապրանքայնացմանն ու դուրսբերմանը ներքին և արտաքին շուկա:

Գիտության ոլորտի հիմնական նպատակն է Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման մեջ գիտության գործուն դեր ունենալը, գիտական հետազոտությունների արդյունքները տնտեսության մեջ արդյունավետ օգտագործելը:

Գիտության զարգացումը ուղղորդվելու է «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի և գիտության ու գիտատեխնիկական քաղաքականության հիմնադրույթներով, ըստ որի պետության կողմից գիտության ֆինանսավորումը կիրականացվի.

- բազային,
- պայմանագրային (թեմատիկ) ,
- նպատակային-ծրագրային ֆինանսավորման ձևերով:

ՀՀ 2013 թվականի պետական բյուջեով գիտության բնագավառի ծախսերը կազմում են շուրջ **11,241.7** մլն դրամ:

Գիտության ծախսերն ամբողջովին արտացոլված են «Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի NN 22-2, 22-3 աղյուսակներում:

ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի ապարատի պահպանման համար նախատեսվել է 85.3 մլն դրամ՝ 2012 թվականի հաստատված բյուջեի 83.0 մլն դրամի դիմաց կամ աճը կազմում է 2.3 մլն դրամ (բացատրությունը ներկայացված է պետական կառավարման մարմինների պահպանման ծախսերի վերաբերյալ բացատրագրի մասում): Աճը պայմանավորված է 2013 թվականից «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի կիրարկմամբ և քաղծառայողների աշխատավարձի բնականոն աճի համար անհրաժեշտ լրացուցիչ միջոցներով:

ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով գիտատեխնիկական գործունեության համար նախատեսվել է շուրջ **11,156.4** մլն դրամ՝ 2012 թվականի **10,088.0** մլն դրամի դիմաց, կամ՝ 1068.4 մլն դրամով ավել, որը բաշխվելու է հետևյալ ուղղություններով.

• **Բազային ֆինանսավորում** ստացող կազմակերպությունների համար ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է **8106.9** մլն դրամ՝ 2012 թվականի հաստատված բյուջեի **7440.8** մլն դրամի դիմաց, կամ աճը կազմում է 630.1 մլն դրամ: Այդ թվում՝

- Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրերի իրականացման համար նախատեսվել է 6259.1 մլն դրամ՝ 2012 թվականի հաստատված բյուջեի 5946.8 մլն դրամի դիմաց: 312.3 մլն դրամի աճը հիմնականում պայմանավորված է միջին հաշվարկային աշխատավարձի 10 տոկոսի բարձրացմամբ՝ 68750 դրամ հաշվարկով՝ 2012 թվականի 62500 դրամի փոխարեն, և 2013 թվականից նոր հար-

կատեսակի՝ եկամտային հարկի կիրարկմամբ լրացուցիչ միջոցների անհրաժեշտությամբ: Միաժամանակ՝ ծրագրում ներառվել են 1 նոր գիտական կենտրոն՝ Երևանի Վ. Բյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանում և 5 նոր լաբորատորիաներ՝ ԵՊՀ «ՀՀ բարձրագույն կրթության հիմնախնդիրները եվրոպական բարձրագույն կրթության տարածքին ինտեգրման համատեքստում», ՀՊՀՀ «Էլեկտրամեխանիկական, պեզոէլեկտրական, կոմպոզիտային պոլիմերմետաղական և առաձգական տարրերով միկրոմանիպուլյատորների և ռեաբիլիտացիոն սարքերի նոր տեխնիկական լուծումների մշակում», ՀՊՀՀ Գյումրիի մասնաճյուղի «Տեխնոլոգիական գործընթացների պարամետրերի չափման ավտոմատացված համակարգերի մշակում», Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ «Ընդհանուր մեթոդաբանության և մանկավարժական նորարարության լաբորատորիա», Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի «Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործության ուսումնասիրում» լաբորատորիա:

- ՀՀ կառավարության 01.09.2011թ. N 1301-Ն որոշմամբ «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա» ՊՈԱԿ վերակազմավորվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության կազմում հիմնադրամի և 2012 թվականից առանձնանալով գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրից, ՀՀ պետական բյուջեում ներկայացվում է առանձին՝ «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա» հիմնադրամի գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում և ֆիզիկայի բնագավառում գիտական ներուժի արդիականացում» ծրագրով, 698.9 մլն դրամ գումարով՝ 2012 թվականի հաստատված բյուջեի 665.6 մլն դրամի դիմաց, և 33.3 մլն դրամ աճը նույնպես պայմանավորված է 2013թվականից «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի կիրարկմամբ:

- ՀՀ կառավարության 24.05.2012թ. N 675-Ն որոշմամբ ստեղծվել է «Քենդլ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամ և պետական կառավարման լիազոր մարմին է սահմանվել ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն: ՀՀ 2013 թվականի պետական բյուջեում առանձնանալով գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրերից, ներկայացվել է առանձին ծրագրով, 261.0 մլն դրամ գումարով:

- Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման ծրագրի գծով նախատեսվել է 774.4 մլն դրամ, 2012 թվականի 588.9 մլն դրամի դիմաց: 185.5 մլն դրամի աճը պայմանավորված է Վ.Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանը ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրերի ցանկից ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման ծրագրերի ցանկ տեղափոխվելու կապակցությամբ:

- Գիտական կադրերի պատրաստման պետական ծրագրի գծով նախատեսվել է 102.7 մլն դրամ՝ 2012 թվականի 82.4 մլն դրամի դիմաց: 20.3 մլն դրամի աճը պայմանավորված է առկա և հեռակա ասպիրանտների մոտ 281 ղեկավարներին վճարվող տարեկան գումարի, ինչպես նաև տնտեսական այլ ծախսերի և հաջորդ ուսումնական տարվա ասպիրանտուրայի հավանական դիմորդ-շրջանավարտների համար օտար լեզուներից և «Համակարգչից օգտվելու հմտություններ» առարկաներից նախապատրաստական դասընթացների և քննությունների կազմակերպման անհրաժեշտությամբ:

- Միաժամանակ՝ գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների իրականացման գծով նախատեսվել է 2012 թվականի հաստատված բյուջեի՝ 157.1 մլն դրամ, համեմատ 146.3 մլն դրամով պակաս, այսինքն 2013 թվականին գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների իրականացման գծով նախատեսվել է 10.8 մլն դրամ, որը կհատկացվի Սփյուռքի գաղթօջախների պատմության ուսումնասիրման, հետազոտությունների անցկացման համար, իսկ մրցութային կարգով ընտրված ծրագրերը կընդգրկվեն պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի ցանկում:

• **Պետական նպատակային-ծրագրային ֆինանսավորման** համար նախատեսվում է **1536.7** մլն դրամ՝ 2012 թվականին **1364.7** մլն դրամի դիմաց: Իրականացվող 7 ծրագրերից 2-ը՝ «Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ – թանգարան («Մատենադարան»)» ՊՈԱԿ-ի միջոցով կատարվող «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց» բազմահատորյակի ստեղծում և հրատարակում» և «ՀՀ մշակույթի նախարարության Պատմամշակութային ժառանգության ԳՀԿ-ի միջոցով կատարվող «Շենգավիթ» ծրագրերը ավարտվում են, իսկ 5 ծրագրերը՝ շարունակվում. դրանք են՝ ՀՀ պաշտպանության նախարարության պատվերով կատարվող հատուկ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքները, որի համար նախատեսվել է 1358.4 մլն դրամ՝ 2012 թվականի 1235.0 մլն դրամի դիմաց, «ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ» ՊՈԱԿ-ի միջոցով կատարվող «Սեփական և այլազգի միջավայրում հայերի համեմատական հետազոտության հիմնական ուղղությունները, ուսումնասիրության խնդիրները ու հեռանկարները» ծրագիրը, որի համար նախատեսվում է 9.9 մլն դրամ, «ՀՀ ԳԱԱ Էկոլոգոնոսֆերային հետազոտությունների կենտրոնին» ՊՈԱԿ-ի միջոցով կատարվող «Սննդի որակի և անվտանգության ապահովման գիտամեթոդական հիմունքների մշակում» ծրագիրը, որի համար նախատեսվում է 15.0 մլն դրամ, «ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ-ի միջոցով կատարվող «Հայկական ազգային ԳԻԻԴ միջավայրի ստեղծում» ծրագիրը, որի համար նախատեսվում է

25.0 մլն դրամ, ««Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրամբարների տեխնիկական վիճակի հետազոտում եւ անվտանգության հայտարարագրերի մշակում» ծրագիրը, որի համար նախատեսվում է 30.0 մլն դրամ: Ինչպես նաև 8 նոր ծրագրերի իրականացման համար կտրվի 98.4 մլն դրամի պետական աջակցություն.

1. ԵՊՀ-ին՝ «Տեղեկատվական անվտանգության գիտահետազոտական կենտրոն» ծրագիրը իրականացնելու համար 10.9 մլն դրամ,

2. Մատենադարանին՝ «Մատենադարանի հնատիպ գրքերի, առանձնապես արժեքավոր և հազվագյուտ փաստաթղթերի կոնսերվացում» ծրագիրը իրականացնելու համար 7.5 մլն դրամ,

3. ՀԱԱՀ-ին՝ «Հայաստանի Հանրապետությունում խաղողի արժեքավոր որոշ սորտերի բազմացման արդյունավետ տեխնոլոգիաների մշակում և դրանց հիման վրա այդ սորտերի մայրուտային այգու հիմնում» ծրագիրը իրականացնելու համար 8.0 մլն դրամ,

4. ՀՌՀ-ին՝ «ՀՀ միգրացիոն իրավիճակի գնահատում՝ ընտրանքային հետազոտությունների միջոցով» ծրագիրը իրականացնելու համար 13.0 մլն դրամ,

5. ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտին՝ «Հայոց պատմություն բազմահատորյակի հատոր 1-ի գիրք II-ի և հատոր 4-ի գիրք II-ի տպագրություն» ծրագիրը իրականացնելու համար 19.0 մլն դրամ,

6. ՀՀ ԳԱԱ Հ. Բունիայանի անվան կենսաքիմիայի ինստիտուտին՝ «Հատուկ վտանգավոր ինֆեկցիոն հիվանդությունների կանխարգելման և բուժման նոր դեղանյութերի ստեղծում և ներդրում գյուղատնտեսության և առողջապահության պրակտիկայում» ծրագիրը իրականացնելու համար 15.0 մլն դրամ,

7. ՀՀ մշակույթի նախարարության պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայությանը՝ «Մեծամոր պատմահնագիտական արգելոցի համակողմանի ուսումնասիրության I փուլ» ծրագիրը իրականացնելու համար 15.0 մլն դրամ,

8. ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության «էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ՝ «ՀՀ հանքավայրերի, հանքերևակումների և ֆոնդային այլ նյութերի էլեկտրոնային պահպանման /թվայնացման/ վերաբերյալ կոմպյուտերային տեղեկատվական համակարգի ստեղծում» ծրագիրը իրականացնելու համար 10.0 մլն դրամ:

• **Պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման** համար նախատեսվել է **1071.8** մլն դրամ՝ 2012 թվականի **862.5** մլն դրամի դիմաց, ընդ որում դրանից 133.3 մլն դրամը ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի ֆինանսական պարտավորությունն է 2010



թվականի մրցույթներում հաղթած թեմաների ֆինանսավորումը շարունակելու համար, մնացած 938.4 մլն դրամը նախատեսվում է նոր մրցույթների համար, այդ թվում՝ հատուկ երիտասարդական դրամաշնորհային մրցույթ հայտարարելու համար, ինչը կնպաստի գիտական ներուժի երիտասարդացմանը և որոշակիորեն կմեղմի երիտասարդ կադրերի արտահոսքը գիտության ոլորտից, այդ թվում՝ նաև արտերկիր:

- ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով, առանձին ծրագրով նախատեսվել է նաև **441.0** մլն դրամ՝ **գիտաշխատողների գիտական աստիճանների** համար հավելավճարներ տրամադրելու համար, ընթացիկ տարվա **420.0** մլն դրամի դիմաց և աճը պայմանավորված է 2013թ. ՀՀ պետական բյուջեի միջոցով իրականացվող գիտական ծրագրերում ընդգրկված գիտական աստիճաններ ունեցող գիտաշխատողների փոփոխական թվով, իսկ ծախսերը հաշվարկվել են 721 գիտությունների դոկտորների և 1899 գիտությունների թեկնածուների հաշվով, պահպանելով հավելավճարների գործող չափերը, համապատասխանաբար՝ գիտության դոկտորների համար 20 հազ. դրամ, իսկ թեկնածուների համար՝ 10 հազ. դրամ:

Գիտության բնագավառի ծախսերի համեմատությունը՝ նախորդ տարվա (2011 թվական) փաստացի և ընթացիկ (2012 թվական) բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 13 աղյուսակում:

Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեում ընդգրկելու նպատակով գիտական և գիտատեխնիկական գործունեության պետական ծրագրերի ցանկը ներկայացված է սույն բացատրագրի N 7 հավելվածում:

**Սոցիալական պաշտպանության** ոլորտի համար նախատեսվող միջոցառումներն ուղղվելու են բնակչության սոցիալական պաշտպանության քաղաքականության հիմնական և գերակա ուղղությունների՝ պետական կենսաթոշակային ապահովության, սոցիալական աջակցության, աշխատանքի, բնակչության զբաղվածության, ընտանիքի, հաշմանդամների և տարեցների սոցիալական պաշտպանության, փախստականների սոցիալական խնդիրների լուծման, օրենսդրության կատարելագործման ու դրա իրականացման ապահովմանը:

2013 թվականին սոցիալական պաշտպանության ոլորտի ծախսերը կկազմեն 303 206.1 մլն դրամ կամ 2013 թվականի պետական բյուջեի ծախսերը 2012 թվականի հաստատված պետական բյուջեի նկատմամբ նվազում են 4 112.0 մլն դրամով (2012 թվականին՝ 307 318.1 մլն դրամ (ստորև ներկայացված տեքստում համեմատությունը կատարվում է 2012 թվականի հաստատված պետական բյուջեի նկատմամբ):

Սոցիալական պաշտպանության ոլորտի ծախսերը ըստ դասերի բնութագրվում են հետևյալ կերպ.

#### ***Վարառոջություն***

**«Աշխատողների աշխատանքային պարտավորությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցում»** ծրագրի գծով նախատեսվում է 74.7 մլն դրամի չափով ծախս (2012 թվականին՝ 78.2 մլն դրամ): 2012 թվականի պետական բյուջեի նկատմամբ ծախսերի նվազումը կազմում է 3.4 մլն դրամ, որը պայմանավորված է շահառուների թվի նվազմամբ՝ 72 մարդով 2012 թվականի 658 մարդու դիմաց՝ նվազագույն աշխատավարձի չափի աճի պայմաններում, այն 2013 թվականին կկազմի 35.0 հազ. դրամ 2012 թվականի 32.5 հազ. դրամի դիմաց:

**«Բժշկա-սոցիալական վերականգնման ծառայություններ»** ծրագրի գծով նախատեսվում է 102.7 մլն դրամի չափով ծախս (2012 թվականին՝ 102.4 մլն դրամ): 2012 թվականի պետական բյուջեի նկատմամբ ծախսերի աճը կազմում է 0.3 մլն դրամ, որը պայմանավորված է մեկ հիվանդի բուժման միջին գնի աճով 90 դրամով կամ 2013 թվականին այն կկազմի 13 740 դրամ 2012 թվականի՝ 13 650 դրամի դիմաց՝ անվճար բուժօգնություն ստացողների թվի՝ 643 մարդ պահպանման պայմաններում:

#### ***Անաշխատունակություն***

**«Հոգեկան առողջության վերականգնման ծառայություններ»** ծրագրի գծով նախատեսվում է 65.2 մլն դրամի չափով ծախս (2012 թվականին՝ 64.8 մլն դրամ): 2012 թվականի պետական բյուջեի նկատմամբ ծախսերի աճը կազմում է 0.4 մլն դրամ, որը պայմանավորված է մեկ հիվանդի բուժման միջին գնի աճով 90 դրամով կամ 2013 թվականին այն կկազմի 13 740 դրամ 2012 թվականի՝ 13 650 դրամի դիմաց՝ անվճար բուժօգնություն ստացողների թվի՝ 336 մարդ պահպանման պայմաններում:

**«Հաշմանդամներին պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնման, տեխնիկական միջոցներով ապահովում և դրանց վերանորոգում»** ծրագրի գծով ծախսը կազմում է 858.6 մլն դրամ (պահպանվել է 2012 թվականի համար նախատեսված չափը): 2013 թվականին նախատեսվում է արտադրել և բաշխել պրոթեզաօրթոպեդիկ, վերականգնողական և վերանորոգման պարագաներ, ընդամենը՝ 13799 պարագա (2012 թվականին՝ 13945 պարագա): Այսպիսով.

ա) 12291 պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների գծով՝ 755.5 մլն դրամ (2012 թվականին՝ 12498 պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաներ),

բ) 1298 պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների վերանորոգման գծով՝ 66.6 մլն դրամ (2012 թվականին՝ 1257 պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագայի վերանորոգման պարագաներ),

գ) ծայնաստեղծ սարքերի գծով՝ 80 հատ՝ 28.0 մլն դրամ (2012 թվականին՝ 100 հատ),

դ) աչքի պրոթեզների գծով՝ 130 հատ՝ 8.5 մլն դրամ (2012 թվականին՝ 90 հատ):

**«Հաշմանդամներին սայլակներով և լսողական սարքերով ապահովում»** ծրագրի գծով նախատեսվում է 113.4 մլն դրամի չափով ծախս (2012 թվականին՝ 110.7 մլն դրամ): 2012 թվականի պետական բյուջեի նկատմամբ ծախսերի աճը կազմում է 2.7 մլն դրամ, որը պայմանավորված է հաշմանդամների սայլակների և լսողական սարքերի թվաանակի փոփոխությամբ: 2013 թվականին նախատեսվում է .

ա/ բաշխել 1300 լսողական սարք: Համաձայն ՀՀ կառավարության 2007 թվականի ապրիլի 12-ի N 453-Ն որոշման՝ ԱՊՀ երկրների արտադրության լսողական սարքերը հատկացվում են երեք տարին մեկ անգամ, իսկ եվրոպական արտադրության՝ հինգ տարին մեկ անգամ: Սարքերը հատկացվում են նաև առաջին անգամ լսողական սարքի կարիք ունեցող և հաջորդ տարվա 1-ին եռամսյակում լսողական սարք ստացող հաշմանդամներին ապահովելու նպատակով, այսպիսով.

- ԱՊՀ երկրների արտադրության լսողական սարքերի պահանջը կկազմի 1000 հատ՝ 33.0 մլն դրամ (2012 թվականին՝ 1100 հատ),

- եվրոպական արտադրության լսողական սարքերի պահանջը կկազմի 100 հատ՝ շուրջ 8.0 մլն դրամ (2012 թվականին՝ 200 հատ) և 200 հատ ներդիրներ մինչև 12 տարեկան երեխաների համար 2.5 մլն դրամ (19-25 տարեկան հաշմանդամ երիտասարդներին և առաջին անգամ ստացողներին նրանցով ապահովելու համար):

բ/ 2013 թվականին սայլակների թվի պահանջը կկազմի 500 հատ՝ 70.0 մլն դրամ (2012 թվականին՝ 400 հատ): Համաձայն ՀՀ կառավարության N 453-Ն որոշման սայլակները տրվում են երեք տարին մեկ անգամ: Սայլակները հատկացվում են նաև առաջին անգամ սայլակի կարիք ունեցող հաշմանդամներին, ինչպես նաև հաջորդ տարվա 1-ին եռամսյակում սայլակ ստացող հաշմանդամներին ապահովելու նպատակով: Նշված չափաքանակով սայլակների առկայությունը հնարավորություն կտա հաշմանդամներին սայլակները ստանալ անմիջապես՝ առանց հերթերի:

**«Դպրոցն ավարտած, ինչպես նաև ուշ տարիքում տեսողությունը կորցրած հաշմանդամների համար հատուկ տառատեսակներով գրքերի տպագրության, տետրերի**

**պատրաստման և «խոսող գրքերի» ձայնագրության ծառայություններ»** ծրագրի գծով ծախսը կազմում է 10.5 մլն դրամ (պահպանվել է 2012 թվականի համար նախատեսված չափը):

**–«Տեսողությունից հաշմանդամություն ունեցող անձանց «Արև» համակարգով ուսուցում»** ծրագրի գծով նախատեսվում է 3.9 մլն դրամի չափով ծախս (պահպանվել է 2012 թվականի համար նախատեսված չափը): Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ծառայություն մատուցել 10 մարդու համար:

**–«Տեսողությունից հաշմանդամություն ունեցող անձանց համակարգչային տեխնիկայով և այլ օժանդակ սարքերով ապահովում»** ծրագրի գծով նախատեսվում է 2.8 մլն դրամի չափով ծախս (2012 թվականին՝ 4.3 մլն դրամ): 2012 թվականի նկատմամբ ծախսերի նվազումը կազմում է 1.5 մլն դրամ, որը պայմանավորված է 2010-2011 թվականների փաստացի կատարողականներով՝ 1 շահառուի գծով առավել բարձր գնի կիրառմամբ՝ 276 հազ. դրամ՝ պահպանելով շահառուների թվաքանակը՝ 10 մարդ:

**–«Մտավոր խնդիրներ ունեցող հաշմանդամ դեռահասների և երիտասարդների սոցիալ-վերականգնողական ծառայություններ»** ծրագրի ծախսը կազմում է 16.6 մլն դրամ (2012 թվականին՝ 16.5 մլն դրամ): Ծախսերի աճը 0.1 մլն դրամի չափով պայմանավորված է օրենսդրական փոփոխությամբ (հիմք՝ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքը)՝ պահպանելով կենտրոնի կողմից սպասարկվողների թիվը՝ 50 շահառու:

### **Ծերություն**

**–«Ապայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակներ»** ծրագրով նախատեսվում է 18 986.4 մլն դրամի չափով ծախս (2012 թվականին՝ 18 179.8 մլն դրամ): Ծախսերի աճը 2012 թվականի նկատմամբ 806.5 մլն դրամի չափով պայմանավորված է կենսաթոշակառուների թվաքանակի նվազման պայմաններում՝ 3102 մարդով (2012 թվականին՝ 38 323 մարդ) կենսաթոշակի միջին ամսական չափի փոփոխությամբ (աճով)՝ 5 390.5 դրամով կամ շուրջ 44 922.0 դրամ (2012 թվականին՝ 39 531.5 դրամ)՝ բոլոր ուժային կառույցներում երկարամյա ծառայության, 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամ կենսաթոշակառուների, կերակրողին կորցնելու գծով նշանակված կենսաթոշակառուների ընտանիքների անդամների թվաքանակներում նրանց տեսակարար կշիռների փոփոխությամբ, ինչպես նաև ՀՀ պաշտպանության ժամանակ մարտական գործողություններին մասնակցած զոհված զինծառայողների ընտանիքներին տրվող կենսաթոշակի միջին ամսական չափի աճով շուրջ 17 տոկոսով:

**–«Շարքային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակներ»** ծրագրով նախատեսվում է 1 101.6 մլն դրամի չափով ծախս (2012 թվականին՝ 1

341.9 մլն դրամ): Ծախսերի նվազումը 2012 թվականի նկատմամբ 240.3 մլն դրամի չափով պայմանավորված է կենսաթոշակառուների թվի նվազմամբ՝ 1 160 մարդով (2012 թվականին՝ 6 772 մարդ)՝ 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամ կենսաթոշակառուների, կերակրողին կորցնելու գծով նշանակված կենսաթոշակառուների ընտանիքների անդամների թվաքանակներում տեսակարար կշիռների փոփոխության պայմաններում: Արդյունքում միջին ամսական կենսաթոշակի չափը կկազմի 16 357.4 դրամ 2012 թվականի՝ 16 513.1 դրամի դիմաց:

**–«Սոցիալական կենսաթոշակներ»** ծրագրով նախատեսվում է 9 867.0 մլն դրամի չափով ծախս (2012 թվականին՝ 10 070.4 մլն դրամ): Ծախսերի նվազումը 2012 թվականի նկատմամբ 203.3 մլն դրամի չափով պայմանավորված է կենսաթոշակառուների թվաքանակի նվազմամբ 1 028 մարդով (2012 թվականին՝ 51 719 մարդ), այդ թվում դադարեցված կենսաթոշակների վճարումը վերսկսածների թվի աճի պայմաններում՝ 34 մարդով (2012 թվականին՝ 444 մարդ): Արդյունքում սոցիալական կենսաթոշակի միջին ամսական չափը կկազմի 16 221.0 դրամ 2012 թվականի 16 226.1 դրամի դիմաց:

**–«Աշխատանքային կենսաթոշակներ»** ծրագրով նախատեսվում է 167 475.9 մլն դրամի չափով ծախս (2012 թվականին՝ 169 124.1 մլն դրամ): Ծախսերի նվազումը 2012 թվականի նկատմամբ 1 648.3 մլն դրամի չափով պայմանավորված է կենսաթոշակառուների թվաքանակի նվազմամբ 4 117 մարդով, այդ թվում դադարեցված կենսաթոշակների վճարումը վերսկսածների թիվը՝ 269 մարդով (2012 թվականին՝ 449 355 մարդ, այդ թվում դադարեցված կենսաթոշակների վճարումը վերսկսածների թիվը՝ 4 444 մարդ)՝ պահպանելով հիմնական կենսաթոշակի չափը՝ 13 000 դրամ և աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը՝ 450 դրամ: Արդյունքում աշխատանքային կենսաթոշակի միջին ամսական չափը կկազմի 31 345.8 դրամ 2012 թվականի 31 254.5 դրամի դիմաց աշխատանքային (տարիքային), 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամ կենսաթոշակառուների, կերակրողին կորցնելու գծով նշանակված կենսաթոշակառուների ընտանիքների անդամների թվաքանակներում տեսակարար կշիռների փոփոխության պայմաններում:

**–«ՀՀ օրենքներով նշանակված կենսաթոշակներ և կենսաթոշակին տրվող հավելում»** ծրագրով նախատեսվում է 347.3 մլն դրամի չափով ծախս (2012 թվականին՝ 344.0 մլն դրամ): Ծախսերը 2012 թվականի նկատմամբ աճում են 3.3 մլն դրամով, որը պայմանավորված է դատավորի կենսաթոշակ ստացողների թվի աճով՝ 2 մարդով 2012 թվականին՝ 51 դատավոր և ՀՀ կառավարության որոշմամբ նշանակված 1 կենսաթոշակի գործի նվազմամբ 2012 թվականին՝ 15 մարդ, արդյունքում կենսաթոշակառուների թիվը կկազմի 67 2012 թվականի 66 դիմաց, իսկ կենսաթոշակի միջին ամսական չափը կկազմի 431 998.6 դրամ 2012 թվականի 434 363.3 դրամի դիմաց:

-“**Տարեցների շուրջօրյա խնամքի ծառայություններ**” ծրագրի գծով նախատեսվում է ծախս 1 539.0 մլն դրամի չափով (2012 թվականին՝ 1 533.3 մլն դրամ): Ծախսերի աճը 5.6 մլն դրամի չափով պայմանավորված է.

ա/ օրենսդրական փոփոխության (հիմք՝ "Եկամտային հարկի մասին" ՀՀ օրենքը) հետ կապված լրացուցիչ ծախսի՝ 5.4 մլն դրամ ներառմամբ,

բ/ բժշկական լիցենզավորման գծով ծախսերի աճով՝ 0.2 մլն դրամ (հիմք՝ "Տուրքերի մասին" ՀՀ օրենքը):

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի չորս տուն-ինտերնատներում 2013 թվականին կխնամվեն տարեկան 1090 միայնակ ծեր և հաշմանդամ կենսաթոշակառու: 2013 թվականի համար մեկ օրվա սննդի գումարը մեկ շահառուի հաշվով կկազմի 1436 դրամ՝ պահպանելով 2012 թվականի մակարդակը:

-“**Տնային պայմաններում միայնակ տարեցների սոցիալական սպասարկում**” ծրագրի գծով նախատեսվում է ծախս 92.1 մլն դրամի չափով (2012 թվականին՝ 91.3 մլն դրամ): Ծախսերի աճը 0.7 մլն դրամի չափով պայմանավորված է օրենսդրական փոփոխության (հիմք՝ "Եկամտային հարկի մասին" ՀՀ օրենքը) հետ կապված լրացուցիչ ծախսի ներառմամբ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի “Միայնակ տարեցների սոցիալական սպասարկման կենտրոն” ՊՈԱԿ-ի կողմից Երևան քաղաքում 2013 թվականին կսպասարկվի տարեկան 1500 միայնակ ծեր ու հաշմանդամ կենսաթոշակառու:

-“**Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ**” ծրագրի գծով նախատեսվում է ծախս 15.8 մլն դրամի չափով (2012 թվականին՝ 15.7 մլն դրամ): Ծախսերի աճը 0.1 մլն դրամի չափով պայմանավորված է օրենսդրական փոփոխության (հիմք՝ "Եկամտային հարկի մասին" ՀՀ օրենքը) հետ կապված լրացուցիչ ծախսի ներառմամբ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի “Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ” ՊՈԱԿ-ի կողմից 2013 թվականին կսպասարկվի տարեկան 50 մարդ:

-“**ՀՀ մարզերում միայնակ տարեցներին, հաշմանդամներին տնային պայմաններում և տարեցների ցերեկային խնամքի կենտրոններում սոցիալական սպասարկում**” ծրագրի գծով նախատեսվում է ծախս 163.9 մլն դրամի չափով (2012 թվականին՝ 164.3 մլն դրամ): Ծախսերի նվազումը 0.4 մլն դրամի չափով պայմանավորված է օրենսդրական փոփոխության (հիմք՝ "Եկամտային հարկի մասին" ՀՀ օրենքը) հետ կապված լրացուցիչ ծախսի՝ 0.8 մլն դրամ ներառման պայմաններում, տարվա ընթացքում աշխատանքային օրերի թվի փոփոխության հետ կապված՝ 2013 թվականին՝ 248 օր (2012 թվականին՝ 253 օր)՝ փոխհատուցման (տարեցներ-

րի խնամքի ցերեկային կենտրոններում շուրջ 2200 սոցիալապես անապահով միայնակ տարեցների մեկանգամյա սննդի գումարի (մեկ օրվա մեկ շահառուի համար 105 դրամի չափով) մասնակի փոխհատուցում) գծով ծախսերի նվազմամբ՝ 1.2 մլն դրամ:

2013 թվականին “Առաքելություն Հայաստան” ԲՀԿ-ի կողմից իրականացվող ծրագրի շրջանակներում շահառուների միջին տարեկան թիվը կկազմի 4200 մարդ՝ պահպանելով 2012 թվականի համար նախատեսված մակարդակը:

**–“Վանաձորի տարեցների տանը խնամվողներին շուրջօրյա խնամք և սոցիալական սպասարկում”** ծրագրի գծով նախատեսվում է ծախս 14.5 մլն դրամի չափով (2012 թվականին՝ 14.4 մլն դրամ): Ծախսերի աճը 0.1 մլն դրամի չափով պայմանավորված է օրենսդրական փոփոխության (հիմք՝ “Եկամտային հարկի մասին” ՀՀ օրենքը) հետ կապված լրացուցիչ ծախսի ներառմամբ:

2013 թվականին “Վանաձորի տարեցների տուն” հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի շրջանակներում շահառուների միջին տարեկան թիվը կկազմի 55 մարդ՝ պահպանելով 2012 թվականի համար նախատեսված մակարդակը:

#### ***Հարազատի կորցրած անձինք***

**–“Հայաստանի զոհված ազգային հերոսի կամ Մարտական խաչ շքանշանով հետմահու պարգևատրված անձի ընտանիքներին նպաստ”** ծրագրի ծախսը կազմում է 154.8 մլն դրամ (պահպանվել է 2012 թվականի համար նախատեսված չափը): Ծրագրի շրջանակներում նախատեսվում է նպաստ տրամադրել 98 մարդու, այդ թվում Հայաստանի ազգային հերոսի ընտանիքին՝ 9 մարդ, 250.0 հազ. դրամ նպաստի չափով, Առաջին աստիճանի Մարտական խաչ շքանշան ունեցող ընտանիքին՝ 35 մարդ, 150.0 հազ. դրամ նպաստի չափով և Երկրորդ աստիճանի Մարտական խաչ շքանշան ունեցող ընտանիքին՝ 54 մարդ, 100.0 հազ. դրամ նպաստի չափով:

**–“Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին” ՀՀ օրենքի (25.05.2005թ. ՀՕ-206-Ն) 36-րդ հոդվածով նախատեսված նպաստի վճարում”** ծրագրի ծախսը կազմում է 6.8 մլն դրամ (պահպանվել է 2012 թվականի համար նախատեսված չափը): Ծրագրով նախատեսվում է գործազուրկների (126 մարդ) մահվան դեպքում թաղման նպաստի տրամադրում հուղարկավորությունը կատարած անձին:

**–“Կենսաթոշակառուի մահվան դեպքում տրվող թաղման նպաստ”** ծրագրով նախատեսվում է 4 880.4 մլն դրամի չափով ծախս (2012 թվականին՝ 4 503.0 մլն դրամ): Ծախսերը 2012 թվականի նկատմամբ աճում են 377.4 մլն դրամով, որը պայմանավորված է մահացող

կենսաթոշակառուների թվի՝ 1 887 մարդով ավելացմամբ (2012 թվականին՝ 22515 մարդ)՝ պահպանելով թաղման նպաստի չափը՝ 200.0 հազ. դրամ

### **Ընտանիքի անդամներ և զավակներ**

-**Շնչառության նպաստ և միանվագ դրամական օգնություն**՝ ծրագրի ծախսը կազմում է 37 105.8 մլն դրամ (պահպանվել է 2012 թվականի համար նախատեսված չափը): Ծրագրով նախատեսվող նպաստառուների թվաքանակը կազմում է 104 685 ընտանիք, իսկ նպաստի միջին ամսական չափը 29 537.8 դրամ:

-**Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ**՝ ծրագրով նախատեսվում է 2 419.2 մլն դրամի չափով ծախս (2012 թվականին՝ 2 376.0 մլն դրամ): Ծախսերը 2012 թվականի նկատմամբ աճում են 43.2 մլն դրամով, որը պայմանավորված է նպաստ ստացողների թվի աճով՝ 200 մարդով (2012 թվականին՝ 11 000 մարդ)՝ պահպանելով երեխայի խնամքի նպաստի ամսական չափը՝ 18 000 դրամ:

-**«Երեխայի ծննդյան միանվագ նպաստ»** ծրագրով նախատեսվում է 4 625.1 մլն դրամի չափով ծախս (2012 թվականին՝ 4 561.9 մլն դրամ): Ծախսերը 2012 թվականի նկատմամբ աճում են 63.1 մլն դրամով, որը պայմանավորված է երեխաների ընդհանուր թվաքանակի նվազման պայմաններում՝ 812 մարդով կամ 43 071 մարդ (2012 թվականին՝ 43 883 մարդ) 3-րդ և ավելի երեխաների տեսակարար կշռի աճով՝ 2013 թվականին կանխատեսվում է 15.1 % չափով կամ 6 504 երեխա 2012 թվականի՝ 14.2 % դիմաց (2012 թվականին՝ 6 231 երեխա):

-**«Հիության և ծննդաբերության նպաստ»** ծրագրով նախատեսվում է 3,111.2 մլն դրամի չափով ծախս (2012 թվականին՝ 3,096.5 մլն դրամ): Ծախսերը 2012 թվականի նկատմամբ աճում են 14.7 մլն դրամով, որը պայմանավորված է միջին օրական նպաստի չափի աճով՝ 720.1 դրամ կամ 2013 թվականին այն կկազմի 2780.6 դրամ 2012 թվականի 2060.5 դրամի դիմաց:

-**«Երեխաների շուրջօրյա խնամքի ծառայություններ»** ծրագրով նախատեսվում է 1 853.5 մլն դրամի չափով ծախս (2012 թվականին՝ 1 711.8 մլն դրամ): Ծախսերը 2012 թվականի նկատմամբ աճում են 141.7 մլն դրամով, որը պայմանավորված է.

ա/ «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ը (հիմք՝ ՀՀ կառավարության 2012 թվականի հուլիսի 7-ի N 716-Ն որոշումը) մասնագիտացված մանկատուն դառնալու հանգամանքով, որի արդյունքում ծախսերի աճը կազմում է 260.3 մլն դրամ:

բ/ օրենսդրական փոփոխության (հիմք՝ "Եկամտային հարկի մասին" ՀՀ օրենքը) հետ կապված լրացուցիչ ծախսի՝ 25.5 մլն դրամ ներառմամբ,



զ/ բժշկական լիցենզավորման գծով ծախսերի աճով՝ 0.1 մլն դրամ (հիմք՝ «Տուրքերի մասին» ՀՀ օրենքը:

դ/ «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» և «Գյումրու երեխաների տուն» ՊՈԱԿների նվիրատվությամբ ստացված ավտոմեքենաների պահպանման ծախսերի աճով՝ 0.6 մլն դրամ,

ե/ խնամվողների թվաքանակի նվազմամբ՝ 30 մարդով (2012 թվականին՝ 790 երեխայի դիմաց), իսկ հաստիքային միավորների թիվը կկազմի 755 (2012 թվականին՝ 785 հաստիքային միավորի դիմաց) և առանձին տնտեսագիտական դասակարգման հոդվածների գծով ծախսերի փոփոխությամբ, արդյունքում ծախսերը կնվազեն 141.9 մլն դրամի չափով,

զ/ «Զատիկ» մանկատան դադարեցման հետ կապված առանձին տնտեսագիտական դասակարգման հոդվածների գծով ծախսերի նվազմամբ (էլեկտրաէներգիայի, վառելիքի և ավտոմեքենայի պահպանման ծախսերը ներառված են երեխաների սոցիալական հոգածության կենտրոնների և անօթևան երեխաների համար ժամանակավոր օթևանի համար նախատեսված հատկացումներում)՝ 2.9 մլն դրամ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի 6 մանկատներում (2012 թվականին՝ 7 մանկատներ) 2013 թվականին կխնամվեն տարեկան 760 երեխա՝ պահպանելով 2012 թվականի համար նախատեսված մեկ օրվա սննդի գումարը մեկ շահառուի հաշվով՝ 1 334.5 դրամ:

**«Երեխաների տուն-ինտերնատներում խնամվող դպրոցական տարիքի երեխաներին դրամական աջակցության տրամադրում»** ծրագրով նախատեսվում է 6.2 մլն դրամի չափով ծախս (2012 թվականին՝ 7.7 մլն դրամ): Ծախսերը 2012 թվականի նկատմամբ նվազում են 1.5 մլն դրամով, որը պայմանավորված է շահառուների թվի 59 երեխայով նվազմամբ 2012 թվականի համար նախատեսված 264 երեխայի դիմաց: 2013 թվականին նախատեսվում է անձնական մանր ծախսերի համար գումար տրամադրել 205 երեխայի (101-ը\* 2000 դրամ \*12 ամիս՝ 7-12 տարեկան և 104-ը\*3000 դրամ\*12 ամիս՝ 13-18 տարեկան):

**«ՀՀ մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին աջակցություն և խորհրդատվություն»** ծրագրի ծախսը կազմում է 29.6 մլն դրամ (2012 թվականին՝ 35.7 մլն դրամ): Ծախսերի նվազումը կազմում է 6.1 մլն դրամ, որը պայմանավորված է ծրագրի շրջանակներում առանձին բաղադրիչների գծով (շրջանավարտների ուսումնասիրություն 20 շահառու 2012 թվականի 30 շահառուի դիմաց, անհատական ծրագրերի կազմում՝ 20 շահառու 2012 թվականի 40 շահառուի դիմաց և այլն) շահառուների թվի փոփոխությամբ: 2013 թվականի հատկացումներում ներառվել է նաև ընթացիկ տարում հատկացվելիք բնակարանների համար նոտարական և կադաստրային ձևակերպման ծախսերը 0.9 մլն դրամ:

**–«ՀՀ մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին կրթաթոշակի և միանվագ դրամական օգնության տրամադրում»** ծրագրի ծախսը կազմում է 2.8 մլն դրամ (2012 թվականին՝ 3.8 մլն դրամ): Ծախսերի նվազումը կազմում է 1.0 մլն դրամ, որը պայմանավորված է մանկատան շրջանավարտների՝ միանվագ դրամական օգնություն և կրթաթոշակ ստացողների թվաքանակի նվազմամբ՝ 20 մարդով՝ 2013 թվականին համապատասխանաբար՝ 20 և 15 շահառու (2012 թվականին՝ 40 և 15 շահառու):

**–«ՀՀ մանկական խնամակալական կազմակերպություններում խնամվող երեխաներին ընտանիքներ վերադարձնելու ծառայություններ (բեռնաթափում)»** ծրագրի ծախսը կազմում է 11.8 մլն դրամ (պահպանվել է 2012 թվականի համար նախատեսված չափը):

**–«Կենսաբանական ընտանիք տեղափոխված երեխաների ընտանիքներին դրամական օժանդակության փաթեթի տրամադրում»** ծրագրի գծով նախատեսվում է ծախս 9.7 մլն դրամի չափով (պահպանվել է 2012 թվականի համար նախատեսված չափը): Ծրագրի շրջանակներում յուրաքանչյուր երեխայի համար նախատեսվող օժանդակության փաթեթը կկազմի տարեկան 194.0 հազ. դրամ Լոռու մարզում ընտրված 50 ընտանիքների համար, ընդ որում 2013 թվականին նախատեսվում է ընտանիք վերադառնել 25 երեխա և կանխարգելել 25 երեխայի մուտքը հաստատություններ (2012 թվականին համապատասխանաբար 40 և 10 երեխա):

**–«Ռիսկի գոտում հայտնված երեխաներին սոցիալական հոգածության ծառայություններ»** ծրագրով նախատեսվում է 217.3 մլն դրամի չափով ծախս (2012 թվականին՝ շուրջ 185.0 մլն դրամ): Ծախսերը 2012 թվականի նկատմամբ աճում են 32.3 մլն դրամով, որը պայմանավորված է.

ա/ շահառուների թվաքանակի աճով 50 մարդով (2012 թվականին՝ 250 շահառու), արդյունքում հաստիքային միավորների թիվը ավելանում է 14 մարդով (2012 թվականին՝ 121 հաստիքային միավոր)՝ 27.4 մլն դրամ,

բ/ «Ձատիկ» մանկատան դադարեցման հետ կապված առանձին տնտեսագիտական դասակարգման հոդվածների գծով ծախսերի ներառմամբ (էլեկտրաէներգիայի և վառելիքի)՝ 1.8 մլն դրամ,

գ/ օրենսդրական փոփոխության (հիմք՝ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքը) հետ կապված լրացուցիչ ծախսի՝ 1.1 մլն դրամ ներառմամբ,

դ/ բժշկական լիցենզավորման գծով ծախսերի աճով՝ 0.2 մլն դրամ (հիմք՝ «Տուրքերի մասին» ՀՀ օրենքը,

ե/ առանձին տնտեսագիտական դասակարգման հոդվածների գծով ծախսերի ճշտմամբ՝ 1.8 մլն դրամ:

2013 թվականին 3 երեխաների սոցիալական հոգածության կենտրոնների ծառայություններից օգտվողների թիվը կկազմի 300 երեխա (2012 թվականին՝ 250 երեխա)՝ պահպանելով մեկ օրվա սննդի գումարը մեկ շահառուի հաշվով՝ 605.8 դրամ:

**«Երեխաների գիշերօթիկ խնամքի և պաշտպանության ծառայություններ»** ծրագրով նախատեսվում է 1 005.8 մլն դրամի չափով ծախս (2012 թվականին՝ 999.9 մլն դրամ): Ծախսերը 2012 թվականի նկատմամբ աճում են 5.9 մլն դրամով, որը պայմանավորված է.

ա/ նվիրատվության կարգով ստացված 4 ավտոմեքենաների սպասարման համար լրացուցիչ ծախսերի աճով՝ 0.9 մլն դրամ,

բ/ աշխատակիցների բուժ գննման համար 0.8 մլն. դրամ,

գ/ օրենսդրական փոփոխության (հիմք՝ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքը) հետ կապված լրացուցիչ ծախսի՝ 4.5 մլն դրամ ներառմամբ,

դ/ առանձին տնտեսագիտական դասակարգման հոդվածների գծով ծախսերի նվազմամբ՝ 0.3 մլն դրամ:

2013 թվականին նախատեսվում է 8 գիշերօթիկ խնամքի և պաշտպանության հաստատություններում խնամել 800 երեխա (պահպանվել է սննդի մեկ օրվա ծախսը մեկ շահառուի հաշվով՝ 1335.4 դրամ):

**«Երեխաների խնամքի ցերեկային կենտրոնների կողմից դժվար իրավիճակներում գտնվող երեխաների սոցիալական հոգածության ծառայություններ»** ծրագրի գծով նախատեսվում է ծախս 51.8 մլն դրամի չափով (2012 թվականին՝ 51.3 մլն դրամ): Ծախսերի աճը 0.5 մլն դրամի չափով պայմանավորված է օրենսդրական փոփոխության (հիմք՝ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքը) հետ կապված լրացուցիչ ծախսի ներառմամբ:

2013 թվականին «Հույսի կամուրջ» ՀԿ կողմից իրականացվող ծրագրի շրջանակներում շահառուների միջին տարեկան թիվը կկազմի 250 մարդ, պահպանելով 2012 թվականի համար նախատեսված մակարդակը:

**«Հայաստանի Հանրապետությունում խնամատար ընտանիքի ինստիտուտի ներդրման ծառայություններ»** ծրագրի գծով նախատեսվում է ծախս 29.1 մլն դրամի չափով (2012 թվականին՝ 28.2 մլն դրամ): Ծախսերի աճը 0.9 մլն դրամի չափով պայմանավորված է.

ա/ օրենսդրական փոփոխության (հիմք՝ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքը) հետ կապված լրացուցիչ ծախսի ներառմամբ 0.1 մլն դրամ,

բ/ նվազագույն ամսական աշխատավարձի չափի աճով՝ 0.8 մլն դրամ (ծրագրի գծով խնամատար ծնողների վարձատրությունը կատարվում է ամսական նվազագույն աշխատավարձի չափով),

2013 թվականին նախատեսվում է պահպանել 2012 թվականի համար նախատեսված մակարդակը՝ խնամատար ընտանիքների թիվը, ընտանիքներ տեղափոխվող երեխաների թիվը (23 ընտանիք և 25 երեխա) և յուրաքանչյուր երեխայի համար տրվող օժանդակության փաթեթի գումարը՝ 671.5 հազ. դրամ:

**«Անօթևան երեխաների համար ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայություններ»** ծրագրի գծով նախատեսվում է ծախս 27.4 մլն դրամի չափով (2012 թվականին՝ շուրջ 26.0 մլն դրամ): Ծախսերի աճը 1.5 մլն դրամի չափով պայմանավորված է.

ա/ օրենսդրական փոփոխության (հիմք՝ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքը) հետ կապված և առանձին տնտեսագիտական դասակարգման հոդվածների գծով լրացուցիչ ծախսի ներառմամբ՝ 0.4 մլն դրամ,

բ/ «Ձատիկ» մանկատան դադարեցման հետ կապված առանձին տնտեսագիտական դասակարգման հոդվածների գծով ծախսերի ներառմամբ (ավտոմեքենայի պահպանման)՝ 1.1 մլն դրամ,

2013 թվականին նախատեսվում է պահպանել 2012 թվականի համար նախատեսված շահառուների թիվը՝ 20 մարդ, ինչպես նաև սննդի մեկ օրվա ծախսը մեկ շահառուի հաշվով՝ 1 335.4 դրամ:

**«ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 05-1680 գործով 15.07.2005 թ. վճռի համաձայն Հայաստանի Հանրապետության կողմից կերակրողը կորցնելու կապակցությամբ կրած վնասի փոխհատուցում»** ծրագրով նախատեսվում է հատկացնել 1.1 մլն դրամի չափով ծախս (պահպանվել է 2012 թվականի համար նախատեսված չափը):

**«ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 07-3832 գործով 03.11.2007 թ. վճռի համաձայն Հայաստանի Հանրապետության կողմից կերակրողը կորցնելու կապակցությամբ կրած վնասի փոխհատուցում»** ծրագրի գծով նախատեսվում է ծախս 2.0 մլն դրամի չափով (2012 թվականին՝ 1.9 մլն դրամ): Ծախսերի աճը 0.1 մլն դրամի չափով պայմանավորված է նվազագույն ամսական աշխատավարձի չափի աճով:

**«Միանվագ սոցիալական ապահովագրության վճարներ ՀՀ պաշտպանության և փրկարարական ծառայության ժամանակ հաշմանդամ դարձած զինծառայողներին և զոհված (մահացած) զինծառայողների ու փրկարար ծառայողների ընտանիքներին»** ծրագրով նախատեսվում է հատկացնել 603.8 մլն դրամ (պահպանվել է 2012 թվականի համար նախատեսված չափը):

**«Վարժական հավաքների և զինծառայության և փրկարարական ծառայության ընթացքում մահացած (զոհված) զինծառայողների ու փրկարար ծառայողների հուղարկա-**

վորության, գերեզմանների բարեկարգման, տապանաքարերի պատրաստման և տեղադրման հետ կապված ծախսերի փոխհատուցում» ծրագրով նախատեսվում է հատկացնել 370.0 մլն դրամ (պահպանվել է 2012 թվականի համար նախատեսված չափը):

-«ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի գործով վճիռների համաձայն կրած վնասների փոխհատուցում» ծրագրի գծով նախատեսվում է ծախս 4.7 մլն դրամի չափով (2012 թվականին՝ 4.4 մլն դրամ): Ծախսերի աճը 0.3 մլն դրամի չափով պայմանավորված է նվազագույն ամսական աշխատավարձի չափի աճով:

#### **Գործազրկություն**

-«Երիտասարդների մասնագիտական կողմնորոշման և խորհրդատվական ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվում է ծախս 24.1 մլն դրամի չափով (2012 թվականին՝ 24.0 մլն դրամ): Ծախսերի աճը 0.1 մլն դրամի չափով պայմանավորված է օրենսդրական փոփոխության (հիմք՝ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքը) հետ կապված լրացուցիչ ծախսի ներառմամբ:

2013 թվականին նախատեսվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի "Երիտասարդների մասնագիտական կողմնորոշման կենտրոն" ՊՈԱԿ-ի միջոցով ծառայություն մատուցել 5000 շահառուի համար:

-«Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով պետական գրանցման համար գործազուրկներին և աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամների տրամադրվող ֆինասական աջակցություն» ծրագրի գծով նախատեսվում է ծախս 2.5 մլն դրամի չափով (2012 թվականին՝ 2.4 մլն դրամ): Ծախսերի աճը 0.1 մլն դրամի չափով պայմանավորված է շահառուների թվաքանակի աճով՝ 10 մարդով կամ 2013 թվականին նախատեսվում է 150 շահառուի համար ծախս (որպես անհատ ձեռնարկատեր գրանցվող 100, առևտրային կազմակերպություն գրանցող՝ 50 անձի համար) 2012 թվականի 140 շահառուի դիմաց:

-«Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի ընդունելիս աշխատավարձի մասնակի փոխհատուցում գործատուին» ծրագրի գծով նախատեսվում է ծախս 90.7 մլն դրամի չափով (2012 թվականին՝ 70.2 մլն դրամ): Ծախսերի աճը 20.5 մլն դրամի չափով պայմանավորված է աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի ընդունելիս աշխատավարձի մասնակի փոխհատուցում ստացող անձանց թվաքանակի աճով 36 մարդով (2012 թվականին՝ 180 մարդ) և նվազագույն ամսական աշխատավարձի չափի ավելացմամբ:

-«Ապահովագրական ստաժ չունեցող կամ մինչև մեկ տարվա ապահովագրական ստաժ ունեցող աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամների մասնագիտական ուսուցման և աշխատանքային ունակությունների վերակազմման կազմակերպում» ծրագրի գծով նախատեսվում է ծախս 17.0 մլն դրամի չափով (2012 թվականին՝ 13.1 մլն դրամ): Ծախս-

սերի աճը 3.9 մլն դրամի չափով պայմանավորված է մասնագիտական ուսուցում անցնող հաշմանդամների թվաքանակի աճով 23 մարդով (2012 թվականին՝ 77 մարդ)՝ պահպանելով 2012 թվականի համար նախատեսված մեկ անձի հաշվով պահանջվող գումարի չափը՝ 170.0 հազ. դրամ:

-«**Գործազրկության նպաստ**» ծրագրի գծով նախատեսվում է ծախս 3 589.3 մլն դրամի չափով (2012 թվականին՝ 4 503.6 մլն դրամ): Ծախսերի նվազումը 914.3 մլն դրամի չափով պայմանավորված է գործազուրկների թվաքանակի նվազմամբ 4 233 մարդով կամ 2013 թվականին կանխատեսվում է 16 617 մարդ (2012 թվականին՝ 20850 մարդ)՝ պահպանելով 2012 թվականի համար նախատեսված գործազրկության նպաստի ամսական չափը 18.0 հազ. դրամ:

-«**Գործազուրկների, աշխատաշուկայում անմրցունակ խմբերի և երկարամյա ծառայության ու արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստացող աշխատանք փնտրող չգրառված անձանց մասնագիտական ուսուցում**» ծրագրով նախատեսվում է հատկացնել 228.9 մլն դրամի չափով ծախս (պահպանվել է 2012 թվականի համար նախատեսված՝ ծրագրում ընդգրկված շահառուների թվաքանակը՝ 1346 մարդ):

-«**Այլ վայր աշխատանքի գործուղվող գործազուրկների նյութական ծախսերի հատուցում**» ծրագրի գծով նախատեսվում է ծախս 15.4 մլն դրամի չափով (2012 թվականին՝ 13.4 մլն դրամ): Ծախսերի աճը 2.0 մլն դրամի չափով պայմանավորված է շահառուների թվաքանակի՝ 2 մարդով (2012 թվականին՝ 30 մարդ) և նվազագույն ամսական աշխատավրձի չափի աճով:

-«**Երկարամյա ծառայության և արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստացող աշխատանք փնտրող չգրառված անձանց վերամասնագիտացում**» ծրագրի գծով նախատեսվում է ծախս 1.2 մլն դրամի չափով (2012 թվականին՝ 2.3 մլն դրամ): Ծախսերի նվազումը 1.1 մլն դրամի չափով պայմանավորված է ուսուցում ստացող անձանց թվաքանակի նվազմամբ՝ 5 մարդով (2012 թվականին՝ 15 մարդ):

-«**Աշխատաշուկայի հետազոտման և կանխատեսման աշխատանքների կազմակերպում**» ծրագրով նախատեսվում է հատկացնել 5.0 մլն դրամի չափով ծախս (պահպանվել է 2012 թվականի համար նախատեսված չափը):

-«**Թափուր աշխատատեղերի տոնավաճառի կազմակերպման ծառայություններ**» ծրագրի գծով նախատեսվում է ծախս 7.7 մլն դրամի չափով (2012 թվականին՝ 4.2 մլն դրամ): Ծախսերի աճը 3.5 մլն դրամի չափով պայմանավորված է տոնավաճառների թվի ավելացմամբ 2013 թվականին նախատեսվում է կազմակերպել բոլոր մարզերում և Երևան քաղաքում թվով 11 տոնավաճառներ (2012 թվականին՝ 6 տոնավաճառներ):

**«Աշխատանք փնտրող հաշմանդամների աշխատանքային վերականգնման, մասնագիտական վերապատրաստման և խորհրդատվության ծառայություններ»** ծրագրի գծով նախատեսվում է ծախս 15.83 մլն դրամի չափով (2012 թվականին՝ 15.76 մլն դրամ): Ծախսերի աճը 0.08 մլն դրամի չափով պայմանավորված է օրենսդրական փոփոխության (հիմք՝ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքը) հետ կապված լրացուցիչ ծախսի ներառմամբ:

2013 թվականին նախատեսվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի «Հաշմանդամների աշխատանքային վերականգնման Գյումրու կենտրոն» ՊՈԱԿ-ի միջոցով ծառայություն մատուցել 720 շահառուի համար:

**«Մասնագիտություն ունեցող, սակայն աշխատանքային փորձ չունեցող գործազուրկների և աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամների աշխատանքային պրակտիկայի կազմակերպումը գործատուի մոտ»** ծրագրի գծով նախատեսվում է ծախս 64.5 մլն դրամի չափով (2012 թվականին՝ 58.5 մլն դրամ): Ծախսերի աճը 6.0 մլն դրամի չափով պայմանավորված է նվազագույն ամսական աշխատավարձի չափի աճով՝ պահպանելով շահառուների թիվը՝ 300 մարդ:

**«Կազմակերպություններում հաշմանդամների համար աշխատատեղերի հարմարեցում»** ծրագրով նախատեսվում է հատկացնել 11.0 մլն դրամի չափով ծախս (պահպանվել է 2012 թվականի համար նախատեսված չափը):

#### ***Բնակարանային ապահովում***

**«Ձողված (մահացած) և առաջին, երկրորդ և երրորդ կարգի հաշմանդամ զինծառայողների անօթևան ընտանիքներին բնակարանով ապահովման և բակարանային պայմանների բարելավում» և «Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների համար բնակարանային շինարարություն»** ծրագրերով 2013 թվականին նախատեսված ծախսերը կկազմեն 982.6 մլն դրամ 2012 թվականի 4 531.9 մլն դրամի դիմաց (2012 թվականին նախատեսված է նաև ծախս «Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովում ՌԴ-ի կողմից 2009 թ. ՀՀ-ին տրամադրված պետական վարկի միջոցների հաշվին» ծրագրի գծով 3 781.9 մլն դրամի չափով) (նշված ծրագրերի բացատրագրերը տես քաղաքաշինության ոլորտի հատվածում):

#### ***Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)***

**«Անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայություններ»** ծրագրի գծով նախատեսվում է ծախս 59.0 մլն դրամի չափով (2012 թվականին՝ 58.9 մլն դրամ): Ծախսերի աճը 0.1 մլն դրամի չափով պայմանավորված է օրենսդրական փոփոխու-

թյան (հիմք՝ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքը) հետ կապված լրացուցիչ ծախսի ներառմամբ:

2013 թվականին Երևանի թիվ 1 տուն-ինտերնատին կից անօթևանների ժամանակավոր կացարանում կապասարկվի տարեկան 60 անօթևան մարդ մինչև 60 օր տևողությամբ (մեկ շահառուի գծով մեկ օրվա սննդի գծով ծախսը պահպանվել է 2012 թվականի համար նախատեսված չափով՝ 1335 դրամ):

**–«ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների, որպես նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցում»** ծրագրի գծով ծախսը կազմում է 1.7 մլրդ դրամ (պահպանվել է 2012 թվականի համար նախատեսված չափով):

**–«Փախստականների սոցիալական խնդիրների լուծման միջոցառումներ»** ծրագրի գծով նախատեսվում է ծախս 19.1 մլն դրամի չափով (2012 թվականին՝ 18.3 մլն դրամ): Ծախսերի աճը 0.8 մլն դրամի չափով պայմանավորված է օրենսդրական փոփոխության (հիմք՝ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքը) հետ կապված լրացուցիչ ծախսի ներառմամբ և առանձին տնտեսագիտական դասակարգման հոդվածների գծով ծախսերի ավելացմամբ:

**–«Փախստականների կեցության խնդիրների լուծման միջոցառումներ»** ծրագրի գծով նախատեսվում է ծախս 17.9 մլն դրամի չափով (2012 թվականին՝ 14.8 մլն դրամ): Ծախսերի աճը 3.1 մլն դրամի չափով պայմանավորված է.

ա/ շահառուների թվի ավելացմամբ 8 մարդով (2012 թվականին՝ 30 մարդ)՝ 2.3 մլն դրամ,

բ/ օրենսդրական փոփոխության (հիմք՝ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքը) հետ կապված 0.8 մլն դրամի չափով ծախսի ավելացմամբ:

**–«Վետերանների պատվովճարներ»** ծրագրի գծով նախատեսվում է ծախս 652.5 մլն դրամի չափով (2012 թվականին՝ 748.5 մլն դրամ): Ծախսերի նվազումը 96.0 մլն դրամի չափով պայմանավորված է պատվովճար ստացողների թվի նվազմամբ 320 մարդով (2012 թվականին՝ 2495 մարդ)՝ պահպանելով պատվովճարի ամսական չափը՝ 25.0 հազ. դրամ:

**–«ՀՄՊ մասնակիցներին, ՀՄՊ և այլ պետություններում մարտական գործողությունների ընթացքում զոհված զինծառայողների ընտանիքներին տրվող և 25.11.1998 թ. ՀՕ-258 օրենքի 34.1 հոդվածով սահմանված դրամական օգնության տրամադրում»** ծրագրի գծով ծախսը կազմում է 8 279.9 մլն դրամ (պահպանվել է 2012 թվականի համար նախատեսված չափով):

**–«Սոցիալական բնակարանային ֆոնդի սպասարկման ծառայությունների տրամադրում»** ծրագրի ծախսը կազմում է 28.2 մլն դրամ, որի նպատակն է ՀՀ աշխատանքի և



սոցիալական հարցերի նախարարության հաշվեկշիռին փոխանցված սոցիալական բնակարանային ֆոնդում ընդգրկված բնակարանների պահպանման, տեխնիկական սպասարկման, բնակիչների խնդիրների լուծման կազմակերպումը և տնօրինությանը հանձնված «Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի շենքը բնակարանային բավարարման հերթում հաշվառված մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին հանրակացարանային տիպի բնակելի մակերեսով ապահովելու համար:

***Սոցիալական պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)***

–«Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում (նախարարությունների աշխատակազմերի մասով) ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության և ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության», ինչպես նաև «Սոցիալական օգնության ծառայությունների գործունեության կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորում» ծրագրերով 2013 թվականին նախատեսված ծախսերը կկազմեն 3 590.8 մլն դրամ 2012 թվականի 3 577.3 մլն դրամի դիմաց (նշված ծրագրերի բացատրագրերը տես պետական կառավարման մարմինների պահպանման ծախսերին վերաբերող հատվածում):

–«Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Սոցիալական պաշտպանության ոլորտի կառավարման լրացուցիչ ֆինանսավորման ծրագիր» ծրագրի գծով նախատեսվում է ծախս 836.3 մլն դրամի չափով 2012 թվականի 1 596.6 մլն դրամի դիմաց

***Սոցիալական ապշտպանությանը տրամադրող օժանդակ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)***

–«ԲՍՓ ձևաթղթի տպագրության ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվում է ծախս 3.4 մլն դրամի չափով (2012 թվականին՝ 8.1 մլն դրամ): Ծախսերի նվազումը 4.8 մլն դրամի չափով պայմանավորված է մրցույթի արդյունքում ձևավորված ձևաթղթերի գների նվազմամբ:

–«Սոցիալական ապահովության առանձին ծրագրերի վճարման հետ կապված ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվում է ծախս շուրջ 595.0 մլն դրամի չափով (2012 թվականին՝ 609.4 մլն դրամ): Ծախսերի նվազումը 14.4 մլն դրամի չափով պայմանավորված է նպաստներին ուղղվող ծախսերի փոփոխությամբ:

-“Կենսաթոշակային ապահովության, դրամական օգնությունների, պատվով-  
ճարների և այլ ծրագրերի վճարման հետ կապված ծառայություններ” ծրագրի գծով  
նախատեսվում է ծախս 2 116.7 մլն դրամի չափով (2012 թվականին՝ շուրջ 2 048.0 մլն դրամ):  
Ծախսերի աճը 68.7 մլն դրամի չափով պայմանավորված է կենսաթոշակներին, պատվով-  
ճարին, դրամական օգնություններին և այլ ծրագրերին ուղղվող ծախսերի փոփոխությամբ:

-“Ընտանեկան նպաստի և դրամական օգնության տրամադրման հետ կապված  
վարչարարական ծառայություններ” ծրագրի ծախսը կազմում է 19.0 մլն դրամ (պահպանվել է  
2012 թվականի համար նախատեսված չափը):

-“ՄԾՏԳ ձևաթղթի տպագրության ծառայություններ” ծրագրի գծով նախատեսվում է  
ծախս 7.9 մլն դրամի չափով (2012 թվականին՝ 16.9 մլն դրամ): Ծախսերի նվազումը 9.0 մլն  
դրամի չափով պայմանավորված է մրցույթի արդյունքում ձևավորված ձևաթղթերի գների  
նվազմամբ:

-“Մեթոդաբանական ձեռնարկների մշակում, հետազոտությունների անցկացում և  
սոցիալական ապահովության ոլորտի կադրերի վերապատրաստում” ծրագրի գծով  
նախատեսվում է ծախս 85.5 մլն դրամի չափով (2012 թվականին՝ 84.8 մլն դրամ): Ծախսերի  
աճը 0.7 մլն դրամի չափով պայմանավորված է օրենսդրական փոփոխության (հիմք՝  
"Եկամտային հարկի մասին" ՀՀ օրենքը) հետ կապված լրացուցիչ ծախսի ներառմամբ:

-“Հանրային իրազեկման միջոցառումների իրականացում” ծրագրի ծախսը կազմում  
է 26.1 մլն դրամ (պահպանվել է 2012 թվականի համար նախատեսված չափը):

-“Փախստականների և նրանց ընտանիքների վերաբերյալ տեղեկատվության  
կուտակում” ծրագրի գծով նախատեսվում է ծախս 50.1 մլն դրամի չափով (2012 թվականին՝  
44.0 մլն դրամ): Ծախսերի աճը 6.1 մլն դրամի չափով պայմանավորված է.

ա/ "Համակարգչային կենտրոն" ՊՈԱԿ-ի կողմից զբաղեցրած տարածքի դիմաց  
վարձավճարի գծով ծախսերի ներառմամբ՝ 5.9 մլն դրամի չափով,

բ/ օրենսդրական փոփոխության (հիմք՝ "Եկամտային հարկի մասին" ՀՀ օրենքը) հետ  
կապված լրացուցիչ ծախսի՝ 0.3 մլն դրամ ներառմամբ:

-“Ժամանակավոր անաշխատունակության դեպքում նպաստի վճարում” ծրագրի  
գծով նախատեսվում է ծախս 2 803.6 մլն դրամի չափով (2012 թվականին՝ 2 599.4 մլն դրամ):  
Ծախսերի աճը 204.2 մլն դրամի չափով պայմանավորված է միջին օրական նպաստի չափի  
319.1 դրամով բարձրացմամբ կամ 2013 թվականին այն կկազմի 3223.1 դրամ (2012 թվականին՝  
2904 դրամ):

-“Անհատական (անձնավորված) հաշվառման “Պառնաս” համակարգչային  
համակարգի ծրագրային սպասարկման ապահովման ծառայություններ” ծրագրի ծախսը

կազմում է 36.0 մլն դրամ (պահպանվել է 2012 թվականի համար պետական բյուջեով նախատեսված չափը):

-“**Ժամանակավոր անաշխատունակության թերթիկների տպագրություն**” ծրագրի ծախսը կազմում է 21.6 մլն դրամ (պահպանվել է 2012 թվականի համար նախատեսված չափը):

-“**Կենսաթոշակի նշանակման և վճարման համար անհրաժեշտ ձևաթղթերի տպագրություն**” ծրագրի ծախսը կազմում է 2.0 մլն դրամ (պահպանվել է 2012 թվականի համար նախատեսված չափը):

-“**Թրաֆիքինգի գոհերին սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայություններ**” ծրագրի ծախսը կազմում է 6.6 մլն դրամ (պահպանվել է 2012 թվականի համար նախատեսված չափը):

-“**Ջինվորական կենսաթոշակառուների տեղեկատվական համակարգի ներդրման, վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ**” ծրագրի գծով նախատեսվում է ծախս 7.0 մլն դրամի չափով (2012 թվականին՝ 11.9 մլն դրամ): Ծախսերի նվազումը 4.9 մլն դրամի չափով պայմանավորված է հաշվարկների ճշտմամբ:

-“**Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում**” ծրագրի ծախսը կազմում է 19 531.5 մլն դրամ (2012 թվականին՝ 18 000.0 մլն դրամ): Ծախսերի աճը 2012 թվականի նկատմամբ 1 531.5 մլն դրամի չափով պայմանավորված է շահառուների թվականակի ընդլայնմամբ՝ 2013 թվականին կանխատեսվում է շուրջ 148 000 մարդ 2012 թվականի 117 200 մարդու դիմաց:

- “**Կենսաթոշակառուների հաշվառման միասնական տեղեկատվական համակարգի սպասարկման ծառայություններ**” ծրագրի ծախսը կազմում է 24.0 մլն դրամ, որի նպատակն է պետական կենսաթոշակային համակարգի տեղեկատվական շտեմարանի ձևավորումը (2010 թվականի դեկտեմբերի 22-ին ընդունված “Պետական կենսաթոշակների մասին” ՀՀ օրենքի համաձայն նախագծվել և մշակվել է կենսաթոշակային համակարգի տեղեկատվական շտեմարանը): Ծրագրի շրջանակներում նախատեսվում է սպասարկել “Արաքս” համակարգի արխիվը (2013 թվականից կդադարի “Արաքս” համակարգչային համակարգի ծրագրային սպասարկման ապահովման ծառայությունը) մինչև այդ տեղեկատվությունը կենսաթոշակառուների հաշվառման միասնական տեղեկատվական համակարգին ինտեգրելը:

- “**Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների կրթական կարիքների գնահատման, դրանց համարժեք սոցիալական ծառայությունների տրամադրում**” ծրագրի ծախսը կազմում է 4.6 մլն դրամ, որի նպատակն է Հայաստանի Հանրապետության ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված ընտանիքների 16-18 տարեկան երեխաների կրթական կարիքների գնահատման, աջակցության և մոնիթորինգի

իրականացումն է՝ երեխաների մասնագիտական կրթություն ստանալու հնարավորությունների մեծացում՝ դրանով աջակցելով ընտանիքներին ներգրավվելու սոցիալական ակտիվ ծրագրերում, բարձրացնելով ընտանիքի բարեկեցության մակարդակը:

**–“Սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգի սպասարկման (կատարելագործման), շահագործման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ”** ծրագրի ծախսը կազմում է 229.8 մլն դրամ (2012 թվականին հաշմանդամների, գործազուկների, սոցիալական ապահովության քարտերի, երեխաների տվյալների “Մանուկ”, նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 10.06.1993 թ. ներդրված դրամական ավանդների, ընտանեկան նպաստի, երեխայի ծննդյան և խնամքի, բարեգործական ծրագրերի և ՀՀ աշխատանքի պետական տեսչության տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայությունների գծով՝ 290.3 մլն դրամ): Ծախսերի նվազումը 60.5 մլն դրամի չափով պայմանավորված է.

ա/ հանվել է սոցիալական ապահովության քարտ կամ քարտից հրաժարվելու մասին տեղեկանք ստանալու վերաբերյալ դիմումների ընդունում քաղաքացիներից և դիմումների հիման վրա համապատասխան քարտերի և տեղեկանքների տրամադրման բաղադրիչը (հիմք՝ “Հանրային ծառայությունների համարանիշի մասին” ՀՀ օրենքը, որի արդյունքում ուժը կորցրած է ճանաչվում "Սոցիալական ապահովության քարտերի մասին" ՀՀ օրենքը) և պահպանվել է տեղեկատվական ինքնաշխատ փոխանակության համակարգի շահագործման և տեղեկատվական շտեմարանի վարման աշխատանքները (սերվերային, ցանցային ենթակառուցվածքի, շտեմարանի սպասարկման, անվտանգության և հասանելիությունների ապահովման) բաղադրիչը՝ 61.6 մլն դրամ,

բ/ օրենսդրական փոփոխության (հիմք՝ "Եկամտային հարկի մասին" ՀՀ օրենքը) հետ կապված լրացուցիչ ծախսի՝ 1.1 մլն դրամ ներառմամբ:

### **Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ոլորտ**

Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում

- «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում (նախարարների աշխատակազմերի մասով) ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն» ծրագրի 2013 թվականի նախատեսված ծախսերը կկազմի 49.4 մլն դրամ 2012 թվականի 48.8 մլն դրամի դիմաց (նշված ծրագրի բացատրագիրը տես պետական կառավարման մարմինների պահպանման ծախսերին վերաբերող հատվածում):

Սոցիալական պաշտպանության ոլորտի ծախսերի համեմատությունը՝ 2011 թվականի փաստացի, 2012 թվականի հաստատված պետական բյուջեի նկատմամբ և 2013 թվականի բյուջետային տարվա հաստատված համապատասխան ցուցանիշների հետ, արտացոլված են սույն բացատրագրի N 14 աղյուսակում:

Զբաղվածության կարգավորման 2013 թվականի պետական ծրագիրը, երեխաների իրավունքների պաշտպանության 2013 թվականի տարեկան ծրագիրը և հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2013 թվականի տարեկան ծրագիրը արտացոլված են սույն բացատրագրի համապատասխանաբար NN 4 -րդ, 5-րդ և 6 -րդ հավելվածներում:

**Գյուղատնտեսության ոլորտի համար** ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 12,450.25 մլն դրամ՝ ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով հաստատված 13,398.30 մլն դրամի դիմաց: Ծախսերի նվազումը ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ պակաս է 948.05 մլն դրամով կամ 7.1 տոկոս:

Ընթացիկ ծախսերի գծով հատկացված միջոցներն ուղղվելու են հետևյալ ծրագրերի իրականացմանը.

**«Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումներ»** ծրագրի համար ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 48.5 մլն դրամ՝ ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով հաստատված 48.1 մլն դրամի դիմաց կամ ավել՝ 384.2 հազար դրամով, որը պայմանավորված է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի կիրարկմամբ:

Ծրագրի իրականացումն ուղղված է հողերի բերրիության պահպանման և բարձրացման ընդհանուր նպատակի կատարմանը՝ պարարտանյութերի խնայողաբար, արդյունավետ և էկոլոգիապես անվտանգ օգտագործման միջոցով:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել գյուղատնտեսական նշանակության հողատարածությունների ագրոքիմիական դաշտային հետազոտություններ, հողանմուշների և պարարտանյութերի լաբորատոր փորձաքննություններ, 141 համայնքներում ագրոքիմիական քարտեզների և մշակաբույսերի պարարտացման գիտականորեն հիմնավորված երաշխավորագրերի կազմման աշխատանքներ:

**«Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտներում ծառայությունների մատուցում»** ծրագրի համար ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 123.2 մլն դրամ՝ ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով հաստատված 122.1 մլն դրամի դիմաց կամ ավել՝ 1.1 մլն դրամով, որը պայմանավորված է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի կիրարկմամբ:

Ծրագիրը նպատակաուղղված է 243656 հեկտարի վրա բույսերի առավել վնասակար և գրանցված սահմանափակ տարածում ունեցող կարանտին օրգանիզմների տարածման արեալը ճշտելու և նոր օջախներ հայտնաբերելու հետազոտությունների ու թվով 915 համայնքներում գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների կանխարգելիչ միջոցառումների իրականացմանը:

**«Բույսերի պաշտպանության միջոցառումների իրականացում»** ծրագրի համար ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 150.0 մլն դրամ՝ ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հանրապետությունում առավել զանգվածային տարածված և վնասակար օրգանիզմների դեմ բույսերի պաշտպանության միջոցառումների, այդ թվում պայքար մկնանման կրծողների դեմ՝ 65424 հեկտար տարածության վրա, պայքար մորեխների դեմ՝ 4500 հեկտարի վրա, պայքար անտառի վնասակար օրգանիզմների դեմ՝ 7910 հեկտարի վրա:

**«Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի, բույսերի կարանտինի, գյուղմշակաբույսերի և բույսերի պաշտպանության միջոցների լաբորատոր փորձաքննությունների իրականացում»** ծրագրի համար ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 223.3 մլն դրամ՝ ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով հաստատված 218.2 մլն դրամի դիմաց կամ ավել՝ 5.1 մլն դրամով, որը պայմանավորված է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի կիրարկմամբ:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների թվով 900148 լաբորատոր ախտորոշիչ միջոցառումներ, կենդանական հումքին ու մթերքին վերաբերվող լաբորատոր փորձաքննություններ, դաբաղի և խոզերի ժանտախտի սերոմոնիտորինգ, ինչպես նաև կարանտին, առավել վտանգավոր վնասակար օրգանիզմների, թաքնված վարակի հայտնաբերման և թունանյութերի ազդող նյութի որոշման թվով 6600 փորձանմուշների լաբորատոր փորձաքննություններ:

**«ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության անասնաբուժական կարանտինային սահմանափակումների իրականացում»** ծրագրի համար ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 41.0 մլն դրամ՝ ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով հաստատված 40.1 մլն դրամի դիմաց կամ ավել՝ 881.1 հազ. դրամով, որը պայմանավորված է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի կիրարկմամբ:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հանրապետության տարածքում կենդանիների ինֆեկցիոն հիվանդությունների բռնկման օջախների վերացման, հիվանդության

հետագա տարածման կանխարգելման, կարանտինային սահմանափակումների իրականացման, բնակչության պարենային անվտանգության մակարդակի բարձրացման միջոցառումներ:

**«Սերմերի որակի ստուգման և պետական սորտավորձարկման միջոցառումներ»** ծրագրի համար ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 51.4 մլն դրամ՝ ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով հաստատված 51.1 մլն դրամի դիմաց կամ ավել՝ 322.7 հազ. դրամով, որը պայմանավորված է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի կիրարկմամբ:

Ծրագրի իրականացումը հնարավորություն կտա բարձրակարգ սերմերով ապահովելու գյուղացիական և ֆերմերային տնտեսություններին ու անհատներին: Նշված գումարների հաշվին նախատեսվում է իրականացնել բույսերի նոր սորտերի արտոնագրման և օգտագործման գործընթացի կանոնակարգում, սելեկցիոն նվաճումների պաշտպանության ապահովում, բույսերի սորտային կազմի ընդլայնում, ցանքատարածությունների ֆիտոսանիտարական վիճակի վատթարացման, հիվանդությունների, մոլախոտերի և վնասատուների զանգվածային բազմացման կանխարգելում:

**«Գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորման միջոցառումների իրականացում»** ծրագրի համար ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 5.1 մլն դրամ՝ ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով հաստատված 5.7 մլն դրամի դիմաց կամ պակաս՝ 622 հազ. դրամով, որը պայմանավորված է պահպանվող սերմնահեղուկի քանակի (32.0 հազ. դոզա) նվազեցմամբ:

**«Գյուղական խորհրդատվական ծառայությունների իրականացում»** ծրագրի համար ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 295.4 մլն դրամ՝ ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով հաստատված 293.1 մլն դրամի դիմաց կամ ավել՝ 2.3 մլն դրամով, որը պայմանավորված է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի կիրարկմամբ:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության համակարգում գործող թվով 10 գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների և գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոնի միջոցով ծրագրի իրականացումը կնպաստի գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալների ավելացմանը, գյուղատնտեսության վարման արդյունավետության բարձրացմանը:

**«Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին»** ծրագրի համար ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 550.0 մլն դրամ՝ ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով հաստատված 625.0 մլն դրամի դիմաց կամ պակաս՝ 75 մլն դրամով, որը պայմանավորված է ծրագրի շրջանակներում ձեռք բերվող սերմացուի քանակների փոփոխությամբ:

Ծրագիրն ուղղված է հանրապետության ագրարային ոլորտի առաջնահերթ կարևորություն ունեցող ենթաճյուղերից բուսաբուծության ոլորտի սերմնաբուծության բնագավառում պետական աջակցության մեխանիզմների կիրառմանը՝ նպաստելով ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը, հացահատիկային մշակաբույսերի տեղական արտադրության ավելացմանը, ներմուծման փոխարինմանը և ինքնաբավության մակարդակի բարձրացմանը:

**«Սննդամթերքի լաբորատոր փորձաքննությունների իրականացում»** ծրագրի համար ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 10.0 մլն դրամ՝ ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

Ծրագրի նպատակն է տեսչական ստուգումների միջոցով կատարել սննդամթերքի, սննդային հավելումների, սննդամթերքի հետ շփվող նյութերի նմուշառում և լաբորատոր փորձաքննություններ:

**«Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում»** ծրագրի համար ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 1109.5 մլն դրամ՝ ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով հաստատված 1000.0 մլն դրամի դիմաց կամ ավել՝ 109.5 մլն դրամով, որը պայմանավորված է 500 հազ. դրոգա հակադաբադային պատվաստանյութի ձեռքբերման գծով ծախսերի նախատեսմամբ (մինչև 2012 թվականը այն անհատույց կերպով տրամադրվում էր Պարենի և Գյուղատնտեսության կազմակերպության կողմից) և «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի կիրարկմամբ:

Ծրագիրն ուղղված է անասնահամաճարակային կայուն իրավիճակ ստեղծելու և պահպանելու նպատակով կենդանիների վարակիչ հիվանդությունների, այդ թվում նաև կենդանիների և մարդու համար ընդհանուր առավել վտանգավոր հիվանդությունների (դաբադ, սիբիրախտ, լեպտոսպիրոզ, խոզերի ժանտախտ, բրուցելյոզ, տուբերկուլյոզ, պաստերելյոզ, խշխշան պալար (էմկար), բրադզոտ, կեղծ ժանտախտ և մեղունների վարոատոզ) կանխարգելմանն ու վերացմանն ուղղված միջոցառումների իրականացման համար կենսապատրաստուկների ձեռքբերմանը և անասնաբուժական մասնագետների վարձատրությանը:

**«Բուսասանիտարական համակարգի բարելավման և մասնագիտական գիտելիքների բարձրացմանն աջակցում»** ծրագրի համար ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 5.8 մլն դրամ՝ ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

Ծրագիրն ուղղված է բուսասանիտարական վերահսկողության կատարելագործմանը, կարանտին վնասակար օրգանիզմների ներթափանցման կանխարգելմանը, արտադրվող բուսական մթերքի որակի բարձրացմանը: Նախատեսվում է 20 կարանտին վնասակար օրգա-



նիզմների մեթոդական ուղեցույցների մշակում և տպագրություն, մասնագիտական վերապատրաստման ամենամյա դասընթացների կազմակերպում:

**«Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում»** ծրագրի համար ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 634.5 մլն դրամ՝ ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով հաստատված 578.0 մլն դրամի դիմաց կամ ավել՝ 56.5 մլն դրամով, որը պայմանավորված է նախորդ տարիներին տրամադրված վարկերի մասնաբաժնի և 2013թ. տրամադրվելիք վարկի գծով հաշվարկվելիք տոկոսավճարների և համապատասխանաբար սուբսիդավորման գումարի մեծության ավելացմամբ:

Ծրագիրն ուղղված է գյուղական համայնքներում գյուղատնտեսության համար առաջնահերթ համարվող ոլորտներում զբաղված ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրվող վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման միջոցով վարկավորման մատչելիության մակարդակի բարձրացմանը: Ծրագիրն իրականացվում է ՀՀ կառավարության 31.03.2011թ. N 349-Ն որոշմամբ հաստատված «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» կարգի համաձայն, որով նախատեսվում է սուբսիդավորել գյուղացիական տնտեսությունների տրամադրված վարկերի տոկոսադրույքները 4-6 տոկոսի չափով:

**«Անտառպահպանական ծառայություններ»** ծրագրի համար ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 717.2 մլն դրամ՝ ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով հաստատված 708.7 մլն դրամի դիմաց կամ ավել՝ 8.5 մլն դրամով, որը պայմանավորված է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի կիրարկմամբ:

Ծրագրի նպատակն է «Հայանտառ» ՊՈԱԿ-ի տնօրինությանը հանձնված 344.2 հազ. հեկտար տարածքի վրա 19 անտառտնտեսության մասնաճյուղերի միջոցով իրականացնել անտառտնտեսվարում:

**«Անտառային պետական մոնիտորինգի իրականացում»** ծրագրի համար ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 54.5 մլն դրամ՝ ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով հաստատված 53.9 մլն դրամի դիմաց կամ ավել՝ 494.2 հազ. դրամով, որը պայմանավորված է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի կիրարկմամբ:

Ծրագիրն ուղղված է ապօրինի հատումների ու բնափայտի տեղափոխման, իրացման, անտառաձածկ տարածքների և բնափայտի պաշարների քանակական ու որակական փոփոխությունների և այլ բացասական գործողությունների կանխարգելման աշխատանքներին:

**Միաժամանակ ոլորտում շարունակվելու է իրականացվել հետևյալ նպատակային վարկային և դրամաշնորհային ծրագրերը.**

**1. Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագիր (Համաշխարհային բանկ, ծրագրի տևողությունը՝ 2011-2016թթ.)**

Ծրագրի նպատակն է աջակցել անասնապահական ուղղվածություն ունեցող համայնքներին արտաօգտագործման/անասնապահական առավել մրցունակ և կայուն համակարգերի ստեղծման հարցում:

Ըստ բաղադրիչների նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները՝

ա) համայնքների արտավայրերի/անասնապահության կառավարման համակարգ-նախատեսվում է նախնական ընտրված համայնքների դրամաշնորհային ծրագրերի իրականացում,

բ) գյուղատնտեսությանն աջակցող ծառայությունների հզորացում-գյուղմթերքների արտադրողականության բարձրացում և կենդանիների առողջության ապահովման ծառայություններ, գյուղացիների վերապատրաստում, ուսուցումների կազմակերպում, ԳԱՄԿ-երի (գյուղատնտեսական աջակցության մարզային կենտրոն) և ԳԱՀԿ-երի (գյուղատնտեսական աջակցության հանրապետական կենտրոն) տեխնիկական աջակցություն,

գ) մրցակցային դրամաշնորհների ծրագիր-գյուղմթերքի որակի բարձրացում, իրացման խնդրի լուծում, կոոպերացիայի ստեղծում, ՀՀ մարզերում նոր արտադրանքների և նոր տեխնոլոգիաների ներդրում,

դ) ծրագրի իրականացում, մոնիթորինգ և գնահատում:

Ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման նպատակով 2013թ. համար ծրագրված է 1,688.6 մլն դրամ:

**2. Գյուղական կարողությունների ստեղծում ծրագիր (Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամ, ծրագրի տևողությունը՝ 2011-2015թթ.)**

Ծրագրի նպատակն է նվազեցնել գյուղական աղքատությունը Հայաստանում, ինչպես նաև ստեղծել պտղի և ընկուզեղենի արտադրության համար անհրաժեշտ ծառայությունների մատուցման նպատակով կառույց, որը գյուղաբնակների համար կապահովի ավելի բարեկարգ սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքներից օգտվելու հնարավորություն:

Ըստ բաղադրիչների նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները՝

ա) Աջակցություն պտղի և ընկուզեղենի արտադրությանը - «Հայկական միրգ» բաժնետիրական ընկերության միջոցով 306 հա ինտենսիվ այգիների հիմնում, 250-400 մանրածավալ արտադրողների և ֆերմերների հետ պայմանագրերի կնքում: Այս բաղադրիչով նախատեսվում է նաև աջակցություն արտահանման և ստանդարտների ոլորտին, որի իրակա-

նացման պարագայում կբարելավվի միջազգային շուկաներում Հայկական մրգի համբավն ու բարի անունը:

բ) Գյուղական ենթակառուցվածքներ - գյուղերում կենսամակարդակի բարձրացում, հասարակական ենթակառուցվածքների ներդրում (ջրագծերի կառուցում, վերականգնում, գազաֆիկացում, հեղեղաջրերի հեռացում) և գյուղական տրանսպորտային ներդրումներ (ճանապարհների, կամուրջների կառուցում և վերականգնում)

Ծրագրվող նախատեսված աշխատանքների իրականացման գծով 2013թ. համար ծրագրված է 1,890.0 մլն դրամ:

### **3. Գյուղական կարողությունների ստեղծում ծրագիր (Նավթ արդյունահանող երկրների կազմակերպության միջազգային զարգացման հիմնադրամ, ՕՊԵԿ, ծրագրի տևողությունը՝ 2011-2015թթ.)**

Ծրագրի նպատակն է նվազեցնել գյուղական աղքատությունը Հայաստանում:

Ըստ բաղադրիչների նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները՝

- ա) Այգեգործական արտադրության հավելյալ արժեքի շղթայի ստեղծում՝
- պայմանագրային այգեգործություն և տեխնոլոգիաների փոխանցում,
  - արտահանման խթանում, ստանդարտների, որակի փորձաքննության և սերտիֆիկացիա,
  - այգեգործության ֆինանսավորում:

բ) Գյուղական վայրերի ֆինանսավորում- փոքր և միջին ծավալի արտադրության համար ֆինանսավորման մատչելիություն, այգեգործական վարկեր: Ենթադրվում է, որ այն կիրականացվի ֆինանսական հաստատությունների մասնակցությամբ:

Վարկային միջոցները տրամադրվելու են տարբեր տևողությամբ, վճարման արտոնությունների ժամկետով և տոկոսադրույքով՝ կախված պտղի յուրահատկությունից և պտղատու այգու տեսակից:

Այդ փաթեթները կառաջարկվեն բանկերին և ունիվերսալ վարկային հաստատություններին գյուղական ֆինանսավորման կառույցի կողմից:

գ) Գյուղական ենթակառուցվածքներ- կենսամակարդակի բարձրացում գյուղերում, հանրային ենթակառուցվածքների ներդրում (ջրագծերի կառուցում, վերականգնում, գազաֆիկացում, հեղեղաջրերի հեռացում), և գյուղական ճանապարհների բարեկարգման ներդրումներ:

Ծրագրվող նախատեսված աշխատանքների իրականացման գծով 2013թ. համար ծրագրված է 3,175.3 մլն դրամ:

**4. Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին ծրագիր (Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամ, ավարտը 2013թ.):**

Ծրագրով 2013թ. նախատեսվում է գյուղական զարգացման հիմնադրամի պահպանման, հիմնական գումարի մարման և ֆինանսական ակտիվների ձեռքբերման, խորհրդատվության և շինարարության գծով պատավորությունները կատարելու համար:

Ծրագրվող նախատեսված աշխատանքների իրականացման գծով 2013թ. համար ծրագրված է 476.9 մլն դրամ:

Միաժամանակ գյուղատնտեսության ոլորտում 2013թվականին նախատեսվում է շարունակել և իրականացնել **Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Գյուղական կարողությունների ստեղծում»** դրամաշնորհային ծրագիրը՝ 78,0 մլն դրամ, **Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին»** դրամաշնորհային ծրագիրը՝ 44,5 մլն դրամ, **Դանիական թագավորության աջակցությամբ իրականացվող «Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին»** դրամաշնորհային ծրագիրը՝ 254.9 մլն դրամ ծավալներով:

Այս ոլորտում ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվող բյուջետային ծախսերի համեմատությունը 2011 թվականի բյուջետային տարվա փաստացի և 2012 թվականի հաստատված պետական բյուջեի համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N4 աղյուսակում:

**Ջրային տնտեսության ոլորտի** համար ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 35033.4 մլն դրամ՝ ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով սահմանված 33330.9 մլն դրամի դիմաց: Ծախսերի աճը ՀՀ 2012 թվականի հաստատված պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ կազմում է 1702.5 մլն դրամ կամ 5.1 տոկոս:

Ընթացիկ ծախսերի գծով հատկացված միջոցներն ուղղվելու են հետևյալ ծրագրերի իրականացմանը.

**«Ոռոգում ջրառ իրականացնող կազմակերպություններին ֆինանսական աջակցության տրամադրում»** ծրագրի համար ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 433.0 մլն դրամ՝ ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով հաստատված 583.7 մլն դրամի դիմաց կամ պակաս 150.7 մլն դրամի չափով, որը պայմանավորված է «Դեբեդ-Աղստև-ջրառ» ու «Սևան-Հրազդանյան-ջրառ» ՓԲԸ-ների միացման ճանապարհով վերակազմակերպելու հանգամանքով:

Ծրագրով նախատեսվում է ոռոգում ջրառ իրականացնող կազմակերպությունների ընթացիկ ֆինանսական ճեղքվածքի ծածկման նպատակով պետական աջակցության տրամադրում՝ վերջիններիս համար հաստատված սակագնի և նվազագույն շահավետ գնի տարբերության չափով:

Գումարի հաշվարկման համար հիմք է հանդիսացել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից 2007թ. սահմանված ոռոգման ջրի սակագների հաշվարկները և 2010թ. վերանայված տարբերակները:

**«Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրում»** ծրագրի համար ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 3934.4 մլն դրամ՝ ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

ՀՀ կառավարության 08.02.2007թ. «Ջրօգտագործողների ընկերությունների պետական ֆինանսական աջակցության բարեփոխումների հիմնադրույթները և մատակարարված ոռոգման ջրի կորուստների նորմաները հաստատելու մասին» N188-Ն և 30.09.2010թ. «2012-2016 թվականներին ջրօգտագործողների ընկերություններին պետական աջակցության միջնաժամկետ ռազմավարությանը հավանություն տալու և ռազմավարությունից բխող առանձին միջոցառումների իրականացումն ապահովելու գործողությունների մասին» N1291-Ն որոշումներով ջրօգտագործողների ընկերություններին (այսուհետ՝ ԶՕԸ) ՀՀ պետական բյուջեից ֆինանսական աջակցությունը 2008թ. սկսած տրամադրվում է առանձին ԶՕԸ-ների հետ կնքված դրամաշնորհային պայմանագրերի հիման վրա:

Ծրագրով նախատեսվում է ոռոգման համակարգում ստեղծված ԶՕԸ-ներին ընթացիկ ֆինանսական ճեղքվածքի ծածկման նպատակով պետական աջակցություն տրամադրում:

**«Խմելու ջրի մատակարարման ծառայությունների սուբսիդավորում» («Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածք)** ծրագրի համար ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 1097.1 մլն դրամ՝ ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով հաստատված 1076.2 մլն դրամի դիմաց կամ ավելի 20.9 մլն դրամի չափով, որը պայմանավորված է սուբսիդիայից մարման ենթակա Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի աջակցությամբ իրականացվող «Սևանա լճի բնապահպանական ծրագրի» շրջանակներում կնքված ենթավարկային պայմանագրով նախատեսված ենթավարկի մայր գումարի մեծության փոփոխությամբ:

Ծրագրի նախատեսումը բխում է ՀՀ կառավարության 14.07.2011թ. «Հայջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությունում մասնավոր կառավարման գործընթացի շարունակությունն ապահովելու մասին» N972-Ա որոշումից, համաձայն որի ՀՀ տարածքային կառա-

վարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահին լիազորվել է բանակցություններ վարել «SAUR S.A.S.» ֆրանսիական կազմակերպության հետ «Հայջրմուկոյուրի» ՓԲԸ-ի գործադիր մարմնի լիազորությունները մասնավոր կառավարչին փոխանցելու կառավարման պայմանագրի գործողության ժամկետը մինչև 2013 թվականի դեկտեմբերի 31-ը երկարաձգելու վերաբերյալ, որի արդյունքում վարձակալության պայմանագրում կատարվել են համապատասխան փոփոխություններ:

Սուբսիդիայի գումարից 811.6 մլն դրամը նախատեսվում է ուղղել ընկերության գործառնական գործունեության արդյունքում առաջացող ֆինանսական ճեղքվածքի ծածկմանը, իսկ 285.5 մլն դրամը՝ Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի աջակցությամբ իրականացվող «Սևանա լճի բնապահպանական ծրագրի» շրջանակներում կնքված ենթավարկային պայմանագրով նախատեսված ենթավարկի մայր գումարի մարմանը (հիմք ընդունելով ՀՀ կառավարության 12.06.2008թ. N580-Ն որոշումը):

**«Խմելու ջրի մատակարարման ծառայությունների սուբսիդավորում» («Նոր Ակունք» ՓԲԸ-ի սպասարկման տարածք)**» ծրագրի համար ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 233.3 մլն դրամ՝ ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

Ծրագրով նախատեսվող սուբսիդիայի գումարը կուղղվի KFW բանկի աջակցությամբ իրականացված «Արմավիրի մարզի մի շարք բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնում» ծրագրի գծով 28.02.2010թ. կնքված «Ենթավարկային պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» ենթավարկային պայմանագրով ստանադրված վարկի մայր գումարի մարմանը:

**«Կոլեկտորադրենաժային ցանցի մաքրում և ընթացիկ նորոգում»** ծրագրի համար ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 225.0 մլն դրամ՝ ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

Ծրագրով 1045.5 կմ կոլեկտորադրենաժային ցանցի ընդհանուր երկարությունից նախատեսվում է մաքրել և վերանորոգել 134.8 կմ կամ 12.9%-ը, որի արդյունքում կանխատեսվում է գերխոնավ հողերի մակերեսը պահպանել շուրջ 19000 հա:

**«Կոլեկտորադրենաժային ցանցի պահպանում և շահագործում, գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշման աշխատանքներ»** ծրագրի համար ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 94.7 մլն դրամ՝ ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով հաստատված 94.2 մլն դրամի դիմաց կամ ավել՝ 472 հազ. դրամով, որը պայմանավորված է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի կիրարկմամբ:

Ծրագրով նախատեսվում է իրականացնել.

- հանրապետության գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշում,
- կոլեկտորադրենաժային ցանցերի տեխնիկական վիճակի պահպանում և շահագործում,
- ցանցերի մաքրման և նորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկման աշխատանքներ:

**«Զրատեխնիկական կառույցների ուսումնասիրություններ»** ծրագրի համար ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 11.04 մլն դրամ՝ ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով հաստատված 11.0 մլն դրամի դիմաց կամ ավել՝ 47.0 հազ. դրամով, որը պայմանավորված է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի կիրարկմամբ:

Ծրագիրը նախատեսվում է ուղղել հիդրոտեխնիկական կառուցվածքների զննման, ջրային համակարգերի անվտանգության ապահովման, արդյունավետ օգտագործման և պահպանության ծրագրերի ուսումնասիրության և տվյալ ոլորտում իրականացվող միջոցառումների վերաբերյալ մասնագիտական եզրակացություններ տալու նպատակով, որպես մշտապես գործող մարմին ստեղծված ՀՀ ջրային համակարգերի օգտագործման և պահպանության տեխնիկական հանձնաժողովի գործունեության ապահովման ծախսերի ֆինանսավորմանը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 08.05.03թ. «Հիդրոտեխնիկական կառուցվածքների անվտանգության հսկողության և զննման կարգը հաստատելու մասին» N686 որոշումը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով հատկացված միջոցներն ուղղվելու են հետևյալ ծրագրի իրականացմանը.

**«Ոռոգման համակարգերի հիմնանորոգում» (700.0 մլն դրամ)** ծրագրով նախատեսվում է ոռոգման ոլորտի կազմակերպությունների (ջրօգտագործողների ընկերություններ, ոռոգում-ջրառ իրականացնող կազմակերպություններ) կողմից շահագործվող տնտեսության համար կարևոր նշանակություն ունեցող ջրային համակարգերի կապիտալ նորոգման աշխատանքներ:

Միաժամանակ ոլորտում նախատեսվում է շարունակել և իրականացնել հետևյալ նպատակային վարկային և դրամաշնորհային ծրագրերը.

**1. Աբու-Դաբիի Ջարգացման հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Արփա-Սևան թունելի հիմնանորոգման ծրագիր (ծրագրի տևողությունը՝ 2008-2017թթ.)**

Որոտան-Արփա-Սևան հիդրոհանգույցի կազմի մեջ մտնում են՝ Կեչուտի հիդրոհանգույցը, առաջին և երկրորդ Արփա-Սևան թունելները, Եղեգիսի հիդրոհանգույցը, թունելի վերջնամասը և Սևանա լճի հետ միացնող բաց ջրանցքը:

«Արփա-Սևան» ջրատարն ունի 48.38 կմ երկարություն և բաղկացած է երկու թունելներից, որոնք միացված են Եղեգիս գետի վրայով կառուցված ակվեդուկով (ջրանցույց կամուրջով):

Թիվ 1 թունելն ունի 18.73կմ երկարություն, իսկ թիվ 2 թունելի երկարությունը կազմում է

29.65կմ: Նախագծային ջրթողունակությունը կազմում է 25 մ<sup>3</sup>/վրկ, փաստացին (թունելների այսօրվա գոյություն ունեցող իրավիճակից ելնելով՝ թույլատրելին) – 18 մ<sup>3</sup>/վրկ, որը բերում է 7 մ<sup>3</sup>/վրկ-ով ջրի հոսքի նվազեցման, կամ արդյունքում տարեկան շուրջ 90 մլն/մ<sup>3</sup> պակաս ջուր է տեղափոխվում Սևանա լիճ:

ՀՀ կառավարության կողմից ստեղծված հանձնաժողովի եզրակացության հիման վրա մշակվել է թունելի վերականգնման համար համալիր ծրագիր:

Համաձայն կապալային աշխատանքների կատարման պայմանագրի՝ աշխատանքները իրականացնելու են մինչև 2017 թվականը: Ծրագրով հիմնանորոգվելու է թունելի վթարային և անմխիթար հատվածները՝ ապահովելով ջրի հուսալի տեղափոխում:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման համար 2013թ. ծրագրված է 2,025.1 մլն դրամ:

## **2. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման ծրագիր՝ երկրորդ փուլ (ծրագրի տևողությունը՝ 2012-2017թթ.)**

Ծրագիրը մշակվել է Հայաստանի Հանրապետության և «Ասիական Զարգացման Բանկի» միջև կնքված վարկային համաձայնագրի շրջանակներում: Այն ԱԶԲ աջակցությամբ իրականացվող Զրամատակարարման և ջրահեռացման (սեկտորի) ծրագրի տրամաբանական շարունակությունն է: Ծրագրի իրականացման արդյունքում էապես կբարելավվի «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ սպասարկման տարածքում ջրամատակարարումը և ջրահեռացումը, կընդլայնվեն «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ տեխնիկական և կազմակերպական կարողությունները:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2013թ. համար ծրագրված է 5,394.7 մլն դրամ:

## **3. Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի փոքր համայնքների ջրային ծրագիր (ծրագրի տևողությունը՝ 2012-2015թթ.)**

Հայաստանի Հանրապետության թվով 17 համայնքներում (14 քաղաքային և 3 գյուղական) ջրամատակարարման ապահովման և/կամ բարելավման նպատակով Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև կնքվել է «Հայաստանի փոքր համայնքների ջրային ծրագիր» ֆինանսավորման համաձայնագիրը, որի շրջանակներում իրականացվող «Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի փոքր համայնքների ջրային ծրագիրն» ուղղված է Տավուշ, Լոռի, Շիրակ, Գեղարքունիք, Կոտայք, Սյունիք և Վայոց Ձոր մարզերի ընտրված համայնքների ջրամատակարարման բարելավմանը:



և Ջերմուկ ու Դիլիջան համայնքների ջրահեռացման համակարգերի և կոյուղու վերականգնմանը:

Ծրագիրը ներառում է հետևյալ աշխատանքները՝

- ջրառ հանգույցների վերանորոգում և սանիտարական գոտիների կիրառում,
- ջրատարերի փոխարինում,
- քլորացման կայանների կառուցում,
- ջրամբարների վերանորոգում,
- ջրաչափերի համար հանգուցային կետերի կառուցում ինչպես մասնավոր հատվածի, այնպես էլ բազմաբնակարանային շենքերի համար,
- բաշխիչ ցանցերի վերակառուցում և գոտիավորում,

- պոմպակայանների կառուցում և այլ հիմնարար վերակառուցման և վերանորոգման աշխատանքներ:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2013թ. համար ծրագրված է 1,385.8 մլն դրամ:

#### **4. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի փոքր համայնքների ջրային ծրագիր (ծրագրի տևողությունը՝ 2012-2015թթ.)**

Հայաստանի Հանրապետության թվով 17 համայնքներում (14 քաղաքային և 3 գյուղական) ջրամատակարարման ապահովման և/կամ բարելավման նպատակով Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև կնքվել է «Հայաստանի փոքր համայնքների ջրային ծրագրի» ֆինանսավորման համաձայնագիրը, որի շրջանակներում իրականացվող «Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի փոքր համայնքների ջրային ծրագիրն» ուղղված է Տավուշ, Լոռի, Շիրակ, Գեղարքունիք, Կոտայք, Սյունիք և Վայոց Ձոր մարզերի ընտրված համայնքների ջրամատակարարման բարելավմանը և Ջերմուկ ու Դիլիջան համայնքների ջրահեռացման համակարգերի և կոյուղու վերականգնմանը:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2013թ. համար ծրագրված է 1,385.8 մլն դրամ:

#### **5. Եվրոմիության աջակցությամբ իրականացվող Հայաստանի փոքր համայնքների ջրային ծրագրի դրամաշնորհային ծրագիր (ծրագրի տևողությունը՝ 2012-2015թթ.)**

Ծրագրի միջոցներն ուղղվում են Հայաստանի փոքր համայնքների ջրային ծրագրի իրականացմանը:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2013թ. համար ծրագրված է 1,845.3 մլն դրամ:

#### **6. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի փոքր համայնքների ջրային ծրագրի դրամաշնորհային ծրագիր**

ՎԶԵԲ աջակցությամբ իրականացվող Հայաստանի փոքր համայնքների ջրային ծրագրի դրամաշնորհային ծրագիրն առանձնացվել է Եվրամիության աջակցությամբ իրականացվող Հայաստանի փոքր համայնքների ջրամատակարարման ծրագիր - դոնորային ֆինանսավորման ծրագրից՝ կնքված պայմանագրերի հիման վրա:

Ծրագրի միջոցներն ուղղվում են Հայաստանի փոքր համայնքների ջրային ծրագրի իրականացմանը: Մասնավորապես, ծրագիրը նպատակաուղղված է Հայաստանի փոքր համայնքների ջրային ծրագրի նախագծման, ինժեներիայի և վերահսկողական աշխատանքների իրականացման ֆինանսավորմանը:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2013թ. համար ծրագրված է 232.0 մլն դրամ:

#### **7. Եվրոմիության աջակցությամբ իրականացվող Հայաստանի փոքր համայնքների ջրամատակարարման ծրագիր - դոնորային ֆինանսավորման ծրագիր**

Նշված ծրագրից կնքված պայմանագրերի հիման վրա առանձնացվել է ՎԶԵԲ աջակցությամբ իրականացվող Հայաստանի փոքր համայնքների ջրային ծրագրի դրամաշնորհային ծրագիրը: Ծրագրի միջոցները նախատեսվում է ուղղել «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ կորպորատիվ զարգացմանն ուղղված աշխատանքների ֆինանսավորմանը:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2013թ. համար նախատեսված է 246.4 մլն դրամ:

#### **8. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Ոռոգման համակարգերի վերականգնման հրատապ ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման ծրագիր (ծրագրի տևողությունը՝ 2012-2013թթ.)**

Ծրագիրը բաղկացած է հետևյալ լրացուցիչ մասերից՝ ի հավելումն սկզբնական ծրագրի.

1. Ընտրված ոռոգման համակարգերում որոշված հատվածների վերականգնում:

1.1 Արագածոտնի, Կոտայքի, Շիրակի, Լոռու, Արարատի և Արմավիրի մարզերում մայր և միջտնտեսային ջրանցքների վերականգնման աշխատանքներ:

1.2 Խորհրդատվական ծառայությունների մատուցում Ծրագրի Մաս Ա.1-ում նախատեսված վերականգնման աշխատանքների վերահսկողության համար:

2. Ներտնտեսային ոռոգման ցանցերի վերականգնում.

2.1 Լոռու, Շիրակի, Գեղարքունիքի և Արմավիրի մարզերի համայնքներում ներտնտեսային ոռոգման ցանցերի վերականգնում:

2.2 Խորհրդատվական ծառայությունների մատուցում Ծրագրի Մաս Բ.1-ում նախատեսված վերականգնման աշխատանքների վերահսկողության համար:

3. Ծրագրի կառավարում և ինստիտուցիոնալ գործունեություն.

3.1 Լրացուցիչ գործառնական ծախսերի տրամադրում ԾԻԳ-ին և ԶՕԸ-ների Օժանդակության խմբին ծրագրի իրականացման և կառավարման համար, տեխնիկական աջակցություն՝ ներառյալ վերապատրաստումը:

3.2 Ծրագրի աուդիտի և «Ջրառ-ների ու ԶՕԸ-ների աուդիտների ֆինանսավորում:

3.3 Տեխնիկական աջակցության տրամադրում՝ ներառյալ Մեդրիի շրջանում ինքնահոս համակարգի շինարարության վերաբերյալ ուսումնասիրությունները:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2013 թ. համար նախատեսված է 1,166.5 մլն դրամ:

## **9. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Ոռոգման համակարգերի արդյունավետության բարձրացման ծրագիր (ծրագրի տևողությունը՝ 2013-2016թթ.)**

Ծրագիրը գտնվում է բանակցային/նախապատրաստական փուլում և ունենալու է հետևյալ բաղադրիչները՝

ա/ անցում մեխանիկական ոռոգումից ինքնահոս ոռոգման.

Այս բաղադրիչով նախատեսվում է չորս ինքնահոս ոռոգման համակարգերի կառուցում՝ Մեդրիի, Գեղարդալճի, Քաղցրաշենի և Արգիճի: Դրանցից երեքի համար (Մեդրիի, Գեղարդալճի, Արգիճիի) գոյություն ունեն ՀՄՀ-Հայաստանի ծրագրով իրականացված նախնական նախագծերը:

Նշված համակարգերի կառուցումը՝ նվազեցնելով ոռոգման կախվածությունը հոսանքատար մեխանիկական ոռոգումից, կդարձնի ոռոգումը տնտեսապես շահավետ և կայուն: Հանրապետության տարածքում ուսումնասիրված են գործնականում բոլոր ինքնահոս տարբերակների կառուցման հնարավորությունները, դրանց թիվը մոտ 40 է: Դրանցից 4-ը կառուցվել են

նախկինում իրականացված վարկային ծրագրերով: 19 ինքնահոս ոռոգման համակարգեր ներառված էին ՀՄՀ-Հայաստանի ծրագրում, որոնցից կառուցվեցին 5-ը:

Բաղադրիչի իրականացման արդյունքում 5933 հա հողատարածք հնարավոր կլինի ոռոգել ինքնահոս եղանակով, որից 3605 հա լրացուցիչ, տարեկան կտնտեսվի 34,07 մլն.կվտ.ժամ էլեկտրաէներգիա:

բ/ պոմպակայանների հեռացնող ջրանցքների վերականգնում և Շտրեկի պոմպակայանի վերակառուցում

Բաղադրիչով նախատեսվում է 15 ջրհան կայանների, ընդհանուր առմամբ շուրջ 38կմ երկարությամբ հեռացնող ջրանցքների վերականգնում: Բոլոր 15 ջրհան կայանները ներառված են եղել ՀՄՀ-Հայաստան ծրագրի 68 ջրհան կայանների ցանկում, որոնցից արդյունքում վերականգնվել են 17-ը: Այս ծրագրում ներառված ջրհան կայանների համար ՀՄՀ-Հայաստան ծրագրով մասնակիորեն վերականգնվել են մեխանիկական սարքավորումները, իսկ շենքերն՝ ամբողջությամբ:

Ենթաբաղադրիչի իրականացման արդյունքում հնարավոր կլինի ոռոգել լրացուցիչ մոտ 917 հա հողատարածք, տարեկան կխնայվի մոտ 5 մլն.կվտ/ժ էլեկտրաէներգիա, կտնտեսվի ջրհան կայաններով մղված ոռոգման ջուրը, կապահովվի ջրանցքների, նրանց հարակից շինությունների կառուցվածքային ամբողջականությունը, կկանխվի ջրանցքների քայքայումը:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2013 թ. համար նախատեսված է 4,039.1 մլն դրամ:

**10. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Համայնքային ջրամատակարարման և ջրահեռացման երրորդ վարկային ծրագիր (Համաշխարհային բանկ, ծրագրի տևողությունը՝ 2012-2015թթ.)**

Նշված ծրագիրը Համաշխարհային բանկի միջազգային զարգացման գործակալության առաջին երկու ծրագրերի տրամաբանական շարունակությունն է: Ծրագիրը նպաստելու է ինչպես «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ տեխնիկական և կազմակերպական կարողությունների կատարելագործման (ջրաչափման համակարգերի ներդնում, պոմպակայանների ավտոմատացում, և այլն), այնպես էլ «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ սպասարկման գոտում գտնվող Մասիս, Էջմիածին, Աշտարակ քաղաքներում, Այնթափ գյուղում և շրջակա այլ համայնքներում ջրամատակարարման և ջրահեռացման բարելավմանը:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2013 թ. համար նախատեսված է 3,818.0 մլն դրամ:

**11. Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Շիրակի (Գյումրի) մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման դրամաշնորհային ծրագիր**

Գերմանական KfW զարգացման բանկի կողմից վարկավորվող ծրագիրը իրականացվում է մի քանի փուլերով: Ծրագրի նպատակն է ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավումը, դրանց հուսալիության և կայունության ապահովումը Շիրակի մարզում:

Ծրագրի իրականացման ընթացքում առաջացել են տեխնիկական բարդություններ՝ կապված ծրագրում չընդգրկված թաղամասերի սնուցող ջրատարների, բաշխիչ ցանցերի և տնային միացումների կառուցման բավական աշխատատար և տեխնիկապես բարդ աշխատանքների հետ:

Ի հայտ եկած լրացուցիչ աշխատանքների իրականացման համար GITEC խորհրդատուի կողմից ընկերության մասնագետների հետ համատեղ կատարվել են հետազոտություններ, կազմվել են պատվերի փոփոխություններ և ներկայացվել KfW բանկ հաստատմանը: Այդ աշխատանքները նախատեսվում է իրականացնել ի փոփոխություն որոշ կրճատված միջոցառումների հաշվին, մասնավորապես մայր ջրատարների համար նախատեսված գումարներով:

Աշխատանքների կատարման տեխնիկական վերահսկման համար գումար անհրաժեշտ չէ: Չի նախատեսվում նաև ՀՀ համաֆինանսավորում:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2013 թ. համար նախատեսված է 318,2 մլն դրամ:

**12. Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Շիրակի մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման վարկային ծրագիր (II փուլ , ծրագրի տևողությունը՝ 2010-2015թթ.)**

Հայ-գերմանական ֆինանսական համագործակցության շրջանակներում իրականացվող «Ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքներ, Շիրակի մարզ» ներդրումային ծրագրի II փուլի աշխատանքներն ուղղված են Գյումրի քաղաքի ջրամատակարարման համակարգերի վերականգնմանը: Մասնավորապես նշված ժամանակահատվածում աշխատանքների կատարման արդյունքում կավարտվեն Գյումրու՝ «Հին քաղաքի կենտրոնի», «Հարավ-Արևելքի» և «Անտառավանի» թաղամասերի բաշխիչ ցանցերի վերականգնումը, կիրականացվի սնուցող ջրագծերի և Ամասիայի ջրամբարի վերանորոգումը, կկատարվի ջրամատակարարման համակարգերի գոտիավորման աշխատանքները: II փուլի աշխատանքների ավարտից հետո

Գյումրի քաղաքի մոտ 60%, Ախուրյան, Ազատան և Մարալիկ համայնքներում կապահովվի շուրջօրյա ջրամատակարարում, իսկ տարածաշրջանի ջրամատակարարման միջին տևողությունը կավելանա և կկազմի 12-14 ժամ:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2013 թ. համար նախատեսված է 2.721.3 մլն դրամ:

**13. Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ Լոռու (Վանաձոր) մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման վարկային ծրագիր (II փուլ, ծրագրի տևողությունը՝ 2010-2015թթ.)**

Ծրագրի II փուլի աշխատանքների մեջ ներառված է Վանաձոր քաղաքի 6 և 7 գոտիների բաշխիչ ցանցերի վերականգնման աշխատանքները, Նովոսելցովո 1 ջրամբարի վերականգնումը և քաղաքի կոյուղու համակարգի վերանորոգման աշխատանքները:

II փուլի աշխատանքների ավարտից հետո Վանաձոր քաղաքի մոտ 85%-ում, Լեռնապատ, Շահումյանավան և Դարպաս համայնքներում կապահովվի շուրջօրյա ջրամատակարարում, իսկ տարածաշրջանի ջրամատակարարման միջին տևողությունը կհասցվի մինչև 14 ժամի:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2013 թ. համար նախատեսված է 1,808.5 մլն դրամ:

**14. Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ Շիրակի, Լոռու և Արմավիրի մարզերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի մասնավոր կառավարման դրամաշնորհային ծրագիր**

2008 թվականի նոյեմբերի 21-ին Գերմանիայի զարգացման վարկերի բանկի և Հայաստանի Հանրապետության միջև կնքվել է «Ֆինանսավորման մասին» դրամաշնորհային պայմանագիր, ինչպես նաև ֆինանսավորման պայմանագրին կից հատուկ համաձայնագիր՝ «Նոր Ակունք», «Լոռի-ջրմուղկոյուղի» և «Շիրակ-ջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությունների (ջրային համակարգի օպերատոր-ընկերությունների) կառավարման պայմանագրի ֆինանսավորման համար: Ըստ կնքված պայմանագրի «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կառավարման պայմանագրի ժամկետը լրանում է 2012 թվականի հուլիսի 31-ին: Մասնավոր կառավարման պայմանագիրը 17 ամսով երկարաձգելու վերաբերյալ 19.07.2012թ. ընդունվել է ՀՀ կառավարության որոշում: Համաձայն KfW բանկի 2012 թվականի հունիսի 5-ի գրության՝

բանկը դիմել է Գերմանիայի դաշնային հանրապետության Տնտեսական համագործակցության և զարգացման նախարարություն (BMZ)՝ Կառավարման պայմանագրի երկարաձգման և համապատասխան աուդիտի համար մինչև 1,500,000 եվրո դրամաշնորհային միջոցների հատկացման հայցով, որը պետք է քննարկվի հայ-գերմանական միջկառավարական բանակցությունների շրջանակներում:

2009 թվականի հուլիսի 14-ին ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի և «Էմ Վի Վի դեկոն Զի Էմ բի Էյջ, Էմ Վի Վի Էներջի Էյ Զի» և «Էյ-Ի-Զի-Սերվիս» ՍՊԸ ընկերությունների կոնսորցիումի միջև կնքվել է պայմանագիր՝ Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ Շիրակի, ՀՀ Լոռու և ՀՀ Արմավիրի մարզերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի մասնավոր կառավարման դրամաշնորհային ծրագրի համակարգման և ղեկավարման նպատակով:

Կառավարման պայմանագրով 3-րդ տարվա ավարտ է սահմանված 01.08.2012թ., իսկ նախատեսված լրացուցիչ 17 ամսվա կառավարման սկիզբը սահմանվում է 01.08.2012թ.-30.12.2013թ., ֆինանսական աուդիտի պայմանագրով 3-րդ տարվա ավարտական վճարման ժամանակահատվածը սահմանվել է 28.01.2013թ., իսկ տեխնիկական աուդիտը՝ 03.02.2013թ.:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2013 թ. համար նախատեսված է 491.4 մլն դրամ:

### **15. Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Գյուղական համայնքների ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի դրամաշնորհային ծրագիր**

Ներկայումս հանրապետության 560 բնակավայրերում ջրամատակարարումը մասնագիտական ընկերությունների կողմից չեն սպասարկվում: Նշված բնակավայրերում ջրամատակարարումը գտնվում է անբավարար վիճակում:

Այս բնակավայրերի զգալի մասում ջուրը տրվում է 1-2 ժամով, կան նաև բնակավայրեր, որտեղ խմելու ջուրը բերվում է ջրատար մեքենաներով: Մի շարք գյուղական բնակավայրերում բնակիչները ջուրը վերցնում են ընդհանուր օգտագործման ծորակներից և այդ բնակավայրերում խմելու ջուրը չի ավտահանվում:

Այս բնակավայրերում ջրամատակարարման բարելավման համար անհրաժեշտ է տեղում իրականացնել համապատասխան ուսումնասիրություններ, որոնց հիման վրա իրականացնել ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումներ, կատարել լայնածավալ շինարարական

աշխատանքներ՝ ելնելով յուրաքանչյուր բնակավայրի կամ դրանց խմբի առանձնահատկություններից:

Նշված համայնքներից 4-ը քաղաքներ են, մոտ 30 համայնքներում ջրամատակարարումը իրականացվում է մեծածախ գնով:

560 համայնքների ջրամատակարարման խնդիրները տեղում ուսումնասիրելու համապատասխան առաջարկություններ ներկայացնելու համար KFW բանկի կողմից հատկացվում 500 հազար եվրո, որի ֆինանսավորումը կիրականացվի “Գյուղական համայնքներում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի” ծրագրի շրջանակներում մատուցվելիք փորձագիտական ծառայությունների համար: Նշված խնդիրները կարգավորելու համար սահմանված կարգով կընտրվի խորհրդատու:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2013թ. նախատեսված է 333,6 մլն դրամ:

#### **16. Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Կապսի ջրամբարի վերականգնման ծրագիր**

«Կառավարության և Գերմանական զարգացման վարկերի բանկի միջև կնքված համաձայնագրով նախատեսվում է տրամադրել 250.0 հազ. եվրո դրամաշնորհ՝ Կապսի ջրամբարի վերանորոգման համար անհրաժեշտ աշխատանքների ուսումնասիրություն կատարելու նպատակով:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2013թ. նախատեսված է 166,8 մլն դրամ:

#### **17. Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրին տրամադրվող տեխնիկական աջակցության ծրագիր (Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորություն, տևողությունը՝ 2012-2016թթ.)**

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է

- բարելավել կեղտաջրերի մաքրման կայանը՝ հատկապես առաջնային մաքրումը և տիղմի մշակումը,
- բարելավել խմելու ջրի օբյեկտների մատակարարման արդյունավետությունը և անվտանգությունը Երևան քաղաքի հյուսիսային շրջաններում,
- բարելավել խմելու ջրի ցանցի և հիմնական կեղտաջրերի կոլեկտորները:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2013թ. համար ծրագրված է 1,523.6 մլն դրամ:



Այս ոլորտում ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված բյուջետային ծախսերի համեմատությունը 2011 թվականի բյուջետային տարվա փաստացի և ՀՀ 2012 թվականի հաստատված պետական բյուջեի համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N5 աղյուսակում:

**ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների ոլորտի** գծով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 15615.9 մլն դրամ՝ 2012 թվականի պետական բյուջեով հաստատված 12467.1 մլն դրամի դիմաց: Ծախսերի աճը ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ կազմում է 3148.8 մլն դրամ կամ 25.2 տոկոս:

Ընթացիկ ծախսերի գծով հատկացված միջոցներն ուղղվելու են հետևյալ ծրագրերի իրականացմանը.

**«Ռադիոակտիվ թափոնների վնասազերծման ծառայություններ»** ծրագրի համար ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 29.6 մլն դրամ՝ 2012 թվականի պետական բյուջեով հաստատված 29.2 մլն դրամի դիմաց կամ ավել 441.9 հազ. դրամ, որը պայմանավորված է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի կիրարկմամբ:

Ծրագրի նպատակն է միջուկային և ճառագայթային անվտանգության նորմերի ու կանոնների պահպանմամբ ռադիոակտիվ թափոնների կենտրոնացված փոխադրումը, ուսումնասիրումը, պահպանումը, վնասազերծումը, թաղումը՝ մարդկանց և շրջակա միջավայրի իրենցնող ճառագայթման վնասակար ազդեցությունից պաշտպանելու համար:

**«Ընդերքի մասին տեղեկատվության տրամադրման ծառայություն»** ծրագրի համար ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 6.1 մլն դրամ՝ 2012 թվականի պետական բյուջեով հաստատված 6.0 մլն դրամի դիմաց կամ ավել 49.4 հազ. դրամ, որը պայմանավորված է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի կիրարկմամբ:

Ծրագրի իրականացման նպատակն է Հայաստանի Հանրապետության տարածքում ընդերքի վերաբերյալ երկրաբանական և այլ տեղեկատվության հավաքագրումը, պահպանումը և տրամադրումը, ընդերքի պետական գրանցումը և հաշվառումը, կադաստրի վարումը, հատուկ երկրաբանահետախուզական ծառայությունների իրականացումը, ֆոնդերի պահպանումը:

Միաժամանակ ոլորտում նախատեսվում են իրականացվել հետևյալ նպատակային վարկային և դրամաշնորհային ծրագրերը.

**1. Ճապոնիայի կառավարության աջակցությամբ իրականացվող Համակցված շոգեգազային ցիկլով էներգաբլոկի կառուցման ծրագիր (ՃՄՀԳ, ծրագրի տևողությունը՝ 2005-2013թթ.)**

ՃՄՀԳ-ի աջակցությամբ իրականացվող Համակցված շոգեգազային ցիկլով էներգաբլոկի նախագծի շրջանակներում «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ում կառուցվել է նոր էներգաբլոկ՝ 271,7 ՄՎտ ընդհանուր դրվածքային հզորությամբ, 241,9 ՄՎտ դրվածքային էլեկտրական հզորությամբ:

Հանրապետությունում գործող ՋԷԿ-երի համեմատ նոր էլեկտրակայանը ունի բարձր բնապահպանական ցուցանիշներ, նույն դրվածքային հզորությունների դեպքում նոր էլեկտրակայանն ավելի քիչ արտանետումներ ունի գործող կայանների համեմատ:

Ծրագրի խորհրդատվական ծառայությունների պայմանագրով նախատեսված միջոցներից տնտեսվել է շուրջ 1 505,2 հազար ԱՄՆ դոլարին համարժեք գումար, որը նախատեսվում է նպատակաուղղել էներգաբլոկի անհրաժեշտ պահեստամասերի ձեռքբերման համար: Խորհրդատվական ծառայություններից տնտեսված գումարի օգտագործման համար նախատեսվում է վարկային համաձայնագրում կատարել հոդվածային վերաբաշխում՝ տնտեսված գումարը խորհրդատվական ծառայություններ կատեգորիայից վերաբաշխելով շինարարական աշխատանքներ կատեգորիա:

Ծրագիրն իրականացվել է «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից և 2013թ. համար ծրագրված է 716.2 մլն դրամ՝ էներգաբլոկի անհրաժեշտ պահեստամասերի ձեռքբերման համար:

## **2. Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող «Գյումրի-2» ենթակայանի վերականգնման ծրագիր (ծրագրի տևողությունը՝ 2010-2014թթ.)**

Ծրագրի նպատակն է վերականգնել «Գյումրի-2» ենթակայանը:

«Գյումրի-2» ենթակայանն ունի տեղական և տարածաշրջանային ռազմավարական կարևորություն: Վերականգնման արդյունքում կբարձրանա ենթակայանի, ինչպես նաև էներգահամակարգի աշխատանքի հուսալիությունը, կվերանա վթարային անջատումների և չմատակարարվող էլեկտրաէներգիայի քանակները:

Ծրագիրն իրականացվում է «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից և 2013 թվականին նախատեսված է 3,257.2 մլն դրամ:

## **3. Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիրի վերականգնման ծրագիր (ծրագրի տևողությունը՝ 2012-2016թթ.)**

Ծրագրի նպատակն է վերականգնել Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիրը, մասնավորապես Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիրի Տաթև, Շամբ և Սպանդարյան հիդրոէլեկտրակայանների հիմնական սարքավորումների ու սարքերի նախագծային հզորու-

թյունները, ըստ որի կրարձրանա կայանների շահագործման հուսալիությունը, ինչպես նաև հիդրոէլեկտրակայաններում արտադրվող էլեկտրաէներգիայի քանակը և որակը:

Ծրագիրն իրականացվում է «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» ՓԲԸ-ի կողմից և 2013թ. համար ծրագրված է 4,951,9 մլն դրամ:

**4. Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրամատակարարման հուսալիության ծրագիր (ծրագրի տևողությունը՝ 2011-2016 թթ.)**

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է վերակառուցել Հրազդան ԶԷԿ-ից մինչ Շինուհայր 220 կՎ ենթակայան ընկած Նորադուզ-Լիճք-Վարդենիս-Վայք-Որոտան-1 էլեկտրահաղորդման 220 կՎ օդային գծերի շուրջ 230 կմ հատվածը, որի նպատակն է բարելավել էլեկտրացանցի հուսալիությունը, թողունակությունը և նվազեցնել էլեկտրաէներգիայի կորուստները: Նշված գիծը միացնում է էլեկտրահամակարգի երկու հիմնական էլեկտրաէներգիա արտադրող կայանները (Հրազդան ԶԷԿ, Որոտան կասկադ): Ծրագրի նպատակն է հաղորդիչ ցանցի հուսալիության բարձրացումն ու թողունակության մեծացումը:

Ծրագիրն իրականացվում է «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից:

Ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման նպատակով 2013թ. ծրագրված է 5,623.4 մլն դրամ:

**Միաժամանակ ոլորտում նախատեսվում է իրականացնել Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող էներգախնայողության դրամաշնորհային ծրագիր, որի գծով 2013թ. համար ծրագրված է 314,5 մլն դրամ:**

*Այս ոլորտում ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվող բյուջեյային ծախսերի համեմատությունը 2011 թվականի բյուջեյային փարվա փաստացի և 2012 թվականի հաստատված պետական բյուջեի համապատասխան ցուցանիշների հետ արդարացրված է սույն բացատրագրի N6 աղյուսակում:*

**Տրանսպորտի և կապի ոլորտների** գծով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 85360.4 մլն դրամ՝ ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով հաստատված 73249.7 մլն դրամի դիմաց: Ծախսերի աճը ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ կազմում է 12110.6 մլն դրամ կամ 16.5 տոկոս:

Ընթացիկ ծախսերի գծով հատկացված միջոցներն ուղղվելու են հետևյալ ծրագրերի իրականացմանը.

**«Ավտոճանապարհների պահպանում և շահագործում»** ծրագրի համար ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 5550.3 մլն դրամ՝ ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով հաստատված 5549.0 մլն դրամի դիմաց կամ ավել 1.3 մլն դրամով, որը պայմանավորված է «Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն» պետական ոչ առևտրային կազմակերպության գծով ծախսերի («Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի կիրարկում) ավելացման հետ:

Ծրագրով նախատեսվում է իրականացնել 3200 կմ միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ նորոգման և ձմեռային պահպանության, նշագծման աշխատանքները, ինչպես նաև մի շարք կամուրջների և թունելների շահագործումը:

**«Մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում»** ծրագրի համար ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 760.0 մլն դրամ՝ ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

Ծրագրով նախատեսվում է իրականացնել 3115.9 կմ մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանության, ինչպես նաև ճանապարհների ընթացիկ նորոգման աշխատանքներ:

**«Հեռահաղորդակցության և կապի կանոնակարգման ծառայություններ»** ծրագրով «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի պահպանման համար ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 376.7 մլն դրամ՝ ՀՀ 2012թ. հաստատված պետական բյուջեի 372.8 մլն դրամի դիմաց կամ ավել 3.9 մլն դրամի չափով, որը պայմանավորված է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի կիրարկմամբ:

Ծրագրի նպատակն է ապահովել Հայաստանի Հանրապետությունում հեռահաղորդակցության և կապի ծառայությունների որակի կանոնակարգումն ու բարելավումը:

**«Տրանսպորտային փոխադրումներ» ՊՈԱԿ-ի** կանոնադրական խնդիրների իրագործման նպատակով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 26.4 մլն դրամ՝ ՀՀ 2012թ. պետական բյուջեով հաստատված 29.1 մլն դրամի դիմաց կամ պակաս՝ 2.7 մլն դրամով, որը պայմանավորված է ՀՀ կառավարության 03.05.2012թ. N 598-Ն որոշմամբ ՊՈԱԿ-ին վերապահված գործառույթների կրճատմամբ և «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի կիրարկմամբ:

Ծրագրով նախատեսվում է իրականացնել ՀՀ տարածքում միասնական երթուղային ցանցի, միջմարզային և միջքաղաքային երթուղիների մշակման, տեխնոլոգիաների կտրոնների տպագրման և հատկացման ծառայություններ:

**«Հայաստանի Հանրապետությունում հսկիչ սարքերի (թվային տախտոգրաֆի) համակարգի ստեղծում և ներդրում»** ծրագրով տախտնետ համակարգի տարեկան պահպանման համար ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 26.4 մլն դրամ:

**«Երկաթուղու շինարարություն» ՓԲԸ-ին սուբսիդիայի տրամադրում»** ծրագրով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 43.8 մլն դրամ՝ ՀՀ 2012թ. պետական բյուջեով հաստատված 43.5 մլն դրամի դիմաց, կամ ավել 0.3 մլն դրամով, որը պայմանավորված է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի կիրարկմամբ:

**«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ին** երկաթուղով ուղևորափոխադրումներից առաջացած վնասի փոխհատուցման նպատակով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 328.8 մլն դրամի սուբսիդիա: Սուբսիդիայի գումարը ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի համեմատ ավելացել է 173.8 մլն դրամով, որը պայմանավորված է ՀՀ կառավարության 07.02.2008թ. թիվ 83-Ա որոշմամբ հաստատված Կոնցեսիոն պայմանագրի դրույթներով:

**«ՀՀ համայնքային բյուջեներին նպատակային հատկացումների, սուբվենցիաների տրամադրում»** ծրագրով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 5296.5 մլն դրամ, որից.

- Երևան քաղաքի փողոցների ընթացիկ նորոգման և ճաքալցման աշխատանքների ֆինանսավորմանը - 3284.0 մլն դրամ,

- Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքների ֆինանսավորմանը - 1696.0 մլն դրամ,

- «Երևանի էլեկտրատրանսպորտ» փակ բաժնետիրական ընկերության նվազագույն շահավետ գնից ցածր գնով ծառայությունների մատուցման արդյունքում կրած վնասի փոխհատուցմանը՝ - 316.5 մլն դրամ:

**«Երևանի մետրոպոլիտենի աշխատանքների կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորում»** ծրագրով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 1932.7 մլն դրամ, որից.

- 1640.0 մլն դրամը՝ «Երևանի մետրոպոլիտեն» փակ բաժնետիրական ընկերության կողմից նվազագույն շահավետ գնից ցածր գնով ծառայությունների մատուցման արդյունքում կրած վնասի փոխհատուցման համար: Սուբսիդավորման գումարը ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի համեմատ ավելացվել է 140.0 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված ուղևորահոսքի կրճատման պարագայում ուղևորափոխադրումից ստացված եկամուտների կրճատմամբ,

այլ գործունեությունից եկամուտների ավելացմամբ և «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի կիրարկմամբ:

- 278.7 մլն դրամը՝ Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի և Եվրոպական ներդրումային բանկի նկատմամբ ունեցած վարկային պարտավորությունների և դրանց տոկոսների մարման համար:

ՀՀ կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև կնքված համաձայնագրերի համաձայն ՀՀ-ում տեղակայված Ռուսաստանի Դաշնության զորամիավորումների հասցեով ՀՀ տարածքում երկաթուղով իրականացվող միջպետական ռազմական փոխադրումների, ՀՀ երկաթուղային կայարաններում կատարվող սպասարկումների ու մատուցվող ծառայությունների ծախսերն այդ սպասարկումները կատարող և ծառայությունները մատուցող կազմակերպություններին փոխհատուցելու նպատակով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 13.7 մլն դրամ:

ՀՀ կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև կնքված համաձայնագրերի համաձայն ՀՀ-ում տեղակայված Ռուսաստանի Դաշնության զորամիավորումների հասցեով ռազմական փոխադրումներ իրականացնող օդանավերի՝ ՀՀ օդանավակայաններում իրականացվող սպասարկումների ու մատուցվող ծառայությունների ծախսերն այդ սպասարկումներն իրականացնող և ծառայությունները մատուցող կազմակերպություններին փոխհատուցելու նպատակով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է 121.0 մլն դրամ:

Մարդասիրական բեռներ փոխադրող օտարերկրյա օդանավերի անբեռավիզացիոն սպասարկման, թռիչք-վայրէջքի, օդանավերի կանգառի և վերգետնյա սպասարկումների ու մատուցված ծառայությունների փոխհատուցման նպատակով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է 10.0 մլն դրամ:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել են ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով՝ 4,000.0 մլն դրամ, որն ուղղվելու է հետևյալ ծրագրերի իրականացմանը.

**«Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում»** ծրագրի իրականացման համար ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է 3,879.7 մլն դրամ, որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել աշխատանքներ թվով 16 ճանապարհահատվածներում, որից 10-ում՝ 27.43 կմ ճանապարհների վերանորոգման աշխատանքներ, իսկ 6-ում՝ սողանքային տեղամասի վերանորոգման, բերվածքների մաքրման, փլուզված հատվածների վերականգնման և այլ հիմնանորոգման աշխատանքներ:

**«Տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում»** ծրագրի իրականացման համար ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է 120.3 մլն դրամ, որի շրջանակներում իրականացվելու են միջպետական և մարզային նշանակության ճանապարհների գտնվող 6 տրանսպորտային օբյեկտների վերանորոգման աշխատանքներ:

**Միաժամանակ ոլորտում շարունակվելու են իրականացվել հետևյալ նպատակային վարկային ծրագրերը.**

**1. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Կենսական նշանակության ճանապարհների բարելավման երկրորդ լրացուցիչ ֆինանսավորման ծրագիր (ծրագրի տևողությունը՝ 2010-2013թթ.)**

Ծրագրի նպատակն է բարելավել կենսական նշանակության ճանապարհային ցանցի ընտրված հատվածները և ստեղծել ճանապարհաշինարարության ոլորտում ժամականավոր զբաղվածություն:

Ծրագրվող նախատեսված աշխատանքների իրականացման գծով 2013թ. ծրագրված է 2,664,4 մլն դրամ:

**2. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավման ծրագիր (ծրագրի տևողությունը՝ 2013-2015թթ.)**

Ծրագիրը գտնվում է նախնական քննարկումների փուլում, և նպատակաուղղվելու է կենսական նշանակության ճանապարհային ցանցի ընտրված հատվածների վերականգնմանը:

Ծրագրով նախատեսվող աշխատանքների իրականացման նպատակով 2013թ. ծրագրված է 8,354,8 մլն դրամ:

**3. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման ծրագիր- Տրանշ 1 (ծրագրի տևողությունը՝ 2010-2014թթ.)**

Ծրագրի նպատակն է Երևան-Աշտարակ չորս շերտանի ճանապարհի մոտ 18.4 կմ հատվածի վերակառուցումը և անվտանգության բարձրացումը, վերահսկողության վերաբերյալ խորհրդատվությունը, ինչպես նաև տրանսպորտային ոլորտի ռազմավարության ներքո ճանապարհային ենթասեկտորային ծրագրին օժանդակության տարամադրումը:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում են իրականացնել հետևյալ աշխատանքները.

ա) Երևան-Աշտարակ 11.4 կմ երկարությամբ հատվածի վերակառուցում, ասֆալտե ծածկի ապամոնտաժում, բետոնե ծածկի տեղադրում, հիմնական հատվածներում և ուղեանցերում լուսավորության բարելավում,

բ) Երևան-Արարատ 37.9 կմ երկարությամբ հատվածի ճանապարհային անվտանգության բարձրացում, բետոնե շերտի տեղադրում, ջրահեռացման համակարգի կառուցում, երթևե-

կության անվտանգության բարելավում, երթևեկության և ուղղությունների նշանների տեղադրում, հիմնական հատվածներում և ուղեանցերում լուսավորության բարելավում,

զ) Արտաշատ-Արարատ հատվածում երթևեկության անվտանգության բարելավման աշխատանքներ՝ գծանշումներ և ճանապարհային նշանների և ուղղությունների ցուցանակների տեղադրում:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2013թ. համար ծրագրված է 13,030,7 մլն դրամ:

#### **4. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման ծրագիր-Տրանշ 2 (ծրագրի տևողությունը՝ 2011-2017թթ.)**

Ծրագրի նպատակն է Աշտարակ-Թալին 41.9 կմ հատվածի վերակառուցումը և ներկայումս երկշարք ճանապարհի լայնացումը մինչև քառաշարք ճանապարհի:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում են իրականացնել հետևյալ աշխատանքները.

ա) ներկայումս երկշարք ճանապարհի լայնացումը մինչև քառաշարք ճանապարհի,

բ) ընդհանուր առումով 9 փոխհատումների վերակառուցում, որոնցից 3-ը վերգետնյա անցումներ են, իսկ 6-ը՝ ստորգետնյա,

գ) T-աձև հատումների կառուցում՝ տեղական ճանապարհների համայնքների հետ կապ ապահովելու նպատակով,

դ) գյուղատնտեսական բետոնյա անցումների ուժեղացում:

Ծրագրի շրջանակներում իրականացվելու են նաև ներդրումային ծրագրի շրջանակներում ֆինանսավորվող հետագա ծրագրերի մանրամասն նախագծերի ուսումնասիրություններ, շինարարության վերահսկողություն, գնումների և կարողությունների հզորացում:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2013թ. համար ծրագրված է 32,052,8 մլն դրամ:

#### **5. Երևանի մետրոպոլիտենի վերականգնման և Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ ծրագրեր (Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ, Եվրոպական ներդրումային բանկ, առաջին ծրագրի տևողությունը՝ 2011-2013թթ., երկրորդ ծրագրի տևողությունը՝ 2013-2015թթ.)**

Ծրագրերի նպատակն է վերականգնել և բարելավել Երևանի մետրոպոլիտենի ենթակառուցվածքները:

Ծրագրերի շրջանակներում նախատեսվում են հետևյալ միջոցառումները՝

ա) ուղևորների սպասարկման որակի բարելավում,



բ) մետրոպոլիտենի գծերի, կայարանների, շենքերի, կառույցների, էլեկտրամատակարարման և կապի համակարգերի, շարժակազմերի և տեխնոլոգիական սարքավորումների անխափան շահագործում,

գ) մետրոպոլիտենի օբյեկտներում սանիտարատեխնիկական վիճակի և աղտոտումից շրջակա միջավայրի պահպանության ապահովում,

դ) երթևեկության ավտոմատ կառավարման համակարգի ներդրում, էլեկտրամատակարարման հուսալիության բարձրացում, թունելային ջրատարի նորոգում, շարժասանդուղքների նորոգում:

Ծրագրով նախատեսված միջոցառումների համար 2013թ. համար ծրագրված են համապատասխան ֆինանսական միջոցներ՝

ա/ **Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման ծրագրի գծով՝ 790,9 մլն դրամ,**

բ/ **Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ ծրագրի գծով՝ 1,706,1 մլն դրամ,**

գ/ **Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ ծրագրի գծով՝ 1,706.1 մլն դրամ:**

Միաժամանակ նշված ծրագրերն ունեն դրամաշնորհային բաղադրիչ (Եվրոմիության դրամաշնորհային ծրագիր), որի գծով ևս 2013թ. համար ծրագրված են համապատասխան ֆինանսական միջոցներ՝ 1,731,6 մլն դրամ:

**6. Քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագիր (Ասիական զարգացման բանկ- Տրանշ 1, (ծրագրի տևողությունը՝ 2012-2014թթ.)**

Ծրագրի նպատակն է բարելավել Երևանի քաղաքային տրանսպորտի ենթակառուցվածքը և ծառայությունները:

Նշված վարկային ծրագրի շրջանակներում նախատեսվում են հետևյալ միջոցառումները՝

ա) Արգավանդի մայրուղի-Շիրակ փող. և Արտաշատի մայրուղի-Շիրակ փող. -Թամանցիներ-ճանապարհահատվածի բարելավում,

բ) Տրանշ 2-ի նախապատրաստական աշխատանքների իրականացում:

Նախատեսվում է նաև իրականացնել ծրագրի կառավարման և կարողությունների զարգացման, մանրամասն նախագծման և շինարարության վերահսկման, շրջակա միջավայրի ազդեցության գնահատման և վերահսկման և այլ խորհրդատվական աշխատանքներ:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2013թ. համար ծրագրված է 6,039.8 մլն դրամ:

*Այս ոլորտում ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվող բյուջեային ծախսերի համեմատությունը 2011 թվականի բյուջեային տարվա փաստացի և 2012 թվականի հաստատված պետական բյուջեի համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N7 աղյուսակում:*

**Բնապահպանության ոլորտի գծով** ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 1805.9 մլն. դրամ՝ ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով հաստատված 2273.06 մլն. դրամի դիմաց: Ծախսերի նվազումը ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ կազմում է 467.16 մլն դրամ կամ 20.6 տոկոս:

Ընթացիկ ծախսերի գծով հատկացված միջոցներն ուղղվելու են հետևյալ ծրագրերի **իրականացմանը.**

**«Թափոնների ուսումնասիրության ծառայություններ»** ծրագրի համար ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 11.7 մլն. դրամ՝ ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով հաստատված 11.6 մլն. դրամի դիմաց, որը պայմանավորված է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի կիրարկմամբ:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի օբյեկտներում /օդ, հող, ջուր/ և կենսամիջավայրում կայուն օրգանական աղտոտիչների (ԿՕԱ) պարունակության անալիտիկ հետազոտություններ և փաստացի մակարդակների ուսումնասիրում, որոնք նախատեսված են ՀՀ բնապահպանության նախարարության և ՄԱԿ-ի արդյունաբերության զարգացման կազմակերպության /UNIDO/ կողմից համատեղ իրականացվող, ինչպես նաև Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում ԿՕԱ-ների Գլոբալ մոնիթորինգի ծրագրով, որին մասնակցում է նաև Հայաստանի Հանրապետությունը:

**«Հանրապետության ջրային օբյեկտների և օդային ավազանի աղտոտվածության վիճակի մոնիտորինգի իրականացում»** ծրագրի համար ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 113.45 մլն. դրամ՝ ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով հաստատված 112.31 մլն. դրամի դիմաց, որը պայմանավորված է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի կիրարկմամբ:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել օդային ավազանի աղտոտման մոնիտորինգային դիտարկումներ: Մակերևութային ջրերի մոնիտորինգային աշխատանքներն իրականացվելու են հանրապետության 39 գետերի, Ախուրյանի, Արփի լճի, Ապարանի, Ազատի, Կեչուտի ջրամբարների, Երևանյան լճի և Սևանա լճի 130 դիտակետերում:

**«Ձկան պաշարների համալրում»** ծրագրի համար ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 60.0 մլն. դրամ՝ ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

Ծրագրի շրջանակներում կիրականացվեն Հայաստանի Հանրապետության հազվագյուտ և անհետացող ձկնատեսակների արհեստական վերարտադրությունը և դրանց մանրածկերի վերադարձը Սևանա լիճ:

**«Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրում»** ծրագրի համար ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 125.4 մլն. դրամ՝ ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով հաստատված 150.4 մլն. դրամի դիմաց (2012 թվականին ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ծրագրի համար լրացուցիչ տրամադրվել է 25.0 մլն դրամ):

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է մաքրել Սևանա լճի շրջակայքի 122.5 հա ջրածածկ անտառտնկարկներ:

**«Սևանա լճում և նրա ջրհավաք ավազանում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառման ծառայություններ»** ծրագրի համար ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 7.6 մլն. դրամ՝ ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով հաստատված 7.5 մլն. դրամի դիմաց:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել Սևանա լճի ջրհավաք ավազանի կենդանական ռեսուրսների (ձկան և խեցգետնի) պաշարների հաշվառման աշխատանքներ, այդ թվում՝ ներկա վիճակի, տարածական տեղաբաշխման, կենսաբանական և էկոլոգիական հատկանիշների բացահայտում:

Բնության հատուկ պահպանվող տարածքների գործունեության ապահովմանն ուղղված ծրագրերի համար ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 514.5 մլն. դրամ՝ ՀՀ 2012թ. պետական բյուջեով հաստատված 516.1 մլն. դրամի դիմաց, որը պայմանավորված է «ՀՀ Լոռու և Տավուշի մարզերի տարածքներում գտնվող բնության հուշարձանների հաստատված ցանկի համալրման, պահպանման գոտիների տարածքների ճշգրտման, հողամասերի սահմանազատման և քարտեզագրման աշխատանքներ» ծրագրի ավարտմամբ և «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի կիրարկմամբ:

Վերոգրյալ հատկացումների շրջանակներում «Սևան», «Դիլիջան», «Արևիկ» և «Արփի լիճ» ազգային պարկերում, «Խոսրովի անտառ» և «Շիկահող» պետական արգելոցներում, «Սոսու պուրակ», «Ջանգեզուր» և «Զիկատար» արգելավայրերում, ինչպես նաև «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրինության ներքո գտնվող բնության հատուկ պահպանվող տարածքներում կատարվելու են բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, գենոֆոնդի, բնության ժառանգության գիտական ուսումնասիրության, պահպան-

նության, վերականգնման, վերարտադրության, հաշվառման, գույքագրման դիտանցի ապահովումը, ինչպես նաև տնկարկների պահպանության և **պաշտպանության իրականացումը:**

**«Բնապահպանական ոլորտի գծով վերլուծական-տեղեկատվական ծառայություններ» ծրագրի** համար ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 17.1 մլն. դրամ՝ ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով հաստատված 17.0 մլն. դրամի դիմաց, որը պայմանավորված է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի կիրարկմամբ:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել՝

- հանրապետությունում շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների առանձին բաղադրիչների մասին տվյալների հավաքագրման ու վերլուծության հիման վրա համապատասխան համակարգչային շտեմարանների (բազա) ստեղծումը և վարումը,

- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական մարմիններին, հասարակական կազմակերպություններին ու հասարակությանն այդ շտեմարաններում պարունակվող տեղեկությունների տրամադրումը,

- շրջակա միջավայրի մասին տեղեկատվության փոխանակման նպատակով արտաքին տեղեկատվական ցանցերի հետ փոխգործակցության կազմակերպումը,

- համակարգչային ծրագրային միջոցների ձեռքբերումը, մշակումը, տեղայնացումը, ներդաշնակեցումն ու ներդրումը, էկոլոգիական գրականության, ուսումնական ձեռնարկների, պարբերականների, տեղեկագրերի, ժողովածուների և տեղեկատվական նյութերի հրատարակումը և տեղեկատվության տարբեր տեսակի կրիչների միջոցով տարածումը:

**«ՀՀ տարածքի ստորերկրյա քաղցրահամ ջրերի հիդրոերկրաբանական մոնիտորինգի վարում» ծրագրի** գծով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 18.4 մլն. դրամ՝ ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով հաստատված 18.1 մլն. դրամի դիմաց, որը պայմանավորված է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի կիրարկմամբ:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել Հայաստանի Հանրապետության տարածքի ստորերկրյա քաղցրահամ ջրերի հիդրոերկրաբանական մոնիտորինգի վարում (այդ թվում՝ ռեժիմային դիտարկումներ, ջրի մակարդակի, ծախսի, ջերմաստիճանի չափում, ջրի նմուշառում և քիմիական անալիզների կատարում):

**«Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի հայաստանյան մասնաճյուղի գրասենյակի պահպանման»** ծրագրի համար ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 6.8 մլն դրամ (այդ թվում՝ գրասենյակի վարձակալություն և կոմունալ ծախսեր):

Ծրագրի համար իրավական հիմք է ծառայում ՀՀ Նախագահի 2009 թվականի մայիսի 6-ի ՆԿ-68-Ա կարգադրությամբ հաստատված Եվրոպական հարևանության քաղաքականության

Հայաստանի Հանրապետություն-Եվրոպական միություն գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2009-2011 թվականների միջոցառումների ցանկը (7.Ա.7. միջոցառում):

*Այս ոլորտում ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվող բյուջեային ծախսերի համեմատությունը 2011 թվականի բյուջեային տարվա փաստացի և 2012 թվականի հաստատված պետական բյուջեի համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N8 աղյուսակում:*

**ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից իրականացվող ծախսային ծրագրերի** համար ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 4791.95 մլն դրամ՝ 2012 թվականի պետական բյուջեով հաստատված 3154.51 մլն դրամի դիմաց: Ծախսերի աճը ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ կազմում է 1637.44 մլն դրամ կամ 51.9 տոկոս:

Ընթացիկ ծախսերի գծով հատկացված միջոցներն ուղղվելու են հետևյալ ծրագրերի իրականացմանը:

**«Աջակցություն ՓՄՁ սուբյեկտներին»** ծրագրի համար ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 150.0 մլն դրամ՝ ՀՀ 2012թ. պետական բյուջեով հաստատված գումարի չափով, որը նախատեսվում է ուղղել ծրագիրն իրականացնող անձնակազմի և փորձագետների (70 հաստիքային միավոր) վարձատրությանը:

Ծրագրի նպատակն է ՓՄՁ սուբյեկտներին տեխնիկական, ֆինանսական և ներդրումային աջակցության ցուցաբերումը:

**«Զբոսաշրջության աջակցության ծառայություններ»** ծրագրի համար ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 50.0 մլն դրամ՝ ՀՀ 2012թ. պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել զբոսաշրջային ոլորտի հետևյալ միջոցառումները.

1. «Զբոսաշրջության ոլորտի գովազդատեղեկատվական համակարգի կատարելագործում» - 23.6 մլն դրամ,
2. «Ավանդական տոնակատարությունների կազմակերպում և անցկացում» - 9.0 մլն դրամ,
3. «Զբոսաշրջային հիմնախնդիրների լուծմանն ուղղված միջոցառումներ» - 12.9 մլն դրամ,
4. «Զբոսաշրջության բնագավառում միջազգային համագործակցության ծավալում» - 4.5 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է Հայաստանը դարձնել միջազգային շուկայում հաճախելի երկրներից մեկը:

**«Ստանդարտների մշակման ծառայություններ»** ծրագրի համար ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 14.3 մլն դրամ՝ ՀՀ 2012թ. պետական բյուջեով հաստատված 14.0 մլն դրամի դիմաց, որը պայմանավորված է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի կիրարկմամբ:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1. «Ազգային ստանդարտների մշակում» - 9.5 մլն դրամ,
2. «Միջազգային, եվրոպական և միջպետական ստանդարտացման կազմակերպությունների հետ համագործակցության և աշխատանքների կազմակերպում» - 2.5 մլն դրամ,
3. «Ստանդարտացման ազգային ֆոնդի վարման և տեղեկատվական սպասարկման աշխատանքների կազմակերպում» - 2.3 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է ՀՀ ստանդարտացման բնագավառի միջազգային և եվրոպական համակարգերին ինտեգրումը, որը կնպաստի սպառողների շահերի պաշտպանությանը անվտանգ ապրանքների ձեռքբերման հարցերում, կապահովի հայրենական արտադրողների կողմից մրցունակ ապրանքների արտադրմանը և ծառայությունների մատուցմանը:

**«Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման ծառայություններ»** ծրագրի համար ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 80.0 մլն դրամ՝ ՀՀ 2012թ. պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1. «Հայաստանի SS ոլորտի ներկայացում և խթանում Հայաստանում և արտերկրում հետազոտություն, հասարակական իրազեկում» - 45.0 մլն դրամ,
2. «Միջազգային համագործակցություն» - 35.0 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է ստեղծել տեղեկատվական և գիտելիքի վրա հիմնված առաջադեմ հասարակություն:

**«Գյումրու տեխնոպարկի գործունեության իրականացում»** ծրագրի համար ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 163.7 մլն դրամ՝ ՀՀ 2012թ. պետական բյուջեով հաստատված 163.0 մլն դրամի դիմաց, որը պայմանավորված է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի կիրարկմամբ:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1. «Տեխնոպարկի գործունեության կառավարում (Գյումրու տնտեսական զարգացման հիմնադրամ)» - 48.0 մլն դրամ,
2. «Անշարժ գույքի կառավարում» - 20.6 մլն դրամ,
3. «Կրթական ծրագրեր» - 22.3 մլն դրամ,
4. «Բիզնես զարգացում» - 13.0 մլն դրամ,

5. «Նորարարության և ժամանակակից տեխնոլոգիաների աջակցությանն ուղղված ծրագրերի իրականացում» - 59.8 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է Գյումրու Տեխնոպարկի ներքո ինովացիոն համակարգի ձևավորումը:

**«Պետական աջակցություն «Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի կանոնադրական խնդիրների իրականացմանը»** ծրագրի համար ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 264.3 մլն դրամ՝ ՀՀ 2012թ. պետական բյուջեով հաստատված 264.0 մլն դրամի դիմաց, որը պայմանավորված է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի կիրարկմամբ:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ 6 ենթածրագրերը.

1. «Հիմնական գրասենյակ» - 117.0 մլն դրամ,
2. «Զբոսաշրջություն» - 63.4 մլն դրամ,
3. «Առողջապահություն» - 22.3 մլն դրամ,
4. «Կրթություն» - 10.4 մլն դրամ,
5. «Տաթևի վերածնունդ» - 13.7 մլն դրամ,
6. «Հանրային կապեր և ներդրողների հետ հարաբերություններ» - 37.5 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է ՀՀ տնտեսության տարբեր ճյուղերը հասցնել երկարաժամկետ մրցունակության առավելագույն աստիճանի:

**«Տեխնիկական կանոնակարգի պահանջների և չափագիտական կանոնների ու նորմերի պահպանման վերահսկողություն»** ծրագրի համար ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 30.0 մլն դրամ՝ ՀՀ 2012թ. պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1. «Փորձանմուշների ձեռքբերման ծախսեր» - 8.4 մլն դրամ,
2. «Փորձանմուշների փորձարկման ծախսեր» - 17.6 մլն դրամ,
3. «Տեսչության աշխատանքների թափանցիկություն /ծառայությունների լուսաբանում և հանրային իրազեկում/» - 4.0 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է Հայաստանում ապրանք արտադրողների և ծառայություն մատուցողների կողմից սպառողներին իրացվող արտադրանքի նկատմամբ պետական վերահսկողության իրականացումը՝ ստանդարտացման և չափագիտական նորմերի ապահովման միջոցով:

**«ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման պետական աջակցություն»** ծրագրի համար ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 300.0 մլն դրամ:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1. «Հանրաճանաչ միջազգային արդյունաբերական ոլորտի կազմակերպությունների ներգրավման և մուտքի ապահովման միջոցառումների իրականացում, այդ թվում՝ ազատ տնտեսական գոտում»՝ 68.1 մլն դրամ,

2. «Արտադրական գործունեության վարկավորման սուբսիդավորում»՝ 50.0 մլն դրամ,

3. «Շուկայական տեղեկատվության ապահովում, հայկական ապրանքների նպատակային շուկաներում առաջնղման գործունեության իրականացում»՝ 32.7 մլն դրամ,

4. «Միջազգային սերտիֆիկացման և նորարարական դրամաշնորհներ»՝ 85,0 մլն դրամ,

5. «Միջազգային ցուցահանդեսներին մասնակցության ապահովում»՝ 18.4 մլն դրամ,

6. «Արտասահմանյան դիստրիբյուտորների և այլ օժանդակ կառույցների ներկայացուցիչների այցելություններ Հայաստան, գործարար կապերի հաստատում»՝ 15.5 մլն դրամ,

7. «Վերապատրաստման դասընթացների մշակման և իրականացման ֆինանսավորում»՝ 30.3 մլն դրամ:

Արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության նպատակն է տնտեսական աճի նոր շարժիչ ուղորտների ձևավորումը՝ ի հաշիվ ներկայում արտահանող և արտահանման ներուժ ունեցող ուղորտների զարգացման: Այս համատեքստում առաձևահատուկ կարևորվում է արտահանման ներուժ ունեցող ՓՄՁ-ների կարողությունների զարգացումը և արտաքին տնտեսական գործունեության մեջ վերջիններիս ներգրավման աջակցությունը:

**«ՀՀ հավատարմագրման համակարգի բարեփոխում և Հավատարմագրման ազգային մարմնի ստեղծում»** ծրագրի համար ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 13.9 մլն դրամ:

Ծրագրի հիմնական նպատակը միջազգային և եվրոպական համակարգերին ինտեգրումն է, այդ թվում՝ հավատարմագրման ազգային մարմնի կայացումը և հավատարմագրման արդյունքների փոխճանաչման բազմակողմանի համաձայնագրերում հավատարմագրման մարմնի մասնակցությունը, ինչը կվերացնի առևտրային խոչընդոտները, կապահովի ապրանքների ազատ տեղաշարժը, կբացառի նույն ապրանքի կրկնական փորձարկման և կրկնական սերտիֆիկացման անհրաժեշտությունը և կնպաստի տնտեսության զարգացմանը:

Միաժամանակ նախատեսվում են շարունակել և իրականացնել նպատակային հետևյալ ծրագրերը.

1. **Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կողմից վարկային միջոցներով ֆինանսավորվող Կոտայքի մարզի կոշտ կենցաղային թափոնների կառավարման ծրագիր (ծրագրի տևողությունը՝ 2012-2014թթ.)**



Ծրագրի նպատակն է աջակցել ՀՀ կոշտ կենցաղային թափոնների կառավարման բարելավմանը Կոտայքի մարզում և Սևան քաղաքում:

Ծրագիրը կազմված է հետևյալ բաղադրիչներից.

ա/ կապիտալ ծախսեր (ներդրումային ծախսեր)՝ թափոնների հավաքման բեռնատարներ, կոնտեյներներ, հավաքման նոր կետեր,

բ/ նոր աղբավայրի կառուցում (ներառյալ շինություններն ու կառույցները),

գ/ մասնագիտացված սարքավորումներ աղբավայրի աշխատանքների համար,

դ/ տեխնիկական համագործակցում (Խորհրդատվական Համաձայնագրեր),

ե/ ծրագրի իրականացում և գնումների աջակցություն,

զ/ կորպորատիվ զարգացման և շահագրգիռ կողմերի մասնակցության ծրագիր,

է/ լրացուցիչ բնապահպանական և սոցիալական հետազոտություններ:

Ծրագրով նախատեսվող միջոցառումների իրականացման համար 2013թ. ծրագրված է 1,210.7 մլն դրամ:

## **2. Բելգիական ՔԵՅ ԲԻ ՍԻ ԵՆ ՎԻ բանկի աջակցությամբ իրականացվող ռադիո-իզոտոպների արտադրության արտադրամասի ստեղծման ծրագիր (ծրագրի տևողությունը՝ 2011-2013թթ.)**

Բելգիական ՔԵՅ ԲԻ ՍԻ ԵՆ ՎԻ բանկի աջակցությամբ իրականացվող ռադիո-իզոտոպների արտադրության արտադրամասի ստեղծման ծրագրի շրջանակներում նախատեսվում է Գիտությունների ազգային լաբորատորայի տարածքում ստեղծել ցիկլոտրոնի միջոցով ռադիո-իզոտոպների արտադրության արտադրամաս, որը հնարավորություն կտա այդ բնագավառում զարգացնել կարողությունները: Ծրագրի շրջանակներում նախատեսված են համապատասխան սարքավորումների և ապրանքների ձեռքբերումներ, ինչպես նաև կապիտալ բնույթի աշխատանքներ:

Ծրագրով նախատեսված աշխատանքների մի մասը նախատեսված է 2012 թ. և 2013թ. համար նախատեսված է 1,832.2 մլն դրամ:

Միաժամանակ ոլորտում նախատեսվում է ՄԱԿ-ի զարգացման ծրագրի աջակցությամբ իրականացվող Կենտրոնական Ասիայի, Հարավային Կովկասի և Արևմտյան ԱՊՀ երկրների (Հայաստան) համար առևտրի զարգացման ծրագիրը՝ 2013թ. համար նախատեսված է 102,1 մլն դրամ

Այս ոլորտում ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվող բյուջետային ծախսերի համեմատությունը 2011 թվականի բյուջետային տարվա փաստացի և 2012 թվականի հաստատված պետական բյուջեի համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N3 աղյուսակում:

**ՀՀ ֆինանսների նախարարության կողմից իրականացվող «Պետական կարիքների համար ապրանքների, աշխատանքների (ծառայությունների) կողմնորոշիչ գների մեթոդաբանական, վերլուծական և տեղեկատվական ծառայություններ»** ծրագրի համար ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 40.8 մլն դրամ՝ 2012 թվականի պետական բյուջեով հաստատված 50.0 մլն դրամի դիմաց, որը պայմանավորված է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի կիրարկմամբ և «Գույքի և սարքավորումների վարձակալություն» ծախսային հոդվածի չնախատեսմամբ:

Ծրագրի նպատակը ՀՀ մարզերում մոնիտորինգի ձևավորումն ու ընդլայնումն է, ինչը հնարավորություն կտա հստակ պատկերացում ստանալ տվյալ ժամանակահատվածում ՀՀ շուկայում գործող ընդհանուր ապրանքների գների, աշխատանքների արժեքների միջինացված գների վերաբերյալ:

Այս ոլորտում ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվող բյուջետային ծախսերի համեմատությունը 2011 թվականի բյուջետային տարվա փաստացի և 2012 թվականի հաստատված պետական բյուջեի համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N3ա աղյուսակում:

**ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից իրականացվող «Տեխնիկական անվտանգության կանոնակարգման ծառայություններ» և «Հայաստանի հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայություն»** ծրագրերի համար ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 596.0 մլն դրամ՝ 2012 թվականի պետական բյուջեով հաստատված 575.5 մլն դրամի դիմաց, որը պայմանավորված է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի կիրարկմամբ:

**«Տեխնիկական անվտանգության կանոնակարգման ծառայություններ»** ծրագրի համար ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 42.2 մլն դրամ՝ 2012թ. պետական բյուջեով հաստատված 41.8 մլն դրամի դիմաց, որը պայմանավորված է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի կիրարկմամբ:

Ծրագրի նպատակն է Հայաստանի Հանրապետության տարածքում տեխնաժին վթարների կանխարգելումը, դրանց հետևանքների վերացումը, նման վթարների հետևանքով հասարակությանը և տնտեսությանը հասցվող վնասների դիսկի նվազեցումը, ինչպես նաև բնակչության և շրջակա միջավայրի պաշտպանությունը:

**«Հայաստանի հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայություն»** ծրագրի համար ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 553.7 մլն դրամ՝ 2012թ. պետական բյուջեով հաստատված 533.6 մլն դրամի դիմաց, որը պայմանավորված է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի կիրարկմամբ:

Ծրագրի նպատակն է հանրապետության տարածքում պետական նշանակության հիդրոոդերևութաբանական աշխատանքների կատարում՝ մթնոլորտի և ջրոլորտի ուսումնասիրությունների ձևով, հանրապետության տարածքում հիդրոոդերևութաբանական երևույթների, ջրային օբյեկտների հիդրոլոգիական բնութագրերի ուսումնասիրության, ֆոնային ռադիոակտիվության վերաբերյալ դիտարկումների կատարման, այդ ոլորտների վերաբերյալ փաստացի և սպասվող փոփոխությունների, ինչպես նաև դրանց հնարավոր հետևանքների մասին անհրաժեշտ տեղեկատվության ապահովումը 47 օդերևութաբանական, ինչպես նաև 7 հիդրոլոգիական կայաններում և դրանց 4 ջրաչափական դիտակետերում:

Այս ոլորտում ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվող բյուջետային ծախսերի համեմատությունը 2011 թվականի բյուջետային տարվա փաստացի և 2012 թվականի հաստատված պետական բյուջեի համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N3բ աղյուսակում (առանց ծառայությունների մատուցումից ստացվելիք այլ եկամուտների):

**Պետական գույքի կառավարման բնագավառի** համար ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 433.1 մլն դրամ՝ 2012 թվականի պետական բյուջեով հաստատված 384.9 մլն դրամի դիմաց: Ծախսերի աճը ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ կազմում է 48.2 մլն դրամ կամ 12.5 տոկոս:

Ընթացիկ ծախսերի գծով հատկացված միջոցներն ուղղվելու են հետևյալ ծրագրերի իրականացմանը.

**«Աճուրդների կազմակերպման և անցկացման աշխատանքներ»** ծրագրի համար ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 21.3 մլն դրամ՝ 2012 թվականի պետական բյուջեով հաստատված է 21.1 մլն դրամի դիմաց կամ ավել շուրջ 200.0 հազար դրամով, որը պայմանավորված է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի կիրարկմամբ:

Ծրագրի նպատակն է պետական կառավարչական հիմնարկներին ամրացված, պետական ոչ առևտրային կազմակերպությունների սեփականությունը հանդիսացող և դրանց ամրագրված գույքի օտարման գործընթացի կազմակերպումը:

**«Պետական գույքի հաշվառման, գույքագրման, ուսումնասիրությունների և գնահատման աշխատանքների իրականացում»** ծրագրի համար ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 36.0 մլն դրամ՝ 2012 թվականի պետական բյուջեով հաստատված 35.0 մլն դրամի դիմաց կամ ավել 1.0 մլն դրամով, որը պայմանավորված է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի կիրարկմամբ:

«**Լիազոր մարմինների պահպանում**» ծրագրի համար ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 6.7 մլն դրամ՝ 2012 թվականի պետական բյուջեով հաստատված 6.6 մլն դրամի դիմաց կամ ավել շուրջ 100.0 հազար դրամով, որը պայմանավորված է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի կիրարկմամբ:

Ծրագրի նպատակն է ընկերություններում պետության տնտեսական շահերի պաշտպանության ապահովումը, ինչպես նաև պետության գույքային իրավունքների և շահերի համակարգված ամբողջական իրացումը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով հատկացված միջոցներն ուղղվելու են հետևյալ ծրագրի իրականացմանը.

«**Վարչական օբյեկտների հիմնանորոգում**» (23.1 մլն դրամ) ծրագրով նախատեսվում է ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության ենթակայության տակ գտնվող ք. Երևանի Արշակունյաց 2ա շենքի մեկ վերալակի ապամոնտաժման և նորի տեղադրման աշխատանքների իրականացում:

Այս բնագավառում ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվող բյուջետային ծախսերի համեմատությունը 2011 թվականի բյուջետային տարվա փաստացի և 2012 թվականի հաստատված պետական բյուջեի համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N3գ աղյուսակում:

**ՀՀ կառավարության աշխատակազմի կողմից իրականացվող «Չարգացման հայկական գործակալության» «Տնտեսական գործունեության արդյունավետ վարման և աջակցման միջոցառումների իրականացում»** ծրագրի համար ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 122.2 մլն դրամ՝ 2012 թվականի պետական բյուջեով հաստատված 121.0 մլն դրամի դիմաց կամ ավել 1.2 մլն դրամ, որը պայմանավորված է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի կիրարկմամբ:

Ծրագրի նպատակն է ՀՀ տնտեսական աճի խթանումը (օտարերկրյա ներդրումների ներգրավում, արտահանման խթանում, ՀՀ գործարար և ներդրումային միջավայրի բարելավմանն աջակցում, SS ոլորտի բարելավմանն ու զարգացմանն աջակցում):

Այս ոլորտում ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվող բյուջետային ծախսերի համեմատությունը 2011 թվականի բյուջետային տարվա փաստացի և 2012 թվականի հաստատված պետական բյուջեի համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N3դ աղյուսակում:

**Քաղաքաշինության ոլորտի** գծով 2013 թվականին նախատեսվում է 9,536.2 մլն դրամի ծախսեր՝ 2012 թվականի համար հաստատված 14,850.6 մլն դրամի դիմաց: Ծախսերի նվա-

զումը ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի հաստատված համապատասխան ցուցանիշի նկատմամբ հիմնականում պայմանավորված է Ռուսաստանի Դաշնության կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրված վարկային միջոցների հաշվին իրականացվող երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովման ծրագրի և ք. Գյումրու Մուշ-2 թաղամասի նոր դպրոցի կառուցման աշխատանքների ավարտմամբ, ինչպես նաև մշակութային օբյեկտների շինվերանորոգման նպատակով ծախսերի չնախատեսմամբ:

Այս ոլորտի գծով 2013 թվականի համար նախատեսված միջոցների հաշվին նախատեսվում է իրականացնել հետևյալ ծրագրերը.

1. ՀՀ քաղաքաշինության նախարարության ապարատի պահպանման գծով ծախսերը նախատեսվել են 515.5 մլն դրամ՝ 2012 թվականի համար հաստատված 494.4 մլն դրամի դիմաց:

2. Կրթական հաստատությունների հիմնանորոգման և շինարարության համար նախատեսվել է 6,400.0 մլն դրամ՝ թվով 89 կրթական հաստատությունների շենքերի հիմնանորոգման և կառուցման աշխատանքների իրականացման նպատակով, որից 31-ի գծով աշխատանքները նախատեսվում է ավարտել 2013 թվականին: Մասնավորապես.

- «Կրթական օբյեկտների հիմնանորոգում» ծրագրով նախատեսված 4,813.4 մլն դրամի շրջանակներում կիրականացվեն թվով 71 օբյեկտի հիմնանորոգման աշխատանքներ, որից 26-ի աշխատանքները նախատեսվում է ավարտել 2013 թվականին,

- «Կրթական օբյեկտների շինարարություն» ծրագրով նախատեսված 993.9 մլն դրամի շրջանակներում կիրականացվեն շինարարական աշխատանքներ թվով 10 օբյեկտի գծով, որից 3-ի աշխատանքները նախատեսվում է ավարտել 2013 թվականին,

- «Ավագ դպրոցների շենքերի հիմնանորոգում» ծրագրով նախատեսված 542.7 մլն դրամի շրջանակներում կիրականացվեն թվով 7 օբյեկտի հիմնանորոգման աշխատանքներ, որից 2-ի աշխատանքները նախատեսվում է ավարտել 2013 թվականին,

- «Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հիմնանորոգում» ծրագրով ծախսեր նախատեսվել են 1 օբյեկտի հիմնանորոգման աշխատանքները շարունակելու համար՝ 50.0 մլն դրամի չափով:

3. Մարզական օբյեկտների հիմնանորոգման և շինարարության համար նախատեսվել է 341.0 մլն դրամ, որը կնպատակաուղղվի թվով 4 մարզական օբյեկտների շենքերի հիմնանորոգման և կառուցման աշխատանքներին: Մասնավորապես.

- «Մարզական օբյեկտների հիմնանորոգում» ծրագրով նախատեսվել 161.0 մլն դրամ՝ 1 օբյեկտի հիմնանորոգման աշխատանքները 2013 թվականին ավարտելու նպատակով,

- «Մարզական օբյեկտների շինարարություն» ծրագրով ծախսերը նախատեսվել են 180.0 մլն դրամի չափով՝ թվով 3 օբյեկտների շինարարական աշխատանքները շարունակելու նպատակով:

4. «Հուշարձանների ամրակայում, նորոգում և վերականգնում» ծրագրի գծով նախատեսվել է 215.0 մլն դրամ՝ 2012 թվականի համար հաստատված ցուցանիշի չափով:

5. Բնակարանային ապահովման և շինարարության նպատակով նախատեսված 982.6 մլն դրամի ծախսերը նախատեսվում է ուղղել հետևյալ ուղղություններով.

- «Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների համար բնակարանային շինարարություն» ծրագրի շրջանակներում ՀՀ Շիրակի մարզի ք. Մարալիկի թվով 9 կիսակառույց շենքերի շինարարական աշխատանքները 2013 թվականին ավարտելու համար՝ 482.6 մլն դրամ,

- «Ձուկված (մահացած) և առաջին, երկրորդ և երրորդ կարգի հաշմանդամ զինծառայողների անօթևան ընտանիքներին բնակարանով ապահովման և բնակարանային պայմանների բարելավում» ծրագրի գծով՝ 500.0 մլն դրամ, որի շրջանակներում նախատեսվում է լուծել 46 ընտանիքների բնակարանով ապահովման և բնակարանային պայմանների բարելավման խնդիրները:

6. «Անավարտ շինարարության բնակշինարարական կոոպերատիվների փայատերերի ներդրված միջոցների դիմաց պետական օգնություն» ծրագրի շրջանակներում նախատեսվում է տրամադրել 150.0 մլն դրամի օգնություն:

7. Վարչական օբյեկտների հիմնանորոգման և շինարարության գծով նախատեսվել է 716.2 մլն դրամի ծախս՝ ՀՀ Նախագահի աշխատակազմի, ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի, ՀՀ կառավարության աշխատակազմի, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության և ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության ենթակայության տակ գտնվող շենքերի շինվերանորոգման աշխատանքների իրականացման նպատակով:

8. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի մաքսային ծառայության կինոլոգիական կենտրոնի կառուցման նպատակով նախատեսվել է 216.0 մլն դրամ:

Այս ոլորտում 2013 թվականի բյուջետային ծախսերի համեմատությունը՝ 2011 թվականի բյուջետային տարվա փաստացի և 2012 թվականի բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 9 աղյուսակում:

**Պաշտպանության բնագավառի** ծախսերը ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել են **182,778.9 մլն դրամի** չափով, որից ռազմական կարիքների բավարարմանը՝ **177,845.4 մլն դրամ**:

ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով պաշտպանության բնագավառի այլ ծախսերը հաշվարկվել են **4,933.5 մլն դրամ**, որից՝

ա) ՀՀ Պաշտպանության բնագավառի այլ ծախսեր>> ծրագրով՝ **4,794.0 մլն դրամ**,

բ) ՀՀ Հումանիտար ականագերծման և փորձագիտական ծառայությունների կազմակերպում>> ծրագրով՝ **94.7 մլն դրամ**,

գ) զորակոչիկներին վարորդական իրավունքի վկայականների տրման և քննությունների ընդունման ծախսեր, որի գումարը կազմում է՝ **44.8 մլն դրամ**: Նշված գումարի հաշվարկը կատարվել է 2000 զինվորների հաշվով:

**Հասարակական կարգի, անվտանգության, փրկարար ծառայության և կալանավայրերի պահպանության համակարգերի** ծախսերի ֆինանսավորմանը 2013 թվականի պետական բյուջեից նախատեսվում է ուղղել **57,500.6 մլն դրամ**: Նշված ծախսերը ներառում են ՀՀ ոստիկանության, ազգային անվտանգության ծառայության, պետական պահպանության ծառայության, փրկարար ծառայության և քրեակատարողական համակարգի ծախսերը: Մասնավորապես՝

**ա) ՀՀ Ոստիկանության** 2013 թվականի պահպանման ծախսերը նախատեսվել են **27,721.6 մլն դրամի** չափով, որն ամբողջությամբ ուղղվելու է ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը: ՀՀ Ոստիկանության 2013 թվականի պահպանման ծախսերի կառուցվածքը հետևյալն է.

**Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարները** 2013 թվականին ծրագրավորվել են **22,182.2 մլն դրամի** չափով, որը 2012 թվականի պետական բյուջեի նկատմամբ աճել է **5,274.8 մլն դրամով**, որը պայմանավորված է 2013 թվականի հունվարի 1-ից ՀՀ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի կիրառմամբ համապատասխան գումարների նախատեսմամբ:

Հաշվարկը կատարվել է ՀՀ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի, ՀՀ «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի պահանջներին, ՀՀ վարչապետի 1999 թվականի ապրիլի 16-ի N 226, ՀՀ կառավարության 2005 թվականի հոկտեմբերի 13-ի N 1837-Ն, ՀՀ կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 13-ի N 1554-Ն, ՀՀ կառավարության 2007 թվականի նոյեմբերի 15-ի N 1354-Ն և ՀՀ կառավարության 2011 թվականի ապրիլի 21-ի N 469-Ն որոշումներին համապատասխան:

**Այլ վարձատրությունները** հաշվարկվել են **1,158.2 մլն դրամի** չափով, որն ուղղվելու է ՀՀ ոստիկանության համակարգի սպաների և ենթասպաների պարենի փոխհատուցմանը և ՀՀ

ուստիկանության համակարգի գինձառայողներին համազգեստի դիմաց դրամական փոխհատուցմանը:

Հաշվարկը կատարվել է ՀՀ կառավարության 2003 թվականի օգոստոսի 21-ի N 1141-Ն որոշմանը համապատասխան:

**Շարունակական ծախսերը** ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **1,266.4 մլն դրամի** չափով, որն իր մեջ ներառում է էներգետիկ ծառայությունները՝ **628.4 մլն դրամ**, կոմունալ ծառայությունները՝ **88.5 մլն դրամ**, կապի ծառայությունները՝ **401.9 մլն դրամ**, ապահովագրական ծախսերը՝ **59.8 մլն դրամ**, գույքի և սարքավորումների վարձակալության ծախսերը՝ **48.7 մլն դրամ**, ինչպես նաև արտագերատեսչական ծախսերը՝ **39.1 մլն դրամ**: Նշված ծախսերը հաշվարկվել են «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 2008 թվականի հուլիսի 26-ի N 643-Ն որոշման, ինչպես նաև ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2009 թվականի փետրվարի 27-ի N 65-Ն, N 71-Ն և N 70-Ն որոշումներով սահմանված սակագներին ու նորմաներին համապատասխան:

**Գործուղումների գծով ծախսերը** ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **351.0 մլն դրամի** չափով, որից ներքին գործուղումների գծով՝ **159.0 մլն դրամ**, արտասահմանյան գործուղումների գծով՝ **190.6 մլն դրամ** և այլ տրանսպորտային ծախսերի (գինձառայողների՝ ծառայության նոր վայր տեղափոխվելու) գծով՝ **1.4 մլն դրամի** չափով: Հաշվարկները կատարվել են ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 16-ի N 1243-Ն որոշմամբ սահմանված նորմատիվներին համապատասխան:

**Պայմանագրային ծառայությունների ձեռքբերման ծախսերը** ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **122.4 մլն դրամի** չափով, որը նախատեսվում է ուղղել վարչական ծառայությունների (մշակութային միջոցառումների անցկացում, թարգմանչական ծառայություններ, թվով 2 ստորաբաժանումներում ձեռքակալված անձանց պահելու վայրերում ահազանգման համակարգերի տեղադրման և այլ վարչական ծառայություններ) ֆինանսավորմանը՝ **22.1 մլն դրամ**, համակարգչային ծառայությունների (նախատեսվում է մշակել համակարգչային մի շարք ծրագրեր՝ ուղղված բնակչության պետական ռեգիստրի ներդրմանը, ԱՐԾԻՎ-2 համակարգի բոլոր բաղադրիչների և տվյալների բազաների ներդրում և այլն) ֆինանսավորմանը՝ **15.8 մլն դրամ**, տեղեկատվական ծառայությունների (գրականության, թերթերի և ամսագրերի բաժանորդագրություն, հեռուստաալիքների հեռարձակում, ավտոմատ վերահաղորդչի սպասարկում) ֆինանսավորմանը՝ **8.1 մլն դրամ**, կառավարչական ծառայությունների (արվեստաբանական և



մշակութաբանական փորձաքննության ծառայություններ) ֆինանսավորմանը՝ **0.7 մլն դրամ**, կենցաղային և հանրային սննդի ծառայությունների (լվացքատների ծառայություններ) ֆինանսավորմանը՝ **10.5 մլն դրամ**, ներկայացուցչական ծախսերի ֆինանսավորմանը՝ **20.0 մլն դրամ**, ընդհանուր բնույթի այլ ծառայությունների (<<Երեխայի զարգացման կենտրոն>> ՊՈԱԿ-ի, <<Արշալույս>> առողջարարական ճամբարի պահպանման և հակահիդեհային անվտանգության համակարգի ծախսեր և այլն) ֆինանսավորմանը՝ **44,2 մլն դրամ** և մասնագիտական ծառայությունների ֆինանսավորմանը՝ **1.0 մլն դրամ** (<< Ոստիկանության համակարգի շենքերի և շինությունների գրանցման ծառայությունների ձեռքբերմանը):

**Ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերը** << 2013 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **36.0 մլն դրամի** չափով, որը նախատեսվում է ուղղել.

- **5.0 մլն դրամը**՝ << ոստիկանության համակարգի շենքերի և կառույցների ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերի (շինանյութերի ձեռքբերում) ֆինանսավորմանը,
- **31.0 մլն դրամը**՝ մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերի (<< ոստիկանության համակարգի մեքենաների ընթացիկ նորոգում և տեխնիկական սպասարկում, գույքի և այլ սարքավորումների վերանորոգում) ֆինանսավորմանը:

**Նյութերի** գծով ծախսերը << 2013 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **1,964.8 մլն դրամի** չափով: Նշված գումարից **83.7 մլն դրամը** նախատեսվում է ուղղել գրասենյակային պիտույքների ձեռքբերմանը, **484.6 մլն դրամը**՝ << ոստիկանության համակարգի զինծառայողների համազգեստի ձեռքբերմանը, **1,141.0 մլն դրամը**՝ տրանսպորտային նյութերի (բենզինի, դիզելային վառելիքի, յուղերի, ավտոպահեստամասերի) ձեռքբերմանը, **175.9 մլն դրամը**՝ կենցաղային և հանրային սննդի նյութերի (որից **154.5 մլն դրամը**՝ << ոստիկանության համակարգի զինծառայողների սննդամթերքի, **11.6 մլն դրամը**՝ հիգիենիկ նյութերի և **9.8 մլն դրամը**՝ կենցաղային ապրանքների) ձեռքբերմանը, և **79.5 մլն դրամը**՝ հատուկ նպատակային այլ նյութերի՝ փորձաքննության հետ կապված անհրաժեշտ նյութերի, մեդալների ու կրծքանշանների, ամանորի տոնի կապակցությամբ նվերների և այլ ապրանքների ձեռքբերմանը:

**Դրամաշնորհները** << 2013 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **15.9 մլն դրամ**, որից **14.9 մլն դրամը** նախատեսվում է ուղղել <<Դինամո>> մարզական հասարակական կազմակերպությանը, իսկ **1.0 մլն դրամը**՝ օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների մարզական միջազգային առաջնություններին մասնակցության համար անդամավճարների գծով ծախսերի ֆինանսավորմանը:

**Սոցիալական նպաստները** ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **453.7 մլն դրամի** չափով, որից.

- **12.5 մլն դրամ** - ՀՀ կառավարության 2000 թվականի նոյեմբերի 27-ի N 778 որոշման համաձայն՝ հաշմանդամ զինծառայողների և զոհված զինծառայողների ընտանիքի անդամներին նյութական օգնություն վճարելու համար:

- **11.0 մլն դրամ** - ՀՀ կառավարության 2001 թվականի հունիսի 20-ի N 553 որոշման համաձայն՝ 68 հատ առողջարանային բուժման ուղեգրի ձեռքբերմանը, որից 62-ը՝ ՀՀ Ոստիկանության ծառայողների, իսկ 6-ը՝ Հայրենական Մեծ պատերազմին մասնակցած հաշմանդամների համար:

- **430.2 մլն դրամ** - ՀՀ ոստիկանության համակարգի ծառայողների առողջության, տարիքային ժամկետը լրանալու, հաստիքների կրճատման պատճառով ծառայությունից սահմանված կարգով արձակվելու և կենսաթոշակի անցնելու արձակման նպաստների վճարման, ինչպես նաև ՀՀ Ոստիկանության ծառայողների և նրանց ուղեկցող ընտանիքի անդամների արձակուրդի վայր մեկնելու հետ կապված ճանապարհաճախսի փոխհատուցման համար: Հաշվարկները կատարվել են «Հինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

**Հարկերի, պարտադիր վճարների և տուրքերի** գծով ծախսերը ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **6.1 մլն դրամի** չափով, որից.

- **2.1 մլն դրամ** - ՀՀ ոստիկանության համակարգի շենք-շինությունների և փոխադրամիջոցների գույքահարկի վճարմանը:

- **4.0 մլն դրամ** - ՀՀ ոստիկանության համակարգի տրանսպորտային միջոցների գրանցման, հաշվառման, տեխնիկական անձնագրերի և պետավտոհամարանիշների հատկացման գծով տուրքերի վճարմանը:

**Այլ ծախսերը** ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **164.6 մլն դրամ**, որն ուղղվելու է կենսաթոշակառուների նյութական օգնության, մարզական միջոցառումների անցկացման և այլ ծախսերի ֆինանսավորմանը, ինչպես նաև տարբեր տեսակի ծառայությունների մատուցման ծախսեր:

Բացի այդ, ՀՀ ոստիկանությանը նախատեսվել է **236.2 մլն դրամ**՝ 03 բաժնի 01 խումբի 01 դասի «Պետավտոհամարանիշների ձեռքբերում» ծրագրով, **173.6 մլն դրամ**՝ 03 բաժնի 01 խմբի 01 դասի «ՀՀ անձնագրերի բլանկների տպագրություն» ծրագրով, **73.7 մլն դրամ**՝ 07 բաժնի 01 խմբի 01 դասի «Դեղորայքի տրամադրում ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց» ծրագրով, **582.7 մլն դրամ**՝ 09 բաժնի 04 խմբի 01 դասի «Բարձրագույն

մասնագիտական կրթություն», **125.5 մլն դրամ**՝ 09 բաժնի 04 խմբի 01 դասի ««Միջին մասնագիտական կրթություն»» ծրագրերով, **149.9 մլն դրամ**՝ 09 բաժնի 03 խմբի 01 դասի ««Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն»» ծրագրով, **255.2 մլն դրամ**՝ 01 բաժնի 06 խումբի 01 դասի ««« Նախագահի ընտրություններ»» ծրագրով և **82.8 մլն դրամ**՝ 01 բաժնի 06 խմբի 01 դասի ««Երևան քաղաքի ավագանու անդամների ընտրություններ»» ծրագրով, **1,362.2 մլն դրամ**՝ 03 բաժնի 01 խումբի 01 դասի ««« պետական կառավարման մարմինների և գերատեսչությունների շենքերի և շինությունների, ինչպես նաև կարևորագույն նշանակության օբյեկտների պահպանություն»» ծրագրով:

**բ) Փրկարար ծառայության** «« 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է **5,032.2 մլն դրամ**, որից՝ **5,023.2 մլն դրամ**ն ուղղվելու է ընթացիկ ծախսերի, իսկ **9.0 մլն դրամ**ը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ֆինանսավորմանը: Փրկարար ծառայության 2013 թվականի պահպանման ծախսերի կառուցվածքը հետևյալն է.

**Աշխատողների աշխատավարձերի, հավելավճարների և քաղաքացիական ծառայողների պարգևատրումները** «« 2013 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **3,916.9 մլն դրամ**ի չափով, որը նախատեսվում է ուղղել փրկարար ծառայողների, ինչպես նաև փրկարար ծառայության համակարգի քաղաքացիական ծառայողների աշխատավարձերի և նախորդ տարվա արդյունքների համար տարեկան մեկ անգամ պարգևատրումների վճարմանը: Հաշվարկներում ներառվել են նաև 2013 թվականի հունվարի 1-ից ««Եկամտային հարկի մասին»» «« օրենքի կիրառմամբ պայմանավորված համապատասխան գումարները:

Հաշվարկները կատարվել են ««Եկամտային հարկի մասին»» «« օրենքի, ««Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին»» «« օրենքի, ինչպես նաև «« կառավարության 2011 թվականի ապրիլի 21-ի N 446-Ն, «« կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2318-Ն և N 2323-Ն որոշումներին համապատասխան:

**Այլ վարձատրությունները** հաշվարկվել են **395.3 մլն դրամ**ի չափով, որն ուղղվելու է փրկարարական ծառայողների պարենի փոխհատուցմանը (յուրաքանչյուր ծառայողին ամսական 10000 դրամ): Հաշվարկը կատարվել է «« կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2323-Ն որոշմամբ սահմանված չափին համապատասխան:

**Շարունակական ծախսերը** «« 2013 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **174.0 մլն դրամ**ի չափով, որն իր մեջ ներառում է էներգետիկ ծառայությունները՝ **88.0 մլն դրամ**, կոմունալ ծառայությունները՝ **28.9 մլն դրամ**, կապի ծառայությունները՝ **37.2 մլն դրամ**, ապահովագրական ծախսերը՝ **11.5 մլն դրամ** և գույքի ու սարքավորումների վարձակալության ծախսերը՝ **8.4 մլն դրամ**:

Հիշյալ ծախսերը հաշվարկվել են «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2009 թվականի փետրվարի 27-ի N 65-Ն, N 71-Ն և N 70-Ն որոշումներով սահմանված սակագներին համապատասխան:

**Գործուղումների գծով ծախսերը** ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել է **34.3 մլն դրամ**, որն ամբողջությամբ ուղղվելու է ներքին գործուղումներին: Հաշվարկը կատարվել է ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 16-ի N 1243-Ն որոշմամբ սահմանված նորմատիվներին համապատասխան:

**Համակարգչային ծառայությունները** ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել է **2.0 մլն դրամ**, որը նախատեսվում է ուղղել հաշվապահական ծրագրերի սպասարկման ծախսերի ֆինանսավորմանը:

**Ներկայացուցչական ծախսերը** ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **5.0 մլն դրամ**, որն ուղղվելու է թվով 12 միջազգային կազմակերպություններից բնական և տեխնաժին աղետների կանխարգելման և հետևանքների վերացման գծով պատվիրակությունների ընդունելության ժամանակ ծախսերի ֆինանսավորմանը:

**Մասնագիտական ծառայությունները** ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել է **3.0 մլն դրամ**, որն ուղղվելու է գազի սպասարկման ծախսերի, ինչպես նաև Հայաստանի փրկարար ծառայության նոր վարչական շենքի վերելակների սպասարկման ծախսերի ֆինանսավորմանը:

**Մեքենաների ու սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերը** ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **54.5 մլն դրամի** չափով, որը նախատեսվում է ուղղել փրկարար ծառայության համակարգում առկա տրանսպորտային միջոցների և հրշեջ մեքենաների ընթացիկ վերանորոգման աշխատանքների ֆինանսավորմանը:

**Նյութերի** գծով ծախսերը ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **238.7 մլն դրամի** չափով: Նշված գումարից **12.0 մլն դրամը** նախատեսվում է ուղղել գրասենյակային պիտույքների, **82.7 մլն դրամը**՝ փրկարարական ծառայողների համազգեստի, **2.2 մլն դրամը**՝ գյուղատնտեսական ապրանքների (Փրկարար ծառայության թվով 4 գերմանական հովվաշների պահպանման համար), **111.6 մլն դրամը**՝ տրանսպորտային նյութերի (բենզին, դիզելային վառելիք և յուղեր), **1.0 մլն դրամը**՝ առողջապահական և լաբորատոր նյութերի (դեղորայք), **2.4 մլն դրամ**՝ կենցաղային և մաքրիչ նյութերի և **26.8 մլն դրամը**՝ հատուկ նպատակային այլ նյութերի (տարբեր տեսակի փրկարարական պարագաներ) ձեռքբերման ծախսերի ֆինանսավորմանը:

**Սոցիալական նպաստները** հաշվարկվել են **167.4 մլն դրամի** չափով, որն ուղղվելու է փրկարարական ծառայողներին առողջության, տարիքային ժամկետը լրանալու, հաստիքների կրճատման պատճառով ծառայությունից սահմանված կարգով արձակվելու և կենսաթոշակի անցնելու արձակման նպաստների վճարմանը:

**Հարկերի, պարտադիր վճարների և տուրքերի** գծով ծախսերը ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **24.3 մլն դրամի** չափով, որն ուղղվելու է արտասահմանից ապրանքների տեսքով ստացվող օգնությունների հետ կապված պետական գրանցման ծառայությունների և փրկարար ծառայության տրանսպորտային միջոցների գրանցման, հաշվառման, տեխնիկական անձնագրերի և պետավտոհամարանիշների հատկացման գծով հարկերի, ինչպես նաև փրկարար ծառայության ստորաբաժանումների կողմից աղբահանության գծով պարտադիր վճարների և տուրքերի վճարմանը:

**Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը** 2013 թվականին նախատեսվել են **9.0 մլն դրամի** չափով, որը նախատեսվում է ուղղել վարչական սարքավորումների, մասնավորապես, անտառների հրդեհների կանխման նպատակով համապատասխան սարքավորումների ձեռքբերմանը:

Բացի այդ, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայությանը 09 բաժնի 05 խմբի 02 դասի «Օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատություններ գործուղված փրկարարական ծառայողների ուսուցում» ծրագրով նախատեսվել է՝ **84.3 մլն դրամ** և 09 բաժնի 04 խմբի 01 դասի «Բարձրագույն մասնագիտական կրթություն. ծրագրով՝ **25.4 մլն դրամ**:

**գ) Քրեակատարողական ծառայության** 2013 թվականի պահպանման ծախսերը նախատեսվել են **8,398.0 մլն դրամի** չափով, որից՝ **7,323.0 մլն դրամն** ուղղվելու է ընթացիկ ծախսերի, իսկ **1,075.0 մլն դրամը՝** ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ֆինանսավորմանը: Քրեակատարողական ծառայության 2013 թվականի պահպանման ծախսերի կառուցվածքը հետևյալն է.

**Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարները** 2013 թվականին ծրագրավորվել են **4,745.9 մլն դրամի** չափով, որը 2012 թվականի պետական բյուջեի նկատմամբ ավել է նախատեսվել **1,128.7 մլն դրամի** չափով՝ պայմանավորված 2013 թվականի հունվարի 1-ից «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի կիրառմամբ:

**Այլ վարձատրությունները** հաշվարկվել են **271.8 մլն դրամի** չափով, որը նախատեսվում է ուղղել քրեակատարողական համակարգի սպաների և ենթասպաների պարենի փոխհատուցմանը (յուրաքանչյուր զինծառայողին՝ ամսական 10000 դրամ):

**Շարունակական ծախսերը** ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **501.3 մլն դրամի** չափով, որն իր մեջ ներառում է էներգետիկ ծառայությունները՝ **420.5 մլն դրամ**, կոմունալ ծառայությունները՝ **41.3 մլն դրամ**, կապի ծառայությունները՝ **27.9 մլն դրամ**, ապահովագրական ծախսերը՝ **4.1 մլն դրամ** և գույքի և սարքավորումների վարձակալության ծախսերը՝ **7.5 մլն դրամ**:

Նշված ծախսերը հաշվարկվել են «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից թխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2009 թվականի փետրվարի 27-ի N 65-Ն, N 71-Ն և N 70-Ն որոշումներով սահմանված սակագներին համապատասխան:

**Գործուղումների գծով ծախսերը** ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **16.0 մլն դրամի** չափով, որից ներքին գործուղումների գծով՝ **8.5 մլն դրամ** և արտասահմանյան գործուղումների համար՝ **7.5 մլն դրամ**: Հաշվարկը կատարվել է ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 16-ի N 1243-Ն որոշմամբ սահմանված նորմատիվներին համապատասխան:

**Վարչական ծառայությունների գծով ծախսերը** ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **1.5 մլն դրամի** չափով, որը նախատեսվում է ուղղել կալանավայրերում լուսանկարահանման ծառայություններ իրականացնելուն:

**Տեղեկատվական ծառայությունները** ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **15.0 մլն դրամի** չափով, որը նախատեսվում է ուղղել թերթերի, ամսագրերի տեղեկագրերի ձեռքբերմանը, ինչպես նաև տպագրական աշխատանքների ֆինանսավորմանը:

**Մասնագիտական ծառայությունների գծով ծախսերը** ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **1.4 մլն դրամի** չափով, որը նախատեսվում է ուղղել քրեակատարողական ծառայության հիմնարկներում գազաֆիկացման համակարգերում տարվա ընթացքում կատարվող սպասարկման աշխատանքների վճարմանը:

**Ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերը** ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **150.1 մլն դրամի** չափով, որը նախատեսվում է ուղղել.

- **141.0 մլն դրամը**՝ Քրեակատարողական ծառայության շենքերի և կառույցների ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերի (շինանյութերի ձեռքբերում) ֆինանսավորմանը,
- **9.1 մլն դրամը**՝ մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերի (Քրեակատարողական ծառայության տրանսպորտային միջոցների, ինչպես նաև խոհանոցային էլեկտրական մի շարք սարքերի, էլեկտրագեներատորների, ջրի և

գազի հաշվիչների և այլ սարքավորումների վերանորոգման աշխատանքների) ֆինանսավորմանը:

**Նյութերի** գծով ծախսերը ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **1,582.2 մլն դրամ** չափով, որից **12.7 մլն դրամը** նախատեսվում է ուղղել գրասենյակային պիտույքների ձեռքբերմանը, **266.9 մլն դրամը՝** քրեակատարողական ծառայողների և կալանավորների համազգեստի ձեռքբերմանը, **104.0 մլն դրամը՝** տրանսպորտային նյութերի (բենզին, դիզելային վառելիք, յուղեր) ձեռքբերմանը, **43.0 մլն դրամը՝** առողջապահական և լաբորատոր նյութերի (դեղորայքի) ձեռքբերմանը, **1,134.4 մլն դրամը՝** կենցաղային և հանրային սննդի նյութերի (որից մաքրիչ նյութեր՝ 12.0 մլն դրամ, հիգիենիկ նյութեր՝ 58.8 մլն դրամ, կալանավորների և դատապարտյալների համար սննդամթերք՝ 997.0 մլն դրամ, տնտեսական նյութեր՝ 9.4 մլն դրամ, կենցաղային այլ նյութեր՝ 57.1 մլն դրամ) ձեռքբերմանը և **21.2 մլն դրամը՝** հատուկ նպատակային այլ նյութերի (փշալար, կրակմարիչ, կրծքանշան և այլն) ձեռքբերմանը:

**Սոցիալական նպաստները** հաշվարկվել են **33.5 մլն դրամի** չափով, որից

- **30.0 մլն դրամ** - քրեակատարողական ծառայողների առողջության, տարիքային ժամկետը լրանալու, հաստիքների կրճատման պատճառով ծառայությունից սահմանված կարգով արձակվելու և կենսաթոշակի անցնելու արձակման նպաստների վճարման համար,
- **3.5 մլն դրամ** - քրեակատարողական ծառայողների և նրանց ուղեկցող ընտանիքի անդամների արձակուրդի վայր մեկնելու հետ կապված ճանապարհաձախսի փոխհատուցման համար:

Հաշվարկները կատարվել են «Հինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

**Հարկերի, պարտադիր վճարների և տուրքերի** գծով ծախսերը ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **4.3 մլն դրամի** չափով, որը նախատեսվում է ուղղել քրեակատարողական հիմնարկների կողմից աղբահանության գումարների վճարմանը, ինչպես նաև քրեակատարողական համակարգի ավտոմեքենաների տեխնիկական զննության ժամանակ պարտադիր վճարներին:

**Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը** 2013 թվականին նախատեսվել են **1,075.0 մլն դրամի** չափով, որը նախատեսվում է ուղղել.

- **1,000.0 մլն դրամ՝** նախատեսվում է ուղղել «Արմավիր» նոր քրեակատարողական հիմնարկի շինարարական աշխատանքների ֆինանսավորմանը,

- **75.0 մլն դրամ**՝ նախատեսվել է ուղղել «Նուբարաշեն», «Գորիս» և «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկների անվտանգության և հակափախուստային ահազանգման համակարգերի ձեռքբերմանը:

**դ) Ազգային անվտանգության ծառայության** 2013 թվականի պահպանման ծախսերը նախատեսվել է **14,052.7 մլն դրամ**, որից՝ **13,710.3 մլն դրամ**ն ուղղվելու է ընթացիկ ծախսերի, իսկ **342.4 մլն դրամը**՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ֆինանսավորմանը: Նշված ծրագրի գծով 2013 թվականի համար ծրագրավորված գումարները 2012 թվականի հաստատված բյուջեի նկատմամբ աճել են **2,750.3 մլն դրամով**: Ազգային անվտանգության ծառայության 2013 թվականի պահպանման ծախսերի կառուցվածքը հետևյալն է.

**Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարները** 2013 թվականին ծրագրավորվել են **9,880.7 մլն դրամի** չափով, որը 2012 թվականի պետական բյուջեի նկատմամբ ավել է նախատեսվել **2,708.2 մլն դրամով**, որը պայմանավորված է՝

- **40.3 մլն դրամը**՝ թվով 35 ենթասպայական անձնակազմի ավելացմամբ,
- **2,424.9 մլն դրամը**՝ 2013 թվականի հունվարի 1-ից «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի կիրառմամբ պայմանավորված համապատասխան գումարների նախատեսմամբ,
- **243.0 մլն դրամը**՝ Ազգային անվտանգության ծառայության համակարգի գլխավոր և միջին խմբերի ծառայողների միջին ամսական աշխատավարձերը ՀՀ Ոստիկանության համակարգի նույն խմբի ծառայողների միջին ամսական աշխատավարձերին հավասարեցմամբ:

**Այլ վարձատրությունները** հաշվարկվել են **511.1 մլն դրամի** չափով, որը 2012 թվականի պետական բյուջեի նկատմամբ աճել է **4.2 մլն դրամով**, որը պայմանավորված է ենթասպայական անձնակազմի գծով թվակազմի ավելացմամբ: Նշված գումարներն ուղղվելու են ազգային անվտանգության համակարգի սպաների և ենթասպաների պարենի փոխհատուցմանը և ազգային անվտանգության համակարգի զինծառայողներին համազգեստի դիմաց դրամական փոխհատուցմանը:

**Շարունակական ծախսերը** ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **891.3 մլն դրամի** չափով, որն իր մեջ ներառում է էներգետիկ ծառայությունները՝ **482.1 մլն դրամ**, կոմունալ ծառայությունները՝ **107.2 մլն դրամ**, կապի ծառայությունները՝ **282.0 մլն դրամ** և ապահովագրական ծախսեր՝ **20.0 մլն դրամ**:

Նշված ծախսերը հաշվարկվել են ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2009 թվականի փետրվարի 27-ի N 65-Ն, N 71-Ն և N 70-Ն որոշումներով սահմանված սակագներին և «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքին համապատասխան:



**Գործուղումների գծով ծախսերը** << 2013 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **400.0 մլն դրամի** չափով, որից ներքին գործուղումների գծով՝ **150.0 մլն դրամ**, իսկ արտասահմանյան գործուղումների գծով՝ **250.0 մլն դրամ**: Հաշվարկը կատարվել է << կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 16-ի N 1243-Ն որոշմամբ սահմանված նորմատիվներին համապատասխան:

**Վարչական ծառայությունների գծով ծախսերը** << 2013 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **1.9 մլն դրամի** չափով, որը նախատեսվում է ուղղել ամանորյա միջոցառումների կազմակերպման ծախսերի ֆինանսավորմանը:

**Ներկայացուցչական ծախսերը** << 2013 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **22.5 մլն դրամի** չափով, որը նախատեսվում է ուղղել տարբեր երկրների հատուկ ծառայությունների ղեկավարների և պատվիրակությունների ընդունելությունների ծախսերի ֆինանսավորմանը:

**Մասնագիտական ծառայությունների գծով ծախսերը** << 2013 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **10.0 մլն դրամի** չափով, որը նախատեսվում է ուղղել թարգմանչական ծառայությունների ձեռքբերմանը:

**Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերը** << 2013 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **11.2 մլն դրամի** չափով: Նշված գումարները նախատեսվում է ուղղել ազգային անվտանգության ծառայության համակարգի շենքերի և կառույցների ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերի (շինանյութերի ձեռքբերում) ֆինանսավորմանը:

**Նյութերի** գծով ծախսերը << 2013 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **1,277.6 մլն դրամի** չափով: Նշված գումարից **19.6 մլն դրամը** նախատեսվում է ուղղել գրասենյակային պիտույքների ձեռքբերմանը, **141.7 մլն դրամը**՝ ազգային անվտանգության համակարգի զինծառայողների համազգեստի ձեռքբերմանը, **55.2 մլն դրամը**՝ գյուղատնտեսական ապրանքների ձեռքբերմանը, **705.1 մլն դրամը**՝ տրանսպորտային նյութերի (բենզին, դիզելային վառելիք, յուղեր) ձեռքբերմանը, **356.0 մլն դրամը**՝ կենցաղային և հանրային սննդի նյութերի ձեռքբերմանը:

**Սոցիալական նպաստները** հաշվարկվել են **33.4 մլն դրամի** չափով: Նշված գումարները նախատեսվում է ուղղել ազգային անվտանգության ծառայության համակարգի ծառայողների առողջության, տարիքային ժամկետը լրանալու, հաստիքների կրճատման պատճառով ծառայությունից սահմանված կարգով արձակվելու և կենսաթոշակի անցնելու արձակման նպաստների վճարմանը:

Հաշվարկները կատարվել են «Ձինձառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

**Այլ ծախսերը** ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **670.7 մլն դրամ** գումարի չափով, որն իր մեջ ներառում է ընթացիկ ծախսերի գծով այլ հոդվածներում չընդգրկված ծախսեր, ինչպես նաև՝ տարբեր տեսակի ծառայությունների մատուցման ծախսեր:

**Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը** 2013 թվականին նախատեսվել են **342.4 մլն դրամի** չափով, որը նախատեսվում է ուղղել.

- **59.0 մլն դրամ՝** տրանսպորտային միջոցների (թվով 10 մարդատար ավտոմեքենա) ձեռքբերման ծախսերի ֆինանսավորմանը,

- **283.4 մլն դրամ՝** վարչական սարքավորումների (տեսախորհրդաժողովի կապի սարքավորումների, համակարգչային սարքավորումների և այլն) ձեռքբերմանը,

Բացի այդ, ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությանը նախատեսվել է **26.8 մլն դրամ՝** 07 բաժնի 01 խմբի 01 դասի «Հեղորայքի տրամադրում ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց» ծրագրով, **272.7 մլն դրամ՝** 09 բաժնի 04 խմբի 01 դասի «Բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ» ծրագրով:

**ե) Պետական պահպանության ծառայության** 2013 թվականին նախատեսվում է **2,296.1 մլն դրամ**, որից՝ **2,291.1 մլն դրամն** ուղղվելու է ընթացիկ ծախսերի, իսկ **5.0 մլն դրամը՝** ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ֆինանսավորմանը: Պետական պահպանության ծառայության 2013 թվականի պահպանման ծախսերի կառուցվածքը հետևյալն է.

**Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարները** 2013 թվականին ծրագրավորվել են **1,641.7 մլն դրամի** չափով, որը 2012 թվականի պետական բյուջեի նկատմամբ ավել է նախատեսվել **534.1 մլն դրամով**, որը պայմանավորված է պետական պահպանության ծառայության թվաքանակի ավելացմամբ, ինչպես նաև 2013 թվականի հունվարի 1-ից «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի կիրառմամբ պայմանավորված համապատասխան գումարների նախատեսմամբ:

**Այլ վարձատրությունները** հաշվարկվել են **77.5 մլն դրամի** չափով, որը 2012 թվականի պետական բյուջեի նկատմամբ աճել է **9.0 մլն դրամով**, որը պայմանավորված է պետական պահպանության ծառայության թվակազմի ավելացմամբ: Նշված գումարներն ուղղվելու են պետական պահպանության ծառայության համակարգի սպաների և ենթասպաների պարենի փոխհատուցմանը:

**Շարունակական ծախսերը** ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **52.9 մլն դրամի** չափով, որն իր մեջ ներառում է էներգետիկ ծառայությունները՝ **28.6 մլն դրամ**, կոմունալ ծառայությունները՝ **4.1 մլն դրամ**, կապի ծառայությունները՝ **15.0 մլն դրամ**, ապահովագրական ծախսերը՝ **5.2 մլն դրամ**: Նշված ծախսերը հաշվարկվել են «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2009 թվականի փետրվարի 27-ի N 65-Ն, N 71-Ն և N 70-Ն որոշումներով սահմանված սակագներին համապատասխան:

**Գործուղումների գծով ծախսերը** ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **95.0 մլն դրամի** չափով, որից ներքին գործուղումների գծով՝ **20.0 մլն դրամ**, իսկ արտասահմանյան գործուղումների գծով՝ **75.0 մլն դրամ**: Հաշվարկը կատարվել է ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 16-ի N 1243-Ն որոշմամբ սահմանված նորմատիվներին համապատասխան:

**Տեղեկատվական ծառայությունները** ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **2.6 մլն դրամի** չափով, որը նախատեսվում է ուղղել թերթերի, ամսագրերի տեղեկագրերի ձեռքբերմանը, ինչպես նաև տպագրական աշխատանքների ֆինանսավորմանը:

**Պայմանագրային ծառայությունների ձեռքբերման ծախսերը** ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **10.1 մլն դրամի** չափով, որից **0.5 մլն դրամը** նախատեսվում է ուղղել կենցաղային և հանրային սննդի ծառայությունների (վլացքատների ծառայություններ), ներկայացուցչական ծախսերի ֆինանսավորմանը՝ **3.6 մլն դրամ**, իսկ **6.0 մլն դրամը**՝ ընդհանուր բնույթի այլ ծառայությունների ֆինանսավորմանը:

**Ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերը** ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **70.0 մլն դրամի** չափով:

- **5.0 մլն դրամը**՝ պետական պահպանության ծառայության շենքերի և կառույցների ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերի ֆինանսավորմանը,
- **65.0 մլն դրամը**՝ մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերի (պահեստամասերի ձեռքբերում) ֆինանսավորմանը:

**Նյութերի** գծով ծախսերը ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **242.7 մլն դրամի** չափով, որը 2012 թվականի պետական բյուջեի նկատմամբ ավել է նախատեսվել **8.0 մլն դրամով**՝ պայմանավորված պետական պահպանության ծառայության թվակազմի ավելացման հետևանքով լրացուցիչ համազգեստի գումարների նախատեսմամբ: Նշված գումարից **2.7 մլն դրամը** նախատեսվում է ուղղել գրասենյակային պիտույքների

ծեռքբերմանը, **69.1 մլն դրամը**՝ պետական պահպանության ծառայության համակարգի զինծառայողների համազգեստի ձեռքբերմանը, **165.2 մլն դրամը**՝ տրանսպորտային նյութերի (բենզին, դիզելային վառելիք, յուղեր) ձեռքբերմանը և **5.7 մլն դրամը**՝ կենցաղային և հանրային սննդի նյութերի ձեռքբերմանը:

**Սոցիալական նպաստները** հաշվարկվել են **18.1 մլն դրամի** չափով, որը նախատեսվում է ուղղել պետական պահպանության ծառայության համակարգի ծառայողների առողջության, տարիքային ժամկետը լրանալու, հաստիքների կրճատման պատճառով ծառայությունից սահմանված կարգով արձակվելու և կենսաթոշակի անցնելու հետ կապված արձակման նպաստների վճարմանը: Հաշվարկները կատարվել են ենթասպաների «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

**Հարկերի** գծով ծախսերը ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **0.6 մլն դրամ**, որը նախատեսվում է ուղղել պետական պահպանության ծառայության տրանսպորտային միջոցների գրանցման, հաշվառման, տեխնիկական անձնագրերի և պետավտոհամարանիշների հատկացման ժամանակ հարկերի վճարմամբ:

**Այլ ծախսերը** ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **80.0 մլն դրամ** գումարի չափով, որն իր մեջ ներառում է ընթացիկ ծախսերի գծով այլ հոդվածներում չընդգրկված ծախսեր:

**Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը** 2013 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **5.0 մլն դրամի** չափով, որը նախատեսվում է ուղղել վարչական սարքավորումների (կահույք, համակարգչային տեխնիկա, կենցաղային սարքավորումներ և այլն) ձեռքբերմանը:

Բացի այդ, ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության պետական պահպանության ծառայությանը նախատեսվել է **1.1 մլն դրամ**՝ 07 բաժնի 01 խմբի 01 դասի «Դեղորայքի տրամադրում պետական պահպանության ծառայությանը» ծրագրով:

## **ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐԻՆ**

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի համաձայն համայնքներին պետական բյուջեից անհատույց և անվերադարձ հատկացումներ կարող են նախատեսվել ֆինանսական համահարթեցման և այլ դոտացիաների, սուբվենցիաների և պետական բյուջեի եկամուտներից մասհանումների տեսքով:

1. Ֆինանսական համահարթեցման և այլ դոտացիաներ.

1.1. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվածի երկրորդ պարբերությունում բերված դրույթը սահմանում է (համանման սահմանմամբ դրույթ բերված է նաև «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերությունում), որ պետական բյուջեից համայնքներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տվյալ տարում տրամադրվող դոտացիաների ընդհանուր գումարը (ներառյալ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի համաձայն պետության կողմից համայնքներին տվյալ տարում տրվող փոխհատուցման գումարները) հաշվարկվում է հիմք ընդունելով տվյալ տարվան նախորդող երկրորդ բյուջետային տարում Հայաստանի Հանրապետության համախմբված բյուջեի փաստացի եկամուտների հանրագումարի ոչ պակաս քան չորս տոկոսը: 2013 թվականի համար նախորդող երկրորդ բյուջետային տարին՝ 2011 թվականի բյուջետային տարին է, հետևաբար ըստ վերոհիշյալ օրենքների վերը նշված պահանջի՝ 2013 թվականին համայնքներին տրամադրվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների ընդհանուր գումարը (ներառյալ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի համաձայն պետության կողմից համայնքներին տվյալ տարում տրվող փոխհատուցման գումարները) չպետք է պակաս լինի ՀՀ 2011 թվականի համախմբված բյուջեի փաստացի եկամուտների ընդհանուր գումարի՝ 906.1 մլրդ դրամի 4%-ը կազմող 36,244.0 մլն դրամից:

2013 թվականին համայնքներին տրամադրվող դոտացիաների ընդհանուր գումարը ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով առաջարկվում է ուղղել.

- ֆինանսական համահարթեցման դոտացիաների տրամադրմանը,
- այլ դոտացիաների տրամադրմանը («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի համաձայն ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքների կիրարկման արդյունքում համայնքների 2011 թվականի բյուջեների եկամուտների կորուստները փոխհատուցելու համար):

ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է ֆինանսական համահարթեցման սկզբունքով համայնքներին տրամադրել ընդհանուր գումարով 36,244.0 մլն դրամի դոտացիաներ: Նշված դոտացիաների բաշխումն ըստ առանձին համայնքների նախատեսված է իրականացնել «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքին համապատասխան, մասնավորապես.

- ա) 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող յուրաքանչյուր համայնքի բյուջեին ՀՀ 2013 թվականի պետական բյուջեից առաջարկվում է ֆինանսական համահարթեցման դոտացիայի տեսքով տրամադրել 3.5 մլն դրամ (2012 թվականի համար սահմանված չափով),

բ) մյուս համայնքներին (բացառությամբ ՀՀ Գեղարքունիքի մարզի Արծվաշեն համայնքի) հասանելիք դոտացիաները հաշվարկվել են «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքով սահմանված «ա» և «բ» գործոններով: Նշված գործոններով բաշխվող ֆինանսական համահարթեցման դոտացիայի ընդհանուր գումարի 66.7 %-ը առանձնացվել է «ա» գործոնով, իսկ 33.3%-ը՝ «բ» գործոնով դոտացիաների տրամադրման համար: Ընդ որում, «ա» գործոնով դոտացիաների գումարների հաշվարկներում կիրառվել են ըստ յուրաքանչյուր համայնքի հաշվարկված հողի հարկի և գույքահարկի 2011 թվականի հաշվարկային ընդհանուր գումարները. այն է՝ 2011 թվականին համայնքների բյուջեներ այդ հարկերի հարկատուների կողմից վճարման ենթակա գումարները, որոնք

- պակասեցվել են 2011 թվականի հունվարի 1-ի դրությամբ այդ հարկերի գծով առկա չմարված ապառքների, տույժերի և տուգանքների, ինչպես նաև 2011 թվականին հաշվարկված տույժերի և տուգանքների գումարների չափով,

- ավելացվել են համայնքների ավագանիների որոշումներով (ավագանիներին օրենքով տրված իրավասության սահմաններում) գույքահարկի գծով արտոնությունների տրամադրման հետևանքով այդ հարկի գծով համայնքների 2011 թվականի բյուջեներում եկամուտների կորուստների գումարների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների եկամուտների՝ հողի հարկի և գույքահարկի գծով եկամուտների կորուստների՝ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցման ենթակա գումարների չափով:

Հարկ է նշել, որ բոլոր համայնքների տեղական ինքնակառավարման մարմինները 2012 թվականին արդեն իսկ փաստացի իրականացրել են գույքահարկ և հողի հարկ վճարող ֆիզիկական անձանց հաշվառման գործառույթներ, ուստի 2013 թվականի ֆինանսական համահարթեցման դոտացիաների գումարների հաշվարկներում կիրառված 2011 թվականի գույքահարկի և հողի հարկի գծով բոլոր ելակետային տվյալները տրամադրվել են համայնքների ղեկավարների կողմից:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ՀՀ Գեղարքունիքի մարզի Արծվաշեն գյուղական համայնքի համապատասխան ցուցանիշները հայտնի պատճառներով չեն կարող կիրառվել ֆինանսական համահարթեցման դոտացիաների բաշխման հաշվարկներում, նշված համայնքի ղեկավարի աշխատակազմի 2013 թվականի պահպանման ծախսերի գծով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծում ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանին առանձին տողով նախատեսվել են շուրջ 4.2 մլն դրամի չափով հատկացումներ:

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 4.3-րդ մասի համաձայն ընթացիկ տարվա ֆինանսական համահարթեցման դոտացի-

այի հաշվարկներում կիրառված ելակետային տվյալներում կամ կատարված հաշվարկներում մինչև ընթացիկ տարվա սեպտեմբերի 1-ը որևէ համայնքի գծով սխալների հայտնաբերման դեպքում լիազորված մարմինը՝ հիմք ընդունելով ընթացիկ տարվա ֆինանսական համահարթեցման դոտացիայի հաշվարկման ճշգրտված ելակետային տվյալները և (կամ) վերացնելով հաշվարկներում տեղ գտած վրիպումները, կատարում է տվյալ տարվա ֆինանսական համահարթեցման դոտացիայի գումարների ըստ առանձին համայնքների բաշխման վերահաշվարկ, որի արդյունքները նույն օրենքի 21-րդ հոդվածի 4.5-րդ մասին համապատասխան արտացոլվում են առաջիկա տարվա պետական բյուջեի մասին օրենքի նախագծում: Ընդ որում՝ ընթացիկ տարվա համար յուրաքանչյուր համայնքի գծով վերահաշվարկված և նույն տարվա պետական բյուջեի մասին օրենքով հաստատված ֆինանսական համահարթեցման դոտացիայի գումարների միջև

ա) բացասական տարբերության առաջացման դեպքում, այդ տարբերությունը (ընթացիկ տարվա համար ավել հաշվարկված գումարը) հետ է գանձվում այդ համայնքից՝ վերջինիս գծով առաջիկա տարվա համար հաշվարկված ֆինանսական համահարթեցման դոտացիայի գումարը ընթացիկ տարվա համար ավել հաշվարկված գումարի չափով պակասեցման ճանապարհով (ընդ որում, եթե գանձման ենթակա գումարը գերազանցում է առաջիկա տարվա համար հաշվարկված ֆինանսական համահարթեցման դոտացիայի գումարը ապա այդ գերազանցող չափով գումարի գանձումը նույն եղանակով իրականացվում է նաև առաջիկա տարվան հաջորդող հերթական տարիների ընթացքում),

բ) դրական տարբերության առաջացման դեպքում, այդ տարբերությունը (ընթացիկ տարվա համար պակաս հաշվարկված գումարը) հատկացվում է տվյալ համայնքին առաջիկա տարվա պետական բյուջեով համայնքների միջև բաշխման համար նախատեսված ֆինանսական համահարթեցման դոտացիայի ընդհանուր գումարի հաշվին՝ այդ համայնքին առաջիկա տարվա համար հաշվարկված ֆինանսական համահարթեցման դոտացիայի գումարը ընթացիկ տարվա համար պակաս հաշվարկված գումարի չափով ավելացման ճանապարհով:

Նկատի ունենալով, այն հանգամանքը, որ 2012 թվականի ֆինանսական համահարթեցման դոտացիայի ընդհանուր գումարի ըստ առանձին համայնքների բաշխման հաշվարկներում կիրառված ելակետային տվյալներում որոշ համայնքների գծով պատկան մարմինների կողմից լիազորված մարմին մինչև ընթացիկ տարվա սեպտեմբերի 1-ը ներկայացվել են ճշգրտված ելակետային տվյալներ, հետևապես հիմք ընդունելով օրենքի վերը նշված դրույթը կատարվել է 2012 թվականի դոտացիայի գումարների ըստ առանձին համայնքների բաշխման վերահաշվարկ, որի արդյունքներին համապատասխան ճշգրտվել են ՀՀ պետական բյուջեից 2012 թվա-

կանին ֆինանսական համահարթեցման դոտացիաների տեսքով համայնքներին հատկացվելիք գումարները:

1.2. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքներով համայնքների եկամուտների նվազեցման հետևանքով համայնքների բյուջեներում առաջացող եկամուտների կորուստների գումարները ենթակա են փոխհատուցման պետության կողմից: Այդ կապակցությամբ, «Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտները կորուստները պետության կողմից փոխհատուցելու կարգի մասին» ՀՀ պահանջներին համապատասխան կիրառելով ՀՀ արդարադատության նախարարությունից և տեղական ինքնակառավարման մարմիններից (իրենց իրավասության շրջանակներում) ստացված տեղեկատվությունը, կատարվել են համայնքների 2011 թվականի բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման ենթակա գումարների հաշվարկներ: Արդյունքում, համայնքների 2011 թվականի բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման ենթակա ընդհանուր գումարը կազմել է շուրջ 53.0 մլն դրամ, որն էլ նախատեսվել է «Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի N 2 հավելվածում:

## 2. Սուբվենցիաներ.

2.1. ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով համայնքներին նախատեսվել են սուբվենցիաների հատկացումներ «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

ՀՀ 2013 թվականի պետական բյուջեից բնապահպանական սուբվենցիաներ ստացող համայնքների ցանկի որոշման և նրանց տրամադրվելիք նշված սուբվենցիաների գումարների չափերի հաշվարկման հիմքում դրվել են.

- համայնքների կողմից ներկայացված ՀՀ բյուջետային օրենսդրությամբ սահմանված 2013 թվականի համապատասխան բյուջետային ֆինանսավորման հայտերը,

- «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքով սահմանված համապատասխան ընկերությունների կողմից 2009-2011 թվականներին պետական բյուջե փաստացի վճարված բնապահպանական վճարների գումարները,

- նշված վճարների գումարների՝ ըստ այդ ընկերությունների գործունեությունից վնասակար ազդեցության ենթարկվող համայնքների բաշխման համամասնությունները (սահմանված են ՀՀ բնապահպանության նախարարության կողմից),



- նշված վճարների գումարներից 2009-2011 թվականներին այդ համայնքներին արդեն իսկ տրամադրված բնապահպանական սուբվենցիաների գումարները:

Մասնավորապես, ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել են ընդհանուր գումարով շուրջ 321.8 մլն դրամի չափով բնապահպանական սուբվենցիաների հատկացումներ, որից

ա) «Արմենիան Քափր Փրոգրամ» ՓԲԸ-ի գործունեության արդյունքում վնասակար ազդեցության ենթարկվող ՀՀ Լոռու մարզի՝ Ալավերդի քաղաքային համայնքի գծով՝ 110.0 մլն դրամ, Աքորի գյուղական համայնքի գծով՝ 28.0 մլն դրամ, Հաղպատ գյուղական համայնքի գծով՝ 25.0 մլն դրամ, Օձուն գյուղական համայնքի գծով՝ 58.66 մլն դրամ և Հազվի գյուղական համայնքի գծով՝ 50.0 մլն դրամ,

բ) «Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ-ի գործունեության արդյունքում վնասակար ազդեցության ենթարկվող ՀՀ Լոռու մարզի Ախթալայի քաղաքային համայնքի գծով՝ 3.5 մլն դրամ,

գ) «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի և «Դինո Գոլդ Մայնինգ Քամփնի» ՓԲԸ-ի գործունեության արդյունքում վնասակար ազդեցության ենթարկվող ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաքային համայնքի գծով՝ 13.12 մլն դրամ,

դ) «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի գործունեության արդյունքում վնասակար ազդեցության ենթարկվող ՀՀ Սյունիքի մարզի՝ Քաջարան քաղաքային համայնքի գծով՝ 19.25 մլն դրամ, Սյունիք գյուղական համայնքի գծով՝ 1.44 մլն դրամ,

ե) «Արարատ-ցեմենտ» ՓԲԸ-ի գործունեության արդյունքում վնասակար ազդեցության ենթարկվող ՀՀ Արարատի մարզի Արարատ քաղաքային համայնքի գծով՝ 7.9 մլն դրամ,

զ) «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի գործունեության արդյունքում վնասակար ազդեցության ենթարկվող ՀՀ Սյունիքի մարզի Ագարակ քաղաքային համայնքի գծով՝ 4.93 մլն դրամ:

Այլ համայնքների գծով վերը նշված օրենքի պահանջներին համապատասխան բնապահպանական սուբվենցիաների տրամադրում ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով չի նախատեսված՝ սահմանված կարգով նրանց կողմից բյուջետային օրենսդրությամբ սահմանված 2013 թվականի համապատասխան բյուջետային ֆինանսավորման հայտերի չներկայացման պատճառով:

2.2. «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 110-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը կատարելու նպատակով՝ ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է շուրջ 6.6 մլրդ դրամ ընդհանուր գումարով սուբվենցիաների հատկացում Երևանի քաղաքային համայնքի ծրագրերի իրականացմանը աջակցելու համար:

### 3. Մասհանումներ պետական բյուջեի եկամուտներից.

« 2013 թվականին պետական բյուջեից եկամտահարկի և շահութահարկի գծով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածով սահմանված մասհանումների իրականացում ՀՀ համայնքների բյուջեներին չի նախատեսված՝ հաշվի առնելով համայնքների միջև այդ հարկերի ոչ համամասնորեն ձևավորումը, պայմանավորված հանրապետությունում տնտեսաարտադրական կարողությունների ու ազգաբնակչության, ըստ համայնքների, տարիներ ի վեր ձևավորվող խիստ անհամաչափ տեղաբաշխման հանգամանքներով: Նման պայմաններում մասհանումների համակարգը միտված կլինի սակավաթիվ, հիմնականում Երևան քաղաքի համայնքների ֆինանսական բազայի ամրապնդմանը՝ էլ ավելի մեծացնելով համայնքների միջև առկա ֆինանսական անհավասարության աստիճանը:

Էականորեն կղժվարացնի և անարդյունավետ կդարձնի մասհանումների գործընթացը հարկ վճարողի եկամուտների ձևավորման վայրի վերաբերյալ հստակ պատկերացում կազմելու անհնարինությունը, քանի որ շատ դեպքերում հարկ վճարողի գրանցման վայրը չի համընկնում հարկ վճարողի գործունեության իրականացման վայրերի հետ: Հարկ է նշել, որ դեռևս 1998-1999 թվականներին օրենքի պահանջի համապատասխան համայնքների բյուջեներին կատարվում էին եկամտահարկի գումարների մասհանումներ: Սակայն վերը նշված հիմնախնդիրների առկայությունը ցույց տվեց մասհանումների իրականացման բացարձակ անարդյունավետությունը, որից ելնելով էլ օրենքում կատարվեցին համապատասխան փոփոխություններ, որոնց համաձայն՝ համայնքների բյուջեներին եկամտահարկից մասհանումների կատարումը 2000 թվականից դադարեցվեց:

Հաշվի առնելով վերոշարադրյալը, ինչպես նաև համայնքների բյուջեներին շահութահարկի ու եկամտային հարկի գումարներից մասհանումների գործընթացն ի սկզբանե չվարկաբեկելու նկատառումով, գտնում ենք, որ մասհանումների կատարման հարցին նպատակահարմար է անդրադառնալ վերը նշված հիմնախնդիրների կարգավորման հստակ մեխանիզմների մշակումից հետո:

### **« ՀԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՈՒՍԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ**

« 2013 թվականի պետական բյուջեով նախատեսվող ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի ծավալը նախատեսված է շուրջ 24.6 մլրդ դրամ (ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ծախսերի ընդհանուր ծավալի 2.1 %-ը):

ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել են նաև հատկացումներ նյութական ռեսուրսների պետական պահուստի պահպանման և ձևավորման, ինչպես նաև ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության պետական ռեզերվների գործակալության համակարգի ստորաբաժանումների պահպանման համար, համապատասխանաբար 155.2 մլն դրամի և 25.7 մլն դրամի չափով:

### **ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ԴԵՖԻՑԻՏԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ**

Ինչպես արդեն նշվել է, ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով դեֆիցիտի գումարը ծրագրավորվում է 119.8 մլրդ դրամի չափով: Դեֆիցիտի ֆինանսավորումը նախատեսվում է իրականացնել ներքին և արտաքին աղբյուրների զուտ մուտքերի (զուտ մուտքերը՝ դեֆիցիտի ֆինանսավորման նպատակով ներգրավվող միջոցների մուտքերի ընդհանուր գումարի և փոխառու միջոցների տրամադրման կամ մարման ընդհանուր գումարի տարբերությունն է) հաշվին, համապատասխանաբար՝ 55.15 մլրդ դրամի և 64.63 մլրդ դրամի չափով:

Դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները դասակարգվում են ներքին և արտաքին աղբյուրներից փոխառու միջոցների և ֆինանսական ակտիվների տեսքով ներգրավվող միջոցների:

Փոխառու միջոցների ներգրավումը իրականացվում է պետական արժեթղթերի թողարկման և վարկերի ու փոխատվությունների ստացման եղանակով (որոնք հետևապես հետագայում ենթակա են մարման): Ֆինանսական ակտիվներից միջոցների ներգրավումը իրականացվում է արդեն ձեռք բերված՝ սեփականության իրավունքով պետությանը պատկանող բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության, ինչպես նաև տնտեսվարող և այլ սուբյեկտներին պետական բյուջեից տրամադրված վարկերի և փոխատվությունների դիմաց այդ սուբյեկտներից ձեռք բերված պարտավորությունների իրացման եղանակով:

ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով դեֆիցիտի ֆինանսավորման նպատակով ներքին աղբյուրներից ներգրավվող փոխառու զուտ միջոցների ընդհանուր գումարը ծրագրավորվում է 28.3 մլրդ դրամի չափով, ընդ որում, փոխառու միջոցների մուտքերի ներգրավումը ամբողջությամբ նախատեսվում է ապահովել պետական արժեթղթերի թողարկումից: Ֆինանսական ակտիվներից 2013 թվականի զուտ մուտքերը ծրագրավորվում են 26.8 մլրդ դրամ ընդ որում, տարեսկզբի ազատ մնացորդի միջոցների հաշվին՝ 7.6 մլրդ դրամ և կայունացման դեպոզիտային հաշվի միջոցների օգտագործման հաշվին՝ 1.2 մլրդ դրամ), տնտեսվարող և այլ սուբյեկտներին տրամադրված բյուջետային վարկերի և փոխատվությունների գծով զուտ մուտքերին՝ 21.0 մլրդ դրամ (տեղեկատվությունը ներկայացված է սույն բացատրագրի «Բյուջետային վարկեր» բաժնում):

ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով դեֆիցիտի ֆինանսավորման նպատակով արտաքին աղբյուրներից ներգրավվող փոխառու զուտ միջոցների ծրագրված ընդհանուր գումարը (104.5 մլրդ դրամ) հաշվարկվել է որպես միջազգային կազմակերպություններից և օտարերկրյա պետություններից Հայաստանի Հանրապետությանը 2013 թվականին տրամադրվելիք արտոնյալ վարկերի (որոնց գերակշռող մասն ունի հստակ ծրագրային ուղղվածություն) և մինչ այդ արդեն ստացված վարկերի, ըստ վարկային պայմանագրերով նախատեսված ժամկետների, մարման գումարների տարբերություն (նշված զուտ մուտքերի վերաբերյալ մանրամասն համապատասխան տեղեկատվությունը բերված է սույն բացատրագրի N 1 հավելվածում, NN 15-18 աղյուսակներում և «ՀՀ պետական պարտքը» բաժնում): Դրա հետ մեկտեղ նախագծով նախատեսվել է շուրջ 0.9 մլրդ դրամ՝ միջազգային ֆինանսական կազմակերպությունների կապիտալում մասնակցության գծով Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած պարտավորությունների կատարման համար:

### **ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՎԱՐԿԵՐ**

ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով զուտ վարկավորման ընդհանուր ծավալը ծրագրավորված է 21.0 մլրդ դրամի չափով: Նշված գումարն իրենից ներկայացնում է ՀՀ պետական բյուջեից տրամադրվելիք բյուջետային վարկերի ընդհանուր գումարի և նախկինում տրամադրված բյուջետային վարկերի մարումներից ստացվելիք մուտքերի ընդհանուր գումարի տարբերությունը:

ՀՀ 2013 թվականի պետական բյուջեից տրամադրվելիք վարկերի ընդհանուր գումարը նախագծով նախատեսվում է սահմանել 50.6 մլրդ դրամի չափով: Մասնավորապես.

ա) Հայաստանի Հանրապետության կողմից ցուցաբերվող արտաքին տնտեսական աջակցության շրջանակներում բյուջետային վարկեր տրամադրելու համար առանձնացվել են 39.3 մլրդ դրամի չափով հատկացումներ՝ դրանք ամբողջությամբ ԼՂՀ-ին բյուջետային վարկի տրամադրմանն ուղղելու նպատակով,

բ) Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Գյուղական կարողությունների ստեղծում», Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին», Ճապոնիայի կառավարության աջակցությամբ իրականացվող «Համակցված շոգեգազային ցիկլով էներգաբլոկի կառուցման», Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող «Էլեկտրամատակարարման հուսալիության», Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող «Գյումրի-2 ենթակայանի

վերականգնման» ծրագրերի շրջանակներում նախատեսվում է տրամադրել շուրջ 11.3 մլրդ դրամ բյուջետային վարկեր:

Դրա հետ մեկտեղ ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են շուրջ 29.6 մլրդ դրամի չափով մուտքեր Վրաստանից, ինչպես նաև մի շարք տնտեսվարող սուբյեկտներից՝ պետության կողմից նախորդ տարիներին իրենց տրամադրված բյուջետային վարկերի մարումների գծով պետական բյուջե կատարվելիք վճարումներից:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ**

### **ԱՐՏԱՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ**

2011 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ արտաքին պետական պարտքը կազմել է 3,568 մլն ԱՄՆ դոլար:

ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով արտաքին աղբյուրներից նախատեսված վարկային միջոցները ամբողջությամբ ստանալու դեպքում, ինչպես նաև հաշվի առնելով 2012 թվականի պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման ճշտված պլանի համեմատությամբ առանձին վարկային ծրագրերի գծով արձանագրված գերակատարումները, «ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով չնախատեսված և 2012 թվականի ընթացքում փաստացի ստացված վարկերը, Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքը (ՀՀ կառավարության և ՀՀ կենտրոնական բանկի վարկային պարտավորություններ) 2012 թվականի տարեվերջին կկազմի մոտ 3,859 մլն ԱՄՆ դոլար:

2012 թվականի ընթացքում արտաքին պարտավորությունների գծով կստացվի մոտ 509 մլն ԱՄՆ դոլար, որից ՀՀ կառավարության պարտավորությունների գծով 410 մլն ԱՄՆ դոլար և ԿԲ-ի գծով մոտ 99 մլն ԱՄՆ դոլար, և կկատարվի մոտ 184 մլն ԱՄՆ դոլարի հիմնական գումարի մարում (այդ թվում 69 մլն ԱՄՆ դոլար ՀՀ կառավարության պարտավորությունների գծով): 2011 թվականի տարեվերջի համեմատ ՀՀ արտաքին պարտքը կաճի մոտ 291 մլն ԱՄՆ դոլարով<sup>1</sup>:

2012 թվականի ընթացքում արտաքին պետական պարտքի գծով ընդհանուր սպասարկումը կկազմի մոտ 245 մլն ԱՄՆ դոլար: Միայն ՀՀ կառավարության գծով 2012 թվականին

<sup>1</sup> Տարեկան կտրվածքով ստացումների և մարումների արդյունքում ստացվող պարտքի հաշվարկային գումարի և տեքստում ներկայացված պարտքի գումարի տարբերությունը պայմանավորված է տարեսկզբին և տարեվերջին արժույթների փոխարժեքների (հիմնականում SDR/ USD և EUR/USD) տարբերություններով:

31.12.2011թ. դրությամբ 1SDR= 1.535 USD և 1EURO= 1.293 USD

31.12.2012թ. դրությամբ 1SDR= 1.522 USD և 1EURO= 1.256 USD (03.09.2012թ. դրությամբ արժույթային շուկայում ձևավորված միջին փոխարժեք (աղբյուր՝ ՀՀ կենտրոնական բանկ))

ՀՀ արտաքին պարտքի զամբյուղի մեջ SDR-ով և EURO-ով տրամադրված վարկերը 2011 թվականի տարեվերջի դրությամբ կազմել են շուրջ 69%:

այն կկազմի մոտ 119 մլն ԱՄՆ դոլար, որից 69 մլն ԱՄՆ դոլար՝ մարում և 50 մլն ԱՄՆ դոլար՝ տոկոսավճար:

2013 թվականի ընթացքում, ՀՀ ԱՊՊ գծով նախատեսվում է ստանալ մոտ 537 մլն ԱՄՆ դոլար՝ այդ թվում ՀՀ կառավարության պարտավորությունների գծով 413<sup>2</sup> մլն ԱՄՆ դոլարի արտաքին միջոցներ:

2013 թվականի ընթացքում ԱՊՊ գծով նախատեսվում է սպասարկել մոտ 418.6 մլն ԱՄՆ դոլար՝ 354.2 մլն ԱՄՆ դոլար հիմնական գումարի մարման գծով և մոտ 64.4 մլն ԱՄՆ դոլար որպես տոկոսավճար, այդ թվում ՀՀ կառավարության պարտավորությունների գծով<sup>3</sup> մոտ 167.4 մլն ԱՄՆ դոլարի հիմնական գումարի մարում և 56.0 մլն ԱՄՆ դոլարի տոկոսավճար: Հաշվի առնելով վերը նշվածը, 2013 թվականի տարեվերջին ՀՀ ԱՊՊ կկազմի մոտ 4,042 մլն ԱՄՆ դոլար:

2012-2013 թվականներին արտաքին պետական պարտքը բնութագրող ցուցանիշները հիմնականում կգտնվեն նվազ և միջին պարտքի բեռ ունեցող երկրների ցուցանիշների սահմաններում:

### **Ներքին պետական պարտքը**

«Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով պետական արժեթղթերով նախատեսվում է ապահովել 30.2 մլրդ դրամ դեֆիցիտի ֆինանսավորում և կատարել 25,889.2 մլն դրամ սպասարկման ծախս:

2012 թվականի հուլիսի 31-ի դրությամբ թողարկվել է 65.0 մլրդ դրամ անվանական արժեքով պարտատոմսեր, որից տեղաբաշխվել է 61,152.4 մլն դրամը: Պարտատոմսերի տեղաբաշխումից հասույթը կազմել է 56,423.9 մլն դրամ: 2012 թվականի հունվար-հուլիս ամիսներին տեղաբաշխվել է 281.9 մլն դրամի խնայողական պարտատոմսեր: Այս պարտատոմսերը տեղաբաշխվում են գանձապետական պահառու համակարգի միջոցով: 2012 թվականի ընթացքում կիրականացվի մոտ 78.6 մլրդ դրամի պարտատոմսերի մարում և մոտ 24.0 մլրդ դրամի սպասարկման ծախս:

2012 թվականի վերջի դրությամբ Հայաստանի Հանրապետության ներքին պետական պարտքի ծավալն անվանական արժեքով կկազմի մոտ 252.3 մլրդ դրամ, որից շրջանառելի պարտատոմսերի ծավալը՝ 247.4 մլրդ դրամ, իսկ ՀՀ ռեզիդենտից ստացված վարկի ծավալը՝ 4.9 մլրդ դրամ: 2011 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության ներքին պետական պարտքի ընդհանուր ծավալն անվանական արժեքով կազմել էր 216.2 մլրդ դրամ, որից շրջանառելի պարտատոմսերի ծավալը՝ 210.0 մլրդ դրամ, իսկ ՀՀ ռեզիդենտից ստացված վարկի ծավալը՝ 6.2 մլրդ դրամ: Պարտքի միջին ժամկետայնությունը 2012 թվականի հուլիսի 31-ի դրությամբ կազմել է 1824 օր (2011 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ նույն

ցուցանիշը եղել է 1698 օր), միջին կշռված եկամտաբերությունը՝ 13.44% (2011 թվականի տարեվերջին նույն ցուցանիշը եղել է 12.95%):

2011 թվականի վերջի դրությամբ շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի 16%-ը կարճաժամկետ, 53%-ը միջնաժամկետ և 31%-ը երկարաժամկետ պարտատոմսերն էին: 2012 թվականի վերջի դրությամբ նախատեսվում է, որ շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի 16%-ը կլինեն կարճաժամկետ, 50%-ը՝ միջնաժամկետ և 34%-ը՝ երկարաժամկետ պարտատոմսեր:

2011 թվականից սկսած ՀՀ կառավարությունը հրապարակում է պետական պարտատոմսերի թողարկման կանոնները և տեղաբաշխումների տարեկան օրացույցը:

2013 թվականի ընթացքում շարունակվելու են միջնաժամկետ և երկարաժամկետ ուղենշային պարտատոմսերի թողարկումները, կիրականացվի նոր 10 տարի մարման ժամկետով ուղենշային պարտատոմսերի թողարկում: 2012 թվականին իրականացվել են նոր 3, 5, և 20 տարի մարման ժամկետով ուղենշային պարտատոմսերի թողարկումներ: Պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման ծրագրի իրագործման շրջանակներում կշարունակվի նախկինում թողարկած միջնաժամկետ և երկարաժամկետ պարտատոմսերի փոքրածավալ թողարկումների, ինչպես նաև 2008-2010թթ. թողարկման արդեն նախկին ուղենշային համարվող պարտատոմսերի շրջանառությունից դուրս բերելու գործընթացը՝ հիմնականում հետգնումների միջոցով:

2013 թվականին ՀՀ կառավարությունը շարունակելու է Հայաստանի Հանրապետության ներքին պարտքի կառավարման բնագավառում ձեռնարկված բարեփոխումները: Ուղենշային պարտատոմսերը տեղաբաշխվելու են պարբերական վերաբացումների միջոցով: Պարբերաբար կիրականացվեն նաև հետգնումներ:

Այս նպատակի իրագործման շրջանակներում ենթադրվում է պետական պարտատոմսերի գծով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեում նախատեսել շուրջ 29.7 մլրդ դրամ սպասարկման ծախս, ապահովելով 30.2 մլրդ դրամ դեֆիցիտի ֆինանսավորում: 2013 թվականի վերջին Հայաստանի Հանրապետության ներքին պետական պարտքի ծավալն անվանական արժեքով կկազմի մոտ 284.8 մլրդ դրամ, միջին ժամկետայնությունը՝ մոտ 5.5 տարի: